

# ՎԱՐՔ ԵՎ ԲԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀԱՐԱՆՑ

Գիրք Բ

ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԴՈՐՈԹԵՈՍ  
ԳԱԶԱՑԻ



Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>



ՀԻՇԻՐ ԱՆՑԱԾ ՕՐԵՐԸ, ՄՏԱԲԵՐԻՐ ԱՆՑԱԾ  
ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԸ, ՀԱՐՑՐՈՒ ՔՈ ՀԱՅՐԵՐԻՆ,  
ԵՎ ՆՐԱՆՔ ՔԵԶ ԿՊԱՏՄԵՆ, ՔՈ ԾԵՐԵՐԻՆ,  
ԵՎ ՆՐԱՆՔ ՔԵԶ ԿԱՍԵՆ:

Բ ՕՐԻՆԱՑ 32:7



**Ով երանելի աբբա Դորոթեոս, ըզքեզ  
ունինք բարեխոս առ Քրիստոս վասն  
անճանց մերոց: Կանխեա խնդրեա ըզ  
թողութիւն յանցանց, ի քեն  
աշակերտելոցս:**



## ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԴՈՐՈԹԵՈՍԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԱՐՔԸ

Մենք հիմք չունենք ստուգութեամբ որոշելու համար այն ժամանակը, որում ապրել է երանելի Դորոթեոսը, որն առավել հայտնի է որպես գրող: Մոտավորապես այն կարելի է որոշել եվագրի վկայութեամբ, որն իր եկեղեցական պատմության մեջ, որ գրի է առնված, ինչպես հայտնի է մոտավորապես 590 թվին, հիշատակում է երանելի աբբա Դորոթեոսի ժամանակակից և առաջնորդ Մեծ ծերի՝ Բարսիլիկոս մասին, ասելով որ նա «դեռ ապրում է՝ փակված հյուղակի մեջ»: Սրանից կարելի է ենթադրել, որ երանելի Դորոթեոսը ապրել է 6-րդ դարի վերջում և 7-րդ դարի սկզբում: Ենթադրում են, որ նա ծնունդով Ասկալոնի մոտակայքից է եղել: Իր երիտասարդության վաղ շրջանը նա անցկացրել է աշխարհիկ գիտությունների ջանադիր ուսուցման մեջ: Սա երևում է իր սեփական խոսքերից՝ գետեղված իր 10-րդ աշխատության մեջ, որտեղ երանելին պատմում է իր մասին:

Սովորելով այսպիսի նախանձախնդրությամբ և ջանասիրութեամբ՝ երանելի Դորոթեոսը ձեռք բերեց լայնածավալ իմաստություն և խոսքի ճարտարություն, ինչպես այդ մասին հիշատակում է անհայտ մի գրող՝ նրա աշխատությունների մասին գրված իր գրքում՝ ասելով, թե երանելին «խոսքի մեծ վարպետ էր» և իմաստուն մեղվի պես, ծաղկից ծաղիկ թռչելով, հավաքում էր օգտակարը աշխարհիկ փիլիսոփաների աշխատություններից և այն մատուցում էր իր գրվածքներում ընդհանուր օգտի համար: Միգուցե այս պարագայում նույնպես երանելին հետևում էր Բարսեղ Մեծի օրինակին, որի աշխատությունները նա ուսումնասիրել էր և ջանում էր կիրառել կյանքում:

Երանելի Դորոթեոսի աշխատություններից պարզ երևում է

որ նա քաջատեղյակ էր հեթանոս գրողների ստեղծագործություններին, բայց անհամեմատ ավելի Եկեղեցու վարդապետների և հայրերի գրվածքներին՝ Բարսեղ Մեծի, Գրիգոր Աստվածաբանի, Հովհաննես Ոսկեբերանի, Կղեմես Ալեքսանդրացու և քրիստոնեության առաջին դարաշրջանի շատ այլ նշանավոր ճգնավորների գործերին, իսկ համաբնակությունը մեծ ծերերի հետ և ճգնակենցաղությունը նրան հարստացրել էին փորձառու գիտելիքներով, որի մասին վկայում են նրա աշխատությունները:

Թեպետ մենք չգիտենք Երանելու ծագումնաբանության մասին, սակայն մեծ ծերերի հետ ունեցած իր զրույցներից երևում է, որ նա արդեն կայուն մարդ էր, և դեռ նախքան իր վանք մտնելը նա օգտվում էր նշանավոր ճգնավորների՝ Բարսիլիկոս Մեծի և Հովհաննես մարգարեի ուսուցումներից: Սա երևում է սուրբ Հովհաննեսի՝ ունեցվածքը բաժանելու մասին հարցին տրված պատասխանից. «Եղբա՛յր, ես քո առաջին հարցերին պատասխանեցի իբրև մի մարդու, որը դեռ կաթի կարիք ունի: Իսկ այժմ, երբ դու հարցնում ես աշխարհից կատարելապես հրաժարվելու մասին, բարի եղիր ուշադրությունը լսել Սուրբ Գրքի խոսքը. «Բա՛ց բերանդ, և ես կլցնեմ այն» (Սղմ. 80. 11): Սրանից պարզ երևում է, որ սուրբ Հովհաննեսը նրան խորհուրդներ էր տվել՝ դեռ նախքան նրա աշխարհից կատարելապես հրաժարվելը: Ցավոք, մեզ չեն հասել այս սուրբ ծերերի հոգեշահ խրատները: Մենք դրանցից ունենք միայն նրանք, որոնք պահպանվել են սուրբ Բարսիլիկոսի և Հովհաննեսի պատասխանների գրքում:

Չգիտենք, թե ինչ պատճառից մղված է երանելի Դորոթեոսը թողել աշխարհը, սակայն, ուսումնասիրելով նրա ուսուցումները և հատկապես սուրբ ծերերին ուղղված իր հարցերը, կարելի է եզրակացնել, որ նա հեռացել է աշխարհից՝ նկատի ունենա-

լով միայն մի բան՝ հասնել ավետարանական կատարելության Աստծո պատվիրանները կատարելու միջոցով:

Նա ինքն է ասում սուրբ հայրերի մասին իր 1-ին ուսուցման մեջ. «Նրանք հասկացան, որ գտնվելով աշխարհում՝ չեն կարող հարմար կերպով առաքինություններ գործել, և խնդրեցին իրենց համար հատուկ ապրելակերպ, հատուկ գործելակերպ, - ես խոսում եմ վանական կյանքի մասին, - և սկսեցին փախչել աշխարհից և ապրել անպատենքում»:

Հավանական է, որ այս որոշման վրա իրենց բարի ազդեցություն են ունեցել նաև սուրբ ծերերի զրույցները, քանզի մտնելով սուրբ Սերիդի վանքը՝ Դորոթեոսը կատարյալ հնազանդություն մտնեց իրեն հանձնեց սուրբ Հովհաննես մարգարեին, այնպես որ առանց նրա խորհրդի ոչինչ իրեն թույլ չէր տալիս անել: «Երբ ես գտնվում էի հանրակացարանում, - ասում է իր մասին Երանելին, - ես խոստովանում էի իմ բոլոր խորհուրդները արքա Հովհաննեսին, և երբեք, ինչպես ասացի, չէի համարձակվում որևէ բան անել առանց նրա խորհրդի: Երբեմն խորհուրդն ինձ ասում էր. «Մի՞թե նույն բանը քեզ չի ասելու ծերը, ինչո՞ւ ես ուզում անհանգստացնել նրան»: Իսկ ես պատասխանում էի մտքիս. «Նզո՞վք քեզ, և՛ քո դատողությունը, և՛ քո խելքին, և՛ քո իմաստությունը, և՛ քո տեսողությունը, քանզի ինչ որ դու գիտես՝ գիտես դեռից»: Եվ այսպես, ես գնում ու հարցնում էի ծերերից: Եվ երբեմն պատահում էր, որ նա ինձ պատասխանում էր հենց այն, ինչ որ կար իմ մտքում: Այնժամ խորհուրդն ինձ ասում էր. «Տեսա՞ր, որ դա հենց այն էր, ինչ ե՛ս էի քեզ ասում. իզուր չէ՞ր արդյոք, որ անհանգստացրիր ծերին»: Իսկ ես պատասխանում էի. «Հիմա այն լավ է, հիմա այն Սուրբ Հոգուց է, իսկ քո ներշնչումները չար են, դեռից են, և արդյունք են կրքոտ հոգեվիճակիդ: Եվ այսպես, ես ինձ երբեք թույլ չտվեցի ենթարկվել իմ խորհուրդներին՝ առանց ծերին հարցնելու»:

Մտաբերումը այն մեծ ջանասիրություն, որով Երանելի Դորոթեոսը պարապում էր աշխարհիկ գիտությունները, խրախուսում էր նրան նաև առաքինության ջանքերի մեջ: «Երբ ես մտա վանք, - գրում է նա իր 10-րդ ուսուցման մեջ, -ասում էի ինքս ինձ՝ «Եթե աշխարհիկ գիտություններն ուսանելիս իմ մեջ ծնվեց այդպիսի ցանկություն և այդպիսի ջերմեռանդություն, այն պատճառով, որ ես վարժվում էի ընթերցանության մեջ, և այն դարձավ ինձ համար սովորություն, ապա առավել ևս (այդպես կլինի) առաքինությունները ուսանելու դեպքում: Եվ այս օրինակից ես մեծ ջանասիրություն և ուժ էի ստանում»:

Նրա ներքին կյանքի նկարագիրը և առաջադիմությունը ծերերի ղեկավարությունը մասամբ ի հայտ են գալիս հոգևոր հայրերին և բարեպաշտ կյանքի առաջնորդներին ուղղված իր հարցերից: Իսկ նրա ուսուցումների մեջ մենք հանդիպում ենք որոշ իրողությունների, որոնք վկայում են այն մասին, թե ինչպես է նա հարկադրել իրեն գործել առաքինություն և ինչպես է առաջադիմել նրանում: Մշտապես մեղադրելով ինքն իրեն՝ նա սիրով ծածկում էր մերձավորների թերությունները, և իր հանդեպ կատարած նրանց արարքները վերագրում էր փորձությունը կամ աննենգամիտ պարզությունը: Այսպես, իր 4-րդ ուսուցման մեջ Երանելին բերում է մի քանի օրինակներ, որոնցից երևում է, որ նա, լինելով խիստ անարգված, համբերատարությունը կրել է այն, և անցկացնելով, ինչպես ինքն է ասում, հանրակացարանում 9-տարի, ոչ ոքի վիրավորական խոսք չի ասել:

Վանահայր Սերիդի կողմից նրան նշանակված հանձնարարությունը կայանում էր նրանում, որ ընդուներ և հանգստացներ ուխտավորներին, և այստեղ մեկ անգամ չէ, որ ի հայտ է եկել իր մեծ համբերատարությունը և ջանասիրությունը մերձավորներին և Աստծուն ծառայելու մեջ: «Երբ ես դեռ հանրակացարանում էի, -ասում է իր մասին աբբա Դորոթեոսը, -վա-

նահայրը, ծերերի խորհրդով, ինձ նշանակեց հյուրընկալ, իսկ ես դրանից ոչ շատ առաջ խիստ ծանր հիվանդություն էի կրել: Եվ այնպես էր լինում, որ երեկոյան ուխտավորներ էին գալիս, և ես երեկոն նրանց հետ էի անցկացնում, հետո գալիս էին նաև ուղտապաններ, և ես սպասարկում էի նրանց. հաճախ այն բանից հետո էլ, երբ ես գնում էի քնելու, նորից ինչ-որ բանի կարիք էր լինում, և ինձ կրկին արթնացնում էին, այնինչ հասնում էր նաև գիշերային հսկման ժամը: Հագիվ էր աչքս կպնում թե չէ, երբ ժամարարն արդեն ինձ արթնացնում էր, սակայն աշխատանքից թե հիվանդությունից ես խիստ հյուստվել էի, և քունը վերստին տիրում էր ինձ այնպես, որ ես տապից թուլացած ինքս ինձ չէի հասկանում և պատասխանում էի քնի միջից. «Լա՛վ, տեր իմ, Աստված թող հիշի քո սերը և քեզ վարձատրի, դու հրամայեցիր, և ես կգամ, տեր իմ»: Հետո, երբ նա գնում էր, ես նորից քնում էի և շատ էի վշտանում, որ եկեղեցի գնալուց ուշանում էի: Եվ քանի որ ժամարարը չէր կարող սպասել ինձ, ես խնդրեցի երկու եղբայրների՝ մեկը, որպեսզի արթնացներ ինձ, մյուսը, որպեսզի թույլ չտար ինձ ննջել հսկման ժամանակ, և հավատացե՛ք ինձ, եղբայրներ՛, ես այնպես էի պատվում նրանց, որպես թե նրանց միջոցով էր տեղի ունենում իմ փրկությունը, և մեծ ակնածանք էի տածում նրանց հանդեպ: Ծգնելով նման կերպ՝ երանելի Դորոթեոսը հասավ հոգևոր հասակի բարձր աստիճանի և, հետագայում դառնալով հիվանդանոցի վերակացու, որը կառուցեց իր եղբայրը աբբա Սերիդի վանքում, նա մերձավորի հանդեպ սիրո բարի օրինակ էր հանդիսանում բոլորի համար և միևնույն ժամանակ բժշկում էր եղբայրների հոգևոր վերքերն ու տկարությունները: Նրա խորին խոնարհությունը արտահայտվում է հատկապես այն խոսքերի մեջ, որոնք նա շարադրում է իր 11-րդ ուսուցման մեջ: «Երբ ես հանրակացարանում էի, չգիտեմ, թե ինչպես եղբայրները մո-

լորվեցին (իմ հանդեպ) և ինձ էին խոստովանում իրենց խորհուրդները, և վանահայրը, ծերերի խորհրդով, հանձնարարեց ինձ վրա վերցնել այդ հոգսը»: Հենց նրա առաջնորդութամբ այդքան կարճ ժամանակում առաջադիմեցի նաև այն պարզասրտորեն հնազանդություն գործող Դոսիթեոսը, որի կյանքի նկարագրությունը հատուկ մի քանի էջ է նվիրված այս գրքում: Վանք մտնելու հենց սկզբից, իրեն առաջնորդ ունենալով սուրբ Հովհաննես Մարգարեին, երանելի Դորոթեոսը նրա խրատներն ընդունում էր որպես Աստծո բերանից և իրեն երջանիկ էր համարում, որ հանրակացարանում կենցաղավարելիս արժանացել էր ծառայելու նրան, ինչպես ինքն է ասում այդ մասին «Աստծո երկյուղի» մասին իր ուսուցման մեջ. «Երբ ես դեռ գտնվում էի աբբա Սերիդի վանքում, այնպես պատահեց, որ աբբա Հովհաննեսի սպասավորը, որը աբբա Բարսիլիկոսի աշակերտն էր, հիվանդացավ, և աբբան ինձ հանձնարարեց սպասավորել ծերին: Իսկ ես նրա խցի դռները դրսից այնպիսի զգացումով էի համբուրում, ինչպես որ մեկ ուրիշը կերկրպագեր սուրբ Խաչին, էլ՝ ավելի (ես ուրախ էի) նրան ծառայելու համար»: Ամեն ինչում հետևելով սուրբ ճգնավորների օրինակին և գործով իրականացնելով իր հայրերի հոգեշահ խրատները՝ Բարսիլիկոս Մեծի, Հովհաննես Մարգարեի, Վանահայր Սերիդի, երանելի Դորոթեոսը անկասկած եղավ նաև սրանց հոգևոր շնորհների ժառանգորդը: Քանզի Աստծո նախախնամությունը չթողեց նրան անհայտություն գրվանի ներքո, այլ դրեց առաջնորդության աշտանակի վրա, մինչդեռ նա ձգտում էր առանձնություն և լուսկեցություն, ինչը երևում է ծերին տրված իր հարցերից:

Աբբա Սերիդի և սուրբ Հովհաննես Մարգարեի վախճանվելուց հետո, երբ նրանց բոլորի ընդհանուր առաջնորդ Բարսիլիկոս Մեծը կատարելապես փակվեց իր խցում, երանելի Դորոթե-

ոսը հեռացավ աբբա Սերիդի վանքից և եղավ վանահայր: Հավանական է, որ այդ ժամանակներին են պատկանում նրա այս ուսուցումները (Թվով 21) և երանելու մի քանի ուղերձները, թեև նրա վարդապետություն լույսը տարածվեց ոչ միայն վանական միաբանություններում, այլև աշխարհում, քանի որ շատերը՝ հիացած և սքանչացած նրա ճգնությունների և առաքինությունների փառքով, վազում էին նրա մոտ՝ խրատներ և խորհուրդներ լսելու համար, որի մասին վկայում է այս ուղերձների անհայտ գրիչը, և շատ հավանական է, որ սա անձամբ ճանաչել է Երանելուն և եղել է նրա աշակերտը: Նա ասում էր, որ Երանելին, Աստծուց իրեն տված շնորհների համեմատ, կատարում էր իր սուրբ պարտականությունները հավասար կերպով հանդեպ հարուստների և աղքատների, իմաստունների և տգետների, կանանց և տղամարդկանց, ծերերի և երիտասարդների, սգավորների և ուրախության մեջ գտնվողների, օտարների և մերձավորների, աշխարհականների և վանականների, իշխանավորների և հպատակների, ստրուկների և ազատների. նա ամենքի հետ ամեն ինչ եղավ և շահեց շատերին: Ցավոք, մեզ չի հասել մեծ ճգնավորի կյանքի ամբողջական նկարագիրը, որը շատ խրատական կլիներ: Եվ այն, ինչ որ հասել է մեզ՝ հայրերի մեջ արժանավոր և երանելի Դորոթեոսից, մեծ սիրով ներկայացնում ենք ձեզ:

## ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐ ԴՈՍԻԹԵՈՍԻ՝ ՍՈՒՐԲ ԴՈՐՈԹԵՈՍԻ ԱՇԱԿԵՐՏԻ ՎԱՐՔԸ

Արդարև երանելի աբբա Դորոթեոսը, սիրելով Աստծով կրոնավորական կյանքը, առանձնացավ հայր Սերիդի վանքում, որտեղ գտավ բազում մեծ ճգնավորների, որոնք կենցաղավարում էին առանձնության մեջ, որոնցից առավել գերազանց էին երկու մեծագույն ծերեր՝ սուրբ Բարսիլիկոսը և նրա աշակերտ՝ ճգնակեաց հայր Հովհաննեսը, որին կոչում էին Մարգարե՝ շնորհիվ իր պայծառատեսության, որը նա ստացել էր Աստծուց: Սրանց հանձնվեց սուրբ Դորոթեոսը՝ հնազանդվելով անմնացորդ և լիակատար վստահությանը, և զրուցում էր մեծ ծերերի հետ սուրբ հայր Սերիդի միջոցով. և հենց Հովհաննես մարգարեին էլ արժանացավ ծառայելու: Վերոհիշյալ սուրբ ծերերը հարմար գտան, որպեսզի Դորոթեոսը հիվանդանոց հիմնի վանքի մեջ և, տեղափոխվելով այնտեղ, ինքն այդ հոգան իր վրա վերցնի, քանզի եղբայրները շատ էին վշտանում, որ հիվանդանալիս ոչ մեկը չունեին, որ հոգար իրենց մասին: Եվ այսպես, նա, Աստծո օգնությամբ, հիվանդանոց հիմնեց՝ իր հարազատ եղբոր աջակցությամբ, որը մատակարարեց նրան շինության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, քանզի հույժ Քրիստոսասեր և կրոնասեր այր էր: Եվ այսպես, աբբա Դորոթեոսը, ինչպես ես ասացի, մի քանի այլ երկյուղած եղբայրների հետ անձամբ ծառայում էր հիվանդներին և, որպես հիվանդանոցի վերակացու, հսկում էր հաստատության վրա:

Մի անգամ աբբա Սերիդը մարդ ուղարկելով՝ նրան իր մոտ կանչեց: Մտնելով վանահոր մոտ՝ նա տեսավ զինվորական հագուստով մի երիտասարդի՝ բավականին երիտասարդ և գեղեցիկ արտաքինով, որը վանք էր եկել աբբա Սերիդի սիրելի մարդկանց հետ: Երբ աբբա Դորոթեոսը ներս մտավ, աբբա Սերիդը նրան մի կողմ տանելով՝ ասաց. «Այս մարդիկ ինձ մոտ են բերել

այս երիտասարդին և ասում են, որ նա ուզում է մնալ վանքում և դառնալ կրոնավոր, սակայն ես վախենում եմ, թե նա արդյոք չի՞ պատկանում մեծատոհմիկներից որևէ մեկին, կամ չլինի ինչ-որ բան է գողացել, կամ նման ինչ-որ բան է արել և այդ պատճառով էլ ուզում է թաքնվել, իսկ մենք, նրան ընդունելով, ընկնենք փորձանքի մեջ, քանզի ո՛չ հագուստը, ո՛չ տեսքը այնպիսի մարդու տպավորություն չեն թողնում, որը ցանկանում է վանական դառնալ»:

Այս երիտասարդը, լինելով ոմն զորավարի բարեկամը, մեծ անհոգությանը և ճոխությանը էր ապրել և երբեք չէր լսել Աստծո խոսքը: Մի անգամ զորավարի մարդկանցից ոմանք նրա ներկայությանը պատմեցին սուրբ քաղաքի՝ Երուսաղեմի մասին: Լսելով այս մասին՝ նա ցանկացավ տեսնել այնտեղի սրբավայրերը և խնդրեց զորավարին, որ իրեն ուղարկի տեսնելու սուրբ վայրերը: Ջորավարը, չցանկանալով տրտմեցնել նրան, գտավ այնտեղ ուղևորվող իր մտերիմ ընկերներից մեկին և ասաց նրան. «Մի լավություն՝ արա ինձ, վերցրո՛ւ այս երիտասարդին քեզ հետ, որպեսզի տեսնի սուրբ վայրերը»: Սա էլ, զորավարից ընդունելով այս երիտասարդին, նրան ամեն տեսակ պատվի արժանացրեց, և խնամեց նրան և առաջարկեց ճաշել իր և իր կնոջ հետ միասին: Եվ այսպես, հասնելով սուրբ քաղաք և երկրպագելով սուրբ տեղերին, նրանք այցելեցին նաև Գեթսեման, որտեղ կար Ահեղ դատաստանը պատկերող մի նկար: Երբ երիտասարդը այդ նկարի առջև կանգնած նայում էր մեծ ուշադրությամբ ու զարմանքով, տեսավ մի բարեզարդ Կնոջ՝ ծիրանի պատմուճանով, որ կանգնել է իր կողքին և բացատրում էր դատապարտվածներից յուրաքանչյուրի տառապանքները՝ ընդ որում իր կողմից էլ որոշ խրատներ տալով: Երիտասարդը, լսելով այս ամենը, զարմանում ու ապշում էր, քանզի, ինչպես որ ես արդեն ասացի, նա երբեք չէր լսել ո՛չ Աստծո խոսքի, ո՛չ էլ

դատաստանի մասին: Եվ այսպիսով, նա հարցրեց Նրան. «Տիրուհի՛, ի՞նչ պետք է անեմ, որպեսզի ազատվեմ այս տանջանքներից»: Նա պատասխանեց նրան. «Պա՛հք պահիր, միս մի՛ կեր, հաճա՛խ աղոթիր և կփրկվես տանջանքներից»: Տալով նրան այս երեք պատվիրանները՝ ծիրանազգեստ կինը աներևութացավ և այլևս չեղևաց նրան: Երիտասարդը շրջեց այդ բոլոր տեղերով՝ փնտրելով նրան, կարծելով, թե նա մի սովորական կին էր, սակայն չգտավ Նրան, քանզի նա սրբուհի Աստվածածինն էր: Այդ պահից երիտասարդը զղջաց իր կյանքի ընթացքի համար և պահում էր այդ երեք պատվիրանները, որոնք տրվել էին իրեն: Իսկ զորավարի ընկերը, տեսնելով, որ նա պահեց է պահում և միս չի ուտում, վշտացավ, քանզի հատուկ խնամք էր տանում այս երիտասարդին: Զինվորները ևս, որ նրա հետ էին, տեսնելով, թե նա ինչպես է իրեն պահում, ասացին նրան. «Երիտասա՛րդ, այն, ինչ որ դու անում ես, վայել չէ մի մարդու, որն ուզում է ապրել աշխարհում: Եթե այդպես ապրել ես ուզում, դնա վանք և կփրկես քո հոգին»: Իսկ նա, ոչինչ չիմանալով Աստծո մասին, ոչ էլ այն, թե ինչ է վանքը՝ բացի այն Կնոջից լսածը պահելուց, ասաց նրանց. «Տարե՛ք ինձ, ուր որ գիտեք, քանզի ես չգիտեմ՝ ուր գնամ»: Նրանցից ոմանք, ինչպես որ ես արդեն ասացի, սիրելի էին արբա Սերիդին, և, գալով վանք, երիտասարդին բերեցին իրենց հետ: Եվ երբ արբան երանելի Դորոթեոսին ուղարկեց նրանց հետ խոսելու, արբա Դորոթեոսը փորձեց նրան և գտավ, որ երիտասարդը չի կարողանում իրեն ոչինչ ասել, բացի միայն հետևյալ խոսքերից. «Ուզում եմ փրկվել»: Այնժամ նա եկավ և ասաց արբային «Եթե ցանկանում ես ընդունել նրան, մի՛ վախեցիր ոչնչից, քանզի նրա մեջ ոչ մի չար բան չկա»: Արբան ասաց նրան. «Շնորհ արա, ընդունի՛ր նրան քեզ մոտ իր փրկության համար, քանզի չեմ ուզում որ նա եղբայրների կողքին բնակվի»: Արբա Դորոթեոսը իր երկյուղածությունը պատճառով երկար ժա-

մանակ հրաժարվում էր դրանից՝ ասելով. «Իմ ուժերից վեր է որևէ մեկի բեռն ինձ վրա վերցնելը, իմ չափի համար չէ այդ»: Արբան պատասխանեց նրան. «Ես կկրեմ թե՛ քո և թե՛ նրա բեռը, ինչո՞ւ ես անհանգստանում»: Այնժամ երանելի Դորոթեոսը ասաց նրան. «Եթե դու այդպես ես վճռել, ապա տեղեկացրու այդ մասին ծերին (Բարսիլիկոս Մեծին), իհարկե, եթե հարմար ես գտնում»: Արբան պատասխանեց նրան. «Լա՛վ, ես կասեմ նրան»: Եվ նա գնաց և այդ մասին հաղորդեց Մեծ ծերին: Իսկ ծերը ասաց երանելի Դորոթեոսին. «Ընդունի՛ր այդ երիտասարդին, քանզի քո միջոցով Աստված կփրկի նրան»: Այնժամ նա ուրախությամբ ընդունեց երիտասարդին և տեղավորեց նրան իր հետ հիվանդանոցում: Նրա անունն էր Դոսիթեոս:

Երբ հասավ ճաշի ժամը, արբա Դորոթեոսը ասաց նրան. «Կեր այնքան, մինչև հագենաս, միայն ինձ ասա՛, թե ինչքան կերար»: Նա գալով՝ արբային ասաց. «Ես կերա մեկ ու կես հաց»: Արբա Դորոթեոսը հարցրեց նրան. «Այդքանը քեզ բավակա՞ն էր, Դոսիթեո՛ս»: Իսկ նա պատասխանեց. «Այո՛, տեր իմ, այդքանն ինձ բավական էր»: Արբան հարցրեց նրան. «Քաղցած չե՞ս, Դոսիթեո՛ս»: Նա պատասխանեց. «Ո՛չ, հա՛յր, քաղցած չեմ»: Այնժամ արբա Դորոթեոսը ասաց նրան. «Հաջորդ անգամ կեր մեկ հաց»: Դոսիթեոսը այդպես էլ արեց: Իսկ երբ արբա Դորոթեոսը հարցրեց նրան՝ «Քաղցած ես, Դոսիթեո՛ս», նա պատասխանեց «Այո՛, տեր իմ, փոքր-ինչ քաղցած եմ»: Մի քանի օր անց նորից հարցրեց նրան. «Հիմա ինչպե՞ս ես, Դոսիթեո՛ս, շարունակո՞ւմ ես արդյոք քեզ քաղցած զգալ»: Նա պատասխանեց. «Ո՛չ, տեր իմ, քո աղոթքներով ես լավ եմ»: Ասում է նրան արբան. «Հիմա էլ այդ հացի կեսը կեր»: Եվ նա այդ էլ արեց: Նորից մի քանի օր հետո արբա Դորոթեոսը հարցրեց նրան. «Հիմա՞ ինչպես ես, Դոսիթեո՛ս, արդյոք քաղցած չե՞ս: Նա պատասխանեց. «Լա՛վ եմ, տե՛ր իմ»: Ասում է նրան. «Հիմա էլ այդ

կես հացը կիսիր, մի կեսը կեր, իսկ մյուսը՝ թող մնա»։ Նա այդ էլ արեց։ Եվ այսպես, Աստծո օգնությամբ, կամաց-կամաց նա սկսեց բավարարվել այդ քչով, քանի որ կերակրի օգտագործումը կախված է սովորությունից։

Այս երիտասարդը խոնարհ էր և հմտորեն էր կատարում իրեն հանձնարարված գործերը։ Նա ծառայում էր հիվանդանոցի հիվանդներին, և նրանցից յուրաքանչյուրը գոհ էր նրա ծառայությունից, քանի որ նա ամեն բան կատարում էր մեծ ջանասիրությամբ։ Մի անգամ պատահեց, որ նա բարկացավ հիվանդներից մեկի վրա և զայրուցով ինչ-որ բան ասաց նրան, այդժամ թողեց ամեն բան, գնաց մթերանոց և սկսեց լալ։ Երբ հիվանդանոցի մյուս ծառայողները եկան նրան սփոփելու, նա չէր մխիթարվում, այնժամ նրանք գնացին հայր Դորոթեոսի մոտ և ասացին նրան. «Շնորհ արա, հայր, գնա՛ և իմացիր, թե ի՞նչ է պատահել այն եղբորը, նա լաց է լինում, և մենք չենք հասկանում, թե ինչու»։ Այնժամ աբբա Դորոթեոսը մտավ նրա մոտ և, տեսնելով նրան գետնին նստած և լաց լինելիս հարցրեց նրան. «Ի՞նչ է պատահել քեզ Դոսիթեո՛ս, ինչո՞ւ ես լալիս»։ Դոսիթեոսը պատասխանեց. «Ների՛ր ինձ հայր, ես բարկացա և կոպիտ խոսեցի եղբորս հետ»։ Աբբան պատասխանեց նրան. «Ահա՛ թե ինչ, Դոսիթեո՛ս, դու բարկանում ես և չե՞ս ամաչում, որ բարկացել և վիրավորել ես քո եղբորը։ Մի՞թե դու չգիտես, որ նա հենց Քրիստոսն է, և դու Քրիստոսի՛ն ես վիրավորել»։ Դոսիթեոսը արտասովելով խոնարհեցրեց գլուխը և ոչինչ չպատասխանեց։ Երբ աբբա Դորոթեոսը տեսավ, որ նա արդեն բավականին լաց եղավ, այնժամ նրան հանդարտություն բերեց ասաց. «Աստված կների քեզ։ Վե՛ր կաց և այս պահից քո ուղղվելու սկիզբը դնենք, ջանանք, և Աստված կօգնի»։ Այս լսելով՝ Դոսիթեոսը իսկույն վեր կացավ և ուրախությամբ շտապեց իր ծառայությանը, ասես իրապես Աստծուց թողություն ստացած լիներ։ Այսպիսով,

հիվանդանոցի ծառայողները, նրա սովորությունը իմանալով, երբ տեսնում էին նրան լաց լինելիս, ասում էին. «Ինչ-որ բան է պատահել Դոսիթեոսի հետ, նա նորից ինչ-որ բանում մեղանչել է»։ Եվ ասում էին երանելի Դորոթեոսին. «Հայր, մտի՛ր մթերանոց, այնտեղ քեզ համար գործ կա»։ Երբ նա մտնում էր և Դոսիթեոսին գտնում էր՝ գետնի վրա նստած՝ լաց լինելիս, գլխի էր ընկնում, որ նա ինչ-որ մեկին վատ խոսք է ասել։ Եվ ասում էր նրան. «Ի՞նչ է, Դոսիթեո՛ս, դու նորից վիրավորե՞լ ես Քրիստոսին կամ նորից բարկացե՞լ ես, չե՞ս ամաչում, ինչո՞ւ դու չես ուղղվում»։ Իսկ նա շարունակում էր լաց լինել։ Եվ երբ աբբա Դորոթեոսը տեսնում էր, որ նա հագեցել է լաց լինելուց, ասում էր նրան. «Վե՛ր կաց, Աստված թող ների քեզ, նորից սկի՛զբ դիր և ուղղվի՛ր վերջապես»։ Դոսիթեոսը անմիջապես իսկ հավատով վանում էր իրեն պաշարող տրտմությունը և անցնում էր իր գործին։ Նա շատ լավ էր հարգարում հիվանդների անկողինը և ազատ էր իր խորհուրդների խոստովանություն մեջ, այնպես որ շատ հաճախ, երբ հարգարում էր անկողինը և տեսնում էր, որ երանելի Դորոթեոսը անցնում է իր կողքով, ասում էր նրան. «Հայր, հայր իմ, մտքերն ինձ ասում են՝ դու լավ ես հարգարում։ Եվ պատասխանում էր նրան աբբա Դորոթեոսը. «Այ քեզ հրաչք, դու լավ ծառա ես դարձել, գերազանց հարգարող, բայց արդյո՞ք դու լավ կրոնավոր ես»։ Աբբա Դորոթեոսը բնավ թույլ չէր տալիս նրան, որ տենչ ունենար որևէ առարկայի կամ ինչ-որ բանի հանդեպ, և ինչ որ նա ասում էր, Դոսիթեոսը ընդունում էր հավատով ու սիրով և ամեն ինչում ջանասիրաբար լսում էր նրան։ Երբ նա հագուստի կարիք էր ունենում, աբբա Դորոթեոսը հենց իրեն էլ պատվիրում էր կարել այն, և նա գնում ու կարում էր մեծ ջանասիրությամբ և եռանդով։ Եվ երբ ավարտում էր, երանելին կանչում էր նրան և ասում. «Դոսիթեո՛ս, կարեցի՞ր դու քո հագուստը»։ Նա էլ պատասխանում էր.



«Այո՛, հայր կարեցի, և շատ լավ ստացվեց»: Աբբա Դորոթեոսը ասում էր նրան. «Տա՛ր և այն տուր այսինչ եղբորը կամ հիվանդին»: Նա գնում և տալիս էր այն մեծ ուրախությամբ: Երանելին կրկին հանձնարարում էր նրան կարել մեկ ուրիշը, և երբ նա կարում վերջացնում էր, ասում էր. «Տո՛ւր այդ այսինչ եղբորը»: Նա անմիջապես տալիս էր և երբեք չէր վշտանում և չէր տրտնջում՝ ասելով. «Ամեն անգամ, երբ ես կարում եմ, նա այն խլում է ինձանից և տալիս ուրիշին», և այն ամեն բարին, որ նա լսում էր, կատարում էր մեծ ջանասիրությամբ: Մի անգամ մեկը, որ հանձնարարությամբ դուրս էր եկել վանքից, իր հետ մի գեղեցիկ և շատ լավ դանակ բերեց: Դոսիթեոսը վերցրեց այն և ցույց տվեց հայր Դորոթեոսին՝ ասելով. «Այսինչ եղբայրն է բերել դանակը, և ես վերցրեցի այն, որպեսզի, եթե թույլ տաս, այն պահեմ հիվանդանոցում, որովհետև լավն է»: Երանելի Դոսիթեոսը երբեք հիվանդանոցի համար գեղեցիկ իրեր ձեռք չէր բերում, այլ միայն այնպիսիք, որոնք աշխատանքի մեջ պիտանի էին: Եվ (այդ պատճառով) ասաց Դոսիթեոսին. «Ցո՛ւյց տուր, տեսնեմ, իրո՞ք այդքան լավն է»: Նա էլ տվեց՝ ասելով. «Այո՛, հայր, լավն է»: Աբբան տեսավ, որ իրոք այն լավն է, բայց քանի որ չէր ուզում, որ Դոսիթեոսը տենչ ունենար ինչ-որ մի իրի հանդեպ, ուստի և թույլ չտվեց նրան դանակը իր մոտ պահելու՝ ասելով. «Դոսիթեո՛ս, մի՞թե քեզ համար ավելի ցանկալի է լինել այս դանակի ծառան, քան Աստծու ծառան: Կամ քեզ հաճելի՞ է կրթոտությունը կապվել այս դանակին, կամ չե՞ս ամաչում՝ ցանկանալով, որ այս դանակը քեզ տիրի և ոչ՝ Աստված»: Նա, այս ամենը լսելով, գլուխը չէր բարձրացնում, այլ երեսը գետնին հառած՝ լռում էր: Վերջապես, նրան բավականաչափ նախատելուց հետո, աբբա Դորոթեոսն ասաց նրան. «Տա՛ր և դիր այդ դանակը հիվանդանոցում և երբեք նրան ձեռք չտաս»: Եվ Դոսիթեոսն այնպես էր զգուշանում այս դանակին դիպչե-

լուց, որ չէր համարձակվում վերցնել այն նույնիսկ այն ժամանակ, երբ հարկ էր տալ ուրիշին: Եվ բոլոր ծառայողներից միայն նա էր, որ չէր հպվում դանակին: Եվ երբեք չէր ասում. «Մի՞թե ես այնպիսին չեմ, ինչպիսին ուրիշներն են», այլ այն ամենը, ինչ որ լսում էր հորից, կատարում էր ուրախությամբ: Այսպես անցկացրեց նա իր կարճատև ժամանակը վանքում, քանզի նա այնտեղ ապրեց հինգ տարի և ննջեց՝ հնազանդություն մեջ լինելով, երբեք և ոչ մի բանում չկատարելով իր կամքը և ոչ մի բան կրթոտությամբ և մոլությունը չանելով: Երբ նա հիվանդացավ և սկսեց արյուն թքել (որից և մահացավ), ինչ-որ մեկից լսեց, որ թերխաչ ձուռն շատ օգտակար է նման արյունաբեր հազի համար: Սա հայտնի էր նաև երանելի Դորոթեոսին, որը հոգ էր տանում նրա ապաքինման համար, սակայն շատ բազմազբաղ լինելու պատճառով այդ միջոցը նա չմտաբերեց: Դոսիթեոսը ասաց նրան. «Հա՛յր, ուզում եմ քեզ ասել, որ ես լսել եմ ինձ օգտակար մի միջոցի մասին, սակայն չեմ ուզում, որ դու այն տաս ինձ, քանի որ դրա մասին խորհուրդն ինձ անհանգստացնում է»: Դորոթեոսը պատասխանեց նրան՝ ասելով. «Ասա՛ ինձ, որդյա՛կ, ի՞նչ միջոց է դա»: Նա պատասխանեց. «Խոստացի՛ր ինձ, որ դու այն չես տա ինձ, քանի որ, ինչպես ես ասացի, դրա մասին խորհուրդները խռովեցնում են ինձ»: «Լա՛վ, ես կանեմ այնպես, ինչպես դու ես կամենում»: Այնժամ հիվանդն ասաց նրան. «Ես լսել եմ ոմանցից, որ թերխաչ ձուռն օգտակար է նման արյունաբեր հազի համար, սակայն ի սեր Աստծո, եթե քեզ հաճելի է, ինչ որ դու նախկինում ինձ չէիր տալիս քո կամքով, այն մի՛ տուր նաև այժմ՝ իմ խորհուրդների պատճառով»: Աբբան պատասխանեց նրան. «Լա՛վ, եթե չես ուզում, չեմ տա, միայն թե դու մի՛ վշտացիր»: Եվ նա ջանում էր ձվի փոխարեն տալ նրան իր համար օգտակար այլ դեղամիջոցներ, քանի որ, ինչպես Դոսիթեոսն էր նախօրոք ասել, ձվի հետ

կապված մտքերը խռովեցնում էին իրեն: Ահա թե ինչպես էր նա ջանում մերժել իր կամքը՝ նույնիսկ այսպիսի հիվանդություն մեջ:

Նա մշտապես կրում էր Աստծո մասին հիշողությունը, քանզի արբա Դորոթեոսը պատվիրել էր նրան մշտապես կրկնել. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, ողորմի՛ր ինձ», նաև՝ «Որդի՛ Աստծո, օգնի՛ր ինձ»: այսպես անդադար կրկնում էր նա այս աղոթքը: Երբ նրա հիվանդությունը չափազանց սրվեց, երանելին ասաց նրան. «Դոսիթեո՛ս, հո՛գ տար աղոթքի համար, տես, որ չկտրվես նրանից»: Նա պատասխանեց. «Լա՛վ, հա՛յր, միայն թե աղոթի՛ր ինձ համար»: Կրկին երբ նրա վիճակը էլ ավելի վատթարացավ, երանելին ասաց նրան. «Դե, Դոսիթեո՛ս, ինչպե՞ս է աղոթքը, շարունակվո՞ւմ է առաջվա պես»: Նա պատասխանեց. «Այո՛, հա՛յր, քո աղոթքների շնորհիվ»: Իսկ երբ նրա վիճակը առավել վատթարացավ, և հիվանդությունն այնպես սրվեց, որ նրան կրում էին սավանի վրա, արբա Դորոթեոսը հարցրեց նրան. «Ինչպե՞ս է աղոթքը, Դոսիթեո՛ս»: Նա պատասխանեց. «Ների՛ր, հա՛յր, էլ չեմ կարողանում պահել այն»: Այնժամ ասաց արբան. «Եվ այսպես, թո՛ղ աղոթքը, միայն հիշի՛ր Աստծուն և պատկերացրու Նրան իրապես քո առջև»: Սաստիկ տանջվելով՝ Դոսիթեոսը այս մասին հաղորդեց Մեծ ձերին (Բարսիլիկոս Մեծին)՝ ասելով. «Արձակի՛ր ինձ, քանզի էլ չեմ կարողանում դիմանալ»: Ծերը սրան պատասխան տվեց և ասաց նրան. «Դիմացի՛ր, որդյա՛կ, քանզի մոտ է Աստծո ողորմությունը»: Իսկ երանելի Դորոթեոսը, տեսնելով այս, վշտանում էր նրա սաստիկ տանջանքների համար, և վախենում էր, որ նրա միտքը չվնասվի: Մի քանի օր անց Դոսիթեոսը նորից տեղեկացրեց իր մասին ձերին՝ ասելով. «Տե՛ր իմ, այլևս չեմ կարող ապրել»: Այնժամ ձերը պատասխանեց. «Գնա՛ խաղաղությունս, որդյա՛կ, կանգնի՛ր Ամենասուրբ Երրորդության առջև և աղոթի՛ր մեզ համար»: Լսելով


ձերի այս խոսքերը՝ եղբայրները սկսեցին դժգոհել և ասել. «Ի՞նչ առանձնահատուկ բան արեց նա, կամ ի՞նչ սխրանքներ գործեց, որ արժանացավ այսպիսի խոսքեր լսելու»: Քանզի նրանք իսկապես չէին տեսել, որ Դոսիթեոսը առանձնահատուկ ճգներ կամ օրը մեջ կերակուր ընդուններ, ինչպես որ անում էին այնտեղ եղողներից ոմանք, կամ էլ, որ (գիշերը) հսկեր, նախքան սովորական հսկման ժամը, այլ նույնիսկ հսկումներին ուշացած էր ներկայանում, նաև չէին տեսել, որ նա առանձնահատուկ ժուժկալություն ունենար, այլ, ընդհակառակն, նկատել էին, որ եթե պատահաբար հիվանդներից մնում էր մի քիչ հյուսթ կամ ձկան գլուխներ, կամ նման ինչ-որ բան, նա ուտում էր դրանք: Իսկ այնտեղ կային միաբաններ, որոնք, ինչպես ես ասացի, երկար ժամանակ կերակուր էին ընդունում օրը մեջ և կրկնապատկում էին իրենց ժուժկալությունը և հսկումները: Հենց նրանք էին, որ լսելով ձերի նման պատասխանը՝ ուղղված երիտասարդին, որն ընդամենը հինգ տարի էր, ինչ գտնվում էր վանքում, խռովեցին՝ չճանաչելով նրա գործերը և անտարակույս հնազանդությունը ամեն ինչում, և որ նա երբեք ոչ մի բանում իր կամքը չկատարեց, այլ, երբ պատահում էր, որ արբա Դորոթեոսը նրան մի բան էր ասում՝ նրա վրա ծիծաղելով, (կամ կարծես թե ինչ-որ բան հրամայելով), նա փութով գնում և կատարում էր այն՝ առանց քննարկելու: Օրինակ, սկզբում նա սովորության համաձայն բարձր էր խոսում. երանելի Դորոթեոսը, ծիծաղելով նրա վրա, մի անգամ ասաց նրան. «Քեզ հաց ու գինի՞ է հարկավոր, Դոսիթեո՛ս: Դե ինչ, գնա հաց ու գինու ետևից»: Նա էլ, լսելով այս, գնաց և բերեց մի գավաթ գինի և հաց և տվեց արբային, որպեսզի ընդունի նրա օրհնությունը: Արբա Դորոթեոսը, չհասկանալով նրա արարքը, զարմանքով նայեց նրան և ասաց. «Դու ի՞նչ ես ուզում»: Նա ասաց. «Դու ինձ հանձնարարեցիր գնալ հաց ու գինու ետևից, դե հիմա տո՛ւր ինձ քո օրհնությունը»:

Այնժամ արքան ասաց. «Անմի՛տ, քանի որ դու բղավում ես գոթերի նման, որոնք բղավում են, երբ (հարբում) են և սկսում բարկանալ, ես էլ ասացի քեզ՝ գնա հաց ու գինու ետևից, քանի որ դու խոսում ես գոթերի պես»: Դոսիթեոսն էլ, լսելով այս, խոնարհվեց և ետ տարավ իր կողմից բերածները:

Մի անգամ նա եկավ արքա Դորոթեոսի մոտ, որպեսզի Սուրբ Գրքից ինչ-որ բան հարցնի, քանի որ նա իր մաքրության շնորհիվ սկսել էր հասկանալ Սուրբ Գիրքը: Երանելի Դորոթեոսը չկամեցավ, որ նա տրվի այդ բանին, որպեսզի պահպանի խոնարհությունը: Եվ այսպես, երբ Դոսիթեոսը հարցրեց, նա պատասխանեց. «Չգիտե՛մ»: Սակայն նա չհասկանալով իր հոր դիտավորությունը, նորից եկավ և հարցրեց Սուրբ Գրքի մի այլ հատվածի մասին, այնժամ արքան ասաց նրան. «Ես չգիտեմ, այլ գնա՛ և հարցրո՛ւ վանահորը»: Եվ Դոսիթեոսը գնաց՝ առանց թեկուզ փոքր-ինչ քննարկելու: Արքա Դորոթեոսն էլ նախապես ասել էր վանահորը. «Եթե Դոսիթեոսը գա քեզ մոտ ինչ-որ բան հարցնելու Սուրբ Գրքից, թեթևակի ձե՛ձ տուր նրան»: Այսպիսով, երբ նա եկավ և հարցրեց վանահորը, նա սկսեց հրել նրան՝ ասելով. «Ինչո՞ւ դու հանգիստ չես նստում խցում և չես լուռ, երբ դու ոչինչ չգիտես: Ինչպե՞ս ես համարձակվում հարցնել նման բաների մասին: Ինչո՞ւ չես հոգում քո անմաքրության մասին»: Եվ նման այլ արտահայտություններ անելով՝ վանահայրը, երկու թեթևակի ապտակ տալով, ետ ուղարկեց նրան: Դոսիթեոսը, վերադառնալով արքա Դորոթեոսի մոտ, ցույց տվեց նրան իր ապտակներից կարմարած այտերը և ասաց. «Ահա ես ստացա այն, ինչ խնդրում էի»: Սակայն չասաց նրան, թե՛ «Ինչո՞ւ դու ինքդ չլուսաբանեցիր ինձ, այլ ուղարկեցիր վանահոր մոտ»: Նա ոչ մի նման բան չասաց, այլ այն ամենը, ինչ որ ասում էր նրան հայրը, ընդունում էր հավատով և կատարում էր՝ առանց քննելու և դատողություններ անելու: Իսկ

երբ նա արքա Դորոթեոսին հարցնում էր որևէ մտածություն մասին, ապա լսածը այնպիսի վստահություն էր ընդունում և այնպես էր պահում այն, որ երկրորդ անգամ այլևս չէր հարցնում ձերին նույն խորհրդի մասին:

Այսպիսով, ինչպես ես ասացի, եղբայրներից ոմանք, չհասկանալով այս սքանչելի գործերը, տրտնջում էին Մեծ ձերի կողմից Դոսիթեոսին ասված խոսքերի համար: Իսկ երբ Աստված կամեցավ հայտնել այն փառքը, որ պատրաստված էր Դոսիթեոսին իր սուրբ հնազանդության համար, ինչպես նաև ցույց տալ հոգիներ փրկելու այն շնորհը, որն ուներ երանելի Դորոթեոսը թեև տակավին աշակերտ էր, բայց արժանացավ այդպես ճիշտ և արագ առաջնորդել Դոսիթեոսին առ Աստված: Երանելի աշակերտի վախճանից շատ ժամանակ չանցած՝ պատահեց հետևյալը. մեկ այլ տեղից մի մեծ ձեր, գալով այնտեղ գտնվող եղբայրների մոտ, կամեցավ տեսնել այդ վանքի նախկինում ննջած սուրբ հայրերին և աղոթեց Աստծուն, որպեսզի Նա հայտնի իրեն նրանց մասին: Եվ տեսավ նրանց բոլորին միասին՝ կանգնած մի դասի մեջ, իսկ նրան մեջ՝ մի երիտասարդի: Ծերը հետո հարցրեց. «Ո՞վ է այն երիտասարդը, որին ես տեսա սուրբ հայրերի շարքում»: Եվ երբ նա նկարագրեց նրա դիմագծերը, ապա բոլորը իմացան, որ դա Դոսիթեոսն է եղել, և փառավորեցին Աստծուն՝ զարմանալով, թե ինչպիսի կյանքից և նախկին ինչպիսի ապրելակերպից ինչ չափի արժանացավ հասնել այդքան կարճ ժամանակահատվածում՝ այն բանի շնորհիվ, որ ուներ հնազանդություն և մերժում էր իր կամքը: Այդ բոլորի համար փառք տանք մարդասեր Աստծուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն



**ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԱԲԲԱ ԴՈՐՈՒԹԵՈՍԻ  
ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՆԵՐԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ**

Որոնք նա գրի է առել այն ժամանակ, երբ դուրս է եկել արբա Սերիդի վանքից և Աստժո օգնությամբ հիմնել է իր սեփական վանքը, արբա Յովհաննեսի (որ անվանվում էր Մարգարե) մահից և արբա Բարսիլիկոսի լռումից հետո:

Սկզբում, երբ Աստված ստեղծեց մարդուն (Ծննդ. 2.20), նա նրան բնակեցրեց դրախտում, ինչպես ասում է աստվածային Սուրբ Գիրքը, և զարդարեց նրան ամեն տեսակ առաքինություններով՝ պատվիրելով, որ չուտի դրախտի մեջտեղում գտնվող ծառից: Եվ այսպես, նա այնտեղ գտնվում էր դրախտի վայելչություն մեջ, աղոթքի, հայեցողության, ամեն տեսակ փառք ու պատվի մեջ՝ ունենալով առողջ զգացմունքներ և գտնվելով այն բնական (վիճակում), որում ստեղծվել էր: Քանզի Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով, այսինքն՝ անմահ, ինքնիշխան, զարդարված ամեն տեսակ առաքինություններով: Բայց երբ նա խախտեց պատվիրանը՝ ճաշակելով այն ծառի պտղից, որից Աստված պատվիրել էր նրան չուտել, այնժամ նա վտարվեց դրախտից (Ծննդ. 3), ընկավ բնական վիճակից և ապրեց արդեն մեղքի մեջ՝ փառասիրության, դարձի բոլոր հաճույքների հանդեպ սիրո և այլ կրքերի մեջ, և տիրվեց նրանց կողմից, քանզի ինքը նրանց ծառան դարձավ՝ հանցանք գործելու պատճառով: Այնժամ կամաց-կամաց սկսեց բազմանալ չարիքը, և թագավորեց մահը: Ոչ մի տեղ աստվածապաշտություն չմնաց, այլ ամենուրեք վերացավ Աստծո ճանաչողությունը: Միայն քչերը, ինչպես ասացին մեր հայրերը, բնական օրենքից մղված՝ ճանաչեցին Աստծուն, ինչպիսիք էին Աբրահամը և մյուս նահապետները՝ Նոյը, Հակոբը, կարճ ասած, շատ քչերը և համարյա եզակիները ճանաչեցին Աստծուն: Քանզի թշնամին այդ ժամանակ թափեց իր ամբողջ չարությունը. և քանի որ մեղքը թագավորեց, ապա երևան եկան կռապաշտությունը, բազմաստվածությունը, կախարդությունը, մարդասպանությունը և սատանայական մյուս չարիքները: Եվ այն ժամանակ բարերարն Աստված, իր արարածների հանդեպ գթասրտություն ցուցաբերելով, Մովսեսի միջոցով

տվեց օրենքի գիրը, որում մի բանը արգելում էր, իսկ մյուսը՝ կարգադրում, կարծես թե ասելով՝ այս արե՛ք, իսկ այս մյուսը՝ մի՛ արեք: Նա պատվիրան տվեց և ամենից առաջ ասաց. «Մեր Տեր Աստվածը մեկ Տեր է» (ԲՕրին. 6. 4), որպեսզի սրա միջոցով նրանց միտքը շեղի բազմաստվածությունից: Եվ դարձյալ ասում է. «Եվ պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով» (ԲՕրին. 6; 5): Եվ ամենուրեք հայտնում է, որ մեկ Աստված կա և մեկ Տեր, և որ ուրիշը՝ չկա: Քանզի ասելով՝ «Միւրիւր քո Տեր Աստծուն», նա ցույց տվեց, որ մեկ Աստված կա և մեկ Տեր: Եվ դարձյալ տասնաբանյայի մեջ ասում է. «Միայն քո Տեր Աստծուն պիտի երկրպագես և Նրան միայն պիտի ծառայես և Նրան մերձենաս և Նրա անունով երգվես» (ԲՕրին. 6; 13), հետո ավելացնում է. «Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար՝ որևէ բանի նմանությունը՝ ո՛չ վերևում՝ երկնքում, ո՛չ ներքևում՝ երկրի վրա» (Ելք 20; 34), քանի որ մարդիկ ծառայում էին արարածներին:

Եվ այսպես, բարերար Աստված տվեց օրենքը, որպես օգնություն, չարից դառնալու և ուղղվելու համար, սակայն նրանք չուղղվեցին: Առաքեց մարգարեներին, սակայն նրանք ևս հաջողություն չունեցան, քանզի չարը հաղթահարել էր (ողջ մարդկային բնությունը), ինչպես որ Եսային է ասում. «Ուտքից մինչև գլուխ նրա վրա առողջ տեղ չկա, վերքերի, այտուցների և շարավոտ խոցերի վրա ո՛չ սպեղանի կա, ո՛չ ձեթ, ո՛չ էլ վիրակապ» (Ես. 1; 6): Կարծես թե ասում է. «Չարը մասամբ չէ, ոչ էլ մի տեղ է, այլ՝ ամբողջ մարմնի մեջ, ընդգրկել է ամբողջ հոգին, տիրացել է նրա ամբողջ գորությունը, սպեղանի չկա խոցերի վրա դնելու, ասել է թե՛ ամեն ինչ մեղքին հպատակ է դարձել, ամեն ինչին նա ինքն է տիրում»: Եվ Երեմիան նմանապես ասում է. «Բաբելոնին դեղ տվեցինք, սակայն նա չբժշկվեց» (Երեմ 51; 9), այսինքն՝ մենք հայտնեցինք Քո անունը, հոչակեցինք Քո պատվիրանները,

բարերարությունները և խոստումները, կանխավ ասացինք Բաբելոնի վրա թշնամիների հարձակման մասին, բայց նա չբժշկվեց, այսինքն՝ չապաշխարեց, չերկյուղեց, իր չար գործերից չդարձավ: Այսպես է ասում նաև մի այլ տեղում. «Ձուր ծեծեցի ձեր որդիներին, դուք խրատ չառաք» (Երեմ. 6; 30), այսինքն՝ խելքի չեկաք և չխրատվեցիք: Եվ սաղմոսի մեջ ասված է. «Ամեն տեսակ կերակուրից դարչեց նրանց սիրտը, և նրանք մոտեցան մահվան դռներին» (Սղմ. 106; 18): Այնժամ վերջապես բարերար և մարդասեր Աստված առաքեց Իր Միածին Որդուն, քանզի միայն Աստված կարող էր բժշկել այդպիսի հիվանդությունը, և այդ բանը ծածկված չէր մարգարեներից: Դրա համար էլ Դավիթ մարգարեն պարզ ասում է. «Դո՛ւ, որ քերովբեների վրա ես նստում, հայտնվի՛ր, արթնացրո՛ւ Քո գորությունը և արի՛ մեզ փրկելու» (Սղմ. 79; 23), և՛ «Տե՛ր, ցածրացրու երկինքը և իջի՛ր» (Սղմ. 143; 5) և այլն: Մյուս մարգարեներն էլ զանազան կերպով բազում բաներ բարբառեցին. ոմանք, աղերսելով, որպեսզի Նա գա, մյուսները՝ ավետելով, որ Նա գալու է:

Եվ այսպես, եկավ մեր Տերը՝ Մարդ դարձած հանուն մեզ, որպեսզի, ինչպես ասում է սուրբ Գրիգորը, նմանով նմանը բժշկեր, այսինքն՝ հոգով՝ հոգին, մարմնով՝ մարմինը, քանզի Նա ամեն ինչով, բացի մեղքից, մարդ դարձավ: Նա վերցրեց մեր մարդկային բնությունը, մեր նախնական կազմությունը և դարձավ նոր Ադամ՝ ըստ Աստծո պատկերի, Ով Ստեղծողն էր առաջին Ադամի, նորոգեց բնական վիճակը և զգացմունքները կրկին առողջացրեց, ինչպիսին որ նրանք եղել էին սկզբում: Դառնալով մարդ՝ վերականգնեց ընկած մարդուն, ազատեց նրան, որին մեղքը ստրկացրել և բռնություն տիրել էր, քանզի թշնամին տիրում էր մարդուն բռնությունը և չարչարելով, այնպես որ մեղանչել չցանկացողները ևս ակամա մեղանչում էին, ինչպես որ առաքյալն է ասում մեր անունից. «Ոչ թե անում եմ բարին,

որ կամենում եմ, այլ գործում եմ չարը, որ չեմ կամենում» (Հռմ. 7; 19):

Եվ այսպես, Աստված, Հանուն մեզ մարդանալով, ազատեց մարդուն թշնամու պատճառած տառապանքներից: Քանզի Աստված տապալեց թշնամու ամբողջ գորուծյունը, ավերեց նրա ամրոցը, փրկեց մեզ նրա տիրապետությունից և ազատեց մեզ նրա ենթակայությունից և ստրկությունից, եթե միայն մենք ինքներս մեր կամքով չուզեանանք մեղանչել, որովհետև Նա մեզ իշխանություն տվեց, ինչպես Նա ինքն ասաց, «կոխտելու իժին, կարիճին և թշնամու ամբողջ գորուծյունը» (Ղուկ. 10; 19)՝ սուրբ մկրտությունը մաքրելով մեզ ամենայն մեղքից, քանզի սուրբ մկրտությունը կտրում և հեռացնում է ամենայն մեղք: Միաժամանակ բարերան Աստված, գիտենալով մեր տկարությունը և կանխատեսելով, որ մենք սուրբ մկրտությունից հետո էլ պիտի մեղանչենք, ինչպես ասված է Սուրբ Գրքում, թե՛ «Մարդու միտքը իր մանկությունից տրամադիր է խորհելու չարը» (Ծննդ. 8; 21), տվեց մեզ, իր բարերարության համաձայն, սուրբ պատվիրանները՝ մաքրելու համար մեզ, որպեսզի մենք, եթե կամենանք, կարողանանք նորից պատվիրանապահության միջոցով մաքրվել, ոչ միայն մեր մեղքերից, այլև հենց բուն կրքերից, քանզի այլ են կրքերը, և այլ՝ մեղքերը: Կրքեր են՝ բարկությունը, փառասիրությունը, հեշտասիրությունը, ատելությունը, զագրելի վավաչոտությունը և սրանց նմանները: Իսկ մեղքերը՝ կրքերի հենց գործողություններն են, երբ մեկը գործով է կատարում դրանք, այսինքն՝ մարմնով կատարում է այն գործերը, որոնք նրան կրքերն են մղում (կատարելու): Քանզի կարելի է կրքեր ունենալ, սակայն չգործել ըստ նրանց:

Եվ այսպես, Նա մեզ տվեց, ինչպես ասացի, պատվիրանները՝ մաքրելու համար մեզ նաև հենց մեր բուն կրքերից, ամենավատ նախադրյալներից, որոնք գտնվում են մեր ներքին մարդու մեջ.

քանզի պատվիրանները մարդուն ուժ են տալիս տարբերելու չարն ու բարին, արթնացնում են նրան, ցույց են տալիս նրան այն պատճառները, որոնց հետևանքով նա ընկնում է մեղքի մեջ, և ասում է. «Օրենքն ասում է՝ մի՛ սպանիր, իսկ ես ասում եմ՝ նույնիսկ մի՛ բարկացիր» (Մատթ. 5; 27-28): Քանզի, եթե դու տրվես ցանկասիրություն, թեկուզև այսօր էլ չչնանաս, սակայն ցանկությունը չի դադարի ներսում քեզ խռովել, մինչև քեզ չներքաշի հենց բուն գործողության մեջ: Եթե դու բարկանում ու ջղայնանում ես քո եղբոր վրա, ապա երբևիցե մի օր կընկնես նաև չարախոսության մեջ, հետո կսկսես նաև դավադրել նրա դեմ, ու այդ կերպով, կամաց-կամաց առաջ գնալով, կհասնես վերջի վերջո և մարդասպանության: Դարձյալ օրենքն ասում է. «Աչքի դեմ աչք, ատամի դեմ ատամ» (Ղևտ. 24; 20) և այլն, իսկ Քրիստոս ուսուցանում է ո՛չ միայն համբերությանը կրել այտին հասցված ապտակը, այլև խոնարհությանը դարձնել նաև մյուս այտը: Քանզի այն ժամանակ օրենքի նպատակը կայանում էր նրանում, որ մեզ ուսուցաներ չանելու այն, ինչից մենք ինքներս չէինք ուզում վնասվել, դրա համար էլ Նա վախի միջոցով էր մեզ կասեցնում չարիք գործելուց, որպեսզի ինքներս չտուժեինք դրանից: Իսկ ներկայումս պահանջվում է, ինչպես ասացի, վոնդել բուն ատելությունը, ինքնասիրությունը, փառասիրությունը և մյուս կրքերը: Մի խոսքով, այժմ մեր Տիրոջ՝ Քրիստոսի նպատակն է մեզ ուսուցանել, թե ինչից ենք մենք ընկել այս բոլոր մեղքերի մեջ, ինչ պատճառով են մեզ այսպիսի չար օրեր հասել: Եվ այսպես, սկզբից, ինչպես արդեն ասացի, Նա մեզ ազատեց սուրբ մկրտությամբ՝ տալով մեզ բարին գործելու ազատություն, եթե կամենանք, որպեսզի այլևս բռնությանը չտարվենք դեպի չարը, քանզի նա, ով գերված է մեղքերով, նրանք նրան ծանրացնում ու գրավում են, ինչպես և ասված է, թե՛ «Յուրաքանչյուրը պիտի կապվի իր մեղքերի թելերով» (Առակ. 5; 22): Հետո Նա մեզ ու-

սուցանում է՝ ինչպես սուրբ պատվիրանների միջոցով մաքրվել նույն բուն կրքերից, որպեսզի նրանց միջոցով դարձյալ չընկնենք միևնույն մեղքերի մեջ: Վերջապես, մեզ ցույց է տալիս նաև պատճառը, որից մարդն ընկնում է անհոգության և անհնազանդության մեջ Աստծո պատվիրանների հանդեպ, և ըստ այդմ դեղամիջոց է տալիս մեզ ընդդեմ այս պատճառի, որպեսզի մենք կարողանանք հնազանդ դառնալով՝ փրկվել: Իսկ ո՞րն է այդ դեղամիջոցը, և ո՞րն է անհոգության պատճառը: Լսեցե՛ք, թե ինչ է ասում մեր Տերը. «Սովորեցե՛ք Ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ կգտնեք» (Մատթ. 11. 29): Ահա այստեղ նա հակիրճ, մեկ խոսքով, մեզ ցույց տվեց արմատն ու պատճառը բոլոր չարիքների և դրանցից ազատվելու դեղամիջոցը, որը պատճառն է բոլոր բարիքների, ցույց տվեց, որ բարձրամտությունը մեզ տապալեց, և որ անհնար է այլ կերպ ողորմության ստանալ, եթե ոչ միայն սրա հակադիրով, այսինքն՝ խոնարհամտությամբ: Քանզի բարձրամտությունը ծնում է անհոգություն, անհնազանդություն և կործանում, ինչպես որ խոնարհամտությունը ծնում է հնազանդություն և հոգու փրկություն: Իհարկե, ես այստեղ նկատի ունեմ ճշմարիտ խոնարհամտությունը, ոչ թե խոսքերով միայն կամ արտաքին խոնարհ կեցվածքով, այլ իսկապես այն խոնարհ զգացումը, որ հաստատված է հենց բուն սրտում: Եվ այսպես, ով ցանկանում է գտնել ճշմարիտ խոնարհություն և հոգու անդորր, թող խոնարհամտություն սովորի և կտեսնի, որ նրանում է ամենայն ուրախություն և ամենայն փառք և ամբողջ հանգիստը, ինչպես որ հպարտության մեջ այս ամենի հակառակն է: Քանզի ի՞նչ պատճառով մենք ենթարկվեցինք այս բոլոր վշտերին: Պատճառը մեր հպարտությունը չէ՞ արդյոք, մեր անմտությունը չէ՞ արդյոք: Պատճառն այն չէ՞, որ մենք չենք սանձահարում մեր չար ցանկությունները: Պատճառն այն չէ՞, որ մենք համառում ենք մեր դառը

\* Անընչություն - բացարձակ հրաժարում ամենայն ինչից, որը հատուկ է ճգնավորների:

ինքնակամություն մեջ: Դե էլ ուրիշ ի՞նչ պատճառով: Մի՞թե մարդը իր ստեղծվելու պահից իսկ ամեն տեսակ վայելչությունների, ամեն տեսակ ուրախությունների, ամեն տեսակ հանգստի և ամեն տեսակ փառքի մեջ չէր: Նրան պատվիրել էր չանել այդ մի բանը, իսկ նա արեց: Տեսնո՞ւմ ես հպարտությունը, տեսնո՞ւմ ես համառությունը, տեսնո՞ւմ ես անհնազանդությունը:

Այս բոլորից հետո Աստված, տեսնելով այդպիսի անպատկառությունը, ասում է՝ նա անմիտ է: Նա չի կարողանում վայելել ուրախությունը: Եթե նա աղետներ չկրի, ապա էլ ավելի առաջ կգնա և կատարելապես կկործանվի: Քանզի եթե չիմանա, թե ինչ է վրիշտը, ապա չի իմանա՝ և ինչ է հանգիստը»: Այնժամ Աստված հատուցեց նրան այն, ինչին որ նա արժանի էր, և վտարեց նրան դրախտից: Եվ մարդը տրվեց իր սեփական եսասիրությունը և իր սեփական կամքին, որպեսզի դրանք փչրեին նրա ոսկորները, որպեսզի նա սովորեր հետևել ոչ թե ինքնիրեն, այլ՝ Աստծո պատվիրաններին, որպեսզի անհնազանդության հետևանքով կրած չարատանջությունը սովորեցներ նրան հնազանդության հանգստին, ինչպես ասված է մարգարեի մոտ. «Քո ապստամբությունը քեզ խրատ է լինելու» (Երեմ. 2; 19): Սակայն Աստծո բարերարությունը, ինչպես հաճախ եմ ասել, չանտեսեց իր ստեղծածին, այլ կրկին հորդորում է, դարձյալ կանչում է. «Ինձ մոտ եկե՛ք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. 11; 28): Կարծես թե ասում է. «Ահա՛ դուք աշխատեցիք, չարչարվեցիք, ահա դուք ճաշակեցիք ձեր անհնազանդության չար հետևանքները, հիմա արդեն եկե՛ք, դարձե՛ք Ինձ մոտ, եկե՛ք և ճանաչեցե՛ք ձեր տկարությունը, որպեսզի մտնեք ձեր հանգստի և փառքի մեջ: Եկե՛ք, վերակենդանացրեք ձեզ խոնարհամտությամբ՝ բարձրամտության փոխարեն, որով դուք ձեզ սպանեցիք: Սովորեցե՛ք Ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ կգտ-

ներք» (Մատթ. 11. 29): Օ՛, զարմա՛նք, եղբայրնե՛ր իմ, ի՛նչ կարող է անել հպարտությունը: Օ՛, հրա՛շք, որքա՛ն զորեղ է խոնարհամտությունը: Քանզի ի՞նչ կարիք կար ընկնելու այսպիսի հանկարծափոխության մեջ: Եթե մարդը սկզբում խոնարհվեր, լսեր Աստծուն և պահեր պատվիրանը, ապա և չէր ընկնի: Դարձյալ, ընկնելուց հետո էլ, Աստված նրան հնարավորություն տվեց զղջալու և ողորմություն գտնելու, սակայն և այնպես, նրա պարանոցը մնաց անխոնարհելի: Քանզի Աստված եկավ և ասաց նրան. «Մ՛ւր ես, Աղա՛մ», այսինքն՝ ինչպիսի՛ փառքից ինչպիսի ամոթի եկար: Իսկ հետո, հարցնելով, թե՞ «Ինչո՞ւ մեղանչեցիր, ինչո՞ւ խախտեցիր (պատվիրանը)», պատրաստում էր նրան հենց այն բանին, որ նա ասեր՝ «ներիր»: Սակայն չկա խոնարհություն: Որտե՞ղ է խոսքը՝ «ներիր»: Չկա զղջում, այլ՝ լրիվ հակառակը: Քանզի նա հակաճառում է և առարկում. «Այն կի՛նը, որ Դո՛ւ տվեցիր, նա՛ խաբեց ինձ», և չասաց. «Իմ կի՛նն ինձ խաբեց», այլ՝ «Այն կի՛նը, որ Դո՛ւ ինձ տվեցիր», կարծես թե ասում էր. «Այն փորձանքը, որ Դո՛ւ իմ գլխին բերեցիր»: Քանզի միշտ այսպես է լինում, եղբայրնե՛ր, երբ մարդը չի ուզում հանդիմանել իրեն, ապա նա չի հապաղում մեղադրել նույնիսկ Աստծուն: Հետո Աստված դիմում է կնոջը և ասում նրան. «Դո՛ւ ինչո՞ւ չպահեցիր պատվիրանը», կարծես հատուկ ներշնչում էր նրան, թե՞ ծայրահեղ դեպքում գոնե դո՛ւ ասա՛ «ներիր», որպեսզի խոնարհվի քո հոգին, և դու ողորմություն գտնես: Բայց դարձյալ չի լսում «ներիր» խոսքը, քանզի նա էլ է պատասխանում. «Օձը՛ խաբեց ինձ», կարծես թե ասում էր. «Օձը՛ մեղանչեց, ես ի՞նչ գործ ունեմ»: Ի՞նչ եք անում, անիծյալնե՛ր, զղջացե՛ք, ճանաչեցե՛ք ձեր հանցանքը, ցա՛վ կրեք ձեր մերկություն համար: Սակայն նրանցից և ո՛չ մեկը չկամեցավ մեղադրել ինքնիրեն, ո՛չ մեկի մեջ խոնարհություն նշույլ անգամ չգտնվեց: Եվ ահա, դուք պարզ տեսնում եք, թե մինչև ուր հասավ մեր հոգե-

վիճակը, ահա թե ինչպիսի փշոտ պատուհասներ բերեց մեզ այն, որ մենք արդարացնում ենք ինքներս մեզ, որ համառում ենք մեր կամքի մեջ և հետևում ենք ինքներս մեզ: Այս բոլորը հպարտության ծնունդներն են և Աստծո թշնամիները: Իսկ խոնարհամտության ծնունդներն են՝ ինքնապարսավումը, անվատահուլությունը սեփական մտքին, ատելությունը սեփական կամքի հանդեպ, քանզի մարդը սրանց չնորհիվ արժանանում է գալու ինքնիրեն և վերադառնալու իր բնական վիճակին՝ Քրիստոսի սուրբ պատվիրաններով սրբվելու միջոցով: Առանց խոնարհություն անհնար է ենթարկվել պատվիրաններին և հասնել ինչ-որ բարի բանի, ինչպես որ աբբա Մարկոսն է ասել. «Առանց սրտի կտտրվածություն և խոնարհություն անհնար է ազատվել չարից և ձեռք բերել առաքինություն»:

Եվ այսպես, սրտի կտտրվածության միջոցով մարդը սկսում է հնազանդվել պատվիրաններին, ազատվում է չարից, ձեռք է բերում առաքինություններ և ապա մտնում է իր հանգիստը: Գիտենալով այս՝ սրբերը ևս ամեն կերպ ջանում էին խոնարհ կյանքով միավորվել Աստծո հետ: Քանզի եղան որոշ աստվածասեր մարդիկ, որոնք սուրբ մկրտությունը ոչ միայն կանխեցին կրքերի գործողությունները, այլև փափագեցին հաղթահարել և արմատախիլ անել հենց բուն կրքերը և լինել անկիրք, ինչպիսիք էին սուրբ Անտոնը, Պախոմը և մյուս աստվածակիր հայրերը: Նրանք բարի մտադրություն ունեին մաքրելու իրենք իրենց, ինչպես առաքյալն է ասում՝ «հոգու և մարմնի ամեն տեսակ պղծությունից» (Բ Կորնթ. 7; 1), քանզի գիտեին, որ պատվիրանապահության միջոցով, ինչպես մենք ասացինք, մաքրվում է հոգին, և, այսպես ասած, մաքրվում է և միտքը, պայծառանում է ու գալիս իր բնական վիճակին, քանզի «Տիրոջ պատվիրանը լույս է և լույս է տալիս աչքերին» (Սղմ. 18; 9): Նրանք հասկացան, որ, գտնվելով աշխարհում, չեն կարող բարվոք կերպով առաքինություններ



գործել և իրենց համար մտահղացան կյանքի հատուկ ապրելաձև, ժամանակի անցկացման հատուկ կարգ և հատուկ ձևի գործելակերպ, մի խոսքով, վանական կյանք: Եվ սկսեցին փախչել աշխարհից և ապրել անապատներում՝ ճգնելով պահպանել թաղանթի և հսկումների մեջ, քնում էին մերկ հատակին և համբերում էին այլ չարչարանքների, կատարելապես հրաժարվում էին հայրենիքից և հարազատներից, կալվածքներից և ունեցվածքից, մի խոսքով, իրենք իրենց խաչն էին հանում աշխարհի համար: Եվ նրանք ոչ միայն պահեցին պատվիրանները, այլև Աստծուն ընծաներ բերեցին, և ես ձեզ կբացատրեմ, թե ինչպես նրանք այդ արեցին: Քրիստոսի պատվիրանները տրված են բոլոր քրիստոնյաներին, և յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է կատարելու դրանք. դրանք, այսպես ասած, թագավորին տրվելիք տուրքն են, և ո՞վ է, որ հրաժարվելով թագավորին տուրք տալուց՝ խուսափում է կտա պատժից: Սակայն աշխարհում կան մեծ և հայտնի մարդիկ, որոնք ոչ միայն տուրք են տալիս թագավորին, այլև բերում են նրան ընծաներ: Այդպիսիները արժանանում են մեծագույն պատվի, մեծ պարգևների և արժանապատվության: Այդպես և հայրերը, նրանք ո՛չ միայն պահեցին պատվիրանները, այլև Աստծուն ընծաներ բերեցին: Այդ ընծաներն են՝ կուսությունը և անընչությունը\*։ Մրանք պատվիրաններ չեն, այլ՝ ընծաներ, քանզի Սուրբ Գրքում ոչ մի տեղ ասված չէ, թե՛ կին մի՛ առ, երեխաներ մի՛ ունեցիր: Այդպես էլ Քրիստոսն ասելով՝ «Վաճառի՛ր ունեցվածքդ» (Մատթ. 19; 21), սրանով պատվիրան չէ, որ տվեց, այլ, երբ Նրան մոտեցավ օրենսդատր և ասաց. «Բարի վարդապետ, ի՞նչ պիտի անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ», Քրիստոս պատասխանեց. «Դու գիտես պատվիրանները՝ մի սպանիր, մի՛ շնացիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր մերձավորիդ դեմ և այլն»։ Երբ այս երիտասարդը ասաց, թե՛ «Այդ բոլորը ես մանկուց եմ պահել», Տերն ավելացրեց. «Եթե ուզում ես կատարյալ լինել, վա-

ճառիք ունեցվածքդ և տո՛ւր աղքատներին» (Մատթ. 19. 21): Նա չասաց՝ վաճառի՛ր ունեցվածքդ, կարծես հրամայելով, այլ՝ խորհուրդ տալով, քանզի «եթե ուզում ես» խոսքը հրամայողի խոսք չէ, այլ՝ խորհրդատուի:

Եվ այսպես, ինչպես մենք ասացինք, հայրերը բերեցին Աստծուն այլ առաքինությունների հետ միասին նաև ընծաներ՝ կուսություն և անընչություն, և, ինչպես քիչ առաջ հիշատակեցինք, աշխարհը խաչեցին իրենց համար, բայց հետո ջանացին և իրենց խաչել աշխարհի համար, ինչպես որ առաքյալն է ասում. «Աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար» (Գաղ. 6; 14): Իսկ ի՞նչ տարբերություն սրանց միջև, ինչպե՞ս է, որ աշխարհը խաչվում է մարդու համար, և մարդը՝ աշխարհի: Երբ մարդը հրաժարվում է աշխարհից և դառնում է վանական, թողնում է ծնողներին, կալվածքները, ունեցվածքը, առևտուրը, ուրիշներին տալը և նրանցից վերցնելը, այնժամ աշխարհն է նրա համար խաչվում, քանզի նա հրաժարվեց նրանից: Այդ ես նշանակում առաքյալի խոսքերը. «Աշխարհը խաչված է ինձ համար», հետո նա ավելացնում է. «Ես էլ՝ աշխարհի համար»: Երբ ազատվելով արտաքին բաներից՝ նա ճգնում է նաև ընդդեմ բուն հեշտությունների, կամ ընդդեմ ինչքի հանդեպ բուռն տենչանքի, ընդդեմ իր ցանկությունների և սպանում է իր կրքերը, այնժամ նա ինքն է խաչվում աշխարհի համար և արժանանում է ասելու առաքյալի հետ. «Աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի»:

Մեր հայրերը, ինչպես մենք ասացինք, աշխարհը իրենց համար խաչը հանելով՝ տրվեցին ճգնությունների, ապա և իրենց խաչեցին աշխարհի համար, իսկ մենք մտածում ենք, որ խաչել ենք աշխարհը մեզ համար, նրանով միայն, որ թողեցինք նրան և եկանք վանք, սակայն ինքներս մեզ չենք ուզում խաչել աշխարհի համար, քանի որ տակավին սիրում ենք նրա հեշտություններ-

րը, դեռևս նրա ցանկուլթյուններն ունենք, համակրում ենք նրա փառքը, կրքոտ մղում ունենք կերակրի և հագուստի հանդեպ: Եթե ձեռքի տակ ունենում ենք ինչ-որ աշխատանքային լավ գործիքներ, ապա մենք նույնիսկ նրանց ենք կապվում կրքոտությամբ, և թույլ ենք տալիս, որ մի չնչին գործիք հարուցի մեր մեջ աշխարհիկ ցանկուլթյուններ, ինչպես ասում է արքա Զոսիմոսը: Մենք կարծում ենք, որ աշխարհից ելնելով և գալով վանք՝ թողել ենք արդեն աշխարհիկ ամեն բան, բայց (և այստեղ), չնչին իրերի միջոցով, հագուլթու ենք տալիս մեր (աշխարհիկ) ցանկուլթյուններին: Այս բանը պատահում է մեզ հետ մեր մեծ անմտության պատճառով, որ մենք, թողնելով մեծ և թանկարժեք իրեր, ինչ-որ չնչին իրերի միջոցով հագուլթու ենք տալիս մեր կրքերին, քանզի մեզանից յուրաքանչյուրը թողել է այն, ինչ որ ուներ՝ շատ ունեցողը շատն է թողել, ինչ-որ բան ունեցողը՝ թողել է և այն, ինչ որ ուներ՝ յուրաքանչյուրն ըստ իր կարողության: Եվ գալով վանք, ինչպես ես ասացի, անկարևոր և չնչին իրերի միջոցով մենք հագուլթու ենք տալիս մեր կրքոտությանը: Սակայն մենք չպետք է այդպես վարվենք, այլ ինչպես որ հրաժարվեցինք աշխարհից և նրա իրերից, այդպես մենք պետք է հրաժարվենք նաև իրերի հանդեպ կրքոտ մղումից և գիտենանք, թե ինչու մն է կայանում այս հրաժարումը, և ինչու համար ենք մենք եկել վանք, և թե ինչ խորհուրդ ունեն այն հագուլթուները, որ մենք կրում ենք. պետք է համապատասխան լինենք դրանց և ճգնենք այնպես, ինչպես որ մեր հայրերն են ճգնել:

Հանդերձները, որ մենք կրում ենք, բաղկացած են՝ պարեգոտից, որը թևքեր չունի, կաշվե գոտուց, եմփորոնից և կնգուլից (վեղարի կլորավուն ձևը), և սրանք բոլորը խորհրդանիշներ են: Եվ մենք պիտի իմանանք, թե ինչ են խորհրդանշում մեր հանդերձները: Եվ այսպես, ինչո՞ւ ենք մենք պարեգոտ կրում, որը թևքեր չունի, մինչդեռ մնացած բոլորը թևքեր ունեն, մենք

ինչո՞ւ չունենք դրանք: Թևքը նման է ձեռքին, իսկ ձեռքը գործի նշանակն է: Եվ այսպես, երբ մեզ միտք է գալիս ինչ-որ բան անելու մեր հին մարդու ձեռքերով, ինչպես օրինակ՝ գողանալու, կամ հարվածելու, և ընդհանրապես, մեր ձեռքերով որևէ մեզ գործելու, ապա մենք պետք է ուշադրություն դարձնենք մեր հագուլթուին և հիշենք, որ թևքեր չունենք, այսինքն՝ ձեռքեր չունենք, որպեսզի հին մարդու որևէ գործը կատարենք: Բացի այդ, մեր պարեգոտն ունի նաև որոշ ծիրանագուլթն նշան: Ի՞նչ է խորհրդանշում այս ծիրանագուլթն նշանը: Յուրաքանչյուր թագավորական զինվոր իր այծենակածի (յափնջի) վրա ունի ծիրանի: Քանի որ թագավորը կրում է ծիրանի, ապա և նրա բոլոր զինվորները իրենց այծենակածի վրա կրում են ծիրանի, այսինքն՝ արքայական առանձնաշնորհ, որպեսզի դրանով ճանաչեն նրանց, որ նրանք պատկանում են թագավորին և ծառայում են նրան: Այդպես և մենք կրում ենք ծիրանագուլթն նշանը մեր պարեգոտով վրա՝ ցույց տալով, թե մենք դարձել ենք Քրիստոսի զինվորները և որ պարտավոր ենք համբերելու այն բոլոր չարանքներին, որոնց Նա՛ համբերեց հանուն մեզ: Քանզի մեր Տերը չարչարվելիս կրում էր ծիրանագուլթն պատմուճան, նախ և առաջ որպես թագավոր, քանզի Նա է թագավորը թագավորների և Տերը տերերի, իսկ երկրորդը՝ որպես ծաղրանք՝ սրբապիղծ մարդկանց կողմից: Այդպես և մենք, ունենալով ծիրանագուլթն նշանը՝ ուխտում ենք, ինչպես ես ասացի, կրել Նրա բոլոր չարանքները: Եվ ինչպես որ զինվորը չպետք է թողնի իր ծառայությունը նրա համար, որպեսզի դառնա հողագործ կամ առևտրական, քանզի այլապես նա կզրկվի իր աստիճանից, ինչպես որ առաքյալն է ասում. «Ոչ ոք, զինվոր դառնալով, չի զբաղվի աշխարհիկ կյանքի գործերով, որպեսզի զորավարին հաճելի լինի» (Բ Տիմ. 2; 4), այդպես մենք ևս պարտավոր ենք ճգնել և չհոգալ աշխարհիկ որևէ բանի մասին և ծառայել միակ

Աստծուն, որպեսզի, ինչպես ասված է, լինենք կույս՝ ջանադրաբար զբաղված իր գործով: (Բ Կորն. 11; 2):

Մենք ունենք նաև գոտի: Ինչո՞ւ համար ենք մենք կրում այն: Գոտին, որ մենք կրում ենք, խորհրդանիշն է նախ և առաջ այն բանի, որ մենք պատրաստ ենք անցնելու գործի, ինչպես և Տերն է ասում. «Թո՛ղ ձեր գոտիները կապված լինեն» (Ղուկ. 12; 35), երկրորդը՝ այն բանի համար, որ ինչպես գոտին է վերցված մեռած (կենդանու) մարմնից, այդպես էլ մենք ենք պարտավոր մեռցնելու մեր ցանկություն կիրքը, քանզի գոտին կրում ենք մեր գոտկատեղին, որտեղ և երիկամներն են գտնվում, որոնց մեջ, ինչպես ասում են, պարփակված է մեր հոգու ցանկական մասը, և սա ասված է առաքյալի կողմից. «Սպանեցե՛ք ձեր երկրավոր ցանկությունները, դեն գցեցե՛ք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր» (Կող. 3; 5):

Ունենք նմանապես և եմիփորոն, որը խաչաձև գցվում է մեր ուսերին, իսկ դա նշանակում է, որ մենք մեր ուսերին կրում ենք խաչի նշանը, ինչպես Տերն է ասում. «Վերցրո՛ւ քո խաչը և արի իմ ետևից» (Մարկ. 6; 34): Ի՞նչ բան է խաչը. ուրիշ բան չէ, եթե ոչ՝ կատարելապես մահացում, որը կատարվում է մեր մեջ ի Քրիստոս (ունեցած մեր) հավատով: Քանի որ հավատը, ինչպես ասված է «Հարանց վարքում», մշտապես վերացնում է խոչընդոտները և մեզ համար մատչելի է դարձնում այն սխրանքը, որը մեզ առաջնորդում է այդպիսի կատարյալ մահացության, այսինքն, որպեսզի մարդը մեռած լինի աշխարհային ամեն բանի հանդեպ: Եվ եթե նա թողել է իր ծնողներին, ապա թող ճգնի նաև նրանց հանդեպ իր կրքոտ կապվածություն դեմ: Նմանապես, եթե մեկը հրաժարվել է իր կալվածքներից և ունեցվածքից և (ընդհանրապես) ինչ-որ բանից, ապա նա պետք է հրաժարվի նաև նրանց հանդեպ իր բուռն ցանկությունից. հենց սրանում է կայանում կատարյալ հրաժարումը:

Մենք կրում ենք նաև կնգուղ, որը խոնարհություն խորհրդանիշն է: Կնգուղները կրում են փոքրահասակ և անհիշաչար մանուկները, իսկ չափահաս մարդը կնգուղ չի կրում: Մենք այն կրում ենք այն բանի համար, որպեսզի մանուկ լինենք չարություն գործելու մեջ, ինչպես առաքյալն է ասում. «Մտքով երեխա մի՛ եղեք, այլ երեխա եղեք չարություն գործելու մեջ» (Ա Կորնթ. 14; 20): Իսկ ի՞նչ է նշանակում մանուկ լինել չարություն գործելու մեջ: Անմեղ մանուկին եթե անպատվեն, չի բարկանա, իսկ եթե պատվեն, չի հպարտանա: Եթե մեկը վերցնի նրան պատկանող մի իր, նա չի տխրի, քանզի մանուկ է չարություն գործելու մեջ. ո՛չ վրեժխնդիր է լինում վիավորանքի դիմաց և ո՛չ էլ փառք է փնտրում: Կնգուղը նաև Աստծո շնորհի խորհուրդն ունի, քանզի ինչպես որ կնգուղն է ծածկում և տաքացնում մանկան գլուխը, այդպես և Աստծո շնորհն է ծածկում մեր միտքը, ինչպես ասված է «Հարանց վարքում»՝ «Կնգուղը խորհրդանշում է Աստծո և մեր Փրկչի շնորհը, որը ծածկում է մեր իշխանական միտքը և պահպանում է Քրիստոսով մեր մանկությունը դեկերից, որոնք ջանում են ընդդիմանալ և տապալել մեզ»:

Ահա, մենք մեր մեջքին կրում ենք գոտի, որը խորհրդանշում է անասնական տուփանքի մահացումը, իսկ մեր ուսերին՝ եմիփորոն, այսինքն՝ խաչ: Ահա և կնգուղը, որը խորհրդանիշն է անչարություն և Քրիստոսով մանկության: Եվ այսպես, ապրենք համապատասխան մեր հագուստին, որպեսզի, ինչպես հայրերն են ասել, չստացվի, թե մենք կրում ենք օտար հանդերձներ, այլ, ինչպես որ թողեցինք մեծերը, այդպես թողնենք և՛ փոքրերը: Մենք թողել ենք աշխարհը, թողնե՛նք և կրքոտ մղումը նրա հանդեպ, քանզի կրքոտ մղումը, ինչպես ես ասացի, թե՛ անկարևոր և թե՛ սովորական իրերի հանդեպ, որոնք բնավ ուշադրություն արժանի չեն, դարձյալ կապում և միավորում են մեզ աշխարհի հետ, իսկ մենք այդ չենք գիտակցում: Եվ եթե մենք ուզում ենք կա-

տարեկապես փոխվել և ազատվել աշխարհից, ապա սովորենք հատել մեր ցանկությունները, և այդպիսով, կամաց-կամաց, Աստծո օգնությամբ, մենք կառաջադիմենք և կհասնենք անկրթության: Քանզի ոչինչ այնքան օգուտ չի բերում մարդկանց, ինչպես որ սեփական կամքի հատումը, և արդարև, սրանից մարդն ավելի է առաջադիմում, քան ցանկացած այլ առաքինությունից: Եվ ինչպես այն մարդը, որ ճանապարհ գնալիս գտնում է մի գավազան և դրա օգնությամբ անցնում է իր ճանապարհի մեծ մասը, այդպես է պատահում և նրա հետ, ով ընթանում է իր կամքի հատման ճանապարհով: Քանզի իր կամքի հատմամբ նա ձեռք է բերում անկրթություն, իսկ անկրթությունից, Աստծո օգնությամբ, նա հասնում է և կատարյալ անկրթության: Կարելի է նաև կարճ ժամանակամիջոցում հատել սեփական ցանկությունները: Ենթադրենք, թե ինչ-որ մեկը, անցնելով ոչ այնքան մեծ տարածություն, տեսնում է ինչ-որ բան, և խորհուրդը նրան ասում է. «Նայի՛ր այն կողմ», իսկ նա պատասխանում է իր խորհուրդին. «Իսկապես չե՛մ նայելու», և հատում է իր ցանկությունը ու չի նայում: Կամ էլ հանդիպում է մարդկանց, որոնք դատարկաբանում են, և խորհուրդը նրան ասում է. «Դու էլ ասա այսինչ բաները», իսկ նա հատում է իր ցանկությունը և չի ասում: Կամ էլ խորհուրդը նրան ասում է. «Գնա՛ հարցրու խոհարարին, թե ի՛նչ է եփում», իսկ նա չի գնում և հատում է իր ցանկությունը: Նա տեսնում է ինչ-որ բան, և խորհուրդը ասում է նրան. «Հարցրո՛ւ, թե ով է բերել այն բանը», իսկ նա հատում է իր ցանկությունը և չի հարցնում: Այդ կերպով հատելով իր կամքը՝ նա սովորություն է ձեռք բերում հատելու այն և, սկսելով փոքրից, հասնում է նրան, որ սկսում է մեծի մեջ էլ այն հատել առանց դժվարության և հանգիստ կերպով, և ի վերջո հասնում է այն բանին, որ իսպառ ձերբազատվում է իր սեփական կամքից, և ինչ էլ որ պատահի, նա լինում է հանգիստ և անխ-

ուով, կարծես իր սեփական ցանկությունն է կատարվում: Եվ այն-ժամ, երբ նա չի ուզում կատարել իր կամքը, պարզվում է, որ այն մշտապես կատարվում է: Քանզի նա, ով չունի իր սեփական կամքը, նրա համար այն ամենը, ինչ որ իր հետ պատահում է, լինում է իր իսկ կամքի համաձայն: Եվ այդպիսով դուրս է գալիս, որ նա չունի ցանկության կիրք, իսկ անկրթությունից, ինչպես որ ասացի, նա հասնում է կատարյալ անկրթության: Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի՞ առաջադիմություն է կամաց-կամաց հասցնում սեփական կամքի հատումը:

Ինչպիսի՞ն էր նախկինում երանելի Դոսիթեոսը, ինչպիսի՞ ճոխությունից և անհոգությունից եկավ նա: Նա նույնիսկ երբեք չէր լսել Աստծո խոսքը, սակայն դուռք լսեցիք, թե հոգևոր հասակի ինչպիսի՞ աստիճանի հասցրեց նրան կարճ ժամանակում երանելի հնազանդությունը և սեփական կամքի հատումը: Եվ թե ինչպես Աստված նրան փառավորեց և թույլ չտվեց, որ նրա այդպիսի առաքինությունը մոռացություն տրվի, այլ հայտնեց նրա մասին մի սուրբ ծերի, որն էլ տեսավ Դոսիթեոսին մեծագույն սրբերի շարքում՝ վայելչացած նրանց երանությամբ:

Պատմեմ ձեզ նման մի այլ դեպք՝ ինձ հետ կատարված, որպեսզի դուք ճանաչեք, թե երանելի հնազանդությունը և սեփական կամքի հատումը մարդուն ազատում է անգամ մահից: Մի անգամ, երբ ես դեռ գտնվում էի արբա Սերիդի վանքում, այնտեղ եկավ Ասկաղոնյան երկրից մի մեծագույն ծերի աշակերտ՝ որոշակի հանձնարարությամբ, որ ստանձնել էր իր արբայի կողմից: Ծերը նրան պատվիրել էր վերադառնալ իր խուրը՝ նախքան մթնելը: Մինչ այդ անձրևախառն ու որոտալից փոթորիկ բարձրացավ, և մոտակայքում հոսող գետը բարձրացավ իր ափերից: Եղբայրը, հիշելով իր ծերի խոսքը, ուզեց հետ վերադառնալ: Մենք խնդրեցինք նրան մնալ՝ համարելով, որ նրա համար անհնար կլինի անվտանգ անցնել հեղեղատը, բայց նա չհամաձայնվեց մնալ մեզ

Հետ: Այնժամ մենք ասացինք. «Գնա՛նք նրա Հետ մինչև Հեղեղատ. երբ նա տեսնի այն, այնժամ նա ինքը ետ կգառնա»: Եվ այսպես, մենք գնացինք նրա Հետ, և երբ Հասանք գետին, նա Հանեց իր Հանդերձը և այն կապեց իր գլխին, գոտևորվեց և գցվեց գետը՝ այդ սարսափելի արագահոս Հեղեղատը: Մենք կանգնել էինք սարսափահար և դողում էինք (նրա համար), որ միայն թե նա չխեղդվեր, բայց նա շարունակում էր լողալ և բավականին արագ Հայտնվեց մյուս ափին, հագավ իր հանդերձը, այնտեղից մեզ խոնարհվեց՝ հրաժեշտ տալով մեզ և արագ Հեռացավ՝ շարունակելով իր ճանապարհը: Իսկ մենք կանգնել էինք ապշահար և զարմանում էինք այս առաքինություն ուժի վրա: Մինչդեռ մենք վախից հագրվ էինք կարողանում նայել գետին, նա անվտանգ անցավ այն իր Հնազանդության շնորհիվ:

Նմանապես և այն եղբայրը, որին իր աբբան իրենց կարիքների համար ուղարկեց գյուղ՝ Աստծո սիրո համար իրենց ծառայող մեկի մոտ, և երբ եղբայրը տեսավ, որ նրա դուստրը սկսում է իրեն ներքաշել մեղք գործելու մեջ, ասաց միայն. «Տե՛ր Աստված, իմ հոր աղոթքներով փրկի՛ր ինձ», և իսկույն Հայտնվեց դեպի վանք տանող ճանապարհին: Տեսնո՞ւմ եք առաքինություն ուժը, տեսնո՞ւմ եք խոսքի ներգործությունը: Ինչպիսի՜ աջակցություն է պարունակում իր մեջ այն, որ մարդ դիմում է իր հոր աղոթքներին: Նա ասաց միայն. «Աստված իմ, իմ հոր աղոթքներով փրկի՛ր ինձ», և նույն պահին Հայտնվեց ճանապարհին: Ուշադրություն դարձրեք այս երկուսի խոնարհություն և բարեպաշտություն վրա: Նրանք շատ նեղ դրություն մեջ էին, և ծերը ուզեց ուղարկել եղբորը իրենց ծառայող մեկի մոտ, սակայն չասաց՝ «Գնա», այլ հարցրեց նրան. «Ուզո՞ւմ ես գնալ»: Նմանապես և եղբայրը չասաց՝ «Կգնա՛մ», այլ պատասխանեց նրան. «Ինչպես որ կամենաս, հա՛յր, այդպես էլ կանեմ», քանզի նա վախենում էր թե՛ գայթակղվելուց և թե՛ հորը չհնազանդվե-

լուց: Հետո, երբ կարիքն էլ ավելի նեղեց նրանց, ծերը ասաց նրան. «Վե՛ր կաց և գնա, որդյա՛կ», և չասաց նրան՝ «Ապավինում եմ իմ Տեր Աստծուն, որ Նա կպահպանի քեզ», այլ՝ «Ապավինում եմ իմ հոր աղոթքներին, որ Աստված կպահպանի քեզ»: Նմանապես և եղբայրը, երբ տեսավ իրեն փորձություն մեջ, չասաց՝ «Տե՛ր Աստված, փրկի՛ր ինձ», այլ՝ «Աստված, իմ հոր աղոթքներով փրկի՛ր ինձ»: Եվ նրանից յուրաքանչյուրը ապավինում էր իր հոր աղոթքներին:

Տեսնո՞ւմ եք, թե ինչպես են նրանք Հնազանդությունը կցել խոնարհությունը: Ինչպես որ լծված մարտակառքի մի նժույզը չի կարող առաջ անցնել մյուսից, այլապես կկոտրվի մարտակառքը, այդպես էլ Հնազանդությունն է հարկավոր, որ խոնարհությունը իրեն կցորդված լինի: Բայց ով կարող է արժանանալ այս շնորհին, եթե չստիպի իրեն հատել իր կամքը և չհանձնի իրեն, հանուն Աստծո, իր հորը՝ ոչ մի բանում չտարակուսելով, այլ անելով այն ամենը, ինչ որ ասում են հայրերը՝ կատարյալ հավատով, որպես թե հենց իրեն՝ Աստծուն է լսում: Ուրիշ էլ ո՞վ է արժանի ողորմության, ո՞վ է արժանի փրկության:

Պատմում են, որ մի անգամ սուրբ Բարսեղը, այցելելով իր վանքերը, ասաց իր վանահայրերից մեկին. «Ունե՞ս դու քեզ մոտ որևէ մեկը փրկվողներից»: Աբբան նրան պատասխանեց. «Քո սուրբ աղոթքներով, Հա՛յր սուրբ, մենք բոլո՛րս ենք ուզում փրկվել»: Սուրբ Բարսեղը կրկին ասաց նրան. «Ունե՞ս որևէ մեկը փրկվողներից, ասում եմ քեզ»: Այնժամ վանահայրը հասկացավ հարցի իմաստը, քանզի նա ինքն էլ հոգևոր այր էր և ասաց. «Այո՛, ունեմ»: Սուրբ Բարսեղը ասաց նրան. «Բե՛ր նրան այստեղ»: Եվ վանահայրը կանչեց այդպիսի եղբորը: Իսկ երբ նա եկավ, սուրբը նրան ասաց. «Ձո՛ւր բեր ինձ լվացվելու»: Նա գնաց և բերեց այն: Լվացվելուց հետո, սուրբ Բարսեղն ինքը ձեռքն առավ ջրամանը և ասաց. «Լվացվիր և դո՛ւ»: Եվ եղբայ-

րը սուրբի ձեռքից լվացումը ընդունեց՝ առանց տարակուսելու: Փորձելով նրան դրանում՝ սուրբը դարձյալ ասաց նրան. «Երբ ես մտնելու լինեմ տաճար, կգաս և կհիշեցնես ինձ, և ես քեզ կձեռնադրեմ»: Եվ նա կրկին հնազանդվեց նրան՝ առանց քննելու: Եվ երբ տեսավ սուրբ Բարսեղին տաճարի խորանում, գնաց և հիշեցրեց նրան, սա էլ ձեռնադրեց նրան և տարավ իր հետ: Քանզի էլ ո՞ւմ էր վայել լինել սուրբ և աստվածակիր այրի հետ, եթե ոչ՝ նման օրհնյալ եղբորը: Իսկ դուք անվերապահ հնազանդության փորձառություն չունեք, դրանից էլ և՛ հանգիստ չունեք, որը միմիայն հնազանդությունից է գալիս:

Մի անգամ ես հարցրի աբբա Բարսիլիկոսին. «Հա՛յր սուրբ, Սուրբ Գիրքն ասում է, որ բազում նեղություններ կրելով է, որ պիտի մտնենք երկնքի Արքայությունը (Գործք. 14; 22), իսկ ես տեսնում եմ, որ չունեմ ոչ մի նեղություն, ի՞նչ անեմ, որպեսզի չկորցնեմ հոգիս», որովհետև ես չունեի ոչ մի տրամուլություն: Եթե պատահում էր, որ ինչ-որ խորհուրդ էի ունենում, ապա ես վերցնում էի գրատախտակը և, գրի առնելով, ուղարկում էի ծերին (երբ ես դեռ չէի ծառայում նրան, ապա գրավոր էի հարցնում), և նախքան ես կավարտեի գրելը, զգում էի արդեն թեթևություն և օգտակարություն, այդպես մեծ էր իմ անտրամությունն ու հանգստությունը: Իսկ ես, չիմանալով այդ առաքինության ուժը, և լսելով, թե՛ «Բազում նեղություններ կրելով է, որ պիտի մտնենք երկնքի Արքայությունը», վախենում էի, որ նեղություններ չունեմ: Եվ այսպես, երբ ես այդ բացատրեցի ծերին, նա ինձ պատասխանեց. «Մի՛ վշտացիր, դու անհանգստանալու ոչինչ չունես. ամեն ոք, ով հանձնել է իրեն հայրերի հնազանդությանը, ունի այսպիսի անտրամություն և հանգիստ»: Մեր Աստծուն փա՛ռք հավիտյանս: Ամեն:

Մերերից մեկն ասել է. «Ամենից առաջ մեզ հարկավոր է խոնարհամտություն, որպեսզի միշտ պատրաստ լինենք ամեն (հանդիմանական) խոսքին, որ լսում ենք, ասել՝ «ներիր», քանզի խոնարհամտությամբ խորտակվում են թշնամու և հակառակորդի մխացող նետերը»: Քննենք, թե ինչ նշանակություն ունեն ծերի այս խոսքերը, ինչո՞ւ է նա ասում, որ ամենից առաջ մեզ հարկավոր է խոնարհամտություն, այլ չասաց, թե նախ հարկավոր է ժուժկալություն, քանզի առաքյալն ասում է. «Ով մրցում է, ամեն ինչում ժուժկալ է լինում» (Ա. Կորնթ. 9. 25): Կամ ինչո՞ւ ծերը չասաց, թե ամենից առաջ մեզ հարկավոր է Աստծո երկյուղը, քանզի Սուրբ Գրքում գրված է. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Սղմ. 110. 9), և դարձյալ՝ «Տիրոջ երկյուղով ամեն ոք խորշում է չարից» (Առակ. 15. 27): Ինչո՞ւ է չի ասում, թե ամենից առաջ մեզ հարկավոր է ողորմություն և հավատ, քանզի ասված է. «Ողորմությամբ և հավատով մաքրվում են մեղքերը» (Առակ. 15. 27), և առաքյալն է ասում. «Առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն, և հավատով ու ողորմությամբ մաքրվում են մեղքերը»: Եվ եթե Տիրոջ երկյուղով ամեն ոք խորշում է չարից, և իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է, և մրցողը ամեն ինչում պետք է ժուժկալ լինի, ապա ինչպե՞ս է, որ ծերն ասում է, թե ամենից առաջ մեզ հարկավոր է խոնարհամտություն, և մի կողմ է թողնում մյուս այդքան կարևոր բաները: Սրանով ծերը մեզ ուզում է ցույց տալ, որ ո՛չ Տիրոջ երկյուղը, ո՛չ ողորմությունը, ո՛չ հավատը, ո՛չ ժուժկալությունը և ո՛չ էլ որևէ մի այլ առաքինություն չեն կարող ի կատար ածվել առանց խոնարհամտության: Ահա թե ինչու է նա ասում. «Նախ և առաջ մեզ հարկավոր է խոնարհամտություն, որպեսզի միշտ պատրաստ լինենք ամեն խոսքին (հան-

դիմանական), որ լսում ենք, ասել՝ «ներիր», քանզի խոնարհամտուլթյունը խորտակում է թշնամու և հակառակորդի մխացող նետերը»:

Ահա, տեսնո՞ւմ եք, եղբայրնե՛ր, թե որքան մեծ է խոնարհամտուլթյան գորուլթյունը, տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի ազդեցուլթյուն է գործում այս խոսքը՝ «ներիր»: Իսկ ինչո՞ւ է սատանան կոչվում ոչ միայն թշնամի, այլև՝ հակառակորդ: Թշնամի է կոչվում, որովհետև նա մարդատյաց է, բարին ատող և զրպարտիչ, իսկ հակառակորդ է անվանվում, քանի որ նա աշխատում է արգելք հանդիսանալ ամեն բարի գործի: Երբ մեկն ուզում է աղոթել, նա հակառակվում է և արգելք է հանդիսանում նրան չար հիշողուլթյուններով, մտքի գերեվարուլթյամբ և ձանձրուլթով: Ցանկանում է մեկը ողորմուլթյուն տալ, նա խոչնդոտում է արծաթասիրուլթյամբ և ժլատուլթյամբ: Կամենում է մեկը հսկել գիշերը, նա խոչնդոտում է ծուլուլթյամբ և հեղգուլթյամբ, և այսպես նա հակառակվում է մեզ ամեն գործում, երբ կամենում ենք բարին գործել: Այդ պատճառով էլ նա կոչվում է ոչ միայն թշնամի, այլև՝ հակառակորդ, իսկ խոնարհամտուլթյամբ խորտակվում են թշնամու և հակառակորդի բոլոր զենքերը: Քանզի ճշմարտապես մեծ է խոնարհամտուլթյունը, և սրբերից յուրաքանչյուրը ընթացել է այս ճանապարհով, իսկ ճգնուլթյամբ կարճել է իր ճանապարհը, ինչպես ասում է սաղմոսերգուն. «Տե՛ս իմ խոնարհուլթյունը և վաստակը և ներիր ինձ իմ մեղքերը» (Սղմ. 24. 18), և «Ես խոնարհ եղա, և Տերը փրկեց ինձ» (Սղմ. 114. 6): Ի դեպ, մենք միայն խոնարհուլթյունը մեզ կարող է հասցնել Արքայուլթյուն, ինչպես ասաց ծերը՝ արբա Հովհաննեսը, բայց միայն թե՛ դանդաղ: Եվ այսպես, մենք ևս խոնարհվենք փոքր-ինչ և կփրկվենք: Եթե մենք, որպես տկարներ, չենք կարողանում ջանք թափել, ապա ձգտենք խոնարհվել, և ես հավատում եմ Աստծո ողորմուլթյանը, որ այն փոքրի համար էլ, եթե այն խոնարհուլ-

թյամբ կատարենք, կլինենք մենք էլ այնտեղ, ուր սրբերն են, որոնք շա՛տ տքնեցին, ճգնեցին և ծառայեցին Աստծուն: Թող մենք տկար ենք և չենք կարող ճգնել, բայց լա՛վ, մի՞թե խոնարհվե՛լ էլ չենք կարող: Եղբայրնե՛ր, երանելի է նա, ով խոնարհուլթյուն ունի, քանզի մեծ խոնարհուլթյունը:

Սրբերից մեկը, որն ուներ ճշմարիտ խոնարհուլթյուն, լավ է այն բնորոշել. «Խոնարհուլթյունը ոչ մեկի վրա չի բարկանում և ոչ ոք չի բարկացնում և այդ համարում է միանգամայն իրեն օտար»: Մեծ է խոնարհուլթյունը, ինչպես ասացինք, քանզի միայն նա՛ է, որ ընդդիմանում է փառասիրուլթյանը և դրանից պահպանում մարդուն: Իսկ մի՞թե ոմանք չեն բարկանում ունեցվածքի կամ կերակրի համար, ինչո՞ւ է ծերն ասում, թե՛ խոնարհուլթյունը ոչ ոքի վրա չի բարկանում և ոչ ոքի չի բարկացնում: Խոնարհուլթյունը հզոր է, ինչպես մենք ասացինք, և ուժգին ձգում է Աստծո շնորհը դեպի հոգին: Աստծո շնորհն էլ գալով՝ պահպանում է հոգին վերը հիշված երկու ծանր կրքերից, քանզի ինչը կարող է ավելի ծանր լինել, քան բարկանալ, և մերձավորին բարկացնելը, ինչպես մեկն ասաց. «Վանականին բնավ վայել չէ բարկանալը նմանապես և բարկացնել ուրիշներին»: Քանզի, արդարև, եթե այդպիսին չպատի իրեն խոնարհուլթյամբ, ապա նա, կամաց-կամաց, կրնկնի դիվային վիճակի մեջ՝ խռովքի մատնելով մյուսներին և խռովելով (իրեն): Սրա համար է, որ ծերն ասաց, թե՛ խոնարհուլթյունը չի բարկանում և ոչ ոքի չի բարկացնում: Սակայն ի՞նչ եմ ասում ես, իբր խոնարհուլթյունը պահպանում է միայն այդ երկու կրքերից, ո՛չ միայն, այլ այն պահպանում է հոգին բոլոր կրքերից և բոլոր փորձուլթյուններից:

Երբ սուրբ Անտոնը տեսավ սատանայի ամենուրեք սփռված բոլոր ցանցերն ու ծուղակները և, հոգոց հանելով, հարցրեց Աստծուն, թե՛ «Ո՞վ կարող է զերծ մնալ սրանցից», ապա

Աստված նրան պատասխանեց. «Խոնարհուլթյունը գերծ կպահի դրանցից», և որ առավել զարմանալի է, ավելացրեց. «Դրանք նույնիսկ չեն էլ մերձենում նրան»: Տեսնո՞ւմ ես այս առաքինուլթյան շնորհը: Հիրավի, խոնարհամտուլթյունից ավելի գորեղ բան չկա, և ոչինչ չի կարող հաղթել նրան: Երբ որ խոնարհին վշտալից մի բան է պատահում, նա իսկույն անդրադառնում է իրեն, անմիջապես կշտամբում է իրեն, որ ինքը արժանի է (դրան) և ոչ ոքի չի նախատում և մեղքը ուրիշի վրա չի բարդում: Եվ այս կերպով նա կրում է իր հետ պատահածը՝ առանց խռովվելու, առանց վշտանալու, կատարյալ հանդարտուլթյամբ, դրա համար էլ չի բարկանում և ոչ ոքի չի բարկացնում: Եվ այսպես, լավ է ասել սուրբը, որ ամենից առաջ մեզ հարկավոր է խոնարհամտուլթյուն:

Խոնարհուլթյունը երկուսն է, ինչպես որ հպարտուլթյունն է երկուսը: Առաջին հպարտուլթյունն այն է, երբ մեկը հանդիմանում է եղբորը, երբ դատում և անպատվում է նրան՝ որպես իրենից ոչինչ չնեղկայացնողի, իսկ իրեն համարում է նրանից բարձր: Այդպիսին եթե շուտով չսթափվի և չջանա ուղղվել, այնժամ, կամաց-կամաց, կընկնի նաև երկրորդ հպարտուլթյան մեջ, այնպես որ կսկսի գոռոզանալ նույնիսկ Աստուղ դեմ և իր ճգնուլթյուններն ու առաքինուլթյունները վերագրել իրեն և ո՛չ թե՛ Աստուղն, իբր թե իր սեփական ուժերով է կատարել դրանք, իր խելքով և իր ջանքով, այլ ոչ թե՛ Աստուղ օժանդակուլթյամբ: Իրապես, եղբայրներ՛ր, գիտեմ ես մեկին, որ ժամանակին հայտնվեց հենց այսպիսի թշվառ իրավիճակում: Սկզբում, երբ եղբայրներից որևէ մեկը նրան ինչ-որ բան էր ասում, նա նսեմացնում էր յուրաքանչյուրին և հակառակվում. «Ի՞նչ է ներկայացնում իրենից այսինչը, չկա՛ առավել արժանավոր մեկը, բացի Զոսմիոսից և նրա նմաններից»: Հետո սկսեց սրանց էլ դատել և ասել. «Չկա՛ ավելի արժանավոր մեկը, բացի Մակարից»: Չանցած մի

փոքր՝ սկսեց ասել. «Մակարն ի՞նչ է որ, չկա՛ ոչ ոք առավել արժանավոր, քան Բարսեղն ու Գրիգորն են»: Բայց շուտով սկսեց և սրանց էլ փնտվել՝ ասելով. «Բարսեղն ու Գրիգորն ի՞նչ են, չկա՛ արժանավոր և ոչ մեկը, բացի Պետրոսից ու Պողոսից»: Ես ասում էին նրան. «Ճշմարիտ եմ ասում, եղբայր, դու շուտով կսկսես նրանց էլ նսեմացնել»: Եվ հավատացե՛ք ինձ, որոշ ժամանակ անց նա սկսեց ասել. «Ի՞նչ է Պետրոսը և ի՞նչ՝ Պողոսը. ո՛չ մեկն էլ ոչինչ չարժեն, բացի Ս. Երրորդուլթյունից»: Ի վերջո, նա գոռոզացավ նաև Աստուղ դեմ և այդպիսով խելագարվեց: Այս պատճառով էլ, եղբայրներ՛ր, մենք պետք է մեր ամբողջ ուժով ընդդիմանանք առաջին հպարտուլթյանը, որպեսզի, կամաց-կամաց, չընկնենք նաև երկրորդի մեջ, այսինքն՝ կատարյալ հպարտուլթյան մեջ:

Հպարտուլթյունը լինում է աշխարհիկ և վանական: Աշխարհիկ հպարտուլթյունն այն է, երբ մեկը հպարտանում է իր եղբոր հանդեպ, որ ինքը գեղեցիկ կամ հարուստ է նրանից, կամ ավելի լավ է հագնված, քան նա, կամ էլ որ ինքը ազնվագարմ է նրանից: Եվ այսպես, երբ մենք տեսնում ենք, որ սնապարծենում ենք այս առավելուլթյուններով կամ նրանով, որ մեր վանքը ավելի մեծ և հարուստ է մյուսներից, կամ էլ որ նրանում երբայրների քանակը շատ է, ապա մենք պետք է գիտենանք, որ դեռ գտնվում ենք աշխարհիկ հպարտուլթյան մեջ: Պատահում է նաև այնպես, որ սնապարծենում են բնական ինչ-ինչ շնորհներով. օրինակ՝ մեկը սնապարծենում է նրանով, որ լավ ձայն ունի և լավ է երգում, կամ որ ինքը համեստ է, ջանասիրաբար աշխատում է և բարեխիղճ է ծառայուլթյան մեջ: Այս առավելուլթյուններն ավելի լավ են, քան առաջինները, թեպետ սա էլ է աշխարհիկ հպարտուլթյուն:

Իսկ վանական հպարտուլթյունն այն է, երբ մեկը սնապարծենում է, որ ինքը վարժվում է հսկման մեջ, պահեցողուլթյան մեջ,



և որ ինքը երկյուղած է, ճիշտ է ապրում և ջանասեր է:

Պատահում է նաև, որ մեկը խոնարհվում է փառքի համար: Սրանք բոլորը վերաբերում են վանական հպարտությունը: Կարելի է մեզ բնավ չհպարտանալ, սակայն եթե մեկը սրանից բուրրովին խուսափել չի կարող, ապա գոնե թող հպարտանա վանական գործերի (այսինքն՝ ճգնությունների) առատությունը, այլ ոչ թե ինչ-որ աշխարհիկ բանով:

Ահա, մենք ասացինք, թե ինչ բան է առաջին հպարտությունը, և ինչ՝ երկրորդը: Ինչպես նաև ասացինք, թե ինչ է աշխարհիկ հպարտությունը, և ինչ՝ վանականը: Այժմ տեսնենք, թե ինչու է նա կայանում նաև երկու խոնարհությունները:

Առաջին խոնարհությունը կայանում է նրանում, որպեսզի եղբորդ համարես քեզանից խելացի և ամեն ինչով գերազանց, մի խոսքով՝ քեզ բոլորից ցածր համարես, ինչպես որ սուրբ հայրերն են ասել: Երկրորդ խոնարհությունը կայանում է նրանում, որպեսզի քո բոլոր ճգնությունները վերագրես Աստծուն, հենց սա է սրբերի կատարյալ խոնարհությունը: Պատվիրանները պահելուց է բնականաբար հոգու մեջ այն ծնվում: Քանզի, ինչպես որ ծառը, երբ այն բեռնավորվում է բազում պտուղներով, ապա հենց իրենք՝ պտուղներն իսկ ճյուղերը խոնարհեցնում են դեպի վար և կորացնում են նրանց, իսկ այն ճյուղերը, որոնց վրա պտուղներ չկան, ձգտում են դեպի վեր և աճում են ուղիղ. կան որոշ ծառեր, որոնք պտուղ չեն տալիս, քանի դեռ նրանց ճյուղերը դեպի վեր են աճում, իսկ եթե մեկը, վերցնելով քարը, կապի ճյուղից, այնժամ ճյուղը ծանրությունից կճկվի ցած և կպտղաբերի: Այդպես և հոգին, երբ խոնարհվում է, այնժամ պտղաբերում է, և որքան շատ է պտղաբերում, այնքան առավել է խոնարհվում: Այդպես և սրբերը, ինչքան շատ են մոտենում Աստծուն, այնքան իրենց մեղավոր են տեսնում:

Հիշում եմ, մի օր խոսում էինք խոնարհության մասին, և

Գազա քաղաքի նշանավոր քաղաքացիներից մեկը՝ լսելով մեր այս խոսքերը, թե՛ մարդ որքան ավելի է մոտենում Աստծուն, այնքան առավել իրեն մեղավոր է տեսնում, զարմացավ և ասաց. «Ինչպե՞ս այդ կարող է լինել», և չհասկանալով՝ ուզեց իմանալ, թե ի՞նչ են նշանակում այս խոսքերը: Ես ասացի նրան. «Մեծանունը պարո՛ն, ասա՛ ինձ, դու քեզ որպես ի՞նչ ես համարում քո քաղաքի մեջ»: Նա պատասխանեց. «Ես ինձ համարում եմ որպես մեծ մեկը և առաջինը՝ քաղաքում»: Ասում եմ նրան. «Իսկ եթե դու գնաս Կեսարիա, ի՞նչ կհամարես քեզ այնտեղ»: Նա պատասխանեց. «Այնտեղի մեծանունը մարդկանցից ամենավերջինը»: «Իսկ եթե, - դարձյալ ասում եմ նրան, -դու գնաս Անտիոք, այնտեղ ի՞նչ կհամարես քեզ»: «Այնտեղ, -պատասխանեց նա, - ես ինձ կհամարեմ հասարակ մարդկանցից մեկը»: «Իսկ եթե, -ասում եմ, -գնաս Կոստանդնուպոլիս և մերձենաս թագավորին, այնտեղ ի՞նչ կսկսես համարել քեզ»: Նա պատասխանեց. «Համարյա որպես աղքատ»: Այնժամ ես նրան ասացի. «Ահա այդպես և սրբերը, որքան ավելի են մերձենում Աստծուն, այնքան առավել իրենց մեղավոր են տեսնում: Քանզի Աբրահամը, երբ տեսավ Տիրոջը, անվանեց իրեն՝ «հող և մոխիր» (Ծննդ. 18. 27): Եսային ասաց. «Նզովյալ և պիղծ եմ ես» (Եսայի 6. 5): Նույնպես և Դանիելը, երբ գտնվում էր առյուծների գբի մեջ, Ամբակումը, որ նրան հաց բերեց, ասաց. «Դանիել՛, արի՛ վերցրու այս ճաշը, որն Աստված ուղարկեց քեզ համար», նա պատասխանեց. «Եվ այսպես, հիշեց ինձ Աստված» (Դան. 14. 36-37): Ինչպիսի՛ խոնարհություն ունեւր նրա սիրտը: Նա գտնվում էր գբի մեջ՝ առյուծների կողքին և անվնաս էր նրանց կողմից, և այն էլ մի անգամ չէ, որ եղավ այդ, այլ երկու անգամ, և ասաց. «Եվ այսպես, հիշեց ինձ Աստված»: Տեսնո՞ւմ եք սրբերի խոնարհությունը, և թե ինչպիսի՛ն են նրանց սրտերը: Նույնիսկ, երբ Աստծու կողմից ուղարկվում էին մարդկանց օգնելու,

նրանք, խոնարհուած լինելուց զրդոված, հրաժարվում էին՝ փախչելով փառքից: Ինչպես մետաքսյա զգեստ հագած մեկը, եթե կամենաս վրան աղտեղի ցնցոտի գցել, իսկույն կփախչի, որպեսզի չաղտոտի իր թանկարժեք հագուստը, այդպես և սրբերը, հագած լինելով առաքինուծ լինելուց զգեստը, փախչում են մարդկային փառքից, որպեսզի չաղտոտվեն դրանով: Իսկ փառք փնտրողները նման են այն մերկ մարդուն, որը ցանկանում է գտնել գոնե փոքրիկ ցնցոտի կամ նման մի այլ բան՝ ծածկելու համար իր ամոթը: Այդպես և առաքինուծ լինելուց զգեստից մերկ մարդն է փնտրում մարդկային փառքը:

Եվ այսպես, սրբերը, երբ Աստծո կողմից ուղարկվում էին մարդկանց օգնելու, խոնարհուած լինելու պատճառով հրաժարվում էին: Մովսեսն ասում էր. «Աղաչում եմ քեզ, Տե՛ր, մի այլ կարող մարդու ընտրիր, քանզի ես անվարժ եմ խոսում և ծանրախոս եմ» (Ելք 4. 10): Երեմիան էլ ասում է. «Ես մանուկ եմ» (Երեմ. 1. 6): Եվ այսպես, սրբերից յուրաքանչյուրը ձեռք է բերել այս խոնարհուած լինելը, ինչպես ասացինք, պատվիրանապահուծ լինելու միջոցով: Բայց թե ինչպիսի բան է այս խոնարհուած լինելը, և թե ինչպես է այն ծնվում հոգու մեջ, ոչ ոք չի կարող արտահայտել բառերով, եթե մարդը այն չսովորի փորձով. լուր խոսքով հնարավոր չէ այն սովորել:

Մի անգամ աբբա Զոսիմոսը խոսում էր խոնարհուած լինելու մասին, իսկ մի ոմն սոփեստ, որ գտնվում էր այնտեղ, չլսելով, թե ինչ էր ասում նա և, ցանկանալով այդ ճշգրտորեն հասկանալ, հարցրեց նրան. «Ասա՛ ինձ, այդ ինչպե՞ս է, որ դու քեզ մեղավոր ես համարում, մի՞թե դու չգիտես որ դու սուրբ ես, մի՞թե դու չգիտես, որ առաքինուծ լինելուց ունես, չէ՞ որ դու տեսնում ես, որ կատարում ես պատվիրանները, այդ ինչպե՞ս է, որ դու, այդպես վարվելով, քեզ համարում ես մեղավոր»: Իսկ ծերը չէր գտնում, թե ինչ պատասխաներ նրան, այլ միայն ասում էր.

«Չգիտեմ, թե ինչ ասեմ քեզ, բայց ես ինձ մեղավոր եմ համարում»: Սոփեստը պնդում էր իր հարցը՝ կամենալով իմանալ, թե ինչպես կարող է այդ լինել: Այնժամ ծերը, ոչ մի կերպ չկարողանալով բացատրել այդ, սկսեց խոսել իր սուրբ պարզուծ լինելու մասին. «Մի՛ խռովիր ինձ, ես իսկապե՛ս ինձ համարում եմ այդպիսին»: Տեսնելով, որ ծերը տարակուսում է, թե ինչպես պատասխանի սոփեստին, ես ասացի նրան. «Նույն բանն էլ չի՞ լինում սոփեստական և բժշկական արվեստներում: Երբ մեկը լավ է սովորում արվեստը և զբաղվում է նրանով, ապա այն չափով, որ չափով, որ նա վարժվում է նրա մեջ՝ բժիշկը կամ սոփեստը, ձեռք է բերում որոշակի սովորուծություն, իսկ արտահայտել ի վիճակի չէ և չի կարող բացատրել, թե ինչպես է ինքը փորձառու դարձել գործի մեջ: Այդ սովորուծությունը նա ձեռք բերեց ինչպես ես արդեն ասացի, աստիճանաբար և անզգալիորեն՝ արվեստի մեջ անդադար վարժվելու միջոցով: Այդպես է և խոնարհուած լինելու մեջ. պատվիրանների կատարումից առաջանում է խոնարհուած լինելու սովորուծություն, և այդ անհնար է արտահայտել խոսքով»:

Երբ աբբա Զոսիմոսը լսեց այդ, նա ուրախացավ, նույն պահին գրկեց ինձ և ասաց. «Դու լավ ըմբռնեցիր գործի իսկուծ լինելը, այն լինում է ճիշտ այնպես, ինչպես դո՛ւ ասացիր»: Եվ սոփեստը, լսելով այս խոսքերը, գոհ մնաց և համաձայնվեց դրանց հետ:

Ծերերը ևս ավանդեցին մեզ որոշ բաներ, որոնք օգնում են մեզ ընկալելու խոնարհուած լինելը: Իսկ բուն իրավիճակը, որին հոգին գալիս է խոնարհուած լինելու հետևանքով, ոչ ոք չի կարող բացատրել: Այսպես, երբ աբբա Աղաթոնը մոտ էր իր վախճանին, և եղբայրները հարցրին նրան. «Հայ՛ր, մի՞թե դո՛ւ էլ ես վախենում», նա պատասխանեց. «Որքան կարող էի, ես ինձ ստիպեցի պահել պատվիրանները, բայց ես մարդ եմ և չգիտեմ՝ արդյոք հաճելի՞ են իմ գործերն Աստծուն, քանզի այլ է Աստծու

դատաստանը, և այլ՝ մարդկայինը»։ Ահա, նա բացեց մեր աչքերը, որպեսզի ըմբռնենք խոնարհությունը, և ցույց տվեց նրան հասնելու ճանապարհը։ Իսկ թե ինչպես է այն լինում հոգու մեջ, ինչպես ես բազմիցս ասացի, ոչ ոք չի կարող ասել և ոչ էլ ըմբռնել լուկ խոսքերի միջոցով, այլ միայն գործերի միջոցով կարող է հոգին որոշակի չափով սովորել այն։

Իսկ թե ինչն է մեզ բերում խոնարհության, այդ մասին մեզ ասել են հայրերը, քանզի «Հարանց վարքում» գրված է. «Մի եղբայր հարցրեց ծերին. «Ի՞նչ է խոնարհությունը», ծերը պատասխանեց. «Խոնարհությունը մեծ և աստվածային գործ է, դեպի խոնարհություն տանող ճանապարհը խելամտորեն կատարված մարմնավոր ճգնություններն են. նաև, որ քեզ բոլորից ցածր համարես և Աստծուն մշտապես աղոթես. սա՛ է ճանապարհը դեպի խոնարհություն, իսկ բուն խոնարհությունն աստվածային է և անհասանելի»։

Ինչո՞ւ համար է ծերն ասում, թե մարմնավոր ճգնությունները հոգին բերում են խոնարհության։ Ի՞նչ կերպով են մարմնավոր ճգնությունները վերածվում հոգևոր առաքնությունների։ Այն, որ քեզ համարես բոլորից ցածր, ընդդիմանում է դեերին և առաջին հպարտությունը, քանզի ինչպե՞ս կարող է մեկը իրեն բարձր համարել եղբորից, կամ գոռոզանալ ինչ-որ մեկի հանդեպ, կամ պարսավել մեկին, կամ նսեմացնել, եթե ինքն իրեն համարում է բոլորից ցածր։

Նմանապես և անդադար աղոթելը բացահայտ կերպով հակառակվում է երկրորդ հպարտությանը, քանզի ակնհայտ է, որ խոնարհը և երկյուղածը, գիտենալով, որ առանց Աստծո օգնության և ապավինության անհնար է որևէ առաքնություն գործել, չի դադարում Աստծուն մշտապես աղոթելուց, որպեսզի Նա իր ողորմությունը գործադրի իր հանդեպ։ Քանզի Աստծուն անդադար աղոթողը, եթե արժանանա էլ կատարելու որևէ բարի

գործ, գիտի, թե Ո՛ւմ շնորհիվ այն կատարվեց, և չի կարող հպարտանալ և ոչ էլ վերագրել այն իր ուժին, այլ իր բոլոր հաջողությունները վերագրում է Աստծուն, մշտապես գոհանում է նրանից և մշտապես կանչում է նրան՝ դողալով, որ չլինի թե զրկվի այդպիսի օգնությունից, և ի հայտ գան իր տկարությունն ու անկարողությունը։ Եվ այսպես, նա խոնարհությամբ աղոթում է և աղոթքով խոնարհվում է, և որքան ավելի է առաջադիմում առաքնությունների մեջ, այնքան ավելի է խոնարհվում, և որքան որ խոնարհվում է, օգնություն է ստանում և առաջադիմում է խոնարհամտության միջոցով։

Սակայն ինչո՞ւ է ծերն ասում, թե մարմնավոր ճգնությունները հոգին բերում են խոնարհության։ Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ մարմնավոր ճգնությունները հոգու տրամադրվածության վրա։ Ես կբացատրեմ ձեզ այդ։ Քանի որ հոգին պատվիրանը խախտելու պատճառով տրվեց, ինչպես ասում է սուրբ Գրիգորը, հեշտասիրության հմայքին և ինքնակամությանը, սիրեց մարմնավորը և ինչ որ ձևով կարծես մի դարձավ իր մարմնի հետ և ամբողջովին դարձավ մարմին, ինչպես ասված է. «Իմ Հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, քանի որ նրանք մարմին են» (Ծննդ. 6), խեղճ հոգին էլ է կարծես տանջվում մարմնի հետ և մասնակցում է այն ամեն բանում, ինչ որ ասվում է մարմնով։ Այս պատճառով էլ ծերն ասաց, որ մարմնավոր ճգնությունն էլ է հոգին բերում խոնարհության, քանի որ այլ է հոգու տրամադրվածությունը առողջ մարդու մոտ, և այլ՝ հիվանդի մոտ, այլ է ծարավածի մոտ, և այլ՝ հագեցածի մոտ։ Նմանապես այլ է հոգեվիճակը ձիու վրա նստած մարդու մոտ, և այլ՝ գահին բազմածի մոտ, և այլ՝ գետնին նստածի մոտ, այլ է գեղեցիկ զգեստ հագածի մոտ, և այլ՝ վատը հագածի մոտ։ Եվ այսպես, աշխատանքը խոնարհեցնում է մարմինը, իսկ երբ խոնարհվում է մարմինը, ապա

նրա հետ մեկտեղ խոնարհվում է և հոգին: Հետևաբար, լավ է ասել ծերը, որ մարմնավոր ճգնությունները բերում են խոնարհություն: Ուստի, երբ Եվագրոսը ենթարկվում էր հայհոյիչ մտքերի հարձակմանը, որպես խելամիտ այր, գիտենալով, որ հայհոյությունը առաջանում է հպարտությունից, և երբ խոնարհվում է հոգին, ապա նրա հետ մեկտեղ խոնարհվում է նաև հոգին, քառասուն օր նա անցկացրեց բաց օդում, այնպես որ նրա մարմինը, ինչպես ասում է նրա վարքագիրը, սկսեց որդոտել, նման նրան, ինչ որ պատահում է վայրի կենդանիների հետ, և այդպիսի՝ ջանք թափեց նա ոչ թե հայհոյության դեմ, այլ՝ հանուն խոնարհության: Եվ այսպես, լավ է ասել ծերը, որ մարմնավոր ճգնություններն էլ են բերում խոնարհության: Բարերարն Աստված թող մեզ խոնարհություն չնորհի, քանի որ այն մարդուն ձերբազատում է բազում չարիքներից և պահպանում է մեծագույն փորձություններից: Աստծուն փառք և իշխանություն հավիտյանս: Ամեն:

Երբ Աստված ստեղծեց մարդուն, Նա սերմանեց նրա մեջ աստվածային մի բան, կարծես մի ինչ-որ խորհուրդ, որը կայծի նման իր մեջ ունի թե՛ լույս և թե՛ ջերմություն. խորհուրդ, որ լուսավորում է միտքը և ցույց է տալիս, թե որն է բարին, և որը՝ չարը. սա կոչվում է խիղճ, իսկ դա բնական օրենք է: Սա այն ջրհորն է, որը, ինչպես մեկնում են սուրբ հայրերը, փորեց Իսահակը, իսկ «փղշտացիները խցանեցին» (Մննդ. 26): Հետևելով այս օրենքին՝ այսինքն՝ խղճին, նահապետներն ու բոլոր սրբերը, նախքան գրի առնված օրենքը, հաճելի եղան Աստծուն: Բայց երբ մարդիկ, մեղքի անկման պատճառով, իրենց խիղճը թաղեցին և ոտնատակ տվեցին, այնժամ անհրաժեշտ եղան սուրբ մարգարեները, հարկ եղավ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անձամբ գալուստը, որպեսզի արթանացներ և շարժեր խիղճը, որպեսզի այդ հորած կայծը կրկին բոցավառվեր նրա սուրբ պատվերանները պահելու միջոցով: Այժմ մեր իշխանության ներքո է՝ կամ նորից թաղել, ծածկել այն, կամ էլ թույլ տալ, որպեսզի ճառագի մեր մեջ և լուսավորի մեզ, եթե կամենում ենք հնազանդվել նրան: Քանզի երբ մեր խիղճը մեզ թելադրում է ինչ-որ բան անել, իսկ մենք արհամարհում և անտեսում ենք նրան, և երբ նա կրկին ասում է, իսկ մենք չենք անում, այլ շարունակում ենք ոտնատակ տալ նրան, այնժամ մենք թաղում ենք նրան, և նա չի կարողանում այլևս հստակորեն խոսել մեզ հետ՝ իր վրա ընկած ծանրության պատճառով, այլ, ինչպես վարագույրի ետևից շողացող լապտեր, սկսում է իրերը մեզ ավելի խավար ցույց տալ: Եվ ինչպես որ ջրում, որը պղտորվել է տիղմի առատությունից, ոչ ոք չի կարող ճանաչել իր դեմքը, այնպես էլ մենք, հանցավորության պատճառով չենք ըմբռնում, թե ինչ է ասում մեզ մեր խիղճը, այնպես որ մեզ թվում է, թե մեր մեջ այն բնավ գոյու-

թյունն չունի: Բայց և այնպես, չկա՛ մարդ որ խիղճ չունենա, քանզի այն, ինչպես մենք արդեն ասացինք, ինչ-որ աստվածային բան է և երբեք չի վերանում, այլ մշտապես հիշեցնում է մեզ օգտակարը, իսկ մենք այդ չենք զգում, որովհետև ինչպես արդեն ասվեց, արհամարհում ու ոտնակոխ ենք անում նրան:

Այդ պատճառով էլ մարգարեն ողբում է Եփրեմի վրա և ասում. «Եփրեմը զրկեց իր թշնամուն և ոտնակոխ արեց արդարությունը» (Օսէէ 5. 11): Թշնամի անվանում է խղճին: Այդպես և Ավետարանում է ասված. «Քո թշնամու հետ, մինչ նրա հետ դեռ ճանապարհին ես, եղի՛ր իրավախոհ կանխավ, գուցէ թշնամիդ քեզ դատավորին հանձնի, և դատավորը՝ դահճին, ու դու բանտ նետվես, ճշմարիտ եմ ասում քեզ, այնտեղից դուրս չես գա, մինչև չվճարես վերջին նաքարակիտը» (Մատթ. 5. 5-26): Բայց ինչո՞ւ է խիղճը անվանում թշնամի: Թշնամի է կոչվում այն պատճառով, որ մշտապես ընդդիմանում է մեր չար կամքին և հիշեցնում է մեզ, թե ի՛նչ պետք է անենք, բայց չենք անում, և դարձյալ, ինչ չպետք է անենք, և անում ենք, և սրա համար նա մեզ դատապարտում է: Դրա համար Տերն էլ է նրան անվանում թշնամի և պատվիրում է մեզ՝ ասելով. «Քո թշնամու հետ, մինչ նրա հետ դեռ ճանապարհին ես, եղի՛ր իրավախոհ»: Ճանապարհը, ինչպես ասում է Բարսեղ մեծը, այս աշխարհն է:

Եվ այսպես, եղբայրնե՛ր, ջանանք պահպանել մեր խիղճը, քանի դեռ այս աշխարհում ենք գտնվում, թույլ չտանք, որ նա մեզ հանդիմանի ինչ-որ գործի մեջ, ոտնակոխ չանենք նրան երբևիցե և ո՛չ մի բանում, թեկուզ և ամենափոքր բանում: Իմացե՛ք, որ փոքրը և էպես չնչինը (անտեսելուց) մենք անցնում ենք նաև մեծագույնները անտեսելուն: Քանզի, երբ մեկը սկսում է ասել. «Ի՞նչ մեծ բան է որ, եթե ես ասեմ այս խոսքը, ի՞նչ մեծ բան է որ, եթե ես ուտեմ այս փոքր բանը, ի՞նչ մեծ բան է որ, եթե ես նայեմ այս կամ այն բանը», ապա դրանից, թե՛ «Ի՞նչ

մեծ բան է այս, ի՞նչ մեծ բան է այն», ընկնում է նա չար սովորության մեջ և սկսում է արհամարհել թե՛ մեծը և թե՛ կարևորը և ոտնատակ տալ իր խիղճը, իսկ այդպիսով կարծրանալով չարի մեջ, ենթարկվում է բացարձակ անզգայության մեջ ընկնելու վտանգին: Դրա համար, եղբայրնե՛ր, զգուշացե՛ք փոքրը անտեսելուց, զգուշացե՛ք արհամարհելուց, որպես փոքր և չնչին: Այն փոքր չէ, քանզի նրա հետևանքով ձևավորվում է չար սովորություն: Ուշադի՛ր լինենք ինքներս մեր հանդեպ և հոգ տանենք փոքրի համար, քանի դեռ այն թեթև է, որպեսզի այն չդառնա ծանր, քանզի թե՛ առաքինությունները և թե՛ մեղքերը սկսում են փոքրից և վերածվում են մեծագույն բարիքի կամ չարիքի: Դրա համար Տերը պատվիրում է մեզ պահպանել մեր խիղճը և կարծես թե հատուկ հորդորում է մեզանից յուրաքանչյուրին՝ ասելով. «Տե՛ս, թե ինչ ես անում, թշվա՛ռ, սթափվի՛ր, հաշտվի՛ր թշնամուդ հետ, քանի դեռ նրա հետ ճանապարհին ես»: Հետո էլ ցույց է տալիս այս պատվիրանը չպահելու չարաբաստիկ հետևանքը. «Գուցէ նա քեզ դատավորին հանձնի, և դատավորը՝ դահճին, ու դու բանտ նետվես», իսկ հետո՞ «Ճշմարիտ եմ ասում քեզ, այնտեղից դուրս չես գա, մինչև չվճարես վերջին նաքարակիտը»: Քանզի խիղճը մեզ մերկացնում, է ինչպես ես արդեն ասացի, թե՛ բարու և թե՛ չարի մեջ և ցույց է տալիս մեզ՝ ինչ անել և ինչ չանել, և դարձյալ ինքն է, որ մեզ դատապարտելու է Դատաստանի օրը, դրա համար և ասված է. «Գուցե նա քեզ դատավորին հանձնի»:

Իսկ խղճի պահպանությունը բազմազան է, քանզի մարդը պետք է պահպանի իր խիղճը թե՛ Աստծո, թե՛ մերձավորի և թե՛ առարկաների նկատմամբ: Աստծո հանդեպ իր խիղճը պահպանում է նա, ով չի անտեսում նրա պատվիրանները, նույնիսկ այն բանում, որը մարդիկ չեն տեսնում, և որը ոչ ոք չի պահանջում մեզանից, նա պահպանում է իր խիղճը Աստծո հանդեպ

գաղտնի (իրավիճակներում): Օրինակ՝ ծուլանում է մեկը աղոթքի մեջ, կամ կրքոտ մի խորհուրդ է մտնում նրա սիրտը, իսկ նա չի դիմադրում նրան և չի զգաստանում, այլ ընդունում է այն: Նմանապես մեկը, տեսնելով մերձավորին ինչ-որ բան անելիս կամ ասելիս, դատում է նրան, ինչպես (սովորաբար) պատահում է: Կարճ ասած՝ այն ամենը, ինչ որ լինում է գաղտնի, որը ոչ ոք չգիտի, բացի Աստուծուց և մեր խղճից, պարտավոր ենք պահպանել: Հենց սա է խղճի պահպանությունը Աստծո հանդեպ: Իսկ խղճի պահպանությունը մերձավորի հանդեպ պահանջում է, որ պեսզի երբևիցե չանենք ոչ մի այնպիսի բան, որը, ինչպես մենք գիտենք, կարող է նեղացնել կամ գայթակղել մերձավորին՝ թե՛ գործով և թե՛ խոսքով, թե՛ տեսքով և թե՛ հայացքով, քանզի թե՛ ձեռքով, ինչպես հաճախ եմ կրկնում, թե՛ նույնիսկ հայացքով կարելի է վիրավորել եղբորը: Կարճ ասած՝ մարդ չպետք է մտադրված անի այնպիսի մի բան, որի նպատակը մեծավորին վիրավորելն է: Սրանով արատավորվում է նրա խիղճը՝ գիտակցելով, որ այդ բանը արված է՝ եղբորը վնասելու և տրտմեցնելու համար, և սա էլ նշանակում է պահպանել խիղճը մերձավորի հանդեպ:

Իսկ խղճի պահպանությունը առարկաների հանդեպ կայանում է նրանում, անփութորեն չվերաբերվենք որևէ իրի հետ, թույլ չտանք, որ այն փչանա, և չզցենք այն, ինչպես որ պատահի: Իսկ եթե տեսնում ենք մի կողմ նետված ինչ-որ իր, ապա չպետք է անտեսենք այն, թեկուզև այն չնչին լինի, այլ հարկ է վերցնել և դնել իր տեղը: Չպետք է նաև անհետևողական վերաբերվել սեփական հագուստի հետ, քանզի պատահում է, որ մեկը իր հագուստը կարող է կրել մեկ կամ երկու շաբաթ, կամ նույնիսկ մեկ ամիս, սակայն նա հաճախակի լվանում է այն տարածամ և է՛լ ավելի փչացնում է այն, և փոխարեն կրելու այն հինգ ամիս կամ ավելի հաճախակի լվացմամբ այն դարձնում է

հնամաշ և անպիտան: Իսկ սա հակառակ է խղճին: Նմանապես և անկողնու վերաբերյալ, հաճախ մեկը կարող էր բավարարվել մեկ բարձով, բայց նա փնտրում է լայն անկողին, կամ ունի քուրձ, բայց ուզում է փոխել այն և ձեռք բերել նորը կամ էլ ավելի գեղեցիկը՝ փառասիրուծությունից կամ էլ ձանձրույթից մղված: Մեկի համար կարող էր բավարար լինել մեկ ծածկոցը, սակայն նա փնտրում է ուրիշ ավելի լավը, երբեմն նույնիսկ վիճում էլ է, երբ չի ստանում այն: Իսկ եթե նա սկսի աչք տնկել իր եղբոր ունեցածի վրա և ասի. «Ինչո՞ւ նա ունի, իսկ ես չունեմ», ապա այդպիսին տակավին հեռու է առաջադիմությունից: Նմանապես, եթե մեկը իր հագուստը կամ ծածկոցը կախի արևին և ծուլանա ժամանակին վերցնել դրանք և թույլ տա, որ փչանան տոթից, ապա դա ևս հակառակ է խղճին: Նմանապես և կերակրի պարագայում, մեկը կարող է իր կարիքները բավարարել կամ բանջարեղենի փոքր-ինչ քանակությամբ, կամ ոսպով, կամ փոքր-ինչ ձիթապտղով, սակայն չի ուզում այդ, այլ փնտրում է այլ կերակուր՝ ավելի համեղը և ավելի լավը. այս բոլորը խղճին դեմ է: Հայրերն ասում են, որ վանականը երբեք չպետք է թույլ տա, որ խիղճը իրեն ինչ-որ բանում հանդիմանի: Եվ այսպես, եղբայրներ՝, մեզ անհարժեշտ է, որ մշտապես ուշադիր լինենք մեր անձերի հանդեպ և պահենք մեզ այդ ամենից, որ պեսզի չենթարկվենք այն պատուհասին, որից Տերն Ինքն է զգուշացնում մեզ, ինչպես որ վերը ասացինք: Թող Աստված մեզ շնորհի լսել և կատարել այս, որպեսզի մեր հայրերի խոսքերը մեզ որպես դատապարտություն չճառայեն: Աստուծուն փառք և իշխանություն հավիտյանս: Ամեն:

Սուրբ Հովհաննեսն իր ընդհանրական թղթերում ասում է. «Կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը» (Ա. Հովհ. 4. 18): Սրանով ի՞նչ է ուզում մեզ ասել սուրբ առաքյալը, այդ ի՞նչ սիրո և երկյուղի մասին է նա մեզ ասում, քանի որ Դավիթ մարգարեն սաղմոսում ասում է. «Երկյուղե՛ք Տիրոջից, ո՛վ նրա սրբեր» (Սղմ. 33. 10), և բազում այլ համանման արտահայտություններ են մեզ հանդիպում Սուրբ Գրքում: Եվ այսպես, եթե սրբերն անգամ, այդչա՛փ սիրելով Աստծուն, երկյուղ են կրում Նրանից, ապա ինչպե՞ս է, որ սուրբ Հովհաննեսն ասում է. «Կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը»: Սուրբը դրանով մեզ ուզում է ցույց տալ, որ կա երկու տեսակ երկյուղ. մեկը՝ սկզբնական, իսկ մյուսը՝ կատարյալ, և որ մեկը բնորոշ է, այսպես ասած, բարեպաշտության մեջ սկսնակներին, իսկ մյուսը՝ կատարյալ սրբերի երկյուղն է, որոնք հասել են կատարյալ սիրո չափին: Օրինակ, ով կատարում է Աստծո կամքը՝ տանջանքների երկյուղից դրդված, այդպիսին, ինչպես մենք ասացինք, տակավին սկսնակ է, քանզի նա բարին չի գործում հենց հանուն բարու, այլ՝ պատժի երկյուղից դրդված: Մյուսն էլ Աստծո հանդեպ սիրուց է կատարում Աստծո կամքը՝ սիրելով Նրան, ըստ էության, նրա համար, որպեսզի հաճեցնի Նրան: Սա՛ գիտի, թե ինչում է կայանում էապես բարին, նա ճանաչել է, թե ինչ է նշանակում՝ լինել Աստծո հետ: Սա՛ է, որ ունի ճշմարիտ սերը, որին սուրբը կատարյալ է անվանում: Եվ այս սերը նրան բերում է կատարյալ երկյուղի, քանզի այդպիսին երկյուղում է Աստծուց և կատարում է Աստծո կամքը արդեն ո՛չ պատժի երկյուղից, այլևս ո՛չ այն բանի համար, որպեսզի ազատվի տանջանքներից, այլ, որովհետև նա, ինչպես մենք ասացինք, ճաշակելով Աստծո հետ լինելու քաղցրությունը՝ վախենում է բաժանվելուց, վախե-

նում է նրանից զրկվելուց: Եվ այս կատարյալ երկյուղը, որ ծնվում է այդ սիրուց, հեռու է վանում սկզբնական երկյուղը, սրա համար էլ առաքյալն ասում է. «Կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը»:

Սակայն անհնար է հասնել կատարյալ երկյուղին (այլ կերպ), եթե ոչ՝ միայն սկզբնական երկյուղի միջոցով: Քանզի երեք կերպով, ինչպես Բարսեղ Մեծն է ասում, մենք կարող ենք հաճեցնել Աստծուն: Կամ հաճեցնում ենք Նրան՝ վախենալով տանջանքներից, և այդժամ մենք գտնվում ենք ծառայի կարգավիճակում, կամ պարզեցնում փնտրելով է, որ կատարում ենք Աստծո պատվիրանները՝ հանուն սեփական շահի, և սրանով նմանվում ենք վարձկաններին, կամ էլ բարիք ենք գործում հենց հանուն բարու, և այդժամ մենք գտնվում ենք որդու կարգավիճակում: Քանզի որդին, երբ հասնում է կատարյալ հասակին և գիտակցությունը, կատարում է հոր կամքը ո՛չ այն բանի համար, որ վախենում է պատժից, և ո՛չ այն բանի համար, որպեսզի նրանից պարզեցնեն ստանա, այլ, ըստ էության, այն բանի համար է պահպանում նրա հանդեպ իր հատուկ սերը և հորը վայել հարգանքը, որ սիրում է նրան, և վստահ է, որ հոր ամբողջ ունեցվածքը պատկանում է իրեն: Այդպիսին արժանանում է լսելու՝ «Ուստի՛, ծառա չես, այլ՝ որդի, և եթե որդի ես, ապա և՛ ժառանգ Աստծո, Հիսուս Քրիստոսով» (Գաղ. 4.7): Այդպիսին այլևս չի վախենում Աստծուց, իհարկե, ինչպես ասացինք, այն սկզբնական երկյուղով, այլ սիրում է Նրան, ինչպես և սուրբ Անտոնն է ասում. «Ես այլևս չեմ վախենում Աստծուց, այլ սիրում եմ Նրան»: Երբ Աբրահամը իր միակ որդուն էր բերում՝ է բերում՝ զոհ մատուցելու Աստծուն, Տերն ասաց. «Ա՛յժմ ճանաչեցի, որ դու երկյուղ ունես Աստծո հանդեպ» (Ծննդ. 22.12), սրանով Նա նշեց այն կատարյալ երկյուղը, որ ծնվում է սիրուց: Քանզի (այլապես) ինչպես կարող էր ասել՝ «ա՛յժմ ճանաչեցի», երբ Աբրահամը արդեն այնքա՛ն բան

էր արել, Աստծո Տանգեպ Տնազանդությունից, -թողել էր իր ամեն ինչը և տեղափոխվել էր օտար երկիր, օտար ժողովրդի մոտ, որոնք ծառայում էին կուռքերին, որտեղ աստվածապաշտության հետք անգամ չկար, և այս ամենից վեր, Աստված նրա վրա բերեց այսպիսի ահավոր փորձություն՝ որդու զոհաբերությունը, և դրանից հետո ասաց. «Ա՛յժմ ճանաչեցի, որ դու երկյուղ ունես Աստծո հանդեպ»: Ակնհայտ է, որ Նա այստեղ նկատի ունեւր կատարյալ երկյուղը, որը հատուկ է միայն սրբերին, որոնք այլևս ո՛չ թե տանջանքների ահից և ո՛չ էլ պարզեւներ ստանալու համար է, որ կատարում են Աստծո կամքը, այլ Աստծուն սիրելով, ինչպես բազմիցս ասել ենք, վախենում են Աստծո կամքին հակառակ որևէ բան անել: Հենց սրա համար է ասում առաքյալը. «Սերը հեռու է վանում երկյուղը», քանի որ նրանք այլևս ոչ թե վախից են գործում, այլ վախենում են, որովհետև սիրում են: Սրանում է կայանում կատարյալ երկյուղը: Սակայն անհնար է, ինչպես մենք վերը ասացինք, հասնել կատարյալ երկյուղին, եթե մեկը նախապես ձեռք չբերի սկզբնականը: Քանզի ասված է. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակ. 1.7), և դարձյալ ասված է. «Աստծո երկյուղը սկիզբն է և վերջը»: Սկիզբ է անվանում սկզբնական երկյուղը, որին հետևում է սրբերի կատարյալ երկյուղը: Սկզբնական երկյուղը բնորոշ է մեր հոգեվիճակին: Նա պահպանում է հոգին ամեն տեսակ չարիքից, ինչպես ողորկումը (փայլը)՝ պղնձին, քանզի ասված է. «Տիրոջ երկյուղով ամեն ոք խորշում է չարից» (Առակ. 15.27): Եվ այսպես, երբ մեկը խորշում է չարից՝ վախենալով պատժից, ինչպես ծառա, որ երկյուղ է կրում տիրոջից, ապա նա աստիճանբար հասնում և այն բանին, որ կամավոր է գործում բարին, և կամաց-կամաց սկսում է, ինչպես վարձկան, ակնկալել որոշակի վարձատրություն իր գործած բարիքի փոխարեն: Քանզի, երբ նա մշտապես խուսափում է չարից, ինչպես ասացինք,

երկյուղից մղված, ինչպես ծառա, և գործում է բարին՝ ակնկալելով պարզեւներ, ինչպես վարձկան, ապա, Աստծո շնորհով, հարատեւելով բարու մեջ և միավորվելով Աստծո հետ, նա ճաշակում է բարիքի համը և սկսում է հասկանալ, թե ո՛րն է ճշմարիտ բարին, և այլևս չի ուզում բաժանվել նրանից: Քանզի ո՞վ կարող է նման մեկին հեռացնել Քրիստոսի սիրուց, ինչպես ասում է առաքյալը (Հռոմ. 8.30): Այնժամ նա հասնում է որդու աստիճանին և սիրում է բարին հենց հանուն բարու և երկյուղ է կրում, որովհետև սիրում է: Հենց սա է մեծ և կատարյալ երկյուղը: Ուստի և մարգարեն, սովորեցնելով մեզ զանազանել մի երկյուղը մյուսից, ասում է. «Եկե՛ք, իմ որդիներ, լսեցե՛ք ինձ, և ես ձեզ կսովորեցնեմ Տիրոջ երկյուղը» (Սղմ. 33.12): «Ո՞վ է այն մարդը, որ սիրում է կյանքը և ուզում է իր օրերը բարության մեջ տեսնել»: Ուշադրություն՝ դարձրեք մարգարեի ամեն մի խոսքին, քանզի նրա ամեն մի խոսքը իր գործությունն ունի: Սկզբում ասում է. «Եկե՛ք ինձ մոտ»՝ կոչելով մեզ առաքինություն, հետո ավելացնում է՝ «որդիներ»: Որդիներ սրբերն անվանում են նրանց, ովքեր, իրենց խոսքին անսալով, մեղքից դառնում են առաքինություն, ինչպես և առաքյալն է ասում. «Որդյակներս, դուք, որոնց համար վերստին երկունքի մեջ եմ, մինչև որ Քրիստոս կերպարանվի ձեր մեջ» (Գաղ. 4.19): Հետո, կոչելով մեզ և պատրաստելով այդ դարձին, մարգարեն ասում է. «Ես ձեզ կսովորեցնեմ Տիրոջ երկյուղը»:

Տեսնո՞ւմ եք սրբի համարձակությունը: Մենք, երբ ցանկանում ենք ինչ-որ բարի բան ասել, միշտ այսպես ենք դիմում. «Կցանկանայի՞ք, որ մենք ձեզ հետ փոքր-ինչ զրուցեինք Աստծո երկյուղի մասին»: Իսկ սուրբ մարգարեն՝ ո՛չ այդպես, այլ խիզախորեն ասում է. «Եկե՛ք, իմ որդիներ, լսեցե՛ք ինձ, և ես ձեզ կսովորեցնեմ Տիրոջ երկյուղը: Ո՞վ է այն մարդը, որ սիրում է կյանքը և ուզում է իր օրերը բարության մեջ տեսնել»: Հետո, կար-



ծես ինչ-որ մեկից պատասխան լսելով, թե՛ ես ցանկանում եմ, սովորեցրո՛ւ ինձ՝ ինչպես ապրել և բարի օրեր տեսնել, նա ուսուցանում է՝ ասելով. «**Լեզուդ պահի՛ր չարությունից, չրթներդ սուտ թո՛ղ չխոսեն**»։ Եվ այսպես, ամենից առաջ նա չարի գործունեությունը Աստծո երկյուղով է կտրում։

Լեզուն պահել չարությունից՝ նշանակում է որևէ բանով չվիրավորել, չխոցել մերձավորի խիղճը, չչարախոսել, չզայրացնել։ Իսկ չրթներով «սուտ չխոսել»՝ նշանակում է չզգայթակղել եղբորը։ Սկզբում նա ասաց որոշ մասնավոր մեղքերի մասին՝ չարախոսության, խաբեության, իսկ հետո ասում է ընդհանրապես բոլոր չարիքների մասին։ «**Խուսափի՛ր չարից**», այսինքն՝ հեռո՛ւ փախիր բոլոր այն գործերից, որոնք կարող են քեզ ներքաշել մեղքի մեջ։ Դարձյալ, այս ասելով, նա կանգ չի առնում սրանց վրա, այլ ավելացնում է. «**Եվ բարի՛ք գործիր**»։ Քանզի պատահում է այնպես, որ մեկը չարիք չի գործում, բայց և բարիք էլ չի գործում, մյուսն էլ նմանապես չի վիրավորում, սակայն զթասրտություն էլ չի ցուցաբերում, մեկ ուրիշը չի ատում, բայց և չի էլ սիրում։ Եվ այսպես, լավ է ասել մարգարեն. «**Խուսափի՛ր չարից և բարի՛ք գործիր**»։ Ահա, նա մեզ ցույց է տալիս աստիճանականությունը այս երեք հոգեվիճակների, որոնց մասին մենք վերը հիշատակեցինք։ Սկզբում նա մեզ սովորեցնում է խուսափել չարից, հետո նոր պատվիրում է, որ սկսենք բարիք գործել։ Քանզի, երբ մեկը արժանանում է ազատվելու չարից և խուսափելու նրանից, ապա այնժամ նա բնականաբար բարիք է գործում՝ ըստ սրբերի խրատի։

Ասելով այս մասին այսպես լավ և հետևողական՝ նա շարունակում է. «**Խաղաղություն փնտրիր և դրա՛ն հետևիր**»։ Չասաց միայն փնտրիր, այլ ջանադրաբար հետամուտ եղիր, որ հասնես նրան։ Չեր մտքով ուշադիր հետևեք այս արտահայտությունը և ո՛ւշք դարձրեք այն ստուգությունը, որը նկատի ունի սուրբը։

Երբ մեկը արժանանում է խուսափելու չարից, և հետո ձգտում է, Աստծո օգնությունը, բարիք գործել, իսկույն թշնամիները ելնում են նրա դեմ պատերազմելու, և նա ճգնում է, ջանում ու վշտանում ոչ միայն նրա համար, որ վախենում է վերստին դառնալ դեպի չարը, ինչպես ասացինք ծառայի վերաբերյալ, այլև ակնկալում է, ինչպես վերը հիշատակեցինք, պարզեցնել իր բարի գործերի դիմաց, ինչպես վարձկան։ Եվ այդպիսով, կրելով թշնամու հարձակումները, պատերազմելով նրանց դեմ և դիմադրելով նրանց, նա բարիք է գործում, սակայն՝ մեծ վշտերով և մեծ ջանքերով։ Երբ նա Աստծուց օգնություն է ստանում և ձեռք է բերում բարիք գործելու որոշակի սովորություն, այնժամ նա հանգիստ է վայելում, այնժամ խաղաղություն է ճաշակում, այնժամ զգում է, թե ինչ է նշանակում պատերազմի տրամուլություն, և ինչ՝ խաղաղություն, խնդություն ու բերկրություն։ Եվ հետո արդեն սկսում է խաղաղություն փնտրել, ուժգին ձգտում է դեպի նա, որպեսզի հասնի նրան, ձեռք բերի նրան կատարելապես և բնակեցնի իր մեջ։

Ի՞նչը կարող է առավել երանելի լինել այն հոգուց, որն արժանացել է հասնելու հոգևոր հասակի այս չափին։ Այդպիսին, ինչպես բազմիցս ասել ենք, գտնվում է որդու կարգավիճակում, քանզի իսկապես «**երանելի են խաղաղարները, քանզի նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն**» (Մատթ. 5. 9)։ Ո՞վ կարող է նման հոգուն այսուհետև ստիպել բարիք գործել հանուն ինչ-որ մի այլ բանի, բացի այն քաղցրությունից ու վայելքից, որ պարզեցնում է հենց բարիք գործելը։ Ո՞վ կարող է ճանաչել այդ բերկրանքը, բացի նրանից, ով ճաշակել է այն։ Այնժամ այդպիսին, ինչպես մենք արդեն մի քանի անգամ ասացինք, ճանաչում է կատարյալ երկյուղը։

Ահա, մենք լսեցինք, թե ինչու է կայանում սրբերի կատարյալ երկյուղը, և ինչու է կայանում սկզբնական երկյուղը, որը

Հատուկ է մեր հոգեվիճակին, նաև ինչից է սկսում մարդը և ինչին է հասնում Աստծո երկյուղի միջոցով: Այժմ մենք ցանկանում ենք իմանալ և այն, թե ինչպես է բնակվում մեր մեջ Աստծո երկյուղը, և կամենում ենք ասել, թե ինչն է, որ մեզ հեռացնում է Աստծո երկյուղից:

Հայրերն ասում են, որ մարդը կարող է ձեռք է բերել Աստծո երկյուղը, եթե անընդմեջ ունենա մահվան և հավիտենական տանջանքների հիշողությունը, եթե ամեն երեկո քննի իրեն, թե ինչպես անցկացրեց օրը, և ամեն առավոտ, թե ինչպես անցկացրեց գիշերը, եթե հանդուգն չլինի իր վարվեցողության մեջ, և վերջապես, եթե սերտ հարաբերության մեջ գտնվի Աստծուց երկյուղ կրող մարդու հետ: Քանզի ասում են, որ մի եղբայր հարցրեց մի ոմն ծերի. «Ի՞նչ անեմ, հայր, որպեսզի ես էլ երկյուղ կրեմ Աստծուց»: Ծերը պատասխանեց նրան. «Գնա՛, ապրիւր Աստծուց երկյուղ կրող մարդու հետ, և հենց միայն սրանով, որ նա երկյուղում է Աստծուց, քեզ էլ կսովորեցնի երկյուղել Աստծուց»:

Իսկ Աստծո երկյուղը մեզանից հեռացնում ենք նրանով, որ գործում ենք սրա հակառակը՝ չունենք ո՛չ մահվան հիշողություն, ո՛չ հավիտենական տանջանքների հիշողություն, նրանով, որ ինքներս մեր հանդեպ ուշադիր չենք և չենք քննում մեզ, թե ինչպես ենք անցկացնում ժամանակը, այլ ապրում ենք այն մարդկանց հետ, որոնք Աստծուց երկյուղ չեն կրում, նաև նրանով, որ չենք զգուշանում հանդգնությունից. այս վերջինը ամենից վատ է. այն կատարյալ կործանում է: Քանզի ոչինչ այնպես չի հալածում հոգուց Աստծո երկյուղը, ինչպես որ հանդգնությունը: Դրա համար, երբ արբա Աղաթոնին հարցրեցին հանդգնության մասին, նա պատասխանեց. «Այն նման է սաստիկ այրող քամու, որից, երբ այն փչում է, բոլորը փախչում են, և որը փչացնում է ծառերի վրա գտնվող բոլոր պտուղները»: Տեսնո՞ւմ

ես, եղբայր, այս կրքի զորությունը, տեսնո՞ւմ ես սրա վայրագությունը: Եվ երբ նրան դարձյալ հարցրին, թե՛ մի՞թե այդքան վնասակար է հանդգնությունը, նա պատասխանեց. «Հանդգնությունից առավել վնասակար կիրք չկա, քանզի նա է մայրը բոլոր կրքերի»: Բավականին լավ և խելամտորեն ասաց, թե նա է մայրը բոլոր կրքերի, որովհետև նա է վռնդում Աստծո երկյուղը հոգուց: Քանզի, եթե «Տիրոջ երկյուղով ամեն ոք խորշում է չարից» (Առակ. 15; 27), ապա, իհարկե, որտեղ բացակայում է Աստծո երկյուղը, այնտեղ են և բոլոր կրքերը: Աստված թող մեր հոգիները ազատի հանդգնության ամենակործանարար կրքից:

Հանդգնությունը լինում է բազմատեսակ. հանդուգն կարելի է լինել թե՛ խոսքով, թե՛ շոշափումով (չարժուձևով) և թե՛ հայացքով: Հանդգնությունից մեկն ընկնում է դատարկախոսության մեջ, աշխարհիկ բաներ է խոսում, ծիծաղելի բաներ է անում և հարուցում է մյուսների մեջ անվայելուչ ծիծաղ: Հանդգնություն է և այն, երբ մեկը դիպչում է մյուսին առանց հարկավորության, երբ ձեռք է բարձրացնում ծիծաղողներից մեկի վրա, երբ հրում է մեկին, խլում է նրա ձեռքից ինչ-որ բան և անամոթաբար նայում է որևէ մեկին: Այս բոլորը տեղի է ունենում այն պատճառով, որ հոգու մեջ բացակայում է Աստծո երկյուղը, և սրանից էլ մարդը կամաց-կամաց ընկնում է նաև կատարյալ անհոգության մեջ: Ուստի, երբ Աստված տվեց օրենքի պատվիրանները, նա ասաց. «Ակնածա՛նք ունեցեք, որդիներ՛ր Իսրայելի», քանզի առանց ակնածանքի և ամոթխածության մարդը ո՛չ Աստծուն կպատվի և ո՛չ էլ նրա պատվիրանները կպահի: Ուստի և հանդգնությունից ավելի վնասակար բան չկա, ուստի և նա է մայրը բոլոր կրքերի, որ վռնդում է ակնածանքը, հոգուց հալածում է Աստծու երկյուղը և ծնում է անհոգություն: Եվ այն պատճառով, որ մենք հանդգնորեն ենք վարվում միմյանց հետ և չենք ամաչում մեկս մյուսից, պատահում է նաև, որ մենք չարախոսում ու վիրավո-

րում ենք միմյանց: Պատահում է, որ մեզանից որևէ մեկը, տեսնելով անօգտակար մի բան, հեռանում է ու դատում այն, ապա ներմոծում է այն մի այլ եղբոր սրտի մեջ, և ոչ միայն ինքն է վնասվում, այլև վնասում է եղբորը՝ չար թույնը ներարկելով նրա սրտի մեջ: Եվ հաճախ այնպես է պատահում, որ այդ եղբոր միտքը զբաղված է լինում աղոթքով կամ այլ բարի գործով, իսկ սա գալով՝ ներքաշում է նրան դատարկաբանություն մեջ, և ո՛չ միայն զրկում է նրան օգուտից, այլև գցում է գայթակղություն մեջ, քանզի չկա ոչինչ առավել ծանր, առավել կործանարար, քան վնասելը՝ ոչ միայն իրեն, այլև՝ մեծավորին:

Դրա համար, եղբայրներ, լավ է մեզ ակնածանք ունենալ, վախենալ վնասելուց մեզ և մյուսներին, պատվել միմյանց և զգուշանալ նույնի՛սկ նայելուց միմյանց երեսին, քանզի սա էլ, ինչպես ծերերից մեկն է ասել հանդգնության մի ձև է: Եվ եթե պատահի մեկին տեսնել իր եղբորը մեղանչելիս, նա չպետք է արհամարհի նրան և ոչ էլ լռի դրա մասին՝ թույլ տալով նրան կորստի մատնվել, չպետք է նաև հանդիմանի, ոչ էլ չարախոսի, այլ կարեկցանքով և Աստծո երկյուղով պետք է ասի նրան, ով կարող է շտկել եղբորը, կամ էլ հենց տեսնողն ինքը թող ասի նրան սիրով և խոնարհությամբ՝ ասելով այսպես. «Ների՛ր ինձ, եղբա՛յր իմ, եթե չեմ սխալվում, մենք լավ բան չենք անում»: Եվ եթե նա չլսի, ասա նրան, ում մասին գիտես, որ այդ եղբայրը վստահություն է տածում, կամ ասա նրա ծերին, կամ էլ արքային, նայած մեղանչման կարևորությունը, որպեսզի նրանք ուղղեն նրան, հետո արդեն հանգիստ եղի: Բայց ասա, ինչպես մենք ասացինք, եղբորն ուղղելու նպատակով, այլ ոչ թե հանուն դատարկախոսության կամ չարախոսության, և ո՛չ նրան պարսավելու համար, ո՛չ նրան մերկացնելու ցանկությունից, ո՛չ դատելու համար, և ո՛չ էլ ձևացնելով, թե իբր ուղղում ես նրան, սակայն ներսում ունենալով որևէ մեկը վերոհիշյալներից:

Քանզի, արդարև, եթե մեկը ասի էլ հենց նրա արքային, սակայն՝ ոչ մերձավորին ուղղելու նպատակով, կամ էլ ոչ սեփական վնասից խուսափելու համար, ապա դա մեղք է, քանզի դատարկախոսություն է: Սակայն նա թող քննի իր սիրտը, թե արդյոք այն չունի՞ որևէ կրքոտ շարժում, և եթե այդպես է, ապա թող չասի: Իսկ եթե նա, ուշադիր գննելով իրեն, տեսնի, որ ուզում է ասել կարեկցանքից և օգուտի համար, իսկ ներքուստ խռովվում է որոշ կրքոտ խորհուրդներից, ապա թող նա ասի արքային խոնարհությամբ և՛ իր, և՛ մերձավորի մասին՝ ասելով այսպես. «Իմ խիղճը վկայում է ինձ, որ ես ներսում ունեմ ինչ-որ խառնաշփոթ խորհուրդ, չգիտե՛մ, արդյոք դա նրանի՞ց է, որ ես ժամանակին անախորժություն եմ ունեցել այդ եղբոր հետ, թե՞ դա փորձություն է, որն ինձ արգելում է եղբորս մասին ասելու, որպեսզի դրան չհետևի նրա ուղղվելը», և այդ ժամանակ արքան կասի նրան՝ պե՛տք է նա ասի, թե՛ ոչ: Լինում է նաև այնպես, որ մեկ ուրիշն ասում է ո՛չ իր եղբոր օգտի համար, ո՛չ սեփական վնասից զգուշանալու համար և ո՛չ այն պատճառով, որ ինչ-որ չար բան է հիշում, այլ պատմում է, հենց այնպես, դատարկախոսությունից: Սակայն ի՞նչ հարկ կա նման չարախոսության: Հաճախ եղբայրն էլ է իմանում, որ իր մասին խոսել են, և խռովվում է, որից էլ առաջ է գալիս վիշտ և առավել մեծ վնաս: Իսկ երբ մեկն ասում է, ինչպես մենք ասացինք, միմիայն իր եղբոր օգուտի համար, ապա Աստված երբեք թույլ չի տա, որ խռովություն առաջանա, որպեսզի դրան չհետևի վիշտը կամ վնասը:

Եվ այսպես, ջանացե՛ք, ինչպես ասացինք, զսպել ձեր լեզուն, որպեսզի որևէ մի վատ խոսք չասեք ձեր մերձավորին և չգայթակղեք ոչ մեկին՝ ո՛չ խոսքով, ո՛չ գործով, ոչ՛ հայացքով և ոչ էլ որևէ մի այլ ձևով: Եվ մի՛ եղեք դյուրագրգիռ, որպեսզի, երբ ձեզանից որևէ մեկը իր եղբորից մի վատ խոսք լսի, իսկույն չգրգռվի բարկությունով, չպատասխանի նրան հանդգնաբար և վիրա-

վորված չմնա նրանից. դա վայել չէ փրկվել ցանկացողներին, վայել չէ ճգնավորներին: Չեռք բերեք Աստծո երկյուզը և ականածանքով հանդիպեք միմյանց՝ յուրաքանչուրդ իր գլուխը խոնարհեցնելով իր եղբոր առջև: Թող յուրաքանչյուրդ խոնարհվի Աստծո առջև և իր եղբոր առջև, և հատի իր կամքը: Հիրավի, լավ է, եթե մեկը, մի որևէ բարի գործ կատարելով, (դրանում) գերապատվությունը տա իր եղբորը և զիջի նրան, այդպիսին կատանա մեծ օգուտ նրա առջև, ում որ նա զիջի: Չգիտեմ, արդյոք արե՞լ եմ ես երբևէ որևէ մի բարի բան, սակայն, եթե Աստված պահպանել է ինձ, ապա գիտեմ, որ պահպանել է լուկ այն բանի համար, որ ես երբեք ինձ իմ եղբորից լավը չեմ համարել, այլ միշտ եղբորս ինձանից բարձր եմ դասել:

Երբ ես դեռ արբա Սերիդի վանքում էի գտնվում, այնպես պատահեց, որ արբա Հովհաննեսի սպասավորը՝ արբա Բարսիլիկոսի աշակերտը, հիվանդացավ, և արբան ի՛նձ հանձնարարեց ծերին սպասավորելու գործը: Իսկ ես նրա խցի դռները դրսից հաբուրում էի (այնպիսի զգացումով), ինչպիսի զգացումով որ մեկ ուրիշը երկրպագում է պատվական Ուաչին, էլ ավելի (ես ուրախ էի) նրան ծառայելու համար: Դե ո՞վ չէր ցանկանա արժանանալ ծառայելու այդպիսի սրբին: Հենց միայն նրա խոսքերը իսկ արժանի էին զարմանքի: Ամեն օր, երբ ես, ավարտելով իմ ծառայությունը, խոնարհվում էի նրա առջև, որպեսզի նրանից թողություն ստանայի և գնայի, նա միշտ ինչ-որ բան էր ինձ ասում: Ծերը սովորություն ուներ կրկնելու չորս ասույթ, և, ինչպես ես ասացի, ամեն երեկո, երբ ես պետք է հեռանայի, նա ինձ միշտ ասում էր մեկը այդ չորս ասույթներից, և սկսում էր այսպես. «Ես մի անգամ ասացի», - քանզի ծերը սովորություն ուներ իր ամեն խոսքին ավելացնել. «Մի անգամ ես ասացի, եղբայր, - Աստված թող պահպանի սերը, - հայրերն ասել են՝ մերձավորի հանդեպ խիղճը պահպանելուց ծնվում է խոնարհամտություն»: Դարձյալ

հաջորդ երեկոյան նա ինձ ասում էր. «Ասացի ես մի անգամ, եղբայր, - Աստված թող պահպանի սերը, - հայրերն ասել են՝ չպետք է երբեք քո կամքը գերադասես եղբորդ կամքից»: Մի ուրիշ անգամ նա ինձ կրկին ասում էր. «Ասացի ես մի անգամ, եղբայր, - Աստված թող պահպանի սերը, - հայրերն ասել են՝ փախի՛ր մարդկային ամեն բանից և կփրկվես»: Եվ դարձյալ ասում էր. «Ասացի ես մի անգամ, եղբայր, - Աստված թող սերը պահպանի, - հայրերն ասել են՝ միմյանց բեռը կրե՛ք և այդպիսով կատարեցեք Քրիստոսի օրենքը» (Գաղ. 6; 2): Ամեն երեկո, երբ ես հեռանում էի, ծերը միշտ տալիս էր ինձ այս չորս խրատներից մեկը, նման նրան, ինչպես որ մեկը խրատ է տալիս ճանապարհ գնացողին, և այսպես, դրանք ծառայեցին ամբողջ կյանքս պահպանելու համար: Սակայն, չնայած նրան, որ ես այդպիսի մեծ սեր ունեի սրբի հանդեպ և այդչա՛փ հոգատարություն էի ցուցաբերում նրան սպասավորելու մեջ, բայց հենց որ իմացա, թե եղբայրներից մեկը վշտանում է՝ ցանկանալով ծառայել նրան, ես գնացի արբայի մոտ և խնդրեցի նրան՝ ասելով. «Այս եղբորն ավելի արժանավայել է ծառայել սրբին, քան ինձ, եթե դա հաճելի է քեզ, արբա»: Բայց ո՛չ արբան, ո՛չ էլ ծերն ինքը, ինձ թույլ չտվեցին այդ, սակայն ես նախապես արեցի, ըստ կարելվույն, այն ամենը, ինչ որ կարող էի, որպեսզի նախապատվությունը տայի եղբորս: Եվ անցկացնելով այնտեղ ինը տարի, չգիտե՛մ, ասե՞լ եմ արդյոք որևէ մեկին մի վատ խոսք, թեպետև ես հնազանդության պատվեր ունեի՝ ոչ մեկին վատ խոսք չասելու, և ես ամեն կերպ ջանում էի, որպեսզի ոչ ոք չասեր, թե ես այն խախտեցի: Եվ հավատացե՛ք, ես շատ լավ հիշում եմ, թե ինչպես մի եղբայր, գալով իմ ետևից հիվանդանոցից մինչև եկեղեցի, լուստանքներ էր թափում իմ գլխին, իսկ ես քայլում էի նրա առջևից՝ չասելով ոչ մի խոսք: Երբ արբան իմացավ այդ, - չգիտեմ, թե ով էր նրան հայտնել այդ մասին, - և ուզեց պատժել նրան, ես գնացի և ընկա նրա ոտքերը՝ ասելով. «Ի

սեր Աստծո, մի՛ պատժիր նրան, ես եմ մեղանչել, եղբայրը բնավ մեղք չունի»։ Եվ մյուսն էլ նմանապես՝ փորձուխոսելից թե պարզամտությունից, Աստված գիտի թե ինչու, երկար ժամանակ, ամեն գիշեր միզում էր իմ գլխին, այնպես որ անկողինս անգամ թրջվում էր։ Նմանապես և եղբայրներից ոմանք, ամեն օր գալով, թափ էին տալիս իրենց ներքնակները իմ խցի առջև, և ես տեսնում էի, որ բազմաթիվ փայտոջիլներ են կուտակվել իմ խցում, այնպես որ ես անկարող էի սատկացնել նրանց, քանզի նրանք անթիվ-անհամար էին շոգի պատճառով։ Հետո էլ, երբ ես պառկում էի քնելու, նրանք բոլորը հավաքվում էին ինձ վրա, և ես քուն էի մտնում միայն սաստիկ հոգնածությունից ու ուժասպառությունից, իսկ երբ ես արթնանում էի քնից, գտնում էի ամբողջ մարմինս կծոտված, սակայն ես նրանցից որևէ մեկին չասացի երբեք՝ մի՛ արա, կամ՝ ինչո՞ւ ես դու այդ անում։ Եվ ես չեմ հիշում, որ երբևէ արտաբերած լինեմ մի այնպիսի խոսք, որ վրդովեի կամ վիրավորեի եղբորը։ Դուք ևս սովորեցե՛ք «միմյանց բեռը կրել», սովորեցե՛ք ակնածել մեկը մյուսի առջև. և եթե ձեզանից մեկը որևէ մեկից մի տհաճ խոսք լսի, կամ եթե մեկը իր սպասածից վեր բան կրի, ապա նա չպետք է իսկույն փոքրոգություն ցուցաբերի, կամ անմիջապես գոգովի բարկություն, որպեսզի ճգնություն և օգուտ (ստանալու) ժամանակ չերևա նա որպես թույլ, անհոգ, անհաստատ, անկայուն սիրտ ունեցող մեկը, որը ոչ մի վիրավորանք չի կարող կրել, ինչպես այդ պատահում է դժմի հետ. եթե թեկուզ փոքրիկ մի ճյուղ դիպչի նրան, իսկույն վնասվում է ու սկսում նեխել։ Այլ դուք, ընդհակառակն, ունեցե՛ք ամուր սիրտ, ունեցե՛ք մեծահոգություն, թող միմյանց հանդեպ ձեր սերը հաղթահարի բոլոր պատահարները։ Եվ եթե ձեզանից որևէ մեկը հանձնարարություն ունի կամ ինչ-որ մի գործ այգեպանի մոտ, կա՛մ տնտեսի, կա՛մ խոհարարի, կա՛մ էլ, ընդհանարապես, ձեր ծառայակիցներից որևէ մեկի մոտ, ապա և՛ նա, ով գործ է հանձ-

նարարում, և՛ նա, ով կատարում է այն, թող ձգտեն նախ և առաջ պահպանել իրենց սեփական հոգեվիճակները, և նրանք երբեք թող թույլ չտան իրենց խոտորվել Աստծո պատվիրաններից կա՛մ խռովության մեջ, կա՛մ համառության, կա՛մ ցանկության, կա՛մ ինքնակամության և ինքնարդարացման մեջ, այլ ինչպիսին էլ որ լինի գործը՝ փոքր կամ մեծ, չպետք է անտեսել, և արհամարհել այն, քանզի արհամարհանքը վնասակար է։ Սակայն չպետք է նմանապես գերադասել գործի կատարումը սեփական հոգեվիճակի հաշվին, այսինքն՝ չլինի թե ջերմեռանդորեն և ջանասիրաբար կատարես գործը, սակայն՝ ի վնաս հոգուդ։ Ամեն պատահած գործի դեպքում, թեկուզ և այն ծայրահեղ անհրաժեշտ լինի և պահանջի ջանքեր, չեմ ուզում, որ դուք այն կատարեք վիճաբանություն կամ խռովությամբ, այլ համոզված եղեք, որ ցանկացած գործ, որ դուք կատարում եք, մեծ է այն, ինչպես ասացինք, թե փոքր, հանդիսանում է պահանջվելիքի տասներորդ մասը, իսկ սեփական հոգեվիճակի պահպանումը, եթե հանուն դրա նույնիսկ չկատարես էլ գործը, հանդիսանում է պահանջվելիքի հինգերորդ մասը։

Ահա տեսնո՞ւմ եք տարբերությունը։ Եվ այսպես, եթե դուք կատարում եք մի որևէ գործ և ցանկանում եք կատարյալ և լիարժեք կատարել այն, ապա ջանացե՛ք կատարել բուն գործը, որը, ինչպես ես ասացի, պահանջվելիքի տասներորդ մասն է, և դրա հետ մեկտեղ պահպանել սեփական հոգեվիճակը անվնաս, որը կազմում է պահանջվելիքի հինգերորդ մասը։ Իսկ եթե ծառայությունը գործը կատարելու խանդավառությունից հարկադրված՝ համառես, խոտորվես Աստծո պատվիրաններից և վնասես քեզ կամ ուրիշին՝ վիճելով նրա հետ, ապա պետք չէ կորցնել հինգերորդ մասը նրա համար, որպեսզի պահպանես տասներորդ մասը։ Ոստի, եթե դուք իմանաք, որ ինչ-որ մեկը նման կերպ է վարվում, ապա իմացեք, որ այդպիսին անմտորեն և անխոհեմաբար է կա-

տարում իր ծառայությունը՝ մղված փառասիրությունից կամ մարդահաճությունից, վիճում է և տանջում թե՛ իրեն և թե՛ մերձավորին, որպեսզի վերջում լսի, թե ոչ ոք իրեն հաղթել չկարողացավ:

Օ՛, ինչպիսի՜ զարմանալի խիզախություն: Դա հաղթանակ չէ, եղբայրներ՛ր, դա կորուստ է, դա կործանում է, եթե մեկը վիճում և գայթակղում է եղբորը լուրջ նրա համար, որպեսզի կատարի իրեն հանձնարարված գործը: Եթե ծառայությանդ գործը թողնես թերի և անկատար, կորուստը մեծ չէ, ա՛յ վիճելը և եղբորը գայթակղելը՝ չտալով նրան անհրաժեշտը, կամ ծառայության գործը գերադասելը և Աստծո պատվիրաններից խոտորվելը, ահռելի վնաս է. ահա թե ինչ է նշանակում պահանջվելիքի տաններորդ մաս և հինգերորդ մաս: Դրա համար ասում եմ ձեզ, եթե ես էլ ձեզանից որևէ մեկին ուղարկեմ ինչ-որ կարևոր հանձնարարությունմբ, և նա տեսնի, որ դրանից առաջանում է խռովություն կամ այլ վնասակարություն, թողե՛ք այդ գործը և բնավ մի՛ վնասեք ինքներդ ձեզ կամ մեկ մեկու, այլ թող այդ գործը կիսատ մնա և չկատարվի, միայն թե մի գտնվեք իրար հետ, քանզի այդ դեպքում դուք կորցնում եք հինգերորդ մասը և մեծագույն վնաս եք կրում, իսկ դա հայտնապես անմտություն է: Սա ես ձեզ ասում եմ ո՛չ այն բանի համար, որպեսզի դուք անմիջապես տրվեք փոքրագույնը և թողեք գործը, կամ էլ անհոգ գտնվելով, քամահրելով՝ հեշտությամբ թողեք այն և ոտնատակ տաք ձեր խիղճը՝ կամենալով խուսափել վշտերից: Եվ դարձյալ ո՛չ այն բանի համար, որպեսզի անհնազանդ գտնվեք, և ձեզանից յուրաքանչյուրն ասի՝ ես այդ չեմ կարող անել, դա ինձ վնասում է, դա ինձ հուսից հանում է: Քանզի նման ձևով դուք երբեք չեք կատարի ոչ մի հանձնարարություն և չեք կարող պահել Աստծո պատվիրանները: Այլ ջանացեք ձեր ամբողջ ուժով և սիրով կատարել ձեր ամեն մի ծառայությունը՝ խոնարհությամբ, խոնարհվելով միմյանց առջև, մեծարելով և թախանձելով մեկը մյուսին,

քանզի խոնարհությունից հզոր ոչինչ չկա: Սակայն եթե երբևէ մեկը տեսնի, որ ինքը կամ իր մերձավորը վշտանում է, ապա թողե՛ք այդ գործը, որը գայթակղություն է առաջ բերում, զիջեցե՛ք միմյանց, մի՛ համառեք այնքան, մինչև որ դրան հետևի վնասը, քանզի ավելի լավ է, ինչպես հազար անգամ եմ ասել ձեզ, որ գործը չկատարվի այնպես, ինչպես դո՛ւք եք ուզում, այլ թող լինի այնպես, ինչպես որ պատահի, և ինչպես որ կարիքն է պահանջում, քան թե ձեր ջանքերի և ինքնաարդարացման պատճառով, եթե նույնիսկ նրանք վայելուչ լինեն, խռովվեք և վիրավորեք միմյանց, և դրա պատճառով կորցնենք շատը՝ հանուն քչի: Հաճախ նաև այնպես է պատահում, որ մեկ ուրիշը կորցնում է թե՛ մեկը և թե՛ մյուսը և բացարձակ ոչինչ չի անում, քանզի այդպիսին է վիճաբանել սիրողների հատկությունը: Հենց սկզբից ևեթ, բոլոր գործերը, որ մենք կատարում ենք, կատարում ենք այն բանի համար, որպեսզի օգուտ ստանանք դրանցից: Իսկ ինչ օգուտ, եթե մենք չենք խոնարհվում միմյանց առջև, այլ, ընդհակառակն, խռովում ու վիրավորում ենք միմյանց: Մի՞թե դուք չգիտեք, թե ինչ է գրված «Հարանց վարքում»՝ «Մերձավորից է կախված թե՛ կյանքը և թե՛ մահը»: Մշտապես սովորեցե՛ք այս բանը, եղբայրներ՛ր, հետևե՛ք սուրբ հայրերի խոսքերին, ձգտե՛ք սիրով և Աստծո երկյուղով փնտրել ձեր և ձեր եղբայրների օգուտը: Նման ձևով կարող եք այն ամենից, ինչ որ ձեզ հետ պատահում է, օգուտ քաղել և առաջադիմել Աստծո օգնությամբ: Մեր Աստված ինքը՛, որպես մարդասեր, թող շնորհի մեզ իր երկյուղը, քանզի ասված է. «Աստծուց վախեցի՛ր և Նրա պատվիրանները պահի՛ր» (Ժող. 12.13), քանզի դա է պահանջվում ամեն մի մարդուց: Եվ մեր Աստծուն թող լինի փա՛ռք և իշխանություն հավիտյանս: Ամեն:

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉՊԵՏՔ Է ՎԱՏԱՀԵԼ  
ՍԵՓԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆԸ**

5-րդ ուսուցում

Սողոմոն իմաստունը ասում է Առակներում. «Նրանք, որ առաջնորդ չունեն, պիտի ցած թափվեն տերևի պես, սակայն բազում խորհուրդների մեջ փրկություն կա» (Առակ. 11; 14): Տեսնո՞ւմ եք, եղբայրներ՛ր, այս խոսքի գործությունը: Տեսնո՞ւմ եք, թե ինչ է ուսուցանում մեզ Սուրբ Գիրքը: Նա մեզ հորդորում է չվստահել ինքներս մեզ, չհամարել մեզ խելացի, իմաստուն, չհավատալ այն բանին, որ մենք կարող ենք ինքներս մեզ ղեկավարել և առաջնորդել, քանզի մենք օգնության մեծ կարիք ունենք, կարիք ունենք Աստծով մեզ խրատողների: Չկան ավելի դժբախտ և կործանմանը մերձ մարդիկ, քան նրանք, ովքեր չունեն առաջնորդ Աստծո ճանապարհին: Քանզի ինչ է նշանակում ասվածը, թե՛ «Նրանք, որ առաջնորդ չունեն, պիտի ցած թափվեն տերևի պես»: Տերևը սկզբում կանաչ է լինում, ծաղկուն և գեղեցիկ, հետո աստիճանաբար չորանում է, թափվում ցած, և ի վերջո նրան ոտնակոխ են անում ու տրորում: Այդպես է լինում և այն մարդու հետ, որն առաջնորդ չունի. սկզբում նա մշտապես ջերմեռանդ է լինում պահեցողության, հսկման, առանձնության, լուսկեցության, հնազանդության և այլ բարի գործերի մեջ: Հետո այդ ջերմեռանդությունը կամաց-կամաց սառչում է, և նա, չունենալով ոչ ոք, որ իրեն առաջնորդի, աջակցի, ոգևորի և խանդավառի այդ ջերմեռանդության մեջ, տերևի պես աննկատելիորեն չորանում է, ընկնում է և ի վերջո դառնում է թշնամու հպատակն ու ստրուկը, և սրանք նրա հետ վարվում են այնպես, ինչպես որ կամենում են:

Իսկ նրանց մասին, ովքեր բացում են իրենց խորհուրդները և արարքները և ամեն բան անում են խորհրդակցությամբ,

Սուրբ Գիրքն ասում է. «Բազում խորհուրդների\* մեջ փրկություն կա»: Չի՛ ասում՝ «Երբ բազում են խորհուրդները», այսինքն՝ ո՛չ թե պետք է ամեն մեկի հետ խորհրդակցել, այլ որ պետք է ամեն ինչի մասին խորհրդակցել, իհարկե նրա հետ, ում հանդեպ որ վստահություն ունենք: Եվ ոչ այնպես, որ մեկը ասենք, իսկ մյուսը՝ ծածկենք, այլ որ բոլորը բացենք և ամեն ինչի մասին խորհրդակցենք. այդպիսին անկասկած փրկություն ունի «բազում խորհուրդների մեջ»: Քանզի եթե մարդը չի բացում այն ամենը, ինչ որ իրեն է վերաբերում, հատկապես, եթե բռնված է եղել չար սովորությամբ, կամ եղել է վատ շրջապատում, ապա սատանան, գտնելով նրա մեջ մի (որևէ) ցանկություն կամ ինքնարագրացում, սրանով տապալում է նրան:

Երբ սատանան տեսնում է, որ ինչ-որ մեկը չի կամենում մեղանչել, ապա նա այնքան էլ անփորձ չէ չարիք գործելու մեջ, որպեսզի սկսի ներշնչել նրան ինչ-որ բացահայտ մեղքեր՝ ասելով, թե՛ «Քանզի՛ շնություն գործիր, կամ՝ զոդացիր, քանզի նա գիտի, որ դա մենք չենք ցանկանում. նա հարկ չի համարում մեզ ներշնչել այն, ինչ որ մենք չենք ցանկանում, այլ գտնում է մեր մեջ, ինչպես ես ասացի, մի որևէ ցանկություն կամ ինքնարագրացում, և դրանով, թվացյալ բարու անվան տակ, վնասում է մեզ: Դրա համար դարձյալ ասում է. «Անզգամը չարիք է նյութում, երբ զուգակցվում է արդարի հետ»: Անզգամը դա սատանան է, որ չարիք է նյութում, «երբ զուգակցվում է արդարի հետ», այսինքն, երբ զուգակցվում է մեր ինքնարագրացման հետ, և այնժամ նա դառնում է առավելագույն զորեղ, այնժամ ավելի է վնասում, այնժամ առավել է գործում: Քանզի երբ մենք համառում ենք մեր կամքի մեջ և հետևում ենք մեր ինքնարագրացմանը, այնժամ, կատարելով արտաքնապես բարի թվացող գործ, մենք ինքներս մեր դեմ որոգայթ ենք լարում և նույնիսկ

\* Խորհուրդներ՝ այստեղ նկատի ունի ոչ թե մտքերը, այլ՝ խորհրդատվությունը:

չենք իմանում, թե ինչպես ենք կորստի մատնվում: Քանզի մենք ինչպես կարող ենք ըմբռնել Աստծո կամքը, կամ էլ ընտրել այն, եթե վստահում ենք ինքներս մեզ և համառում ենք մեր կամքի մեջ: Դրա համար էլ աբբա Պիմենը ասել է, թե՛ մարդու կամքը պղնձե պարիսպ է իր և Աստծո միջև: Տեսնո՞ւմ եք այս խոսքի գորուծյունը: Նա դարձյալ ասել է. «Այն կարծես քար լինի, որ դիմակայում, հակադրվում և դիմադրում է Աստծո կամքին»: Եվ այսպես, եթե մարդը թողնի իր կամքը, այնժամ նա կարող է ասել. «Աստծո շնորհիվ պարիսպներ կհաղթարեմ, Աստված՝ իմ, անթերի են քո ճանապարհները» (Սղմ. 17; 30-31): Բավականին հիասքանչ է ասված: Քանզի մարդը միայն այնժամ է տեսնում Աստծո անապական ճանապարհը, երբ թողնում է իր կամքը, իսկ երբ ենթարկվում է իր կամքին, ապա չի տեսնում, որ անապական են Աստծո ճանապարհները: Սակայն երբ նա լսում է խրատական ինչ-որ բան, իսկույն փնտրում է այն, նսեմացնում է, խորշում է դրանից և գործում է հակառակը: Քանզի նա ինչպես կարող է կրել ինչ-որ բան կամ անսալ որևէ մեկի խորհրդին, եթե նա համառում է իր կամքի մեջ: Եվ շարունակելով՝ այսպես է ասում ծերը նաև ինքնարդարացման մասին. «Իսկ եթե ինքնարդարացումն էլ է միանում կամքին, ապա մարդը կատարելապես եղծվում է»: Զարմանալի է. ինչպիսի՛ հետևողականություն (կա) սուրբ հայրերի խոսքերում: Իսկապես, երբ ինքնարդարացումը միանում է կամքին, ապա դա կատարյալ մահ է, մեծագույն վտանգ, մեծ տագնապ. այնժամ թշվառն ընկնում է վերջնականապես: Քանզի ով կստիպի այդպիսինին հավատալ, որ մեկ ուրիշը իրենից ավելի լավ գիտի, թե ի՛նչն է իրեն օգտակար: Այնժամ նա լիովին տրվում է իր կամքին, իր մտքին, իսկ թշնամին ի վերջո ինչպես ուզում է, այնպես էլ գլուխ է բերում նրա անկումը: Դրա համար ասված է. «Անզգամը չարիք է նյութում, երբ զուգակցվում է արդարի հետ»: Քանզի սատանան ոչ միայն

խրատն է ատում, այլև նաև հենց այն ձայնը, որն արտաբերում է այն, չի կարողանում լսել, նույնիսկ ատում է խրատի ձայնը, այսինքն, երբ խրատական ինչ-որ բան են խոսում: Նախքան օգտակարի մասին հարցնողը կսկսի գործել տրված խորհրդի համաձայն, և նախքան թշնամին գլխի կընկնի՝ կատարելու է նա, թե չի կատարելու լսածը, թշնամին արդեն ատում է հենց բուն այդ երևույթը, երբ հարցնում են ինչ-որ մեկին, կամ էլ լսում ինչ-որ օգտակար բան: Այսպիսի խոսքերի հենց միայն ձայնը, հենց միայն հնչյունը նա ատում է ու գարշո ւմ է դրանցից: Իսկ ասե՞մ՝ ինչո՞ւ: Նա գիտի, որ իր չարագործությունները իսկույն ի հայտ կգան, հենց որ սկսեն հարցնել և խոսել օգտակարի մասին: Եվ ոչինչ նա այդպես չի ատում, ոչնչից այնպես չի վախենում, որքան՝ ի հայտ գալուց, քանզի այդ ժամանակ նա այլևս չի կարող դավեր նյութել այնպես, ինչպես ուզում է: Քանզի երբ մարդը հաստատվում է նրանում, որ հարցնի և բացի իր մասին ամեն բան և լսի փորձառու որևէ մեկից, թե՛ «Սա արա՛, իսկ սա՛ մի՛ արա, սա լավ է, իսկ սա՛ վատ, սա ինքնարդարացում է, սա՛ ինքնակամություն», և լսում է նաև. «Հիմա այդ գործի ժամանակը չէ», իսկ մի ուրիշ անգամ լսում է. «Հիմա ժամանակն է», այնժամ թշնամին չի գտնում, թե ինչ կերպով վնաս հասցնի մարդուն, կամ ինչպես տապալի նրան, քանի որ նա մշտապես, ինչպես ես արդեն ասացի, խորհրդակցում է և բոլոր կողմերից պատսպարում է իրեն: Եվ այդպիսով կատարվում է նրա վրա այն խոսքը, թե՛ «Բազում խորհուրդների մեջ փրկություն կա»:

Իսկ սատանան չի կամենում այս ամենը, այլ ատում է, քանզի նա ցանկանում է չարիք գործել և առավել ուրախանում է նրանց համար, «ովքեր առաջնորդ չունեն»։ Ինչո՞ւ: Որովհետև նրանք «պիտի թափվեն տերևի պես»: Հիշի՛ր այն եղբորը, որին սիրում էր սատանան, և որի մասին ասում էր աբբա Մակարին. «Մի եղբայր ունեմ, որ երբ տեսնում է ինձ, պտտվում է վիլակի



պես»։ Այդպիսիներին նա սիրում է, այդպիսիների համար միշտ ուրախանում է, որոնք ապրում են առանց առաջնորդության և չեն հանձնվում այնպիսի մեկին, որը կարող է օգնել իրենց և Աստծով առաջնորդել։ Մի՞թե բոլոր եղբայրներին չէ, որ այցելում էր դեռ այն ժամանակ, որին սուրբը տեսավ զանազան ուտեստներ կրելիս (խոսքը զանազան գայթակղեցուցիչ խորհուրդների մասին է)։ Մի՞թե բոլորին չէ, որ նա փորձում էր։ Սակայն նրանցից յուրաքանչյուրը, հասկանալով նրա խարդավանքներն ու դավերը, գնում էր իր հոգևոր հոր մոտ և բացում էր նրան իր խորհուրդները և օգնությունն էր ստանում փորձություն ժամանակ, դրա համար էլ սատանան նրանցից և ոչ մեկին չէր կարողանում հաղթել։ Նա միայն մի թշվառի գտավ, որն ինքնիրեն էր հետևում և ոչ ոքից օգնություն չէր ստանում, և այս պատճառով դեռ նրա հետ վարվում էր, ինչպես խաղալիքի հետ, և հեռանալիս գոհանում էր նրանից ու անիծում մյուսներին։ Իսկ երբ թշնամին պատմեց աբբա Մակարին այս ամենը և հայտնեց այդ եղբոր անունը, սուրբը գնաց նրա մոտ և գտավ, որ նրա կործանման պատճառը եղել էր այն, որ նա չէր կամեցել խոստովանել իր խորհուրդները, գտավ, որ նա սովորությունն չունեցրեց զրանք որևէ մեկին։ Դրա համար էլ թշնամին նրան խաղացնում էր, ինչպես ուզում էր։ Երբ սուրբ ծերը հարցրեց եղբորը, թե՛ «Ինչպե՞ս ես ապրում, եղբայր», նա պատասխանեց. «Քո աղոթքներով՝ լավ»։ Իսկ երբ սուրբը դարձյալ հարցրեց, թե՛ «Խորհուրդները քեզ չե՞ն նեղում», նա պատասխանեց. «Առայժմ լավ եմ»։ Եվ չկամեցավ ոչինչ խոստովանել, մինչև որ սուրբը հմտորեն չստիպեց նրան բացել իր խորհուրդները, ապա, Աստծո խոսքը ասելով, հաստատեց նրան և վերադարձավ։

Եվ իր սովորության համաձայն թշնամին դարձյալ եկավ ցանկանալով տապալել այս եղբորը, սակայն խայտառակ եղավ,

քանզի նրան գտավ հաստատված, ուղղված ու շտկված և չկարողացավ նրան այլևս ծաղրել, ուստի հեռացավ՝ չհաջողելով ոչինչ անել, հեռացավ խայտառակված նաև այս եղբոր կողմից։ Դրա համար էլ, երբ սուրբը կրկին հարցրեց դեռին, թե՛ «Ինչպե՞ս է ապրում այն եղբայրը՝ քո բարեկամը», նա այլևս եղբորը բարեկամ չանվանեց, այլ՝ թշնամի, և նգովեց նրան՝ ասելով. «Նա էլ փչացավ, նա էլ ինձ այլևս չի ենթարկվում, նույնիսկ բոլորից ավելի է վայրագացել»։ Տեսնո՞ւմ ես, թե ինչու է թշնամին ատում «զգուշություն ձայնը» (Առակ. 11. 15), որովհետև նա մշտապես մեր կորուստն է ցանկանում։ Տեսնո՞ւմ ես, թե նա ինչու է սիրում իրենք իրենց վրա հույս դնողներին, որովհետև նրանք օգնում են սատանային և իրենք իրենց դեմ դավեր են նյութում։ Ես չգիտեմ վանականի անկման այլ պատճառ, բացի նրանից, երբ նա հավատում է իր սրտին։ Ոմանք ասում են՝ այս բանից է ընկնում մարդը, կամ այն բանից, իսկ ես, ինչպես արդեն ասացի, չգիտեմ ուրիշ անկում, բացի նրանից, երբ մարդ հետևում է ինքնիրեն։ Տեսե՞՛լ ես դու ընկած մեկին. իմացի՛ր, որ նա հետևել է ինքնիրեն։ Սրանից ավելի վտանգավոր, ավելի կործանարար բան չկա։ Աստված պահպանել է ինձ, և ես միշտ վախեցել եմ այս աղետից։ Երբ ես դեռ հանրակացարանում էի գտնվում, ես իմ բոլոր խորհուրդները բացում էի ծերին՝ աբբա Հովհաննեսին, և երբեք, ինչպես ասացի, չեմ համարձակվել որևէ բան անել առանց նրա խորհրդի։ Եվ երբեմն խորհուրդը (միտքը) ինձ ասում էր. «Մի՞թե նույն բանը չի ասելու քեզ ծերը, ինչո՞ւ ես ուզում նրան անհանգստացնել»։ Իսկ ես պատասխանում էի խորհրդին (մտքին). «Նզովք քեզ, և՛ քո դատողությանը, և՛ քո խելամտությանը, և՛ քո իմաստությանը, և՛ քո գիտությանը, քանզի ի՛նչ որ դու գիտես, գիտես դեռից»։ Եվ այսպես, ես գնում էի ու հարցնում ծերին։ Եվ երբեմն պատահում էր, որ նա պատասխանում էր ինձ հենց այն, ինչ որ կար իմ մտքում։ Այն-

ժամ խորհուրդն ինձ ասում էր. «Դե՛ ի՞նչ, տեսնո՞ւմ ես, որ դա հենց այն է, ինչ որ ե՛ս էի քեզ ասում, իզուրը չէ՞ր արդյոք, որ դու անհանգստացրիր ծերին»: Իսկ ես պատասխանում էի խորհրդին. «Հիմա այն լա՛վ է, այժմ այն Սուրբ Հոգուց է, իսկ քո բոլոր ներշնչանքները կեղծ են, դեերից են և արդյունք են կրքոտ հոգեվիճակիդ»: Եվ այսպես, ես երբեք ինձ թույլ չտվեցի ենթարկվել իմ խորհուրդներին՝ առանց ծերին հարցնելու: Եվ հավատացե՛ք ինձ, եղբայրներ, որ ես գտնվում էի մեծ հանգստի, կատարյալ անտրամոլության մեջ, այնպես որ ես նույնիսկ վշտանում էի դրա համար, ինչպես ես արդեն ձեզ ասել եմ այս մասին: Քանզի լսելով, թե՛ «Բազում նեղուլթյուններ կրելով է, որ պետք է մտնենք Աստծո Արքայությունը» (Գործք. 14; 21), և տեսնելով, որ ես ոչ մի վիշտ չունեմ, ես վախենում էի և գտնվում մեծ տարակուսանքի մեջ՝ չիմանալով այդպիսի հանգստության պատճառը, մինչև որ ծերը չբացատրեց ինձ այդ՝ ասելով. «Մի՛ վշտացիր, քանզի ամեն ոք, ով հնազանդ է հայրերին, ունի այսպիսի հանգիստ և անտրամոլություն»:

Ձանացե՛ք և դուք, եղբայրներ, հարցնել և չապավինել ինքներդ ձեզ: Ծանաչեցե՛ք, թե այս գործում ինչպիսի՞ անտրամոլություն կա, ինչպիսի՞ ուրախություն, ինչպիսի՞ հանգստություն: Բայց քանի որ ես ասացի, թե երբեք չեմ վշտացել, ապա լսեցե՛ք նաև այն, ինչ որ պատահեց ինձ հետ այդ ժամանակ:

Երբ ես դեռ գտնվում էի այնտեղ՝ հանրակացարանում, մի անգամ վրաս մեծ և անտանելի վիշտ եկավ, և ես գտնվում էի այնպիսի տառապանքի և նեղուլթյան մեջ, որ պատրաստ էի նույնիսկ հոգիս տալ: Այս վիշտը, որ ինձ պատահեց՝ դեերի նենգությունից էր: Նման փորձությունը, որ դեերը հարուցում են նախանձի պատճառով, շատ ծանր է լինում, սակայն՝ կարճատև: Այն լինում է մռայլ, ծանր, անմխիթար, ոչ մի տեղից հանգստություն կամ մխիթարություն չի գալիս, այլ՝ ամեն կողմից նեղու-

թյուններ, ամեն կողմից ճնշումներ: Սակայն շուտով հոգուն այցելում է Աստծո շնորհը, քանզի եթե չայցելի Աստծո շնորհը, ապա ոչ ոք չի կարող այն կրել: Եվ ես գտնվում էի, ինչպես ասացի, նման փորձություն մեջ: Մի օր, երբ ես կանգնած էի վանքի բակում՝ ուժաբառ եղած և աղոթում էի այս մասին Աստծուն, հանկարծ նայեցի եկեղեցու ներսը ու տեսա մի ոմն այր՝ եպիսկոպոսի տեսքով, որը, կարծես սուրբ խորհուրդները ձեռքին (Ս. Հաղորդության սկիհը), բարձրանում էր սուրբ խորան: Երբեք չի եղել, որ ես մոտենամ օտարականի կամ եկվորի առանց անհրաժեշտություն կամ հանձնարարություն, սակայն այդ պահին կարծես ինչ-որ բան ինձ ձգեց, և ես գնացի նրա ետևից: Բարձրանալով խորան՝ նա երկա՛ր կանգնեց աղոթքի՝ ձեռքերը դեպի վեր պարզած, և ես կանգնել էի նրա ետևում ու աղոթում էի երկյուղի մեջ, քանզի նրան տեսնելուց վրաս ահ ու սարսափ էր իջել: Ավարտելով աղոթքը՝ նա շրջվեց ու մոտեցավ ինձ, և որքան նա մոտենում էր ինձ, այնքան զգում էի, որ վիշտն ու սարսափը հեռանում են ինձանից: Հետո, կանգնելով իմ առջև, նա ձեռքերը երկարեց դեպի ինձ, դիպավ իմ կրծքին և, հարվածելով նրան իր մատներով, ասաց. «Համբերելով սպասեցի Տիրոջը, և Նա նայեց ինձ ու լսեց իմ աղոթքը: Նա ինձ հանեց տառապանքի գբից, ցխից ու տիղմից. ոտքերս ժայռի վրա հաստատեց և ուղղեց իմ քայլերը: Բերանս դրեց մի նոր օրհներգ՝ օրհներգը մեր Տեր Աստծու» (Սղմ. 39; 2-4): Այս բոլոր տողերը նա արտասանեց երեք անգամ՝ հարվածելով կրծքիս, ինչպես արդեն ասացի, և այդպես հեռացավ: Սրանից անմիջապես հետո սրտիս մեջ հեղվեց քաղցր լույս, ուրախություն, մխիթարություն և մե՛ծ ցնծություն, և ես բոլորովին այլ մարդ դարձա, քան նախկինում էի: Երբ նա դուրս եկավ խորանից, ես շտապեցի նրա ետևից՝ ցանկանալով գտնել նրան, բայց չգտա, քանզի նա աներևութացել էր: Այդ ժամանակից ի վեր,

Աստծո ռդորմուծյամբ, ես այլևս չզգացի, որ ինձ անհանգստացնեին վիշտն ու երկյուղը, քանզի Տերը պահպանում է ինձ մինչ այսօր հանուն այն սուրբ ծերերի աղոթքների: Սա ձեզ ասացի, եղբայրներ՝, այն բանի համար, որպեսզի դուք իմանաք, թե ինչպիսի հանգիստ և անտրամուծյուն ունի նա, ով չի հետևում ինքնիրեն, և թե ինչպիսի անվտանգություն է, ինչպիսի անսասանություն է ապրում նա, ով չի ապավինում իրեն և չի հավատում իր խորհուրդներին, այլ ամեն ինչում, ինչ-որ իրեն է վերաբերում, ապավինում է Աստծուն և նրանց, ովքեր կարող են առաջնորդել իրեն Աստծով: Եվ այսպես սովորեցե՛ք և դուք, եղբայրներ՝, հարցնել, սովորեցե՛ք չապավինել ինքներդ ձեզ և չհավատալ նրան, ինչ որ ասում են ձեզ ձեր խորհուրդները: Լավ է հարցնելը. (դրանից է) խոնարհությունը և ուրախությունը: Ինչո՞ւ իզուր տեղը վիշտ պատճառեք ինքներդ ձեզ: Այլ կերպ անհնար է փրկվել, եթե ոչ այս կարգով:

Սակայն մեկը կարող է մտածել. եթե մեկը չունի այն մարդը, որին կարող է հարցնել, ապա այդ դեպքում ի՞նչ պիտի անի նա: Ճշմարիտ է այն, որ եթե մեկը իրոք ամբողջ սրտով ուզում է կատարել Աստծո կամքը, ապա Աստված երբեք չի թողնի նրան, այլ ամեն կերպ կառաջնորդի նրան իր կամքի համեմատ: Արդարև, եթե մեկը իր սիրտը ուղղի Աստծո կամքի համաձայն, ապա Աստված փոքրիկ մանկանն էլ կլուսավորի՝ հայտնելու նրան իր կամքը: Իսկ եթե մեկը անկեղծորեն չի ուզում կատարել Աստծո կամքը, ապա թեկուզ նա մարգարեի մոտ էլ գնա, Աստված մարգարեի սրտում կդնի ասելու նրան այն, ինչ համապատասխան է նրա եղծյալ սրտին, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Եթե մի մարգարե ձեզ խաբի և մի բան խոսի, Ես՝ Տե՛րս եմ, որ մոլորեցրի այդ մարգարեին» (Ելից 14: 9): Ուստի մենք պետք է մեր ամբողջ զորություններ մեզ ուղղենք դեպի Աստծո կամքը և չհավատանք մեր սրտին: Սակայն եթե բարի գործ էլ

լինի, և սուրբ այրերից մեկը հավաստի, որ այն իրո՛ք բարի է, ապա մենք ևս պետք է այն համարենք բարի, սակայն չպետք է հավատանք ինքներս մեզ, թե լա՛վ ենք կատարում այն, և թե այն (անպայման) պետք է որ լավ կատարվի: Այլ մենք պետք է կատարենք այն մեր ուժերի ներածին չափով և կրկին տեղեկացնենք նաև այն, թե ինչպե՛ս ենք մենք այն կատարում, և իմանանք, թե արդյոք լավ ենք կատարել այն: Եվ սրանից հետո էլ մենք չպետք է անհոգ լինենք, այլ սպասենք Աստծո դատաստանին, ինչպես որ ասաց աբբա Աղաթոնը, երբ նրան հարցրին, թե՛ «Մի՞թե դու էլ ես վախենում, հա՛յր», նա պատասխանեց. «Ես կատարեցի (Աստծո կամքը) կարողությունս չափով, սակայն չգիտե՛մ, արդյո՞ք հաճելի են իմ գործերը Աստծուն, քանզի այլ է Աստծո դատաստանը, և այլ՝ մարդկայինը»: Թող Տեր Աստված մեզ պահպանի այս պատուհասից, որ հասնում է նրանց վրա, ովքեր ապավինում են իրենք իրենց, և թող արժանացնի մեզ հաստատվելու մեր հայրերի ճանապարհին, որոնք հաճելի եղան նրան: Քանզի նրան է վայելում փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս: Ամեն:

Եթե մենք հիշեինք, եղբայրներ՝ սուրբ ծերերի խոսքերը, եթե մենք մշտապես ուսանեինք դրանք, ապա մենք այդքան հեշտությամբ չէինք տրվի անհոգությանը, քանզի եթե մենք, ինչպես նրանք են ասել, չանտեսեինք փոքրը, նաև այն, ինչ որ մեզ չնչին է թվում, ապա չէինք ընկնի մեծ և ծանր (մեղքերի) մեջ: Ես միշտ ձեզ ասում եմ, որ այդ աննշան մեղքերից և այն բանից, որ ասում ենք. «Ի՞նչ մեծ բան է այս կամ այն բանը», հոգու մեջ ձևավորվում է չար սովորություն, և մարդ սկսում է անտեսել նաև մեծը: Գիտե՞ք, թե որքան ծանր մեղք է մերձավորին դատելը: Քանզի ի՞նչ կա սրանից ավելի ծանր: Ի՞նչն է այսչա՛փ ատում Աստված, ինչի՞ց է այսչա՛փ նողկում: Ինչպես և հայրերն են ասել՝ դատելուց ավելի վատ բան չկա: Նման մեծագույն չարիքի մեջ մարդն ընկնում է այն ժամանակ, երբ անհոգություն է ցուցաբերում արտաքինից չնչին թվացող բաների հանդեպ: Քանզի երբ մարդ խղճին հակառակ որևէ բան է թույլ տալիս մերձավորի հանդեպ՝ ասելով. «Ի՞նչ մեծ բան է, եթե ես ականջ դնեմ, թե ինչ է ասում այս եղբայրը, ի՞նչ մեծ բան է, եթե ես նրան մի այսպիսի բառ ասեմ, ի՞նչ մեծ բան է, եթե նայեմ, թե ինչ է անելու այս եղբայրը կամ այս օտարականը», ապա հետևանքը լինում է այն, որ միտքը թողնում է իր մեղքերը առանց ուշադրություն և սկսում է նկատել մեծավորի մեղքերը: Եվ սրա հետևանքով առաջ է գալիս այն, որ մենք դատում, չարախոսում, նվաստացնում ենք (մերձավորներին), և ի վերջո, ինքներս ենք ընկնում հենց այն բանի մեջ, ինչի համար որ դատում ենք (ուրիշներին): Քանզի այն բանից, որ մարդը հոգ չի տանում իր մեղքերի մասին և «չի ողբում», ինչպես հայրերն են ասել, «իր մեռելի վրա» (այսինքն՝ իր մեռած հոգու վրա), նա ոչ մի բարի բանի մեջ չի կարող առաջադիմել, քանզի նրա ուշադրությունը մշտապես սևեռված է մերձավորի գործերի վրա: Իսկ

ոչինչ այնքան չի բարկացնում Աստծուն, ոչինչ այնպես չի մերկացնում մարդուն և չի հեռացնում Աստծուց, ինչպես որ չարախոսելը, կամ դատելը, կամ էլ մերձավորին նվաստացնելը:

Այլ բան է չարախոսելը կամ մեղադրելը, այլ բան է դատելը, և այլ բան՝ նվաստացնելը: Չարախոսելը նշանակում է որևէ մեկի մասին ասել, թե՛ այսինչը ստեց, կամ բարկացավ, կամ ընկավ շնության մեջ, կամ նման ինչ-որ բան (արեց): Ահա այդպիսին չարախոսեց նրա մեղքերի մասին, այսինքն՝ կրքոտությունով խոսեց նրա մեղքերի մասին: Իսկ դատել նշանակում է ասել, թե՛ այսինչը ստախոս է, բարկացկոտ է, անառակ է: Ահա սա դատեց հենց նրա հոգեվեճակը՝ դատավճիռ կայացնելով նրա ամբողջ կյանքի համար՝ ասելով, որ նա այսպիսին է, և դատեց նրան որպես այդպիսին. իսկ սա ծանր մեղք է: Քանզի այլ բան է ասել՝ նա բարկացավ, և այլ բան է ասել՝ նա բարկացկոտ է, և այդպիսով դատավճիռ կայացնել նրա ամբողջ կյանքի համար: Իսկ դատելու մեղքը այնքան ծանր է ցանկացած այլ մեղքից, որ Քրիստոս ինքն է ասում. «Կեղծավոր՝, նախ քո աչքից գերանը հանիր և ապա լավ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Ղուկ. 6; 42), և մերձավորի մեղքը նմանեցնում է շյուղի, իսկ դատելը՝ գերանի: Ահա այսպիսի ծանր մեղք է դատելը, և գերազանցում է բոլոր մեղքերին:

Եվ այն փարիսեցին, որ աղոթում ու գոհանում էր Աստծուց իր առաքինությունների համար, չէր ստում, այլ ճշմարիտությունն էր ասում, և դրա համար չէ, որ դատապարտվեց, քանզի մենք պարտավոր ենք երախտապարտ լինել Աստծուն, երբ որ արժանանում ենք ինչ-որ բարի բան անելու, որովհետև նա՛ է, որ մեզ օգնում և աջակցում է այդ գործում: Սրա համար չէ, որ դատապարտվեց փարիսեցին, ինչպես ես ասացի, որ գոհացավ Աստծուց՝ թվարկելով իր առաքինությունները, և ոչ էլ նրա համար դատապարտվեց, որ ասաց. «Նման չեմ ուրիշ

մարդկանց», այլ երբ նա դարձավ մաքսավորի կողմը և ասաց. «Եվ կամ ինչպես այս մաքսավորը», այնժամ նա ենթարկվեց դատապարտություն, քանզի նա դատեց հենց նրա դեմքը, հենց նրա հոգեվիճակը և, կարճ ասած, նրա ամբողջ կյանքը: Այդ իսկ պատճառով մաքսավորը դուրս եկավ «արդարացած, քան մյուսը» (Ղուկ. 18; 11):

Չկա ոչինչ ավելի ծանր, ինչպես բազմիցս եմ ասել, ոչինչ առավել վատ, քան դատելը, արհամարհելը և նվաստացնելը մեծավորին: Ինչո՞ւ մենք չենք դատում ինքներս մեզ և մեր մեղքերը, որոնք մենք ստուգապես գիտենք և որոնց համար պատասխան պիտի տանք Աստծուն: Ինչո՞ւ ենք խլում և հափշտակում Աստծո դատաստանը: Ի՞նչ ենք ուզում Նրա արարածներից: Չպե՞տք է արդյոք մենք դողանք՝ լսելով, թե ինչ պատահեց այն մեծ ծերի հետ, որը, իմանալով մի ոմն եղբոր մասին, թե նա ընկել է շնուծյան մեջ, ասաց. «Վա՛յ, ինչ վատ է արել»: Կամ դուք չգիտե՞ք, թե ինչ սարսափելի դեպք է պատմում նրա մասին «Հարանց վարքը»: Սուրբ հրեշտակը նրա մոտ է բերում այդ մեղանչողի հոգին և ասում է նրան. «Տե՛ս, նա, ում դու դատեցիր, մեռավ. ո՞ւր կհրամայես տանել նրան՝ արքայուլթյո՞ւն, թե՞ դժոխք»: Կո՞ւր արդյոք այս չարիքից ավելի սարսափելի բան: Քանզի ծերին ուղղված հրեշտակի այս խոսքերը ուրիշ բան չեն նշանակում, եթե ոչ այս. «Քանի որ դու արդարների և մեղավորների դատավորն ես, ուստի ասա՛, ի՞նչ կհրամայես այս թշվառ հոգու համար. կողորմե՞ս սրան, թե՞ կմատնես տանջանքների»: Սուրբ ծերը, ապշած այս բանից, իր ողջ կյանքի մնացած մասը անցկացրեց հեծեծանքների, արցունքների և անսահման չարչարանքների մեջ՝ աղոթելով Աստծուն, որպեսզի Նա ների իրեն այդ մեղքը, ~ և այս ամենը արդեն այն բանից հետո, երբ նա, երեսնիվայր ընկնելով սուրբ հրեշտակի ոտքերի առջև, ստացավ թողութուն: Քանզի հրեշտակի կողմից ասվա-

ծը՝ «Ահա Աստված քեզ ցույց տվեց, թե որքա՛ն ծանր մեղք է դատելը, որպեսզի դու այլևս չընկնես դրա մեջ», արդեն իսկ ներում էր նշանակում, սակայն ծերի հոգին ցմահ չէր կամենում մխիթարվել և թողնել իր ողբը:

Եվ այսպես, ի՞նչ ենք ուզում մեր մեծավորից: Ի՞նչ ենք ուզում ուրիշի (մեղքի) ծանրությունից: Մենք մեր մասին հոգալու այնքա՛ն բան ունենք, եղբայրնե՛ր: Յուրաքանչյուր ոք թող ուշադիր լինի իր անձի և իր մեղքերի հանդեպ: Միայն Աստծուն է պատկանում (իշխանությունը) արդարացնելու և դատապարտելու, քանի որ միայն Նա՛ գիտի ամեն մեկի և՛ հոգեվիճակը, և՛ կարողությունը և՛ շնորհները, և՛ դաստիրակման կերպը, և՛ մարմնակազմը, և՛ ընդունակությունները, և սրանց համեմատ էլ դատում է բոլորին, ինչպես որ Նա Ինքը միայն գիտի: Քանզի Աստված այլ կերպ է դատում եպիսկոպոսի գործերը և այլ կերպ՝ (աշխարհիկ) ղեկավարինը, այլ կերպ է դատում վանահոր գործերը և այլ կերպ՝ աշակերտինը, այլ կերպ՝ տարեցինը և այլ կերպ՝ երիտասարդինը, այլ կերպ՝ հիվանդինը և այլ կերպ՝ առողջինը: Եվ ո՞վ կարող է իմանալ այս բոլոր դատաստանները. միմիայն Աստվա՛ծ՝ ամենքի Արարիչը, ամեն ինչ Ստեղծողը և ամեն բան Գիտեցողը:

Ես լսել եմ, որ մի ժամանակ այսպիսի դեպք է կատարվել: Ստրուկերով լեցուն նավը գալիս է մի քաղաք, որտեղ ապրում էր մի սրբակենցաղ կույս, որը բավականին ուշադիր էր իր վարքագծի հանդեպ: Լսելով այս նավի մասին՝ նա խիստ ուրախանում է, քանզի հույժ ցանկանում էր իր համար մի փոքրիկ աղջիկ գնել, և մտածում էր այսպես. «Կվերցնեմ ու կդաստիարակեմ նրան իմ ուզածի պես, որպեսզի նա երբեք չճանաչի այս աշխարհի ախտերը»: Նա մարդ է ուղարկում այդ նավի տիրոջ ետևից և, կանչելով նրան իր մոտ, իմանում է, որ նա ունի երկու փոքրիկ աղջնակներ, հենց այնպիսին, ինչպիսին որ ինքն էր

ցանկանում, և նույն պահին ուրախությունը վճարելով նրանցից մեկի գինը՝ վերցնում է նրան իր մոտ: Իսկ երբ նավի տերը հեռանում է այդ տեղից, որտեղ բնակվում էր այդ սրբուհին, նրան պատահում է մի պոռնիկ կին՝ բացարձակ անբարո և, տեսնելով նրա հետ մյուս աղջնակին, ցանկանում է վերցնել նրան: Եվ համաձայնություն գալով նրա հետ՝ վճարում է գինը, վերցնում աղջկան և տանում իր հետ: Տեսնո՞ւմ եք Աստծո գաղտնիքները: Տեսնո՞ւմ եք Աստծո դատաստանները: Ո՞վ կարող է բացատրել սա: Եվ այսպես, սուրբ կույսը, վերցնելով այն փոքրիկին, կրթեց նրան Աստծո երկյուղով՝ խրատելով նրան ամեն տեսակ բարի գործի մեջ, ուսուցանելով նրան վանական կենցաղավորությունը, կարճ ասած, կրթեց նրան Աստծո սուրբ պատվիրանների ողջ անուշահոտությունը: Պոռնիկ կինն էլ, վերցնելով այն թշվառին, նրան դարձրեց սատանայի գենք: Քանզի ուրիշ ի՞նչ կարող էր սովորեցնել նրան վարակի այդ աղբյուրը, եթե ոչ՝ իր հոգու կորուստն ու կործանումը: Եվ այսպես, ի՞նչ կարող ենք մենք ասել այս սարսափելի ճակատագրի մասին: Երկուսն էլ մանկահասակ էին, երկուսն էլ վաճառվեցին՝ իրենք էլ չիմանալով, թե ուր են գնում, և մեկը հայտնվեց Աստծո ձեռքերի մեջ, իսկ մյուսը ընկավ սատանայի ճանկերի մեջ: Մի՞թե կարելի է ասել, որ Աստված հավասարապես կազանջի, ինչպես մեկից, այնպես էլ մյուսից: Ինչպե՞ս կարելի է: Եթե երկուսն էլ ընկնեն շնություն մեղքի մեջ, մի՞թե կարելի է ասել, թե երկուսն էլ կենթարկվեն միևնույն դատաստանին, թեպետև երկուսն էլ ընկել են միևնույն մեղքի մեջ: Հնարավոր է դա: Մեկը գիտեր դատաստանի մասին, Աստծո Արքայություն մասին, օր ու գիշեր ուսանում էր Աստծո խոսքը, իսկ մյուսը՝ այն թշվառը, երբեք ո՛չ լսել էր և ո՛չ էլ տեսել որևէ բարի բան, այլ մշտապես, ընդհակառակը, միայն աղտեղին, միայն դիվայինը: Ինչպե՞ս կարելի է, որ երկուսն էլ դատվեն

միևնույն դատաստանով:

Եվ այսպես, ոչ մի մարդ չի կարող իմանալ Աստծո դատաստանները, այլ Նա՛ է միայն գիտի ամեն բան և կարող է դատել յուրաքանչյուրի մեղքերը, ինչպես որ միակ իրեն է հայտնի: Իսկապես պատահում է, որ եղբայրը մեղանշում է պարզամտությունով: սակայն նա մի այնպիսի բարի գործ ունի, որը հաճելի է Աստծուն քո ամբողջ կյանքից առավել, իսկ դու դատում ու դատապարտում ես նրան և ծանրաբեռնում ես հոգիդ: Իսկ եթե պատահել է այնպես, որ նա սայթաքել է, դու ի՞նչ գիտես՝ որքա՛ն է նա ջանացել և որքա՛ն արյուն ու քրտինք է թափել մեղանշելուց առաջ, և այժմ նրա մեղանշումը Աստծո առջև հանդիսանում է՝ որպես արդարություն գործ: Քանզի Աստված տեսնում է նրա ջանքն ու վիշտը, որոնք նա, ինչպես ասացի, դրսևորել էր մեղանշելուց առաջ, և ողորմում է նրան: Իսկ դու միայն այս (մեղանշումից) ես տեղյակ. և այնժամ, երբ Աստված ողորմում է նրան, դու դատում ես նրան և կործանում ես հոգիդ: Դու ի՞նչ գիտես, թե դրա համար նա որքա՛ն արցունք է հեղել Աստծո առաջ: Դու միայն նրա մեղքը տեսար, իսկ զղձումը չես տեսնում:

Երբեմն մենք ոչ միայն դատում ենք, այլ նաև նվաստացնում ենք մերձավորին, քանզի այլ բան է, ինչպես ասացի, դատելը, և այլ բան՝ նսեմացնելը: Նսեմացնելը այն է, երբ մարդ ոչ միայն դատում է ուրիշին, այլև արհամարհում է նրան, այսինքն՝ խորշում է մեղավորից և գարշում է նրանից, ինչպես պղծությունից: Սա դատելուց վատ է և շատ ավելի կործանարար է: Նրանք, ովքեր իսկապես ուզում են փրկվել, ուշադրություն չեն դարձնում մերձավորի թերություններին, այլ մշտապես նայում են իրենց սեփական (թերություններին) և առաջադիմում են: Այդպիսին էր նա, ով, տեսնելով իր եղբորը մեղանշելիս, հոգոց հանեց և ասաց. «Վա՛յ ինձ, ինչպես որ նա մեղանշեց այսօր,

այդպես և ես կմեղանչեմ վաղը»: Տեսնո՞ւմ ես հոգու տրամադրվածությունը: Ինչպես նա եղբորը դատելուց խուլյա տալու միջոց գտավ իսկույն: Քանզի ասելով՝ «Այդպես և ես կմեղանչեմ վաղը», նա ներշնչում էր իրեն երկյուղ և մտահոգություն այն մասին, որ ի՛նքն էլ շուտով կարող է մեղանչել, և այդպես նա խուլյա տվեց եղբորը դատելուց: Ընդ որում սրանով չբավարարվեց, այլ նաև իրեն գցեց նրա ոտքերի առջև՝ ասելով. «Նա (ծայրահեղ դեպքում) կապաշխարի իր մեղքը, իսկ ես չեմ ապաշխարի, ինչպես որ պետք է, չեմ հասնի ապաշխարության, ի գորու չեմ լինի ապաշխարել»: Տեսնո՞ւմ ես աստվածային հոգու լուսավորությունը: Նա ոչ միայն հասցրեց խուսափել մերձավորին դատելուց, այլև ինքնիրեն գցեց նրա ոտքերի առջև: Իսկ մենք, թշվառներս, անխտիր դատում ենք, խորշում ենք, նսեմացնում ենք, երբ ինչ-որ բան ենք տեսնում, կամ լսում, կամ էլ միայն կասկածում. և որ ավելի վատ է, մենք կանգ չենք առնում մեր սեփական վնասների վրա, այլ, հանդիպելով մի ուրիշ եղբոր, անմիջապես ասում ենք նրան, թե՛ այս-այս բաներն են պատահել, և վնասում ենք նրան՝ սերմանելով մեղքը նրա սրտի մեջ: Եվ մենք չենք վախենում այս խոսքն Աստուծից, թե՛ «Վա՛յ նրան, ով եղբորը պղտոր հրապուլըներով է արբեցնում» (Ամբ. 2; 15), այլ դիվային գործ ենք կատարում և չենք հոգում այս մասին: Քանզի դեռ ուրիշ ի՞նչ ունի անելու, բացի խռովելուց և վնասելուց: Իսկ մենք, պարզվում է, դեերի օգնականներն ենք՝ ինքներս մեզ և մերձավորին վնասելու գործում, քանզի ով վնասում է հոգուն, նա համագործակցում և օգնում է դեերին, իսկ ով օգուտ է բերում նրան, նա օգնում է սուրբ հրեշտակներին: Իսկ ինչի՞ց է, որ մենք ընկնում ենք սրա մեջ, եթե ոչ այն բանից, որ մենք սեր չունենք: Քանզի եթե մենք սեր ունենայինք, ապա սրտացավությունը և կարեկցանքով կնայեինք մերձավորի թերություններին, ինչպես

որ ասված է. «Սերը ծածկում է մեղքերի բազմությունը» (Պետ. 4; 8), «Սերը չար բան չի խորհում, ամեն բան ծածկում է» և այլն (Ա. կորնթ. 13; 5):

Եվ այսպես, եթե մենք, ինչպես ասացի, սեր ունենայինք, ապա այդ սերը կծածկեր ամեն մի մեղք, ինչպես որ սրբերն են անում, տեսնելով մարդկային թերությունները: Քանզի մի՞թե սրբերը կույր են և չեն տեսնում մեղքերը: Եվ ո՞վ է այդչա՛փ ատում մեղքը, որչափ սրբերը: Սակայն նրանք չեն ատում մեղանչողին և չեն դատում նրան, չեն խորշում նրանից, այլ կարեկցում են նրան, վշտանում են նրա համար, խրատում են, մխիթարում են, բժշկում են նրան, հիվանդ անդամ որպես և անում են ամեն բան, որպեսզի փրկեն նրան: Ինչպես ձկնորսները, երբ կարթը գցում են ծովը և մեծ ձուկ բռնելով, զգում են, որ նա թփրտում է, միանգամից վեր չեն քաշում կարթը, այլապես թելը կկտրվի, և նրանք իսպառ կկորցնեն ձկանը, այլ ազատ են թողնում թելը և թույլ են տալիս, որ նա գնա, ուր ուզում է: Երբ տեսնում են, որ ձուկը հոգնել, ուժասպառ է եղել և դադարել է թփրտալուց, այնժամ կամաց-կամաց ձգում են նրան: Այդպես և սրբերը երկայնամտությամբ և սիրով գրավում են եղբորը և չեն խորշում ու չեն զզվում նրանից: Ինչպես մայրը, որ անառակ որդի ունի, ո՛չ միայն չի խորշում ու չի զզվում նրանից, այլև սիրով է շրջապատում նրան, և ինչ էլ որ անում է, անում է նրան մխիթարելու համար: Այդպես և սրբերը, մշտապես ծածկում են (սիրով) շրջապատում են օգնում են, որպեսզի միաժամանակ և՛ մեղանչողին շտկեն, և՛ մյուսները վնաս չկրեն նրանից, և՛ իրենք առավել առաջադիմեն Քրիստոսի սիրո մեջ:

Ինչ արեց սուրբ Ամոնը, երբ մի անգամ եղբայրները խռովված եկան նրա մոտ և ասացին. «Գնա՛ և տե՛ս, հա՛յր, որ այսինչ եղբոր խցում կին կա»: Ինչպիսի՞ գթասրտություն ցուցաբերեց, ինչպիսի՞ սեր ուներ նրա սուրբ հոգին: Հասկանալով, որ եղբայ-

րը թաքցրել է կնոջը տակառի տակ, նա գնաց և նստեց դրա վրա և հրամայեց նրանց փնտրել ամբողջ խցով մեկ: Երբ նրանք ոչինչ չգտան, նա ասաց նրանց. «Աստված թող ների ձեզ»: Եվ այսպիսով ամաչեցրեց նրանց, հաստատեց և հակայական օգուտ տվեց, սովորեցրեց հեշտությամբ չհավատալ մերձավորի մասին ամբաստանությունը. և այն եղբորը շտկեց՝ ոչ միայն Աստծով ծածկելով նրան մեղքը, այլև խրատելով նրան, երբ դրա համար հարմար պահ գտավ: Քանզի բոլորին դուրս հանելով՝ նա բռնեց նրա ձեռքից ու ասաց. «Մտածի՛ր հոգուդ մասին, եղբայր»: Իսկույն ամոթը պատեց այս եղբորը, և նրա սիրտը զղջումով լցվեց, քանզի ծերի մարդասիրությունն ու կարեկցանքը նույն պահին ներգործեցին նրա հոգու վրա:

Եվ այսպես մենք ևս ձեռք բերենք սեր, ձեռք բերենք հանդուրժողականություն մերձավորի հանդեպ, որպեսզի պահպանենք մեզ կործանարար չարախոսությունից, դատելուց և նսեմացնելուց, և օգնենք միմյանց, ինչպես մեր սեփական անդամներին: Ո՞վ վերք ունենալով իր ձեռքին, կամ ոտքին, կամ մի այլ անդամի վրա՝ կզգվի իրենից կամ կկտրի իր անդամը, թեկուզ և այն նեխած լինի: Չէ՞ որ ավելի շուտ նա կմաքրի այն, կլվանա, սպեղանի կղնի վրան, կվիրակապի, կցողի սուրբ ջրով, կաղոթի և կխնդրի սրբերին աղոթել իր համար, ինչպես ասում է աբբա Զոսմիրոսը: Մի խոսքով, ոչ ոք չի թողնում իր անդամը անփութություն մեջ, չի անտեսում, չի զգվում նրանից, նույնիսկ նրա գարշահոտությունից, այլ անում է ամեն բան, որպեսզի բժշկի նրան: Այդպես մենք ևս պարտավոր ենք կարեկցել միմյանց, սրտացավ լինել իրար հանդեպ, օգնել մեկ մեկու՝ թե՛ ինքներս և թե՛ ուրիշ գորեղների միջոցով, և ամեն բան մտածել և կատարել հօգուտ և՛ մեզ, և՛ մյուսներին, քանզի մենք միմյանց անդամներ ենք, ինչպես որ ասում է առաքյալը. «Մի մարմին ենք, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք» (Հռոմ. 1; 25), և՛ «եթե

մի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները» (Ա. Կորնթ. 12; 26): Ի՞նչ է թվում ձեզ հանրակացարանը. հիրավի մի մարմին չէ՞ այն, և նրանք, (որ գտնվում են հանարակացարանի կազմում), մի մարմնի անդամներ չեն՞ արդյոք: Ղեկավարները և առաջնորդները հանդիսանում են գլուխը, հետևողները և շտկողները՝ աչքերը, խոսքը քարոզողները՝ բերանը, նրանց լսողները՝ ականջները, կատարողները՝ ձեռքերը, իսկ ոտքերը՝ առաքողները և ծառայությունը կատարողներն են: Գլու՞խ ես դու՞ առաջնորդի՛ր: Ա՞չք ես՞ հետևի՛ր, նայի՛ր: Ակա՞նջ ես՞ անսա՛, լսի՛ր: Բերա՞ն ես՞ խրատի՛ր, ուսուցանի՛ր: Ձե՞ռք ես՞ գործի՛ր: Ո՞տք ես՞ ծառայի՛ր: Ձեզանից յուրաքանչյուրը թող ծառայի մարմնին ըստ իր կարողությունից: Զանացե՛ք մշտապես օգնել միմյանց՝ կա՛մ ուսուցանելով և Աստծո խոսքը սերմանալով եղբոր սրտի մեջ, կա՛մ մխիթարելով վշտի և նեղություն ժամանակ, կա՛մ օգնություն ձեռք մեկնելով ծառայության գործի մեջ: Մի խոսքով, ամեն մեկը, ինչպես ասացի, ձեր կարողության չափով, ջանացե՛ք միաբան և միասնական լինել միմյանց հետ, քանզի մարդ որքան ավելի է միավորվում մերձավորի հետ, այնքան ավելի է միավորվում նա Աստծո հետ:

Եվ որպեսզի դուք ավելի հստակ հասկանաք ասածիս իմաստը, ձեզ առաջարկում եմ մի համեմատություն, որը սուրբ Հայրերն են ավանդել: Պատկերացրեք մի շրջանագիծ՝ գծված գետնի վրա, որի մեջտեղը կոչվում է կենտրոն: Իսկ ուղիղ գծերը, որոնք կենտրոնից ձգվում են մինչև շրջանագիծ, կոչվում են շառավիղներ: Հիմա ուշադիր եղեք, թե ինչ պիտի ասեմ. պատկերացրեք, որ այս շրջանագիծը աշխարհն է, իսկ նրա կենտրոնը՝ Աստված, շառավիղները, այսինքն՝ ուղիղ գծերը, որ ծայրից ձգվում են մինչև կենտրոն, դրանք մարդկային կյանքի ուղիներն են: Եվ այսպես, որքան սրբերը մոտենում են շրջանագծի կենտրոնին՝ ցանկանալով մերձենալ Աստծուն, այնքան, ըստ իրենց



մերձավորության չափի, նրանք մերձ են դառնում թե՛ Աստծուն, թե՛ միմյանց: Եվ որքան մերձենում են Աստծուն, այնքան մերձենում են միմյանց, և որքան մերձենում են միմյանց, այնքան էլ մոտենում են Աստծուն: Այդպես հասկացեք և հեռանալու դեպքում: Երբ հեռանում են Աստծուց և վերադառնում են արտաքին աշխարհ, ապա ակնհայտ է, որ այն չափով, որ նրանք հեռանում են կենտրոնից և հեռանում են Աստծուց, այդ նույն չափով հեռանում են միմյանցից: Եվ որքան հեռանում են միմյանցից, նույնքան հեռանում են և Աստծուց: Այսպիսին է սիրո բնությունը. որչափով մենք դուրս ենք գտնվում և չենք սիրում Աստծուն, նույն չափով յուրաքանչյուրս զատված է և իր մերձավորից: Իսկ եթե սիրենք Աստծուն, ապա որչափ սիրով որ մերձենանք Աստծուն, նույնչափ սիրով էլ կմիավորվենք նաև մեր մերձավորի հետ, և որքան որ միավորվենք մերձավորի հետ, նույնքան կմիավորվենք Աստծո հետ:

Տեր Աստված թող արժանացնի մեզ լսելու օգտակարը և կատարելու այն, քանզի այն չափով, որ մենք ջանում ենք և հոգ ենք տանում կատարելու լսածը, Աստված էլ լուսավորում և ուսուցանում է մեզ իր կամքը: Նրան փա՛ռք և իշխանություն հավիտյանս: Ամեն:

## ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՊԵՏՔ Է ՄԵՂԱԴՐԻ ԻՐԵՆ, ԱՅԼ Ո՛Չ ԹԵ՛ ՄԵՐՉԱՎՈՐԻՆ

7-րդ ուսուցում

Քննենք, եղբայրներ՛ր, թե ինչից է առաջանում, որ երբեմն մեկը վիրավորական խոսք է լսում և ուշադրություն չի դարձնում դրա վրա և կրում է այն առանց խռովքի, որպես թե այն բնավ չի էլ լսել, իսկ երբեմն հենց որ լսում է, իսկույն խռովվում է: Ո՞րն է նման տարբերությունը պատճառը: Եվ արդյոք մե՞կն է նման տարբերության պատճառը, թե՞ դրանք բազում են: Ես գտնում եմ, որ դա ունի բազում պատճառներ, բայց կա մեկը, որը, այսպես ասած, ծնողն է մնացած բոլոր պատճառների: Եվ ասեմ ձեզ, թե ինչպես է դա լինում: Նախ պատահում է, որ մեկը աղոթքից, կամ մի այլ բարի վարժանքից հետո, գտնվում է, այսպես ասած, լավ հոգեվիճակում, և այդ պատճառով հանդուրժում է իր եղբորը և չի խռովվում նրա խոսքերից: Պատահում է նաև, որ մեկը կիրք (առանձնահատուկ սեր) է տածում ինչ-որ մեկի հանդեպ, և դրա համար ինչ էլ որ նրա կողմից հասցվում է իրեն, կրում է առանց ցավի և վշտի: Լինում է նաև, որ մեկը արհամարհում է իրեն վիրավորել ցանկացողին, և այդ պատճառով ուշադրություն չի դարձնում նրա վիրավորանքներին, չի համարում նրան որպես մարդ, և դրա համար էլ բանի տեղ չի դնում նրա ո՛չ ասածին և ո՛չ արածին: Հիմա ձեզ մի բան կպատմեմ, որ շատ կզարմանաք:

Հանրակացարանում, մինչ իմ այնտեղից դուրս գալը, կար մի եղբայր, որին ես երբեք տեսած չկայի ո՛չ խռովվելիս, ո՛չ վշտանալիս, ո՛չ բարկանալիս ինչ-որ մեկի վրա, մինչդեռ ես նկատում էի, որ եղբայրներից շատերը նրան հաճախ սրտնեղություն էին պատճառում և վիրավորում էին նրան: Իսկ այս երիտասարդը այնպես էր կրում նրանցից յուրաքանչյուրի կողմից հասցված վիրավորանքները, որ կարծես թե ոչ ոք էլ իրեն բնավ չէր խռովեցրել: Ես միշտ զարմանում էի նրա ծայրահեղ անչարություն և

հեզուլթյան վրա և կամենում էի իմանալ, թե ինչպես էր նա ձեռք բերել այս առաքինությունը: Մի օր ես նրան մի կողմ տարա և, խոնարհվելով նրա առջև, խնդրեցի նրան ասել, թե ինչպիսի խորհուրդ է նա մշտապես կրում իր սրտում, որ վիրավորանքների ենթարկվելիս կամ էլ որևէ մեկից անարգանք կրելիս, նա ցուցաբերում է նման երկայնամտություն: Նա ինձ պատասխանեց քամահարանքով՝ առանց անհարմարություն և ամոթի զգացումի. «Դրանք մա՞րդ են, որ ես դրանց թերությունների վրա ուշադրություն դարձնեմ կամ էլ դրանցից վիրավորանքներ ընդունեմ. դրանք հաշացող շներ են»: Լսելով այս՝ ես խոնարհեցրի գլուխս և ասացի ինքս ինձ. «Այս եղբայրը գտել է ուղին», և խաչակնքվելով հեռացա նրանից՝ աղոթելով Աստծուն, որպեսզի Նա պահպանի ինձ և նրան:

Եվ այսպես, պատահում է, ինչպես ես ասացի, որ ինչ-որ մեկը չի խոռովվում նաև (մերձավորի) հանդեպ արհամարհանքից. իսկ դա ակնհայտ կործանում է: Իսկ եթե մեկը խոռովվում է եղբոր պատճառած վիրավորանքներից, ապա սա առաջանում է կամ այն բանից, որ նա այդ ժամանակ գտնվում է ոչ լավ հոգեվիճակում, կամ էլ այն բանից, որ անբարյացակամություն ունի նրա հանդեպ: Սա ունի բազում և այլ պատճառներ, որոնցից մի քանիսի մասին արդեն իսկ ասվեց: Սակայն ամեն մի խոռովության գլխավոր պատճառը, եթե մենք հիմնովին քննենք, դա այն է, որ մենք չենք մեղադրում ինքներս մեզ: Սրանից էլ սկիզբ է առնում նման ամեն մի ալեկոծություն. սրանից է, որ մենք երբեք հանգիստ չենք գտնում: Եվ զարմանալու ոչինչ չկա, երբ լսում ենք բոլոր սրբերից, որ չկա՝ ուրիշ ճանապարհ, սրանից բացի: Մենք տեսնում ենք, որ ոչ ոք, չըջանցելով այս ճանապարհը, հանգիստ չի գտել, իսկ մենք հույս ունենք հանգիստ գտնել, կամ էլ ենթադրում ենք, թե գնում ենք ճշմարիտ ճանապարհով՝ երբեք չցանկանալով հանդիմանել ինքներս մեզ: Արդարև,, եթե մարդ գործի

բազում առաքինություններ, բայց ամուր չբռնի այս ուղին, չհաստատվի այս ճանապարհին, ապա նա երբեք չի դադարի վիրավորվել և վիրավորել ուրիշներին՝ դրա պատճառով կորցնելով իր ջանքերի արդյունքը: Սրան հակառակ, ինչպիսի՞ ուրախություն, ինչպիսի՞ հանգիստ ունի նա, ով հանդիմանում է ինքնիրեն: Ուր էլ որ գնա իրեն հանդիմանողը, ինչպես ասել է աբբա Պիմենը, ինչպիսի վնաս էլ պատահի նրան, կամ անպատվություն, կամ ինչ-որ մի այլ վիշտ, նա արդեն նախապես իրեն արժանի է համարում ամեն տեսակ վշտի և երբեք չի խռովվում: Կա՞ սրանից ավելի անտրտում վիճակ:

Բայց ինչ-որ մեկը կասի. «Եթե եղբայրը վիրավորում է ինձ, և ես, քննելով ինքս ինձ, գտնում եմ, որ ես նրան նման բանի առիթ չեմ տվել, ապա ինչպե՞ս կարող եմ մեղադրել ինքս ինձ»: Արդարև, եթե այդպիսինը քննի իրեն Աստծո երկյուղով, ապա կգտնի, որ նա ինքն է ամեն կերպ առիթ տվել՝ կա՞մ գործով, կա՞մ խոսքով, կա՞մ տեսքով: Իսկ եթե նա տեսնի, ինչպես որ ինքն է ասում, թե տվյալ պահին բնավ չի տվել և ոչ մի առիթ, ապա նա հաստատ ինչ-որ մի այլ ժամանակ է վիրավորել նրան՝ կա՞մ դրանում, կա՞մ այլ գործում, կա՞մ էլ, հավանաբար, տրտմեցրել է մի ուրիշ եղբոր, և պետք է որ ինքը տառապեր դրա համար, կա՞մ հաճախ ինչ-որ մի այլ մեղքի համար: Ուստի, եթե մեկը, ինչպես ես ասացի, Աստծո երկյուղով քննի ինքնիրեն և խստությամբ փորձի իր խիղճը, ապա նա անպայման իրեն մեղավոր կգտնի:

Պատահում է նաև, որ մեկը, ինչպես իրեն է թվում, գտնվում է խաղաղության և լուսկեցության մեջ, բայց երբ եղբայրը նրան վիրավորական խոսք է ասում, ապա նա խռովվում է, և այդ պատճառով ինքնիրեն իրավասու է համարում վիրավորվել նրանից՝ ասելով. «Եթե նա չգար և չխոռովեր ինձ իր խոսքերով, ես չէի մեղանչի»: Ահա քեզ ծիծաղելի դատողություն: Ահա դիվային խաբկանք: Մի՞թե նա, ով ասաց նրան այդ խոսքը, կիրք գե-

տեղեց նրանում: Նա միայն ցույց տվեց նրան այն, ինչը արդե՛ն կար նրանում, այն բանի համար, որպեսզի նա, եթե կամենա, ապաշխարի այն: Այդպիսին նման է նեխած հացի, որն արտաքի՜նից լավն է, իսկ ներսից՝ բորբոսնած, և երբ ինչ-որ մեկը բեկի այն, ապա ի հայտ կգա նրա նեխածությունը: Այդպես և սա էր գտնվում, ինչպես որ իրեն էր թվում, խաղաղություն մեջ, սակայն կիրքը գտնվում էր նրա ներսում, իսկ նա չգիտեր այս մասին. եղբայրը նրան մի խոսք ասաց և հայտնաբերեց նրա նեխածությունը, որ թաքնված էր նրա ներսում: Եվ այսպես, եթե նա ուզում է ողորմություն գտնել, ապա թող ապաշխարի, մաքրվի, առաջադիմի. և կտեսնի, որ ինքը դեռ պարտավոր է շնորհակալ լինել եղբորից, որն այդպիսի մեծ օգուտի է արժանացրել իրեն: Քանզի փորձությունը այլևս չի հաղթի իրեն, ինչպես որ նախկինում. այլ որքան նա առաջադիմի, այնքան դրանք ավելի թեթև և հեշտ կդառնան իր համար, քանզի որչափով որ հոգին առաջադիմում է, այնքան ավելի նա զորեղ է դառնում և կարողություն է ձեռք բերում կրելու իր վրա եկած փորձությունները: Ինչպես զորեղ կենդանին, երբ նրա վրա ծանր լուծ են բարձում, հանգիստ կրում է այն, իսկ եթե պատահի, որ սայթաքի, իսկույն կանգնում է և բնավ չի էլ զգում, թե սայթաքել է: Եթե, ընդհակառակն, կենդանին տկար է, ապա թեթև բեռն էլ անգամ ճնշում է նրան, և երբ նա ընկնի, մե՛ծ օգնություն է հարկավոր նրան բարձրացնելու համար: Այդպես է պատահում և հոգու հետ. երբ նա մեղք է գործում, ուժասպառ է լինում դրանից, քանզի մեղքը տկարացնում և ուժասպառություն է հասցնում նրան, ով տրվում է դրան, ուստի, այդպիսինի հետ պատահած ամեն բան նեղում ու ճնշում է նրան: Իսկ եթե մարդը առաջադիմում է (բարու մեջ), ապա, իր առաջադիմության չափով, նրա համար ավելի թեթև է դառնում այն, ինչ որ մի ժամանակ եղել էր ծանր: Դրա համար էլ, եթե մենք ամեն ինչում, ինչ էլ որ մեզ հետ պատահի, մեղա-

վոր համարենք ինքներս մեզ, այլ ոչ թե՛ ուրիշներին, ապա դա մեզ կբերի բազում բարիքներ և կհասցնի մեծագույն հանգստություն և առաջադիմություն: Եվ առավել ևս (պետք է անենք այդ այն պատճառով), որ ոչինչ մեզ հետ չի պատահում առանց Աստծո նախախնամության:

Եթե մեկը ասի. «Ես ինչպես կարող եմ չվշտանալ, եթե մի բանի կարիք ունեմ և չեմ ստանում այն, քանի որ այն ինձ հույժ հարկավոր է», ապա նույնիսկ և նման պարագայում նա իրավունք չունի հանդիմանելու որևէ մեկին կամ վիրավորվելու որևէ մեկից: Քանզի եթե նա իրո՛ք ունի այդ բանի կարիքը, ինչպես որ ասում է, և չի ստանում այն, ապա նա պետք է ասի. «Քրիստոս ինձնից ավելի լավ գիտի, թե արդյոք ինձ պե՞տք է ստանալ (ցանկալին), և Նա՛ կլինի ինձ համար այդ իրի փոխարեն, կամ այդ ուտելիքի փոխարեն»: Իսրայելի որդիները անապատում քառասուն տարի մանանա կերան, և թեպես մանանան միևնույն տեսքն ուներ, սակայն յուրաքանչյուրի համար սա այն էր, ինչի կարիքը որ նա ուներ. ում աղի էր պետք, նրա համար այն աղի էր, ում քաղցր էր պետք, նրա համար այն քաղցր էր. մի խոսքով, յուրաքանչյուրի համար սա այն էր, ինչը որ համապատասխան էր նրա կարիքներին: Այսպես, եթե ինչ-որ մեկին հարկավոր է ձու, իսկ նա այն չի ստանում, այլ ստանում է միայն բանջարեղեն, ապա թող ասի իր խորհուրդներին. «Եթե ձու ունենալն ինձ օգտակար լիներ, ապա Աստված անպայման կուղարկեր ինձ այն, սակայն Նա կարող է այնպես անել, որ հենց այս բանջարեղենը ինձ համար փոխարինի ձվին»: Եվ հավատում եմ Աստծուն, որ այս բանը նրան որպես նահատակություն կհամարվի: Քանզի եթե մեկը իսկապես արժանի է հանգստի (մխիթարություն), ապա Աստված անգամ բարբարոս սիրտը կփափկացնի՝ ողորմություն անելու նրան ըստ նրա կարիքների: Իսկ եթե մեկը արժանի չէ հանգստի (մխիթարություն), կամ այդ օգտակար չէ նրան, ապա թեկուզ նա նոր երկինք և նոր երկիր էլ ստեղծի, հան-

գիստ չի գտնի: Սակայն երբեմն մարդ իր կարիքներին էլ առավել հանգիստ է գտնում, իսկ երբեմն (չի ստանում) նույնիսկ անհրաժեշտը: Քանի որ Աստված ողորմած է, ուստի յուրաքանչյուրին տալիս է այն, ինչ որ նրան հարկավոր է: Սակայն լինում է, որ Նա մարդուն ուղարկում է առավել, քան նրան անհրաժեշտ է. սրանով Նա ցույց է տալիս Իր անբավ մարդասիրությունը և նրան սովորեցնում է գոհունակությունը: Իսկ երբ չի ուղարկում նրան նույնիսկ անհրաժեշտը, ապա Իր խոսքով է (Մատթ. 4. 4) փոխարինում այն, ինչ հարկավոր է մարդուն, և նրան սովորեցնում է համբերել: Եվ այսպես, բոլոր դեպքերում մենք պետք է նայենք դեպի երկինք. բարիք է գործում մեկը մեր հանդեպ, կամ չարիք ենք կրում որևէ մեկի կողմից, մենք պետք է նայենք դեպի երկինք և գոհություն հայտնենք Աստծուն այն ամենի համար, որ պատահում է մեզ հետ՝ մշտապես մեղադրելով ինքներս մեզ և ասելով, ինչպես որ հայրերն են ասել՝ եթե մեզ հետ ինչ-որ բարի բան է պատահում, ապա դա Աստծո նախախնամության գործն է, իսկ եթե՝ չար, ապա դա մեր մեղքերի պատճառով է: Քանզի, արդարև, այն ամենը, ինչ որ մենք կրում ենք, կրում ենք մեր մեղքերի պատճառով: Սրբերը, եթե տառապում էլ են, ապա տառապում են Աստծո անվան համար, կամ այն բանի համար, որպեսզի ի հայտ գան նրանց առաքիներությունները շատերի օգուտի համար, կամ էլ նրա համար, որպեսզի բազմանան Աստծուց ստանալիք նրանց պատկերներն ու պարգևները: Սակայն մի՞թե կարող ենք մենք՝ թշվառներս, այդ նույնը ասել նաև մեր մասին, մենք, որ հանապազ մեղանչում ենք՝ հագուրդ տալով մեր կրքերին, և թողել ենք հայրերի մատնանշած ուղիղ ճանապարհը, այն է՝ ինքնամեղադրման ճանապարհը, և գնում ենք ծուռ ճանապարհով, այսինքն՝ եղբորը մեղադրելու ճանապարհով: Եվ մեզանից յուրաքանչյուրը ջանում է ամեն մի գործի մեջ մեղքը բարդել իր եղբոր վրա, նրան՝ մեղադրել և նրա վրա գցել ողջ ծանրությունը. ամեն ոք անտեսում է ու չի պահում պատվիրաններից և

ոչ մեկը, սակայն մերձավորից պահանջում է կատարել՝ դրանք: Մի անգամ ինձ մոտ եկան երկու եղբայրներ, որոնք վշտացած էին միմյանցից, և մեծը ասում էր փոքրի մասին. «Երբ ես հրամայում եմ նրան ինչ-որ բան անել, նա վշտանում է, վշտանում եմ նաև ես՝ մտածելով, որ եթե նա իմ հանդեպ սեր ունենար, ապա իմ խոսքերը կընդուներ վստահությամբ»: Իսկ փոքրն ասաց. «Ներիք, աբբա՛, նա ինձ ասում է ամենևին ո՛չ Աստծո երկյուղով, այլ հրամայում է, ինչպես տիրակալ, և ես մտածում եմ, որ այդ է պատճառը, որ սիրտս վստահությամբ չի տրամադրվում նրա հանդեպ, ինչպես որ հայրերն են ասել»: Տեսեք, թե ինչպես նրանք երկուսն էլ մեղադրում են միմյանց, և նրանցից ոչ մեկը չմեղադրեց ինքնիրեն: Այդպես և ուրիշ երկուսը վշտացել էին միմյանցից և, խոնարհվելով մեկը մյուսի առջև, հանգիստ չէին գտել: Եվ մեկն ասում էր. «Նա ի սրտե չխոնարհվեց իմ առջև, դրա համար էլ ես չեմ հանգստանում, քանզի այդպես ասել են հայրերը»: Մյուսն էլ ասում էր. «Քանի որ նա սիրով չէր տրամադրված իմ հանդեպ, երբ ես նրանից ներողություն խնդրեցի, այդ իսկ պատճառով ես չեմ հանգստանում»: Տեսնո՞ւմ եք, ինչպիսի՞ ծիծաղելի դատողություն: Տեսնո՞ւմ եք, եղբայրներ՛ր, ինչպիսի՞ այլափոխված ընկալում: Աստված գիտի, թե ես ինչպե՛ս եմ սարսափում, որ մեր հայրերի այդ նույն խոսքերը օգտագործում ենք մեր չար կամքի համեմատ և մեր հոգիների կորստյան համար: Հարկ էր, որ սրանցից յուրաքանչյուրը մեղքը բարդեր ինքն իր վրա. և մեկը պետք է ասեր. «Քանի որ ես սրտանց չխոնարհվեցի իմ եղբոր առջև, դրա համար էլ Աստված նրան բարյացակամ չտրամադրեց իմ հանդեպ», իսկ մյուսն էլ պետք է ասեր. «Քանի որ ես սիրով չէի տրամադրված իմ եղբոր հանդեպ նախքան նրա ներում խնդրելը, այդ պատճառով Աստված նրան բարյացակամ չտրամադրեց իմ հանդեպ»: Հարկ էր, որ վերոհիշյալ այն երկուսն էլ այդպես վարվեին. մեկը պետք է ասեր. «Ես հրամայողաբար եմ ասում, այդ

պատճառով էլ Աստված եղբորս վստահությամբ չի տրամադրում իմ հանդեպ», իսկ մյուսը պետք է մտածեր. «Իմ եղբայրը սիրով և խոնարհությամբ է հրամայում ինձ, սակայն ես հնազանդ չեմ և չունեմ Աստծու երկյուղը»: Եվ նրանցից ոչ մեկը չգտավ ինքնամեղադրման ուղին, այլ, ընդհակառակն, յուրաքանչյուրը մեղքը բարդեց մերձավորի վրա: Ահա թե ինչո՛ւ մենք չենք առաջադիմում, ահա թե ինչո՛ւ ոչնչից օգուտ չենք ստանում, այլ մեր ամբողջ ժամանակը անցկացնում ենք իրար հանդեպ հակառակության մեջ և տանջում ենք ինքներս մեզ: Քանի որ յուրաքանչյուր ոք արդարացնում է իրեն, յուրաքանչյուրը, ինչպես որ առաջուց ասացի, թույլ է տալիս իրեն չպահել (պատվիրանները), իսկ մերձավորից պատվիրանապահություն է պահանջում, այդ իսկ պատճառով մենք չենք կարողանում հասնել բարու ճանաչմանը: Քանզի, եթե մենք թեկուզ մի փոքր բան ենք սովորում, իսկույն ևեթ նույնը պահանջում ենք մերձավորից՝ հանդիմանելով նրան և ասելով. «Նա պարտավոր էր այդ անել, ինչո՞ւ նա այդ չարեց»: Ինչո՞ւ մենք մեզանից չենք պահանջում դրանց իրագործումը և չենք հանդիմանում մեզ դրանք չկատարելու մեջ: Ո՞ւր է այն ծերը, որին երբ հարցրեցին, թե՛ «Ո՞րն է այն ամենագլխավորը, որ դու գտել ես այս ճանապարհին, հա՛յր», նա պատասխանեց. «Այն, որ ամեն ինչում մեղադրեմ ինքս ինձ»: Այս հարցնողը դրվատեց նրան և ասաց. «Հիրավի, սրանից բացի ուրիշ ճանապարհ չկա»: Այդպես և աբբա Պիմենը ասաց հեծեծանքով. «Բոլոր առաքինությունները մտան այս տունը, բացի մեկից, առանց որի դժվար է մարդուն կանգուն մնալ»: Եվ երբ նրան հարցրին, թե՛ «Ո՞րն է այդ առաքինությունը», նա պատասխանեց. «Այն, որ մարդ հանդիմանի իրեն»: Իսկ Անտոն մեծը ասաց. «Մարդու ամենամեծ սխրանքը այն է, որ միշտ թվի իր հանցանքները և դնի դրանք Աստծո առջև և սպասի փորձություններին մինչև իր վերջին շունչը»: Եվ մենք ամեն տեղ տեսնում ենք, որ հայրերը, պահպանելով այս և դնելով

ամեն բան Աստծո առջև, մինչև իսկ ամենափոքրը, հանգիստ ձեռք բերեցին: Այսպիսին էր այն սուրբ ծերը, որի հիվանդության ժամանակ եղբայրը նրա ափսեի մեջ մեղրի փոխարեն հոտած ձեթ լցրեց, որը շատ վնասակար է: Սակայն ծերը ոչինչ չասաց, այլ լռելյայն կերավ թե՛ առաջին և թե՛ երկրորդ անգամ, և ամենևին չհանդիմանեց իրեն սպասավորող եղբորը, չասաց, թե նա անփույթ է, և ոչ միայն չասաց այդ, այլև մի բառով անգամ չտրտմեցրեց նրան: Իսկ երբ եղբայրը իմացավ, թե ինչ էր արել և սկսեց վշտանալ՝ ասելով. «Ես սպանեցի քեզ, հա՛յր, և դու այդ մեղքը բարդեցիր ինձ վրա նրանով, որ լռեցիր», այնժամ ծերը հեզությունով պատասխանեց նրան. «Մի՛ վշտացիր, որդյա՛կ, եթե Աստծուն հաճելի լիներ, որ ես մեղր ուտեի, ապա դու մեղր կլցնեիր ափսեիս մեջ»: Եվ (այսպիսով) նա այդ բանը դրեց Աստծո վրա (վերագրեց Աստծուն): Ի՞նչ գործ ունի Աստված այս ամենի հետ, վանակա՛ն: Եղբայրը սխալվեց, իսկ դու ասում ես. «Արդարև, եթե Աստծուն հաճելի լիներ», Ի՞նչ մասնակցություն ունի Աստված այս գործում: Սակայն նա ասում է. «Եթե Աստծուն հաճելի լիներ, որ ես մեղր ուտեի, ապա եղբայրը մեղր կլցներ ինձ»: Ահա, թեպետ ծերը այդպիսի հիվանդության մեջ էր և բազում օրեր կերակուր չէր ընդունել, սակայն և այնպես չվշտացավ եղբորից, այլ այդ գործը վերագրեց Աստծուն և խաղաղվեց: Եվ լավ ասաց ծերը, քանզի նա գիտեր, որ եթե Աստծուն հաճելի լիներ, որ ինքը մեղր ուտեր, ապա ժահահոտ ձեթը նա կվերափոխեր մեղրի: Իսկ մենք յուրաքանչյուր գործի մեջ հարձակվում ենք մերձավորի վրա՝ նախատելով և կշտամբելով նրան իբրև անփույթ և անխիղճ վարվողի: Հենց որ թեկուզ մի խոսք ենք լսում, իսկույն սխալ ենք մեկնաբանում այն՝ ասելով. «Եթե նա չուզեցանք խոռովել ինձ, ապա նա այդ բանը չէր ասի ինձ»: Ո՞ւր է Դավիթ մարգարեն, որն ասաց Սիմեոնի մասին. «Թողե՛ք նա այդպես անիծի, քանզի Տերն է ասել, որ անիծի Դավթին» (Բ Թագ. 16; 10): Մի՞թե Աստված էր ասել մար-

դասապանին, որ նա անիծեր մարգարեին: Ինչպե՞ս, մի՞թե Տերն էր նրան ասել (այդ): Սակայն մարգարեն, ունենալով հոգևոր խոհեմություն և գիտենալով, որ ոչինչ այնպես չի ձգում Աստծո ողորմությունը դեպի հոգին, ինչպես որ փորձությունները և հատկապես վշտեր և նեղություններ կրելը, ասաց. «Թողե՛ք նա այդպես անիծի Դավթին, քանզի Տերն է ասել նրան»: Ինչո՞ւ համար: «Թերևս Տերը տեսնելով իմ խոնարհությունը՝ ինձ բարիք հատուցի այսօրվա անեծքի փոխարեն»: Տեսնո՞ւմ ես, որքան խելամտորեն վարվեց մարգարեն: Այդ պատճառով էլ նա արգելեց անիծողից վրեժ լուծել ցանկացողներին՝ ասելով. «Դուք ինձ հետ ի՞նչ ունեք, Շարուհի՛ որդիներ, թողեք նա այդպես անիծի, քանզի Տերն է ասել նրան, որ անիծի Դավթին» (Բ Թագ. 16; 10): Իսկ մենք չենք ուզում մեր եղբոր համար ասել, թե Տե՛րն է նրան ասել, այլ երբ (վիրավորական) խոսք ենք լսում, վարվում ենք շան նման, որի վրա երբ ինչ-որ մեկը քար է նետում, ապա նա թողնում է նետողին և վազում է կրծելու քարը: Մենք էլ ենք այդպես վարվում. թողնում ենք Աստծուն, որ թույլ է տալիս հարձակումներ գան մեզ վրա՝ մեր մեղքերից մաքրվելու համար, և դառնում ենք մերձավորին՝ ասելով. «Ինչո՞ւ նա ինձ այդ ասաց, ինչո՞ւ նա ինձ այդ արեց»: Եվ մինչդեռ մենք կարող էինք մեծ օգուտ ստանալ նմանօրինակ դիպվածներից, մենք հակառակն ենք անում և վնասում ենք ինքներս մեզ՝ չգիտակցելով, որ Աստծո խորհրդով և նախախնամությամբ ամեն բան ծառայում է յուրաքանչյուրի օգուտի համար:

Աստված թող մեզ խոհեմություն պարգևի սրբերի աղոթքներով, քանզի Նրան է վայել փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս: Ամեն:

Հայրերն ասել են, որ վանականներին վայել է բարկանալ, նմանապես և վիրավորել որևէ մեկին, և դարձյալ. «Ով հաղթահարել է բարկությունը, նա հաղթել է դեերին, իսկ ով հաղթվում է այս կրքից, այդպիսին դեռևս օտար է վանական կյանքին» և այլն: Իսկ ի՞նչ պիտի մե՛նք ասենք մեր մասին, երբ ոչ միայն չենք թողնում դյուրագրգռությունն ու բարկությունը, այլև տրվում ենք հիշաչարությունը: Ի՞նչ անենք, ինչպե՞ս չողբանք այսպիսի թշվառ և ոչ մարդկային մեր հոգեվիճակների համար: Եվ այսպես, ուշադիր լինենք մեր անձերի հանդեպ, եղբայրներ, և ջանանք Աստծո օգնությամբ ձերբազատվել այս կործանարար կրքի դառնությունից:

Պատահում է, որ եղբայրների միջև ինչ-որ խռովություն է ծագում, կամ դժգոհություն է առաջանում, նրանցից մեկը խոնարհվում է մյուսի առջև (խնդրելով ներում), սակայն սրանից հետո էլ դեռ շարունակում է վշտանալ և չար խորհուրդներ հղանալ եղբոր դեմ: Այդպիսին չպետք է անհոգ լինի այդ բանի հանդեպ, այլ շտապ կերպով հեռացնի այդ իրենից, քանի որ դա հիշաչարություն է, իսկ այդ, ինչպես ես ասացի, մարդուց պահանջում է մեծ ուշիմություն, որպեսզի դրանում չկարծրանա ու չկործանվի: Ով, խոնարհվելով, ներում խնդրեց և այդ արեց հանուն պատվիրանի, այդպիսին բժշկեց իր բարկությունը տվյալ պահին, սակայն ընդդեմ հիշաչարության դեռևս չջանաց, և դրա համար էլ շարունակում է վիրավորված մնալ իր եղբորից: Քանզի այլ է հիշաչարությունը, այլ է բարկությունը, այլ է դյուրագրգռությունը, և այլ՝ խռովքը, և որպեսզի դուք առավել լավ հասկանաք սա, ձեզ մի օրինակ ասեմ: Երբ մեկը ուզում է կրակ վառել, սկզբի համար նա վերցնում է փոքրիկ մի ածխակտոր, որը խորհրդանշում է եղբոր վիրավորանք հասցնող խոսքը:

Ահա սա դեռ մի փոքր ածխակտոր է, քանզի ի՞նչ մեծ բան է որ եղբորդ այդ մի վիրավորական խոսքը: Եթե դու այն կրես, ապա կհանգստանաս չիկացած ածխակտորը: Իսկ եթե սկսես մտածել, թե՛ «Ինչո՞ւ նա ինձ այդ բանն ասաց. ես էլ նրան կասեմ այս և այն, քանզի եթե նա չուզենար ինձ վիրավորել, այդ խոսքը չէր ասի, ես էլ անպայման կվիրավորեմ նրան»: Ահա դու զրեցիր տաշեղներ կամ մի այլ բան՝ կրակը բորբոքողի նման, և առաջացրիր ծուխ, որը խռովքն է: Խռովքն էլ խորհուրդների այն շարժումն ու բորբոքումն է, որը հուզում ու վրդովվում է սիրտը: Իսկ գրգռվածությունը՝ վիրավորողի հանդեպ վրեժխնդիր ըմբոստացումն է, որը վերածվում է հանդգնության, ինչպես ասել է երանելի աբբա Մարկոսը. «Ոխր, սնվելով չար խորհուրդներով, վրդովվում է սիրտը, իսկ երբ սպանվում է աղոթքով ու հույսով, ապա դրանից կտրվում է սիրտը (զղջում է ապրում)»: Եթե դու կրեիր քո եղբոր այդ մի փոքր խոսքը, ապա կհանգստանիր, ինչպես ես արդեն ասացի, այդ փոքրիկ ածխակտորը՝ նախքան խռովքի առաջ գալը: Սակայն դա էլ, քանի դեռ այն շատ չի բորբոքվել, եթե կամենաս, կարող ես դյուրությամբ հանգստանալ լուռությամբ, աղոթքով, ի սրտե մեկ անգամ խոնարհվելով: Իսկ եթե դու շարունակես ծխել, այսինքն՝ բորբոքվել և հիշողություններով գրգռել սիրտդ. «Ինչո՞ւ նա ինձ այդ ասաց, ես էլ նրան կասեմ այս բաները», ապա հենց այս խոնումից և, այսպես ասած, խորհուրդների բախումից տաքանում և բորբոքվում է սիրտը, և առաջանում է գրգռվածության բոցավառում, քանզի գրգռվածությունը դա արյան եռքն է սրտի շուրջ, ինչպես ասում է Բարսեղ Մեծը: Ահա թե ինչպես առաջանում գրգռվածությունը: Սրան անվանում են նաև դառնալեղիություն (բռնկվողականություն): Եթե կամենաս, կարող ես սա էլ հանգստանալ նախքան զայրույթի առաջ գալը: Իսկ եթե դու շարունակես խռովել և խռովվել, ապա կնամանվես այն մարդուն, որը փայտ է

զցում կրակի մեջ և առավել ևս բորբոքում է այն, որից առաջանում են բազում այրվող ածխակտորներ, և սա էլ հենց զայրույթն է: Նույն բանը և աբբա Զոսմիոսն ասաց, երբ նրան հարցրին, թե ինչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Որտեղ բացակայում է գրգռվածությունը, այնտեղ լուռում է թշնամությունը»: Քանզի եթե որևէ մեկը խռովքի սկզբում, երբ դեռ այն նոր է սկսում, ինչպես մենք ասացինք, ծխալ և կայծեր արձակել, փուխ հանդիմանել իրեն և խոնարհվել (մերձավորի առաջ՝ խնդրելով ներում) նախքան գրգռվածության բոցավառումը, ապա նա կպահպանի իր խաղաղությունը: Նմանապես, եթե գրգռվածությունը բոցավառվելիս նա չլռի, այլ շարունակի խռովվել և բորբոքել իրեն, ապա նա կնամանվի նրան, ով փայտեր է գցում կրակի մեջ, և նրանք վառվում են, մինչև որ գոյանում են բազում այրվող ածխակտորներ: Եվ ինչպես որ այրվող ածխակտորը, երբ հանգչի և հավաքվի մի տեղ, մի քանի տարի կարող է մնալ անվնաս, և նույնիսկ, եթե մեկը ջուր լցնի վրան, նա չի ենթարկվի փտման. այդպես և բարկությունը, եթե կարծրանում է, վերածվում է հիշաչարություն, որից մարդը չի ազատվի, եթե չհեղի իր արյունը (այսինքն՝ չգործադրի մեծ ճգնություններ ու ջանքեր):

Ահա, ես ձեզ ցույց տվեցի տարբերությունը. հասկացա՞ք եք արդյոք: Ահա, դուք լսեցիք, թե ի՞նչ բան է սկզբնական խռովքը, և ինչ՝ գրգռվածությունը, ինչ բան է բարկությունը, և ինչ՝ հիշաչարությունը: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես ընդամենը մի խոսքից հասնում են մինչև այսպիսի չարիքի: Քանզի եթե դու հենց սկզբից և եթե հանդիմանեիր ինքդ քեզ, համբերությամբ կրեիր եղբորդ խոսքը և չփափագեիր հանուն քեզ վրեժխնդիր լինել նրանից և չփութայիր նրա մի խոսքին երկուսն ասել կամ էլ հինգը և չարին չարով հատուցել, ապա կձեռքազատվեիր այդ բոլոր չարիքներից: Այն պատճառով էլ ասում եմ ձեզ. մշտա-

պես կտրե՛ք, հեռացրե՛ք կրքերը, քանի դեռ նրանք նոր են ծլարձակում, նախքան նրանց ձեր մեջ արմատավորվելն ու ամրապնդվելը և ձեզ ընկճելը, քանի որ այդ ժամանակ դուք ստիպված կլինեք բազում տառապանքներ կրել նրանցից, որովհետև մի բան է պոկել ցողունը, և այլ բան՝ արմատախիլ անել հսկա ծառը:

Ոչինչ այնքան ինձ չի զարմացնում, որքան այն, որ մենք չենք հասկանում, թե ի՛նչ ենք երգում: Քանզի մենք երգում ենք հանապազ՝ անխձելով ինքներս մեզ, և չենք հասկանում այդ: Մի՞թե մենք պարտավոր չենք հասկանալ այն, ինչ երգում ենք: Մենք մշտապես ասում ենք. «**Եթե երբևէ իմ բարեկամներին չարությամբ եմ հատուցել, թող ես էլ իսպառ կորչեմ թշնամիներիս ձեռքով**» (Սղմ. 7. 5):

Ի՞նչ է նշանակում «**իսպառ կորչեմ**»: Մինչ մեկը ոտքի վրա է դեռ, նա կարող է դիմադրել իր թշնամուն. մեկ ինքն է հարվածում, մեկ իրեն են հարվածում, մեկ ինքն է հաղթում, մեկ իրեն են հաղթում, բայց նա դեռ էլի մնում է կանգնած: Իսկ եթե պատահի, որ նա ընկնի, ապա ինչպե՞ս կարող է գետնին պառկած լինելով՝ պայքարել իր թշնամու դեմ: Իսկ մենք աղոթում ենք մեզ համար, որպեսզի ոչ միայն ընկնենք մեր թշնամիների ձեռքով, այլև «**իսպառ կորչենք**»: Ի՞նչ է նշանակում՝ «**իսպառ կորչեմ թշնամու ձեռքով**»: Մենք ասացինք, որ ընկնել նշանակում է այլևս ուժ չունենալ դիմադրելու թշնամուն, այլ ընկած լինել գետնին, իսկ «**իսպառ**» նշանակում է չունենալ ոչ մի բարի բան, որպեսզի ինչ-որ մի ձևով կարելի լիներ կանգնել: Քանի որ, ով ի գորու է կանգնել, նա նաև կարող է հոգ տանել իր համար և ինչ-որ ձևով նորից մտնել պայքարի մեջ: Հետո ասում ենք. «**Թո՛ղ, ուրեմն, թշնամին հալածի անձն իմ և հասնի**», ո՛չ միայն «**թող հալածի**», այլև «**հասնի**», այսինքն՝ **թող լինենք նրան հնազանդ և ենթարկվենք նրան ամեն ինչում և ամեն գոր-**

ծում, և թող հաղթի նա մեզ, եթե մեր դեմ չարիք գործողներին հատուցենք չարով: Եվ ոչ միայն դրա մասին ենք աղոթում, այլև՝ «**Թող երկրի վրա կոխտտի իմ կյանքը**»: Ինչ է նշանակում՝ «**իմ կյանքը**»: Մեր կյանքը՝ առաքինություններն են, և մենք աղոթում ենք, որպեսզի թշնամին երկրի վրա կոխտտի մեր կյանքը, այսինքն՝ **թող մենք դառնանք լիովին երկրավոր, և մեր իմաստությունը թող գամվի երկրին**: Եվ «**իմ փառքը թող հողին հավասարեցնի**»: Իսկ ի՞նչ է մեր փառքը, եթե ոչ այն մտատեսությունը, որը ձեռք է բերվում սուրբ պատվիրանները պահելու միջոցով: Եվ այսպես, մենք խնդրում ենք, որպեսզի թշնամին մեր փառքը վերածի, ինչպես առաքյալն է ասում, «**ամոթի**» («**Նրանց փառքը իրենց ամոթն է**»), որպեսզի հողին հավասարեցնի այն և մեր կյանքն ու փառքը դարձնի երկրավոր, որպեսզի մենք ոչ մի աստվածային բան չխորհենք, այլ միայն՝ մարմնավորը, նյութականը, ինչպես նրանք, որոնց մասին Աստված ասում է. «**Իմ Հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, որովհետև նրանք մարմին են**» (Մննդ. 6. 3): Տեսնո՞ւմ եք, երբ մենք երգում ենք այս ամենը, մենք անիծում ենք ինքներս մեզ, եթե չարին չարով ենք հատուցում: Իսկ որքա՛ն հաճախ ենք մենք չարին չարով հատուցում և չենք հոգում այդ մասին, այլ մատնում ենք անուշադրություն:

Չարին չարով հատուցել կարելի է ոչ միայն գործով, այլև՝ խոսքով և տեսքով: Մեկը մտածում է, որ ինքը գործով չարին չարով չի հատուցում, բայց պարզվում է, որ նա, ինչպես ես ասացի, հատուցում է խոսքով կամ տեսքով, որովհետև պատահում է, որ որևէ մեկը միայն տեսքով կամ հայացքով է խոռովում իր եղբորը, քանզի կարելի է միայն հայացքով կամ մարմնի շարժումով վիրավորել եղբորը: Եվ սա նույնպես համարվում է չարին չարով հատուցել: Մեկ ուրիշը ջանում է վրեժխնդիր չլինել չարիքի դիմաց՝ ո՛չ գործով, ո՛չ խոսքով, ո՛չ էլ շաժումով, սա-



կայն իր սրտում դժգոհություն և վիրավորանք է կրում իր եղբոր հանդեպ:

Տեսնո՞ւմ եք, հոգեվիճակների ինչպիսի՛ բազմազանություն...: Մեկ ուրիշը թեև նեղվածություն չունի իր եղբոր հանդեպ, բայց երբ լսում է, թե որևէ մեկը ինչ-որ բանում վիրավորել է նրան, կամ կշտամբել, կամ անարգել, ապա ուրախանում է՝ լսելով այս: Պարզվում է, որ նա էլ ա՛յդ կերպով է չարին չարով հատուցում իր սրտում: Մեկ ուրիշը իր սիրտը չարով չի սնում և չի ուրախանում՝ լսելով, թե ինչպես են անարգել իրեն վիրավորողին, այլ նույնիսկ տխրում է, երբ որ վիրավորանք են հասցնում նրան, բայց և այնպես չի էլ ուրախանում նրա հաջողություններով, այլ երբ տեսնում է, որ նրան փառավորում ու գովաբանում են, ապա նա վշտանում է: Սա նույնպես, թեպետև թեթև, բայց և հիշաչարություն մի տեսակ է: Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է ուրախանալ իր եղբոր հաջողություններով և անել ամեն բան՝ նրան պատվելու համար:

Մենք խոսքի սկզբում ասացինք, որ մեկը, իր եղբոր առջև խոնարհվելով, դեռևս շարունակում է իր սրտում վիրավորված մնալ նրանից, և ասացինք, որ նա, երկրպագություն անելով, իր բարկությունը բուժեց դրանով, բայց դեռևս չճշտեց ընդդեմ հիշաչարության: Մեկ ուրիշի հետ էլ պատահում է, որ-ինչ որ մեկը վիրավորում է նրան, և նրանք խոնարհվում են իրար առջև և հաշտվում են միմյանց հետ, սա խաղաղությունը ապրում է նրա հետ և ոչ մի չար բան չի խորհում իր սրտում նրա դեմ, իսկ երբ որոշ ժամանակ անց, կրկին վիրավորական խոսք է լսում նրանից, ապա նա սկսում է վերհիշել և նախկինը, և խռովվել ոչ միայն այս երկրորդի համար, այլև նախորդի համար: Սա նման է մարդու, որ վերք ունի և վրան վիրակապ է դրել, և թեպետ, ներկա պահին նա բուժել է վերքը, և այն փակվել է, սակայն տեղը դեռ ցավոտ է, և եթե որևէ մեկը քարի գցի նրա վրա, ապա

ամբողջ մարմնից ավելի շուտ այդ տեղը կվնասվի և իսկույն կսկսի արյունահոսել: Նույն բանն էլ կրում է և այս մարդը. նա վերք ուներ և վիրակապ դրեց, այսինքն՝ երկրպագություն արեց և առաջինի նման բժշկեց վերքը, այսինքն՝ բարկությունը, և սկսեց նմանապես ջանալ ընդդեմ հիշաչարության՝ աշխատելով սիրտը չսնել ոչ մի չար խորհրդով, քանի որ սա նշանակում է, որ վերքն ապաքինվում է: Բայց այն դեռ կատարելապես չի ապաքինվել, դեռ հիշաչարության մնացորդ կա, որը ներկայացնում է վերքի վերին մասի փակվելը, և նրանից հեշտորեն նորոգվում է ամբողջ վերքը, եթե մարդը, թեկուզ թեթև հարված ստանա: Եվ այսպես, հարկ է ճգնել, որպեսզի կատարելապես մաքրվի ներքին թարախը, որպեսզի հիվանդ տեղը լիովին ապաքինվի, և որպեսզի չմնա ոչ մի այլանդակություն, այնպես որ բնավ անկարելի լինի իմանալ, որ այդ տեղում վերք է եղել: Իսկ ինչպե՞ս կարելի է հասնել դրան. ամբողջ սրտով աղոթելով վիրավորողի համար՝ ասելով. «Աստված, օգնի՛ր իմ եղբորը, և ինձ՝ հանուն նրա աղոթքների»: Այս կերպով մարդը և՛ աղոթում է իր եղբոր համար, իսկ դա կարեկցանքի և սիրո նշան է, և՛ խոնարհվում է՝ խնդրելով իր համար օգնություն՝ հանուն նրա աղոթքների, իսկ ուր կարեկցանքը, սերը և խոնարհությունն են, ի՞նչ հաջողության կարող է հասնել դյուրագրգռությունը, կամ հիշաչարությունը, կամ էլ մի որևէ այլ կիրք: Եվ աբբա Զոսմիոսն ասաց. «Եթե սատանան գործի դնի իր բոլոր չարանենգ խորամանկությունները իր բոլոր դեևերի հետ հանդերձ, ապա նրա բոլոր խարդախությունները ի դեռևս կենն և կջախջախվեն Քրիստոսի պատվիրած խոնարհությունից»: Իսկ մի այլ ծեր ասաց. «Թշնամու համար աղոթողը, անհիշաչար կլինի»: Կատարե՛ք սա իսկապես և այնժամ լավ կհասկանաք այն, ի՛նչ լսում եք. քանզի հիրավի, եթե չկատարեք սա, չէ՛ք կարող լով խոսքերով (ներել) սովորել: Ո՞վ է այն մարդը, որ, կամենալով որևէ արվեստ սովոր-

րել, հասնում է դրան լոկ խոսքերի միջոցով: Ո՛չ, սկզբում նա աշխատում է և փչացնում, աշխատում է և ոչնչացնում իր գործը: Եվ այսպես, կամաց-կամաց, ջանքերով և համբերությամբ սովորում է արվեստը Աստծո օգնությամբ, Ով նայում է իր ջանքերին և հոժարությամբ: Իսկ մենք ուզում ենք արվեստների արվեստը սովորել լոկ խոսքերի միջոցով՝ առանց գործի անցնելու: Հնարավոր է սա: Եվ այսպես, եղբայրներ, ուշադիր լինենք մեր հանդեպ և ջանադրաբար աշխատենք, քանի դեռ ժամանակ ունենք: Տա՛ Աստված, որ հիշենք և կատարենք այն, ինչ որ լսում ենք, որպեսզի չլինի թե սա մեզ որպես դատապարտությունն ծառայի Տիրոջ դատաստանի օրը: Աստծուն վայել է փառք, պատիվ և երկրպագությունն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Յանկանում եմ, եղբայրներ, ձեզ փոքր-ինչ հիշեցնել ստի մասին, քանի ում վես տեսնում եմ, որ դուք այնքան էլ չեք ջանում պահել ձեր լեզուն, որից մենք հեշտությամբ ներգրավվում ենք բազում չարիքների մեջ: Ուշադրությո՛ւն դարձրեք, եղբայրներ, որ յուրաքանչյուր գործի մեջ, ինչպես ես միշտ ձեզ ասում եմ, կարելի է ձեռք բերել թե՛ բարի սովորություն և թե՛ չար: Եվ այսպես, հարկավոր է մեծ ուշումիություն, որպեսզի չկողոպտվենք ստից, քանզի ստախոսը կապ չունի Աստծո հետ: Սուտը օտար է Աստծուն: Սուրբ Գրքում ասված է, որ սուտը սատանայից է, և որ նա սուտ է և ստի հայր (Հովհ. 8; 44): Ահա, ստի հայր հորջորջվում է սատանան, իսկ ճշմարտությունը՝ Աստված է, քանզի Նա Ինքն է ասում. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ. 14; 16): Սրանից եզրակացրեք, թե ստով մենք մեզ ումից ենք զատում և ո՛ւմ հետ ենք միավորում. ակնհայտ է՝ սատանայի հետ: Եվ այսպես, եթե մենք իսկապես ուզում ենք փրկվել, ապա մենք պետք է մեր ամբողջ ուժով և ամբողջ եռանդով սիրենք ճշմարտությունը և պահպանենք մեզ ամենայն ստից, որպեսզի այն մեզ չհեռացնի ճշմարտությունից և կյանքից:

Կա ստի երեք տարատեսակ. մեկը ստում է մտքով, մյուսը ստում է խոսքով, իսկ մեկ ուրիշն էլ ստում է հենց իր իսկ կյանքով: Մտքով ստում է նա, ով որպես ճշմարտություն է ընդունում իր ենթադրությունները, այսինքն՝ դատարկ կասկածները մերձավորի հանդեպ: Այդպիսին, երբ տեսնում է, որ ինչ-որ մեկը զրուցում է եղբայրներից մեկի հետ, իր ենթադրությունն է անում ու ասում. «Նա իմ մասին է խոսում»: Եթե դադարեցնում են խոսակցությունը, ապա նա դարձյալ ենթադրում է, որ իր պատճառով դադարեցրին խոսակցությունը: Եթե մեկը մի խոսք

ասի, ապա նա ենթադրում է, որ այն ասվեց իրեն վիրավորելու համար: Ընդհանրապես, ամեն մի գործի մեջ նա մշտապես նման կերպով հետևում է իր մերձավորին՝ ասելով. «Նա՛ ինձ համար այդ արեց, նա ի՛նձ համար այդ ասաց, նա այդ արեց այսինչ նկատառումով»: Այդպիսին ստում է մտքով, քանզի նա ճշմարիտ ոչինչ չի ասում, այլ ամեն բան՝ միմիայն ենթադրություն, իսկ դրանից առաջանում են հետաքրքրասիրություն, չարախոսություն, անհնազանդություն, թշնամություն, կշտամբանք: Պատահում է, որ մեկը ինչ-որ բան է ենթադրում, և դա պատահաբար ճիշտ է դուրս գալիս, իսկ նա դրանից հետո ցանկանալով, ինչպես ինքն է ասում, ուղղել, շտկել իրեն, սկսում է արդեն մշտապես հետևել բոլորին՝ մտածելով «Եթե որևէ մեկը խոսում է իմ մասին, ապա ինձ պետք է իմանալ, թե ո՞րն է իմ մեղքը, որի համար նա ինձ դատում է, որպեսզի ես ուղղվեմ»: Նախ առաջինը, սրա սկիզբն արդեն իսկ չարից է, քանզի նա սկսեց ստով, քանզի ինչպես «կարող է չար ծառը բարի պտուղ տալ» (Մատթ. 7; 18): Եթե նա իսկապես ցանկանում է ուղղվել, ապա երբ եղբայրը նրան ասի, թե՛ մի՛ արա այդ, կամ՝ ինչո՞ւ դու այս բանն արեցիր, նա չպետք է խռովվի, այլ խոնարհվի և շնորհակալություն հայտնի նրան և այնժամ նա կուղղվի: Քանզի եթե Աստված տեսնի, թե այդպիսին է նրա հոժարակամությունը, ապա Նա երբեք չի թողնի նրան մոլորություն մեջ, այլ կուղարկի ինչ-որ մեկին՝ ի գորու ուղղելու նրան: Իսկ ասելը՝ ես հավատում եմ իմ ենթադրություններին՝ ինքս ինձ ուղղելու համար, և այս նկատառումով ականջ դնելը և հետաքրքրվելը միանգամայն է ինքնարդարացում է՝ ներշնչված սատանայից, որը ցանկանում է մեզ համար որոգայթներ լարել:

Մի ժամանակ, երբ ես դեռ գտնվում էի հանրակացարանում, ինձ այնպիսի դիվային փորձություն պատահեց, որ ես սկսեցի ըստ մարդու շարժուձևի և քայլվածքի եզրակացնել նրա հոգե-

վիճակի մասին, և ինձ հետ պատահեց հետևյալ դեպքը: Մի անգամ, երբ ես կանգնած էի, իմ կողքով մի կին անցավ՝ ջրով դուլը ձեռքին. ինքս էլ չգիտեմ, թե ինչպես գրավվեցի և նայեցի նրա աչքերին, և նույն պահին խորհուրդն ինձ ներշնչեց, որ նա անառակ կին է: Սակայն հենց որ այդ խորհուրդն ինձ հայտնվեց, շատ վշտացա և այդ մասին ասացի ծերին՝ արքա Հովհաննեսին. «Հա՛յր սուրբ, ես ի՞նչ պետք է անեմ, երբ անկախ իմ կամքից նկատում եմ որևէ մեկի շարժումները և քայլվածքը, և խորհուրդն ինձ հուշում է տվյալ մարդու հոգեվիճակի մասին»: Եվ ծերն ինձ այսպես պատասխանեց. «Ի՞նչ է, մի՞թե չի պատահում, որ մեկը ունենում է բնական թերություն, սակայն մեծ ջանքով և տքնություն ուղղում է այն: Դրա համար էլ չի կարելի դրանից որևէ հետևություն անել ելնելով, ուրիշի հոգեվիճակի մասին: Եվ այսպես, երբեք մի՛ հավատա քո ենթադրություններին, քանզի ծուռ կանոնը և ուղիղն է դարձնում ծուռ: Մարդկային կարծիքները սուտ են և խաբուսիկ և վնասում են նրանց, ովքեր հանձնվում են դրանց»: Եվ այսպես, այդ պահից ի վեր, երբ խորհուրդն ինձ ասում էր արևի մասին, որ դա արև է, կամ էլ խավարի մասին ասում էր, որ դա խավար է, ես չէի հավատում սեփական կարծիքին հավատալուց ավելի վատ բան չկա: Այն, եթե արմատավորվի մեր մեջ, ապա կհասցնի այնպիսի վնասների, որ մեզ կսկսի թվալ, թե մենք իսկապես տեսնում ենք բաներ, որոնք իրականում ո՛չ կան և ո՛չ էլ կարող են լինել:

Այնտեղ մեզ մոտ մի եղբայր ունեինք, որին շատ էր անհանգստացնում այս կիրքը, և նա այնպես էր հետևում իր ենթադրություններին, որ համոզված էր իր յուրաքանչյուր ենթադրությունից մեջ: Նրա թվում էր, որ (գործը կատարվում է) անկասկած այնպես, ինչպես որ ներկայացնում է իրեն խորհուրդը, և այլ կերպ չէր էլ կարող լինել: Չարիքի ժամանակի ընթացքում ուժգնացավ, և դեռերը նրան հասցրին այնպիսի մոլորության, որ

մի անգամ, նա մտնելով այգի, սկսեց զննել չորս կողմը (քանզի նա միշտ հետևում ու ականջ էր դնում) և նրան թվաց, թե նա տեսնում է, իբր եղբայրներից մեկը թուզ է գողանում և ուտում, իսկ օրը ուրբաթ էր, և դեռ ժամը երկուսն էլ չկար: Եվ այսպես, համոզելով իրեն, որ ինքը իրոք այդ տեսավ, նա թաքնվեց, ապա լռելյալն հեռացավ: Հետո, պատարագի ժամանակ, նա դարձյալ սկսեց հետևել, թե ինչ է անելու հաղորդության ժամանակ այն եղբայրը, որ հենց նոր էր գողացել թուզը և կերել: Եվ երբ նա տեսավ, որ այս եղբայրը լվանում է ձեռքերը, որպեսզի գնա հաղորդվելու, նա վազեց և ասաց վանահորը. «Նայի՛ր, այսինչ եղբայրը մյուս եղբայրների հետ գնում է հաղորդվելու աստվածային Խորհրդին, սակայն թույլ մի՛ տուր, որ նրան սուրբ Հաղորդությունն տան, քանզի ես տեսա այսօր առավոտյան, թե ինչպես նա այգուց թուզ գողացավ և կերավ»: Այնինչ այդ եղբայրը մեծ երկյուղածությամբ և զղձումով արդեն մոտենում էր սուրբ Հաղորդությանը, քանզի նա երկյուղածներից մեկն էր: Երբ վանահայրը տեսավ նրան, կանչեց նրան իր մոտ, մինչ սա կմոտենար սուրբ Հաղորդությունը բաշխող քահանային, և մի կողմ տանելով նրան, հարցրեց. «Ասա՛ ինձ, եղբա՛յր, դու ի՞նչ ես արել այսօր»: Նա զարմացավ և ասաց նրան. «Որտե՞ղ, հա՛յր սուրբ»: Վանահայրը շարունակեց. «Երբ դու առավոտյան մտար այգի, ի՞նչ արեցիր այնտեղ»: Եղբայրը դրանից ապշած՝ դարձյալ պատասխանեց նրան. «Հա՛յր սուրբ, ես այսօր այգու երեսը չեմ էլ տեսել և նույնիսկ առավոտյան այստեղ չեմ եղել, այլ հենց նոր եմ վերադարձել ճանապարհից, քանզի գիշերային հսկումի ավարտից անմիջապես հետո, տեսես ինձ ուղարկեց այսինչ հանձնարարությամբ»: Իսկ այդ հանձնարարության վայրը, որի մասին նա ասում էր, շատ հեռու էր գտնվում, և եղբայրը պատարագին հագիվ էր հասել: Վանահայրը կանչեց տնտեսին և հարցրեց նրան. «Իու ո՞ւր էիր ուղարկել այս եղբորը»: Տնտեսը

այն նույն պատասխանը տվեց, ինչ որ՝ եղբայրը, այսինքն, որ ինքը նրան ուղարկել էր այսինչ գյուղը: Վանահայրը հարցրեց. «Իսկ ինչո՞ւ դու նրան չբերեցիր (ինձանից) օրհնություն ստանալու»: Նա, խոնարհվելով, պատասխանեց. «Ների՛ր ինձ, հա՛յր սուրբ, դու հանգստանում էիր հսկումից հետո, և այդ պատճառով ես նրան չբերեցի քեզանից օրհնություն ստանալու»: Երբ վանահայրը այդպիսով բավարարվեց, թույլ տվեց այս եղբորը գնալ հաղորդվելու, և կանչելով նրան, ով հավատում էր իր կասկածներին, նրա վրա ապաշխարության կարգ սահմանեց և գրկեց նրան սուրբ Հաղորդությունից: Եվ բացի այս, պատարագից հետո, կանչելով բոլոր եղբայրներին, արցունքներով պատմեց նրանց պատահածի մասին և բոլորի առջև հանդիմանեց այդ եղբորը՝ ցանկանալով սրանով հասնել եռակի օգուտի. առաջինը, որպեսզի խայտառակեր սատանային և մերկացներ նման կասկածներ սերմանողին, երկրորդ, որպեսզի այս խայտառակության միջոցով ներվեր եղբոր մեղքը, և որպեսզի նա Աստծուց օգնություն ստանար հետագայում, և երրորդ, որպեսզի հաստատեր եղբայրներին՝ երբեք չհավատալու իրենց կարծիքներին: Եվ շատ բաներ ուսուցանելով այս մասին թե՛ մեզ և թե՛ եղբորը, նա ասաց, որ կասկածամտությունից ավելի վնասակար բան չկա, և ապացուցեց այդ կատարված օրինակով: Եվ բազում նման բաներ են ասել հայրերը՝ պահպանելու համար մեզ մեր ենթադրություններին հավատալու վնասից: Եվ այսպես, ջանա՛ք, եղբայրներ՛ր, երբեք չհավատալ մեր սեփական կարծիքին: Քանզի արդարև, ոչինչ այնպես չի հեռացնում մարդուն Աստծուց և իր մեղքերի հանդեպ ուշադրությունից չի մղում նրան մշտապես հետաքրքրվելու իր համար անօգուտ բաներով, ինչպես որ այս կիրքը: Սրանից ոչ մի բարի բան դուրս չի գալիս, այլ՝ բազում խռովություններ. սրանից մարդը Աստծո երկյուղը ձեռք բերելու հնարավորություն չի գտնում երբեք: Իսկ եթե

մեր աղտեղության պատճառով մեր մեջ չար խորհուրդներ են սերմանվում, ապա մենք անմիջապես պետք է դրանք վերածենք բարու, և նրանք այլևս չեն վնասի մեզ: Քանզի եթե մենք հավատանք մեր ենթադրություններին, ապա դրանք վերջ չի լինի, և դրանք երբեք թույլ չեն տա հոգուն լինել խաղաղ: Ահա սա է մտքով ստելը:

Իսկ խոսքով ստում է նա, ով, օրինակ՝ ճանճրույթից ծուլանում է վեր կենալ (մասնակցելու) հսկմանը, և չի ասում՝ «Ներիր ինձ, որ ես ծուլացա վեր կենալ», այլ ասում է. «Ես ջերմություն ունեի, ծայրահեղ ուժասպառ էի եղել չափազանց աշխատելուց, ի վիճակի էի վեր կենալու, անառողջ էի», և տասը սուտ բառ է ասում այն բանի համար, որպեսզի մեկ ծնրադրություն չանի և չխոնարհվի: Եվ եթե (նման դեպքում) նա չհանդիմանի իրեն, ապա ստիպված պիտի լինի անդադար փոխել իր բառերը և վիճել, որպեսզի նախատինք չկրի: Նմանապես, երբ պատահում է, որ նա վեճ է ունենում իր եղբոր հետ, ապա չի դադարում արդարանալ և ասել. «Բայց դո՛ւ ասացիր, դո՛ւ արեցիր, ես չեմ ասել, այսինչն է ասել», մեկ այս, մեկ այն, միայն թե չխոնարհվի: Դարձյալ, եթե նա ինչ-որ բանի ցանկություն է ունենում, ապա չի ուզում (ուղիղ) ասել. «Ես ցանկանում եմ այդ», այլ այլակերպում է իր բառերը՝ ասելով. «Ես այսպիսի հիվանդություն ունեմ, և դա ինձ անհրաժեշտ է, դա ինձ հրամայված է» և ստում է այնքան ժամանակ, մինչև որ բավարարի իր ցանկությունը: Եվ ինչպես որ յուրաքանչյուր մեզք առաջանում է՝ կա՛մ հեշտասիրությունից, կա՛մ արծաթասիրությունից, կա՛մ փառասիրությունից, այդպես էլ սուտը լինում է այս երեք պատճառներից: Մարդը ստում է կամ այն բանի համար, որպեսզի չհանդիմանի իրեն և չխոնարհվի, կամ նրա համար, որպեսզի իրագործի իր ցանկությունը, կամ էլ ինչ-որ բան ձեռք բերելու պատճառով, և չի դադարում ճարպկություն ու

հնարամտություն գործադրել և խորամանկել իր բառերում այնքան ժամանակ, մինչև չկատարի իր փափագը: Նման մարդուն երբեք չեն հավատում, այլ նա թեկուզև ճիշտ ասի, ոչ ոք չի կարող նրան հավատ ընծայել, և նրա ճշմարտությունն անհավանական է թվում: Երբեմն այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որ ծայրահեղ անհրաժեշտ է լինում մի փոքր ծածկել, և եթե մեկը չծածկի այդ փոքրը, ապա գործը կբերի մեծ խռովություն և վիշտ: Երբ նման ծայրահեղ իրավիճակ է պատահում, և ինչ-որ մեկը տեսնում է իրեն նման անհրաժեշտություն մեջ, ապա կարող է այս պատճառով փոխել խոսքը լոկ այն բանի համար, որպեսզի չծագի, ինչպես ես ասացի, մեծ խռովություն և վիշտ, կամ փորձանք: Սակայն երբ ճշմարտության խոսքից խույս տալու նման մեծ անհրաժեշտություն է պատահում, ապա այդ ժամանակ ևս մարդը չպետք է անտրտում մնա, այլ զղջա և լաց լինի Աստծո առաջ և նման դիպվածը համարի փորձության շրջան: Եվ չի կարելի հաճախակի դիմել նման խուսափումների, այլ բազում պատահարներից միայն մեկ անգամ: Ինչպես որ լինում է լուծողական և մաքրողական դեղեր (ընդունելիս), երբ մեկը դրանք հաճախ է ընդունում, ապա նրանք վնասում են, իսկ եթե մեկը տարվա մեջ գեթ մեկ անգամ է ընդունում, այն էլ մեծ անհրաժեշտության դեպքում, ապա դրանք օգուտ են բերում նրան. այդպես պետք է վարվել նաև այս դեպքում: Ով ուզում է, անհրաժեշտությունից ելնելով, փոխել խոսքը, ապա նա չպետք է այս բանը հաճախակի կրկնի, այլ միայն բացառիկ դեպքերում, բազում տարիների ընթացքում մեկ անգամ, երբ տեսնում է, ինչպես ես ասացի, մեծագույն անհրաժեշտություն: Եվ այդ բանը, որ հազվադեպ է թույլատրելի, թող անի ահ ու ղոզով՝ ցույց տալով Աստծուն թե՛ իր հոժարակամությունը և թե՛ անհրաժեշտությունը, և այնժամ նա ներված կլինի, բայց վնաս նա ամեն դեպքում կկրի: Ահա մենք ասացինք, թե ինչ է

նշանակում ստել մտքով, և ինչ՝ ստել խոսքով: Այժմ ուզում ենք ասել, թե ինչ է նշանակում ստել հենց իր իսկ կյանքով:

Իր կյանքով ստում է նա, ով, լինելով ցանկասեր, ձևանում է ժուժկալ, կամ, լինելով ագահ, խոսում է ողորմության մասին և գովաբանում է գթասրտությունը, կամ, լինելով մեծամիտ, հիանում է խոնարհամտությամբ: Եվ ոչ այն բանի համար է հիանում առաքինությունը, որ ցանկանում է գովաբանել այն, քանզի եթե նա այդ մտքով ասելու լիներ, ապա նախ և առաջ խոնարհամտությամբ կխոստովաներ իր տկարությունը՝ ասելով. «Վա՛յ ինձ, թշվառիս, որ գերծ եմ ամեն տեսակ առաքինությունից», և հետո արդեն, սեփական տկարության գիտակցումով, կսկսեր գովաբանել առաքինությունը և հիանալ նրանով: Եվ դարձյալ ո՛չ այն նպատակով է գովաբանում առաքինությունը, որ չգայթակղեցնի ուրիշին, քանզի (նման դեպքում) նա պետք է որ այսպես խորհեր. «Արդարև ես թշվառ եմ և կրքերով լեցուն, սակայն ինչո՞ւ գայթակղութան պատճառ լինեմ ուրիշներին: Ինչո՞ւ վնաս հասցնեմ ուրիշի հոգուն և այդպիսով ծանրություն բարդեմ թե՛ իմ և թե՛ ուրիշի վրա»: Եվ այդ դեպքում, թեկուզև այդ (վերոհիշյալի մեջ) նա մեղանչի էլ, բայց և այնպես (նման գիտակցումով և խոստովանությամբ) նա կմերձենա և բարուն, քանզի ինքնիրեն դատելը խոնարհության գործ է, իսկ մերձավորին խնայելը՝ գթասրտության գործ: Սակայն ստախոսը վերոհիշյալներից ոչ մեկի պատճառով էլ չէ, որ հիանում է առաքինություններով, ինչպես ես ասացի, այլ կա՛մ առաքինության անունն է հափշտակում, որպեսզի իր ամոթը ծածկի, և խոսում է այդ մասին այնպես, որպես թե ինքը միանգամայն այդպիսին է, կա՛մ էլ հաճախ նրա համար, որպեսզի վնասի որևէ մեկին և գայթակղի նրան: Քանզի ո՛չ մի չարիք, ո՛չ մի հերձված, ո՛չ էլ ինքը՝ սատանան, չի կարող ոչ ոքի գայթակղել (այլ կերպ), եթե ոչ՝ միայն առաքինության քողի տակ: Առաքյալն ասում է,

որ «**ինքը՝ սատանան էլ է կերպարանավորվում որպես լուսոհրեշտակ, և դրա համար տարօրինակ չէ, որ նրա պաշտոնյաներն էլ կերպարանավորվում են որպես արդարության պաշտոնյաներ**» (Բ Կորնթ. 11; 14-15): Այդպես էլ ստախոս մարդը, կամ ամոթից վախենալով, որպեսզի չխոնարհվի, կամ էլ ինչ-որ մեկին գայթակղել և վնասել կամենալուց է, որ խոսում է առաքինությունների մասին և գովաբանում է դրանք և հիանում է դրանցով, որպես թե ի՛նքն է այդպես վարվել և գիտի դրանք իր անձնական փորձով: Սա պարզ մարդ չէ, այլ՝ երկերեսանի, քանզի այլ է ներքուստ, և այլ՝ արտաքուստ, և իր կյանքը երկակի է և կեղծ: Ահա մենք խոսեցինք ստի մասին, որ այն սատանայից է, խոսեցինք և ճշմարտության մասին, որ ճշմարտությունը Աստված է: Եվ այսպես, եղբայրներ՛ր, փախչե՛նք ստից, որպեսզի սատանայից մաս չունենանք մեր մեջ և ձգտենք յուրացնել ճշմարտությունը, որպեսզի միավորվենք Աստծո հետ, Ով ասաց. «**Ես եմ ճշմարտությունը**» (Հովհ. 14; 6): Տեր Աստված թող արժանացնի մեզ իր ճշմարտությանը, քանզի նրան է վայելում փառք, պատիվ, իշխանություն և երկրպագություն հավիտյանս. Ամեն:

**ԱՅՆ ՄԱԿԻՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ԽԵԼԱՄՏՈՐԵՆ ԵՎ  
ՈՒՇԻՄՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԱՆԱԼ ԱՄՏԾՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ**

10-րդ ուսուցում

Հոգ տանենք մեր մասին, եղբայրներ՝, լինենք ուշադիր: Ո՞վ մեզ վերստին կտա այս ժամանակը, եթե մենք զուր տեղը վատնենք այն: Արդարև մենք հետո պիտի փնտրենք այս օրերը, բայց չենք գտնի: Աբբա Արսենը միշտ ասում էր իրեն. «Արսե՛ն, ինչի՞ համար դու դուրս ելար (աշխարհից)»: Իսկ մենք գտնվում ենք այնպիսի կործանարար հեղգություն մեջ, որ նույնիսկ չգիտենք, թե մենք ի՛նչ էինք ցանկանում այն ժամանակ (երբ ելանք աշխարհից), և դրա համար ոչ միայն չենք առաջադիմում, այլև մշտապես վշտանում ենք: Սա պատահում է մեզ հետ այն պատճառով, որ մենք ուշիմություն չունենք մեր սրտում: Արդարև, եթե մենք ցանկանայինք փոքր-ինչ ճգնել, ապա մենք այդքան շատ չէինք վշտանա և դժվարություններ չէինք կրի, քանզի եթե մեկը սկզբում ստիպում է իրեն, ապա, շարունակելով ճգնել, նա կամաց-կամաց առաջադիմում է և հետո հանգստություն (հեշտություն) է գործում առաքինությունները, քանզի Աստված, տեսնելով, որ նա ստիպում է իրեն, հասնում է օգնության: Եվ այդպես մենք էլ մեզ ստիպենք, բարի սկիզբ դնենք, ջերմեռանդորեն բարին ցանկանանք, քանզի թեև մենք տակավին չենք հասել կատարելության, սակայն հենց միայն այս ցանկությունն արդեն իսկ սկիզբն է մեր փրկության: Այս ցանկությունից մղված՝ մենք սկսում ենք Աստծո օգնությամբ նաև ճգնել, իսկ ճգնության միջոցով առաքինություն ձեռք բերելու օժանդակություն ենք ստանում: Դրա համար էլ հայրերից մեկը ասել է. «Տո՛ւր արյունդ և ստացիր հոգին», այսինքն՝ ճգնիր և կստանաս առաքինության սովորություն:

Երբ ես ուսանում էի աշխարհիկ գիտությունները, սկզբում ինձ այն բավականին ծանր էր թվում, և երբ ես մոտենում էի վերց-

նելու գիրքը, ես գտնվում էի այնպիսի վիճակում, ինչպես որ մարդը գնում է մերձենալու գազանին: Իսկ երբ ես շարունակում էի ստիպել ինձ, Աստված օգնում էր ինձ, և իմ ջանասիրությունը ինձ մոտ վերածվեց այնպիսի սովորության, որ ես ընթերցանության հանդեպ ջերմեռանդությունից այլևս չէի նկատում, թե ի՛նչ եմ ուտում, կամ ինչ եմ խմում, կամ ինչպես եմ քնում: Եվ երբեք թույլ չէի տալիս ինձ տարվել ճաշկերույթով ընկերներիցս որևէ մեկի հետ և նույնիսկ նրանց հետ զրույցի չէի բռնվում ընթերցանության ժամանակ, թեև ես չփվող էի և սիրում էի իմ ընկերներին: Երբ ուսուցիչը արձակում էր մեզ, ես լվացվում էի ջրով, քանզի տոչորվում էի անչափ ընթերցումներից և կարիք ունեի ամեն օր թարմանալու ջրով: Գալով տուն՝ չգիտեի, թե ինչ պիտի ուտեմ, քանզի կերակրիս հարցը տնօրինելու համար ազատ ժամանակ չէի կարողանում գտնել, սակայն ես մի հավատարիմ մարդ ունեի, որ պատրաստում էր ինձ համար, ինչ որ ցանկանում էր: Իսկ ես ուտում էի, ինչ որ պատրաստ էի գտնում՝ գիրքը մշտապես ունենալով իմ կողքին՝ անկողնուս վրա, և հաճախ խորամուխ էի լինում նրա մեջ: Նմանապես և քնած ժամանակ այն իմ կողքին էր՝ սեղանիս վրա, և, փոքր-ինչ ննջելով, ես իսկույն վեր էի թռչում, որպեսզի շարունակեմ ընթերցանությունը: Դարձյալ երեկոյան, երբ ես տուն էի վերադառնում ժամերգությունից, վառում էի կանթեղը և շարունակում էի ընթերցանությունը մինչև կեսգիշեր, և (ընդհանրապես) գտնվում էի այնպիսի վիճակում, որ ընթերցանության պատճառով բոլորովին չգիտեի, թե ի՛նչ բան է հանգստի քաղցրությունը:

Եվ այսպես, երբ ես ընդունվեցի վանք, ապա ասացի ինքս ինձ. «Եթե արտաքին իմաստասիրությունը ուսանելիս իմ մեջ ծնվեց այդպիսի՝ ցանկություն և այդպիսի՝ ջերմություն այն պատճառով, որ ես վարժվեցի ընթերցանության մեջ և այն ինձ մոտ վերածվեց սովորության, ապա առավել ևս (այդպես կլինի)

առաքինությունները ուսանելու ժամանակ», և այս օրինակից ես չատ ուժ ու եռանդ քաղեցի: Այդպես, եթե մեկը ցանկանում է առաքինություն ձեռք բերել, ապա նա չպետք է լինի անփուլթ ու ցրված: Քանզի ինչպես ատաղձագործություն սովորել ցանկացողը չի զբաղվում այլ արհեստով, այնպես էլ նրանք, ովքեր ուզում են ուսանել հոգևոր շինության գործը, չպետք է զբաղվեն որևէ այլ բանով, այլ օր ու գիշեր սովորեն այն մասին, թե ինչպես կարելի է ձեռք բերել այն: Իսկ ովքեր այլ կերպ են մտաբանում այս գործին, ոչ միայն չեն առաջադիմում, այլև կոտրվում են՝ անմտորեն նեղելով իրենց: Քանզի ով ուշադիր չի լինում իր անձի հանդեպ ու չի ճգնում, նա հեշտություն է շեղվում առաքինությունից, որովհետև առաքինությունները մեջտեղում են և այն արքայական ուղին են, որի մասին մի սուրբ ծեր՝ Բենիամին անունով, ասել է. «Գնացե՛ք արքայական ճանապարհով և հաշվեցե՛ք մրցասպարեզի վերստերը»: Եվ այսպես, առաքինությունները, ինչպես ես ասացի, գտնվում են ավելորդությունների և թերությունների մեջտեղում: Դրա համար էլ Ս. Գրքում ասված է. «Չեղվեք ո՛չ աջ, ո՛չ ձախ, այլ գնացե՛ք արքայական ճանապարհով» (2 Օրենք 5; 32, 17, 11): Եվ սուրբ Բարսեղն է ասում. «Սրտով ուղիղ է նա, ում միտքը չի շեղվում ո՛չ դեպի ավելորդություն, ո՛չ դեպի թերություն, այլ ուղղվում է միայն դեպի առաքինության մեջտեղը»: Չարը ինքնին ոչինչ է, քանզի այն որևէ էակ չէ և չունի ոչ մի բաղկացություն: Սակայն հոգին, շեղվելով և խոտորվելով առաքինությունից, դառնում է կրքոտ և ծնում է մեղք, դրա համար էլ տանջվում է՝ չգտնելով նրանում (իր համար) բնական հանգիստ: Մի՞թե ծառը բնականից իր մեջ որդեր ունի: Ո՛չ, այլ սկզբում նրա մեջ առաջանում է մի փոքր նեխածություն, այդ նեխածությունից ծնվում է որդ և հենց այդ որդն էլ ուտում է ծառը: Նմանապես և պղինձը, ինքը ժանգ է արտադրում է և ինքն էլ մաշվում է

ժանգից: Եվ հագուստներն իրենք ցեց են արտադրում, և հենց այդ ցեցը, որ իրենից է առաջացել, իրենց իսկ ուտում և փչացնում է: Նույնպես և հոգին ինքը չարիք է արտադրում, որը մինչ այդ բնավ գոյություն չի ունեցել, ինչպես ես ասացի, և չունի ոչ մի բաղկացություն, և ինքն էլ դարձյալ տանջվում է չարից: Եվ լավ է ասել սուրբ Գրիգորը. «Կրակը նյութի ծնունդն է և ուտում է նյութը, ինչպես որ չարությունը (ուտում է) չարերին»: Նույն բանը տեսնում ենք և մարմնավոր հիվանդությունների պարագայում, երբ մեկը ապրում է անկարգ և անկազմակերպ և չի պահպանում իր առողջությունը, ապա առաջանում է ավելորդություն կամ ինչ-որ բանի պակասություն, և դրանից մարդը հետո դառնում է հիվանդ: Իսկ մինչ այդ հիվանդությունը բնավ գոյություն չի ունեցել և այն երբևէ ինքնուրույնաբար գոյություն չի ունեցել, և դարձյալ, մարմնի ապաքինմամբ, հիվանդությունը այլևս իսպառ վերանում է: Ընդհատ այդպես չարությունն էլ է հոգու հիվանդություն. հոգու, որ զրկվել է իրեն հատուկ և ըստ էության իրեն պատկանող առողջությունից, որը առաքինությունն է: Դրա համար էլ մենք ասացինք, որ առաքինությունները մեջտեղում են. այդպես քաջությունը գտնվում է երկյուղի և լկտիության միջև, խոնարհամտությունը գտնվում է հպարտության և մարդահաճության միջև, նույնպես և երկյուղածությունը՝ ամոթի և անամոթության միջև, նմանապես և մյուս առաքինությունները: Եվ այսպես, երբ մարդ արժանանում է ձեռք բերելու այս առաքինությունները, ապա նա բարեհաճ է լինում Աստծո առջև, և թեպետ բոլորը տեսնում են, որ նա ուտում է, խմում և քնում, մյուս մարդկանց նման, սակայն այդպիսին հաճելի է Աստծուն այն առաքինությունների համար, որոնք նա ունի: Իսկ ով ուշադիր չէ իր հանդեպ և չի հսկում իրեն, նա հեշտությամբ է շեղվում այս ճանապարհից՝ կա՛մ դեպի աջ, կա՛մ դեպի ձախ, այսինքն՝ կա՛մ դեպի ավելորդություն,



կա՛մ դեպի թերություն, և ծնում է իր մեջ ախտ, որը չարու-  
թյունն է: Ահա սա է արքայական ճանապարհը, որով ընթացան  
բոլոր սրբերը:

Իսկ մրցասպարեզի վերստերը դրանք այն զանազան կարգա-  
վորումներն են, որոնք մշտապես մեզանից յուրաքանչյուրը  
պետք է հաշվի և նկատի անընդմեջ՝ որտե՞ղ է ինքը, մինչև ո՞ր  
վերստին է հասել, և ո՞ր կարգավիճակում է գտնվում: Մենք  
հենց այն մարդկանց ենք նման, ովքեր սուրբ քաղաք զնալու  
մտադրություն ունենալով՝ դուրս եկան միևնույն քաղաքից, և  
ոմանք անցան հինգ վերստ և կանգ առան, մյուսները անցան՝  
տասը, ոմանք անցան ճանապարհի կեսը, իսկ ոմանք մի փոքր-  
ինչ անգամ չանցան նրանով, այլ դուրս եկան քաղաքից և մնա-  
ցին դարպասների մոտ՝ նրա ժանտահոտ արվարձաններում: Իսկ  
նրանցից, ովքեր գտնվում են ճանապարհին, պատահում է, որ  
ոմանք անցնում են երկու վերստ, ապա մոլորվելով՝ ետ են դառ-  
նում, կամ, երկու վերստ անցնելով, հինգ վերստ ետ են դառ-  
նում: Ոմանք էլ հասան բուն քաղաքին, սակայն մնացին դրսում  
և չմտան քաղաքից ներս: Նույնն էլ մեզ հետ է լինում, քանզի  
մեզանից ոմանք թողեցին աշխարհը և մտան վանք՝ առաքինու-  
թյուններ ձեռք բերելու նպատակով. ոմանք փոքր-ինչ գործելով  
կանգ առան, մյուսները՝ մի քիչ ավելի, իսկ ուրիշներն էլ կատա-  
րեցին գործի կեսը և կանգ առան, ոմանք էլ բնավ ոչինչ չարե-  
ցին, այլ մտածելով, որ դուրս են եկել աշխարհից, այդպես էլ  
մնացին աշխարհիկ կրքերի և դրանց գարշահոտություն մեջ:  
Ոմանք փոքր-ինչ բարիք գործեցին և դարձյալ ավերեցին այն,  
ոմանք էլ ավերեցին առավել, քան արել էին: Ուրիշներն էլ թեև  
առաքինություններ գործեցին, սակայն հպարտություն ունեին  
և նսեմացնում էին մերձավորին, ուստի և չմտան քաղաք, այլ  
մնացին դրսում: Հետևաբար, սրանք ևս չհասան իրենց նպատա-  
կին, քանզի թեպետ նրանք հասան քաղաքի բուն դարպասնե-

րին, սակայն մնացին դրսում, ուստի սրանք ևս չիրագործեցին  
իրենց մտադրությունը: Եվ այսպես, մեզանից յուրաքանչյուրը  
պետք է նկատի, թե ինքը որտե՞ղ է գտնվում. գուցե նա դուրս  
է եկել իր քաղաքից, սակայն կանգ է առել դարպասների մոտ՝  
նրա ժանտահոտ արվարձաններում, կամ ընթացել է քիչ, կամ  
չատ, կամ հասել է ճանապարհի կեսին, կամ հիմա երկու վերստ  
առաջ է անցել և երկու վերստ՝ ետ, կամ հասել է քաղաքին և  
մտել է Երուսաղեմ, կամ թեպետև հասել է քաղաքին, սակայն չի  
կարողացել ներս մտնել: Յուրաքանչյուր ոք թող քննի իր վիճա-  
կը, թե ինքը որտեղ է գտնվում:

Մարդուն բնորոշ է երեք հոգեվիճակ. կամ նա գործում է ըստ  
կրքերի, կամ ընդդիմանում է նրանց, կամ արմատախիլ է անում  
դրանք: Ըստ կրքերի գործում է նա, ով գործադրում է դրանք և  
բավարարում: Դրանց ընդդիմանում է նա, ով չի գործում ըստ  
կրքերի, սակայն չի էլ հատում դրանք, այլ, պայքարելով, կար-  
ծես խույս է տալիս կրքից, սակայն կրում է այն իր մեջ: Իսկ կիր-  
քը արմատախիլ է անում նա, ով ճգնում և գործում է կրքին հա-  
կառակ: Սակայն այս երեք վիճակները բազմաբովանդակ են:  
Օրինակ՝ անվանեք մի որևէ կիրք, և մենք կվերլուծենք այն: Ու-  
զո՞ւմ եք հպարտություն մասին խոսենք, ուզո՞ւմ եք շնություն  
մասին խոսենք, կամ էլ ուզո՞ւմ եք, ավելի լավ է, խոսենք փա-  
ռասիրության մասին, քանզի մենք հույժ հաղթվում ենք այս կր-  
քից: Փառասիրության պատճառով մարդը չի կարողանում  
(վիրավորական) խոսք լսել իր եղբորից: Մեկն էլ, երբ մի բառ է  
լսում, խռովվում է կամ մեկ բառին հինգ կամ տաս բառով է  
պատասխանում, և թշնամանում է ու տրտմում: Եվ երբ վեճը  
դադարում է, նա շարունակում է թշնամանք տածել այդ խոսքն  
իրեն ասողի հանդեպ և հիշում է չարը ու ափոսոսում, որ ինքը  
չի ասել ավելին, քան ասել է, և էլ ավելի վատ բառեր է պատ-  
րաստում, որ ասի նրան: Եվ մշտապես ասում է. «Ինչո՞ւ ես նրան

չասացի այսինչ բանը, ինչո՞ւ նա ինձ այդ բանն ասաց, ես էլ նրան այս-այս բաները կասեմ», և մշտապես զայրանում է: Ահա մի վիճակ: Սա նշանակում է, որ չարիքը վերածվել է սովորության: Աստված թող մեզ ազատի նման հոգեվիճակներից, քանզի այն անպատճառ ենթակա է տանջանքի, որովհետև ամեն մի մեղք, որ կատարվում է գործով, ենթակա է գեհենին, և թեկուզ այդպիսի (մարդը) կամենա ապաշխարել, նա միայնակ չի կարող հաղթահարել կրքերը, եթե որոշ սրբերից օգնություն չստանա, ինչպես հայրերն են ասել: Այդ պատճառով էլ ես ձեզ միշտ ասում եմ. աշխատե՛ք հատել կրքերը, քանզի դեռ դրանք չեն վերածվել սովորություն: Մեկ ուրիշն էլ, երբ մի խոսք է լսում, թե պետև խռովվում է և նմանապես մեկին պատասխանում է հինգ կամ տաս խոսքով, ափսոսում է, որ չասաց ուրիշ վատթարագույն երեքը, և վշտանում է ու հիշում չարությունը, սակայն մի քանի օր անց փոխվում է. մեկ ուրիշը մեկ շաբաթ է անցկացնում նման վիճակում և փոխվում է, իսկ մեկ ուրիշը փոխվում է մեկ օր անց: Մյուսն էլ վիրավորում է, վիճում, խռովվում, խռովում և իսկույնեթ փոխվում է: Տեսե՛ք, թե որքա՛ն բազմազան են հոգեվիճակները: Այնուամենայնիվ, այս բոլոր մարդիկ, քանի դեռ գործադրում են կիրքը, ենթակա են գեհենին:

Ասենք նաև նրանց մասին, ովքեր ընդդիմանում են կրքերին: Մեկը, երբ (վիրավորական) խոսք է լսում, տրտմում է, սակայն ոչ այն բանի համար, որ իրեն վիրավորել են, այլ նրա համար, որ ինքը չկարողացավ կրել այդ վիրավորանքը. այդպիսին գտնվում է ճգնողի և կրքերին հակառակփողի վիճակում: Մեկ ուրիշը ճգնում է ու տքնում, սակայն ի վերջո պարտվում է՝ բռնադատվելով կրքից: Մյուսը չի ուզում վիրավորական կերպով պատասխանել, սակայն տարվում է սովորություն: Մեկ ուրիշը ջանում է չասել բնավ վիրավորական խոսք, սակայն վշտանում է նրա համար, որ իրեն սրտնեղություն են պատճառել, բայց և այնպես դա-

տում է իրեն վշտանելու համար և զղջում է դրա համար: Մյուսն էլ չի վշտանում վիրավորանքից, սակայն չի էլ ուրախանում (դրա համար): Ահա սրանք բոլորը ընդդիմանում են կրքերին: Սակայն սրանցից երկուսը տարբերվում են մյուսներից: Նա, ով պարտվում է ճգնություն մեջ, և ով տարվում է սովորություն, և ով դատում է իրեն, որ ինքը գոհություն է չկրեց վիրավորանքը, գտնվում են ճշմարտապես ճգնողների շարքում, իսկ մյուսներին վտանգ է սպառնում, հավասարապես նրանց հետ, ովքեր գործում են ըստ կրքերի: Ես նրանց մասին ասացի, որ նրանք ևս կրքերի դեմ պայքարողների շարքում են, քանզի իրենց հոժար կամքով կասեցրին կիրքը և չեն ցանկանում ըստ նրա գործել, այլ վշտանում են և ճգնում: Իսկ հայրերն ասել են, որ ամեն մի գործ, որը հոգին չի ուզում, լինում է կարճատև: Սակայն այդպիսիները պետք է քննեն իրենց, թե արդյոք չե՞ն գործադրում, եթե ոչ բուն կիրքը, ապա կրքեր բորբոքող խթանիչներից որևէ մեկը, որի պատճառով էլ իրենք պարտվում կամ գրավվում են դրանով: Գտնվում են և այնպիսիները, որոնք ձգտում են կասեցնել կիրքը, սակայն՝ մեկ այլ կրքի ներշնչմամբ. մեկը լռում է փառասիրությունից, իսկ մյուսը՝ մարդահաճությունից, կամ որևէ մի այլ կրքից. սրանք չարով ուզում են բժշկել չարիքը: Սակայն աբբա Պիմենը ասել է, որ չարը ոչ մի կերպ չի ոչնչացնում չարին: Այդպիսիները պատկանում են նրանց շարքին, ովքեր գործում են ըստ կրքերի, թեև խաբում են իրենք իրենց:

Վերջապես ուզում ենք ասել նաև նրանց մասին, ովքեր արմատախիլ են անում կրքերը: Մեկը ուրախանում է, երբ իրեն վիրավորում են, բայց այն պատճառով, որ վարձ է ակնկալում: Սա պատկանում է կիրքը արմատախիլ անողներին, սակայն՝ ո՛չ խելամտորեն: Մյուսը ուրախանում է վիրավորանք ստանալիս և մտածում է, որ ինքը պարտավոր էր համբերություն կրել վիրավորանքը, քանի որ նա ինքն էր դրա համար առիթ տվել. սա խե-

լամտորեն է արմատախիլ անում կիրքը: Քանզի վիրավորանքն ընդունելը, ինքն իրեն մեղադրելը և մեզ վրա եկած (ամեն բան) սեփական մեղքի հետևանք համարելը՝ խելամտության գործ է, քանզի ով ազոթում է Աստծուն, թե՛ «Տե՛ր, տո՛ւր ինձ խոնարհուած լինելու», պետք է իմանա, որ ինքը Աստծուն խնդրում է, որպեսզի Նա ուղարկի իրեն անարգող մեկին: Եվ այսպես, երբ ինչ-որ մեկը վիրավորում է իրեն, ապա նա ինքը ևս պետք է նեղի իրեն և նվաստացնի իրեն մտովի, որպեսզի այն պահին, երբ ուրիշը խոնարհեցնում է իրեն դրսից, ինքն էլ խոնարհեցնի իրեն ներսից: Մեկը ուրիշն էլ ոչ միայն ուրախանում է, երբ իրեն վիրավորում են, և մեղավոր է համարում ինքնիրեն, այլև ցավում է իրեն վիրավորողի խռովության համար: Աստված թող մեզ հասցնի հենց այսպիսի հոգեվիճակի:

Ահա տեսնո՞ւմ եք, թե որքան բազմաբովանդակ են այս երեք վիճակները: Եվ այսպես, մեզանից յուրաքանչյուրը թող քննի, ինչպես ես ասացի, թե ինքը ո՛ր հոգեվիճակում է գտնվում: Արդյոք նա հոժարակամորե՞ն է գործում ըստ կրքերի և բավարարում դրանք, թե՞ չցանկանալով գործել ըստ (կրքերի)՝ պարտվում է դրանցից, թե՞ գործում է ըստ կրքերի՝ տարվելով սովորությամբ, և, անելով այդ, վշտանում է ու զղջում, որ այդպես վարվեց, թե՞ աշխատում է խելամտորեն կասեցնել կիրքը, թե՞ ճգնում է մի կրքի դեմ հանուն մի այլ կրքի, ինչպես մենք ասացինք, որ մեկը լռում է փառամոլութունից կա՛մ մարդահաճութունից, կա՛մ առհասարակ մարդկային որևէ խորհրդից (մղված), թե՞ նա սկսել է արմատախիլ անել կիրքը, և արդյոք խելամտորե՞ն է արմատախիլ անում այն և գործո՞ւմ է արդյոք կրքին հակառակ: Յուրաքանչյուր ոք թող իմանա, թե ինքը որտեղ է գտնվում, որ մրցասպարեզում: Քանզի մենք պետք է քննենք մեզ ոչ միայն ամեն օր, այլև ամեն տարի, ամեն ամիս, ամեն շաբաթ, և ասենք՝ անցյալ շաբաթ ինձ անհանգստացնում

էր այս ինչ կիրքը, իսկ այժմ ինչպիսի՞ն եմ ես: Այդպես և ամեն տարի պետք է հարցնենք մեզ՝ անցյալ տարի ես պարտվում էի այսինչ կրքից, իսկ այժմ ինչպիսի՞ն եմ ես: Այդպես պետք է մշտապես քննենք մեզ՝ առաջադիմե՞լ ենք արդյոք գոնե մի քիչ, թե՞ գտնվում ենք այն նույն հոգեվիճակում (որի մեջ առաջ էինք), թե՞ ընկել ենք առավել վատթար (վիճակի) մեջ: Աստված թող մեզ ուժ տա, որպեսզի մենք, եթե նույնիսկ չկարողանանք էլ արմատախիլ անել կիրքը, ապա գոնե ծայրահեղ դեպքում չգործենք ըստ նրա, այլ ընդդիմանանք նրան: Քանզի արդարև ծանր բան է՝ գործել ըստ կրքի և չհակառակվել նրան: Ձեզ մի օրինակ ասեմ, թե ում է նման նա, ով գործում է ըստ կրքի և բավարարում է այն: Նա նման է մարդու, որը խոցված լինելով իր թշնամու նետերից, վերցնում է դրանք և իր սեփական ձեռքերով խրում է իր սիրտը: Կրքերին դիմադրողը նման է նրան, ում վրա թափվում են թշնամու նետերը, բայց նա, զրահապատված լինելով, չի վիրավորվում: Իսկ կիրքն արմատախիլ անողը նման է նրան, ով, թշնամու նետերի տարափի տակ ընկնելով, ջարդուփշուր է անում դրանք, կամ վերադարձնում է իր թշնամիների սիրտը, ինչպես ասված է սաղմոսի մեջ. «Նրանց սրերը կմխվեն իրենց սրտերը, և նրանց աղեղները կփշրվեն» (Սղմ. 36; 15):

Եվ այսպես, ջանանք մենք էլ, եղբայրնե՛ր, եթե չենք կարողանում վերադարձնել նրանց զենքերն իրենց սրտերը, ապա ծայրահեղ դեպքում ջանանք չընդունել նետեր և չմխրճել դրանք մեր սրտի խորքը, այլ զրահապատվենք, որպեսզի խոցելի չլինենք դրանց կողմից: Բարերարն Աստված թող պահպանի մեզ դրանցից, թող շնորհի մեզ ուշիմություն և թող առաջնորդի մեզ իր ճանապարհով, քանզի Նրան է վայել փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս: Ամեն:

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ԶԱՆԱԼ ՇՈՒՏԱՓՈՒՅԹ-  
ՀԱՏԵԼ ԿՐՔԵՐԸ, ՔԱՆԻ ԴԵՈՒ ԴՐԱՆՔ ԶԵՆ  
ՎԵՐԱԾՎԵԼ ՀՈԳՈՒ ԶԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ**

*11-րդ ուսուցում*

Մտքով թափանցեք, եղբայրներ՛ր, իրերի որպիսութեան մեջ, և զգուշացե՛ք, որպեսզի չհեղգանաք, քանզի և փոքր ծուլութիւնը մեզ կարող է ենթարկել մեծ վտանգների: Վերջերս ես գնացի մի եղբոր մոտ և, գտնելով նրան հիվանդութիւններից ուժասպառ վիճակում, զրուցեցի նրա հետ և իմացա, որ նա ընդամենը յոթ օր է ջերմել, և ահա անցել է ևս քառասուն օր, իսկ նա տակավին ուժ չի գտնում իր մեջ: Տեսնո՞ւմ եք, եղբայրներ՛ր, թե ինչպես է տառապում նա, ով ընկնում է իրեն ոչ հատուկ վիճակի մեջ: Մեկ ուրիշն էլ բնավ չի հոգում իր մարմնի փոքր խանգարումների համար և չգիտի, որ եթե մարմինը թեկուզ դուլզն-ինչ տառապի, և հատկապես եթե այն տկար է, ապա հարկավոր են բազում ջանքեր և ժամանակ, մինչև որ այն կատարելապես ապաքինվի: Յոթ օր է հիվանդ եղել այս խեղճը, և ահա որքա՛ն օրեր են անցել, իսկ նա տակավին հանգիստ չի գտնում և չի կարողանում ամրանալ: Այդպես է լինում և հոգու հետ. մեկը սակավ մեղանչում է, իսկ որքա՛ն ժամանակ է անցկացնում նա հետո՝ հեղելով իր արյունը, մինչև որ ուղղում է իրեն: Սակայն մարմնավոր հիվանդութիւնների պատճառները տարբեր են լինում. կամ բժիշկն է անփորձ լինում և մի դեղի փոխարեն մեկ ուրիշն է տալիս, կամ հիվանդն է իրեն անկարգ պահում և չի կատարում բժշկի նշանակումները: Հոգու պարագայում այլ կերպ է լինում: Մենք չենք կարող ասել, որ բժիշկը, հմուտ չլինելով, չի տվել հարկավոր դեղամիջոցը: Քանզի հոգիների բժիշկը Քրիստոսն է, Ով ամեն բան գիտի և ամեն մի կրքի դեմ տալիս է իրեն համապատասխան դեղամիջոցը. այսպես փառասիրութեան դեմ նա տվեց խոնարհամտու-

թեան պատվիրանը, հեշտասիրութեան դեմ՝ ժուժկալութեան պատվիրանը, արծաթասիրութեան դեմ՝ ողորմութեան պատվիրանը, և մի խոսքով, յուրանքանչյուր կիրք, որպես բուժամիջոց, ունի իրեն համապատասխան պատվիրանը: Եվ այսպես, չի կարելի ասել, որ բժիշկը հմուտ չէ, նմանապես, որ դեղամիջոցները հին են և չեն ներգործում, քանզի Քրիստոսի պատվիրանները երբեք չեն հնանում, քանզի որքան ավելի ենք դրանք կատարում, այնքան ավելի են դրանք նորոգվում: Դրա համար էլ ոչինչ արգելք չի հանդիսանում հոգևոր բժշկութեանը, բացի անձի անօրեննութիւններից:

Եվ այսպես, ուշադիր լինենք մեր հանդեպ, եղբայրներ՛ր, և ճգնեն՛ք, քանի դեռ ժամանակ ունենք: Ինչո՞ւ մենք չենք հոգում մեր մասին: Գոնե մի բարի բան անո՞ւմ ենք, որպեսզի օգնութիւն գտնենք փորձութեան ժամանակ: Ինչո՞ւ ենք մենք մեր կյանքը կործանում: Մենք այսքա՛ն լսում ենք և չենք հոգում մեր մասին և արհամարհում ենք ամեն բան: Տեսնում ենք, թե ինչպես են մեր եղբայրները հափշտակվում մեր միջից, և դարձյալ ուշք չենք դարձնում մեզ վրա, մինչդեռ գիտենք, որ մենք ևս կամաց-կամաց մերձենում ենք մահվան: Ահա, այն պահից, երբ մենք նստեցինք զրուցելու, մինչև այս ժամը մենք ապրեցինք մեր դարի երկու կամ երեք ժամը և մոտեցանք մահվան, և տեսնելով, որ կորցնում ենք ժամանակը, չենք սարսափում: Ինչպես մենք չենք հիշում այն ծերի խոսքը, որ ասաց, թե՛ եթե մեկը կորցնում է ոսկի կամ արծաթ, ապա դրա փոխարեն նա կարող է գտնել ուրիշը, իսկ եթե ժամանակն ենք կորցնում՝ ապրելով պարապութեան ու ծուլութեան մեջ, ապա չենք կարող գտնել ուրիշը կորցրածի փոխարեն: Արդարև, մենք հետո պիտի փնտրենք գոնե մեկ ժամը այս ժամանակից և չպիտի գտնենք այն: Որքա՛ն մարդիկ են ցանկանում լսել Աստծո խոսքը և չեն ստանում ցանկալին, իսկ մենք այսքա՛ն լսում ենք և զանց ենք առ-

նուժ այն և չենք խանդավառվում: Աստված գիտի, թե ես ինչ-պե՛ս եմ զարմանում մեր հոգիների անզգայության վրա, որ մենք կարող ենք փրկվել և չենք ուզում. քանզի քանի դեռ մեր կրքերը տակավին նորածիլ են, մենք կարող ենք հատել դրանք, սակայն մենք չենք հոգում այդ մասին և թույլ ենք տալիս, որ դրանք զորանան մեր դեմ, որպեսզի հասնենք վատթար վախճանին: Քանզի այլ բան է, ինչպես բազմիցս ասել եմ ձեզ, արմատախիլ անել փոքրիկ տունկը, որովհետև այն հեշտ է դուրս գալիս, և այլ բան՝ արմատախիլ անել մեծ ծառը:

Մի մեծ ծեր իր աշակերտների հետ զբոսնում էր մի ինչ-որ վայրում, որտեղ կային զանազան նոճիներ՝ մեծ և փոքր: Ծերն իր աշակերտներից մեկին ասաց. «Պոկի՛ր այդ նոճին»: Այդ նոճին փոքր էր, և եղբայրը իսկույն մի ձեռքով պոկեց այն: Հետո ծերը նրան ցույց տվեց մեկ ուրիշը՝ առաջինից ավելի մեծ, և ասաց. «Պոկի՛ր այդ». եղբայրը երկու ձեռքով տարուբերեց այն և դուրս քաշեց: Կրկին ծերը նրան ցույց տվեց ուրիշ ավելի մեծը, և նա մեծ դժվարությամբ պոկեց նաև այդ: Հետո նրան ցույց տվեց ուրիշ առավել մեծը, իսկ եղբայրը մեծագույն դժվարությամբ սկզբում տարուբերեց այն, տքնեց ու քրտնեց, և վերջապես սա էլ դուրս քաշեց: Հետո ծերը նրան ցույց տվեց էլ ավելի մեծը, սակայն եղբայրը, թեև շա՛տ չարչարվեց ու քրտնեց նրա վրա, բայց և այնպես չկարողացավ պոկել այն: Իսկ երբ ծերը տեսավ, որ նա ի գորու չէ անելու այդ, ապա պատվիրեց մեկ այլ եղբոր ելնել և օգնել նրան. և այդպես նրանք երկուսը միասին մի կերպ կարողացան դուրս քաշել այն: Այնժամ ծերը ասաց եղբայրներին. «Ահա այսպիսին են նաև կրքերը, եղբայրներ՛ր, մինչ նրանք փոքր են, եթե մենք ցանկանանք, կարող ենք հեշտությամբ արմատախիլ անել նրանց, իսկ եթե անտարբեր գտնվեք նրանց հանդեպ, որպես փոքրերի, ապա նրանք կամրանան, և որքան շատ ամրանան, այնքան ավելի շատ ջանքեր կպահան-

ջեն մեզանից, իսկ երբ խիստ ամրանան մեր մեջ, այնժամ նույնիսկ ջանքերով էլ չենք կարող մեն մենակ արմատախիլ անել նրանց մեր միջից, եթե օգնություն չստանանք որոշ սրբերից, որոնք օգնում են մեզ Աստծով»:

Տեսնո՞ւմ եք, թե որքան բազմաբովանդակ են սուրբ ծերերի խոսքերը: Այս բանը մեզ սովորեցնում է նաև մարգարեն՝ ասելով. «Ո՛վ Բաբելոնի թշվառ դուստր, երանի՛ նրան, ով քեզ պիտի հատուցի այնպես, ինչպես դու մեզ հատուցեցիր: Երանի՛ նրան, ով կբռնի քո մանուկներին ու կխփի քարին» (Սղմ. 136; 8-9): Հետևենք ասածին ըստ կարգի: Նա Բաբելոն է անվանում խառնակությունը կամ խռովություն, քանզի այսպես է մեկնվում այս բառը, որը առաջացել է «բաբել» բառից, նույնն է նշանակում նաև Սիվքեմը: Իսկ Բաբելոնի դուստր է անվանում թշնամությունը, քանզի հոգին սկզբում վրդովվում է, իսկ հետո ծնում է մեղք: Նա թշվառ է անվանում նրան այն պատճառով, որ, ինչպես ձեզ առաջուց ասացի, չարը չունի ո՛չ էականություն և ո՛չ էլ բաղկացություն, այլ ծնունդ է առնում մեր անհոգությունից և դարձյալ բնաջնջվում ու ոչնչանում է (առաքինության համար գործադրած) մեր ջանքերով: Հետո սուրբ Դավիթը ասում է. «Երանի՛ նրան, ով քեզ պիտի հատուցի այնպես, ինչպես դու մեզ հատուցեցիր»: Տեսնենք, թե մենք ի՞նչ տվեցինք, ի՞նչ ընդունեցինք և ի՞նչ ենք ուզում հատուցել: Մենք տվեցինք մեր կամքը և ընդունեցինք մեղքը. իսկ այս խոսքը երանելի է անվանում նրան հատուցողին, իսկ հատուցել այստեղ նշանակում է այլևս մեղք չգործել: Հետո ավելացնում է. «Երանի՛ նրան, ով կբռնի քո մանուկներին ու կխփի քարին», երանելի է նա, ով հենց սկզբից բնավ չի ընդունում քեզանից ծնվածին, այսինքն՝ չար խորհուրդները, և տեղ չի տալիս նրանց իր մեջ աճելու և չարը ի գործ դնելու, այլ անմիջապես, քանի դեռ նրանք փոքր են, և նախքան նրանց ամրանալը և հառնելը իր դեմ,

վերցնում ու խփում է քարին, որն «Ինքը՝ Քրիստոսն է» (Ա Կորնթ. 10; 4), և ոչնչացնում է նրանց՝ ապավինելով Քրիստոսին: Ահա, թե ինչպես և՛ ծերերը, և՛ Սուրբ Գիրքը, ամենքը համամիտ (միմյանց հետ) և հորդորում են ճգնավորներին հատել իրենց կրքերը, քանի դեռ նրանք նորածիլ են, նախքան նրանցից աղետներ ու դառնություն կրելը:

Եվ այսպես, եղբայներ՛, ջանա՛նք ողորմություն գտնել, ջանա՛նք մի փոքր և կգտնենք մեծագույն հանգիստ: Հայրերն ասել են, թե ի՛նչ կերպով մարդը պետք է հետզհետե մաքրի իրեն. ամեն երեկո նա պետք է քննի իրեն, թե ինչպես անցկացրեց օրը, և դարձյալ առավոտյան, թե ինչպես անցկացրեց գիշերը, զղջա Աստծու առջև, ինչու՞մ որ պատահել է իրեն մեղանչել: Իսկ մեզ արդարև, քանի որ շատ ենք մեղանչում, հարկավոր է, ըստ մեր մոռացկոտությունների, վեց ժամը մեկ քննել մեզ, թե ինչպես անցկացրեցինք ժամանակը և ինչ բանում մեղանչեցինք: Եվ մեզանից յուրաքանչյուրը պետք է հարցնի իրեն. «Արդյոք չե՞մ ասել մի այնպիսի բան, որով բարկացրած լինեմ եղբորս: Երբ ես տեսա նրան զբաղված ինչ-որ գործով, արդյոք չգատե՞ցի, չնսեմացրի՞մ և չհարախոսեցի՞մ նրան: Երբ ես վանքի տնտեսից ինչ-որ բան խնդրեցի, և նա ինձ տվեց այն, արդյոք չգատեցի՞մ ես նրան և չփնթփնթացի՞մ նրա վրա: Եթե կերակուրը լավը չէր, չասացի՞մ ես արդյոք ինչ-որ բան, չնախատե՞ցի խոհարարին և չվիրավորեցի՞մ նրան արդյոք: Կամ, լինելով տրտմության մեջ, չփնթփնթացի՞մ արդյոք ինքս ինձ վրա»: Քանզի եթե մեկը իր վրա էլ փնթփնթա, դա մեղք է: Նաև այսպես պետք է ասել ինքնիրեն. «Երբ ժամաբարը կամ եղբայրներից ինչ-որ մեկը ինձ (տհաճ) խոսք ասաց, արդյոք ես կրեցի՞մ այն, թե հակաճառեցի նրան»: Այսպես մենք պետք է հանապազ քննենք ինքներս մեզ, թե ինչպես անցկացրեցինք օրը: Նմանապես յուրաքանչյուր ոք պետք է քննի իրեն, թե ինչպես անցկացրեց գիշերը՝ փութաջանությամբ վեր կացավ

հսկելու, թե՞ փնթփնթաց իրեն արթնացնողի վրա, թե՞ փոքրագույն ցուցաբերեց նրա հանդեպ: Մենք պետք է գիտենանք, որ նա, ով արթնացնում է մեզ հսկման համար, մեծագույն բարեգործություն է ցուցաբերում մեր հանդեպ և բազում բարիքների պատճառ է հանդիսանում, մեզ համար, քանզի նա մեզ արթնացնում է նրա համար, որպեսզի մենք զրուցենք Աստծո հետ, աղոթենք մեր մեղքերի համար, լուսավորվենք և (հոգևոր) օգուտ ստանանք: Արդ, ինչպես չգոհանանք նման բարեգործից: Արդարև, մենք պետք է պատվենք նրան այնպես, որպես թե նրա միջոցով մենք ստացանք փրկություն:

Պատմեմ ձեզ սրա վերաբերյալ մի սքանչելիք, որ լսել եմ մի մեծ և պայծառատես ծերից: Եկեղեցում կանգնած՝ նա ականատես եղավ այն բանին, որ երբ եղբայրները սկսեցին սաղմոսերգությունը, մի լուսակիր այրը դուրս եկավ ավագ խորանից՝ մյուռոնով լի անոթը և վրձինը ձեռքին պահած: Նա վրձինը թաթախում էր անոթի մեջ և շրջում էր բոլոր եղբայրների միջով՝ նշան դնելով նրանցից յուրաքանչյուրի վրա և որոշ բացակաների տեղերում, իսկ այլ բացակայողների տեղերը շրջանցում էր: Ժամերգության ավարտից առաջ ծերը կրկին տեսավ, թե ինչպես նա դուրս եկավ ավագ խորանից և կատարեց նույն բանը: Մի անգամ ծերը կանգնեցրեց նրան և, ընկնելով նրա ոտքերը, աղաչեց, որ բացատրի իրեն՝ ով է նա և ի՞նչ է նա անում: Այն լուսակիր այրը պատասխանեց նրան. «Ես Աստծո հրեշտակն եմ, և ինձ հրամայված է կնքել այս նշանով նրանց, ովքեր եկեղեցի են գալիս սաղմոսերգության սկզբում և մնում են մինչև վերջ՝ չնորհիվ իրենց ջերմեռանդության, ջանասիրության և բարի հոժարակամության»: Ծերը հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես դու նշան դնում որոշ բացակայող (եղբայրների) տեղերում»: Ի պատասխան սրան սուրբ հրեշտակը ասաց նրան. «Եղբայրներից նրանք, ովքեր ջերմեռանդ են և ունեն բարի հոժարակամու-

թյուն, սակայն դուրս են եկել եկեղեցուց կամ որոշ ծայր աստիճան տկարություն պատճառով՝ հայրերի օրհնություններ, կամ նմանապես ինչ-որ հանձնարարություն ստանալով՝ զբաղված են այն կատարելով և այդ պատճառով (այստեղ) չեն գտնվում, ստանում են իրենց նշանը, որովհետև իրենց հոգևորականություններ են լինում երգողների հետ: Միայն նրանց, ովքեր կարող են լինել եկեղեցու և չեն գալիս իրենց ծուլություն պատճառով, ինձ կարգադրված է չտալ նշան, քանի որ այդպիսիները իրենք իրենց անարժան են դարձնում դրան»: Ահա տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի՜ պարզեցումների պատճառ է լինում իր եղբոր համար նա, ով մղում է նրան մասնակցելու եկեղեցական կարգին: Ջանացե՛ք, ուրեմն, եղբայրներ՝, երբեք չզրկվել սուրբ հրեշտակի նշանից: Եթե պատահի, որ ձեզանից որևէ մեկը երբևէ ծուլանա, և մյուսը հիշեցնի նրան այս մասին, ապա նա չպետք է դժգոհի, այլ նկատի ունենալով այս հիշեցման օգտակարությունը, պետք է շնորհակալ լինի իրեն հիշեցնողից, ով էլ լինի որ նա լինի:

Երբ ես գտնվում էի հանարակացարանում, վանահայրը, ծերերի խորհրդով, ինձ նշանակեց ուխտավորների հյուրընկալ, իսկ ես դրանից ոչ շատ առաջ ծանր հիվանդություն էի կրել: Եվ այսպես, լինում էր, որ երեկոյան դեմ ուխտավորներ էին գալիս, և ես երեկոները անցկացնում էի նրանց հետ, հետո գալիս էին դարձյալ ուղտապաններ, և ես ծառայում էի նրանց: Հաճախ և այն բանից հետո, երբ ես գնում էի քնելու, դարձյալ ուրիշ անհրաժեշտություն էր պատահում, և ինձ արթնացնում էին, այնինչ հասնում էր նաև հսկման ժամը: Եվ հենց որ աչքս կայնում էր, ժամարարը արթնացնում էր ինձ, սակայն աշխատանքից թե հիվանդությունից ես գտնվում է ուժասպառ վիճակում, և քունը դարձյալ տիրում էր ինձ, այնպես որ, շոգից թուլացած, ես չէի հիշում ինքս ինձ և քնաթաթախ պատասխանում էի նրան:

«Լա՛վ, տե՛ր իմ, Աստված թող հիշի քո սերը և վարձատրի քեզ. դու հրամայեցիր, և ես կգամ, տե՛ր իմ»: Հետո, երբ նա հեռանում էր, ես դարձյալ ննջում էի և շատ էի վշտանում, որ ուշանում էի եկեղեցի գնալուց: Եվ քանի որ ժամարարին չէր կարելի ինձ սպասել, ես էլ խնդրեցի երկու եղբայրների. մեկը, որպեսզի արթնացնեի ինձ, մյուսը, որպեսզի թույլ չտար ինձ նիրհել հսկման ժամանակ: Եվ հավատացե՛ք ինձ, եղբայրներ՝, ես այնպես էի պատվում նրանց, որպես թե նրանց միջոցով էր կատարվում իմ փրկությունը, և մեծ ակնածանք էի տածում նրանց հանդեպ: Այդպես և դուք պետք է վարվեք նրանց հետ, ովքեր ձեզ մղում են մասնակցելու եկեղեցական կարգին և ամեն մի բարի գործի: Դրա համար, ինչպես մենք ասացինք, յուրաքանչյուր ոք պետք է քննի իրեն, թե ինչպես ինքը անցկացրեց ցերեկը և գիշերը՝ ուշադրությամբ կանգնեց սաղմոսերգութանը և աղոթքին, թե՞ տարված էր կրքոտ խորհուրդներով, ջանասիրությամբ լսեց աստվածային ընթերցվածքը, թե՞, թողնելով սաղմոսերգությունը, մտացրիվ դուրս եկավ եկեղեցուց: Եթե մեկը նման կերպով մշտապես քննում է իրեն՝ զղջալով, ինչում որ մեղանչել է, և ջանում է ուղղվել, ապա նա սկսում է նվազեցնել իր մեջ չարը, և եթե առաջ ինը զանցանք էր գործում, այժմ կանի ութը, և այսպես, աստիճանաբար առաջադիմելով, Աստծո օգնությամբ, թույլ չի տա կրքերին ամրապնդվելու իր մեջ: Քանզի մեծագույն աղետ է, երբ որևէ մեկը ընկնում է կրքի սովորության մեջ, որովհետև, ինչպես մենք ասացինք, թեկուզև այդպիսին ապաշխարել իսկ կամենա, ապա նա չի կարող մեն-մենակ հաղթահարել կիրքը, եթե որոշ սրբերից աջակցություն չստանա:

Ուզո՞ւմ եք, ես ձեզ կպատմեմ մի եղբոր մասին, որի մոտ կիրքը դարձել էր սովորություն: Դուք կլսեք մի բան, որը արժանի է բազում ողբերի: Երբ ես գտնվում էի հանարակացարանում:

նում, եղբայրները իրենց պարզության պատճառով, կարծում եմ, իրենց խորհուրդները ինձ էին խոստովանում, և վանահայրը, ծերերի խորհրդով, պատվիրեց ինձ վերցնել այդ հոգսը վրաս: Մի անգամ եղբայրներից մեկը եկավ ինձ մոտ և ասաց. «Ների՛ր ինձ, հայր, և աղոթի՛ր ինձ համար, ես գողանում և ուտում եմ»: Ես հարցրի նրան. «Բայց ինչո՞ւ, մի՞թե դու քաղցած ես»: Նա պատասխանեց. «Այո՛, ես չեմ հագնում եղբայրական ճաշկերույթի ժամանակ և չեմ կարողանում խնդրել»: Ես ասացի նրան. «Իսկ ինչո՞ւ դու չես գնում և ասում վանահորը»: Նա պատասխանեց. «Ամաչում եմ»: Ասում եմ նրան. «Ուզո՞ւմ ես, որ ե՛ս գնամ և ասեմ նրան»: Նա ասում է. «Ինչպես քեզ հարմար է, տե՛ր իմ»: Եվ այսպես, ես գնացի և հայտնեցի այս մասին վանահորը: Նա ասաց ինձ. «Սե՛ր ցուցաբերիր և հո՛գ տար նրա մասին, ինչպես որ գիտես»: Այնժամ ես վերցրի նրան և ասացի տնտեսին նրա ներկայությամբ. «Սե՛ր ցուցաբերիր, և երբ այս եղբայրը դա քեզ մոտ, տո՛ւր նրան, որքան որ ցանկանա, և ոչ մի բանում մի՛ մերժիր նրան»: Այս լսելով՝ տնտեսը պատասխանեց ինձ. «Ինչպես պատվիրեցիր, այդպես էլ կկատարեմ»: Այդպես անցկացնելով մի քանի օր՝ այս եղբայրը նորից գալիս և ասում է ինձ. «Ների՛ր ինձ, հայր, ես դարձյալ սկսեցի գողանալ»: Ասում եմ նրան. «Ախր ինչո՞ւ, մի՞թե տնտեսը քեզ չի տալիս, ինչ որ դու ցանկանում ես»: Նա պատասխանեց ինձ. «Այո՛, ների՛ր ինձ, նա տալիս է ինձ, ինչ որ ցանկանում եմ, սակայն ես ամաչում եմ նրանից»: Ասում եմ նրան. «Ի՞նչ է, դու ինձանի՞ց էլ ես ամաչում»: Նա պատասխանեց. «Ո՛չ»: Այնժամ ես ասացի նրան. «Այդ դեպքում, երբ ցանկանում ես, արի՛ և վերցրո՛ւ ինձանից, միայն թե մի՛ գողացիր», քանզի այդ ժամանակ ես հիվանդանոցում պաշտոն ունեի, և նա գալիս և վերցնում էր, ինչ որ ցանկանում էր: Սակայն մի քանի օր անց, նա կրկին սկսեց գողանալ և վշտացած

եկավ ու ասաց ինձ. «Ահա, ես դարձյալ գողանում եմ»: Ես հարցրեցի նրան. «Ինչի՞ համար, եղբայր, մի՞թե ես քեզ չեմ տալիս, ինչ որ դու ցանկանում ես»: Նա պատասխանեց. «Չէ՛, տալիս ես»: Ասում եմ նրան. «Ի՞նչ է, դու քաշվո՞ւմ ես ինձանից, եղբայր»: Նա ասում է. «Ո՛չ»: Ես ասացի նրան. «Ուրեմն, էլ ինչո՞ւ ես գողանում»: Նա պատասխանեց ինձ. «Ների՛ր ինձ, ինքս էլ չգիտեմ, թե ինչու, հենց այնպես, ուղղակի գողանում եմ»: Այնժամ ես ասացի նրան. «Գոնե ինձ ճիշտն ասա, ի՞նչ ես անում գողացածը»: Նա պատասխանեց. «Ես դրանք տալիս եմ ավանակին»: Եվ իսկապես պարզվեց, որ այդ եղբայրը գողանում էր հացի կտորներ, արմավ, թուզ, սոխ և ընդհանրապես ամեն ինչ, ինչ որ գտնում էր, և թաքցնում էր դրանք՝ մի մասը իր անկողնու տակ, մյուս մասը՝ մի այլ տեղում, և վերջապես չիմանալով, թե դրանք որտեղ օգտագործի, և տեսնելով, որ դրանք փչանում են, նա հանում էր դուրս ու թափում կամ տալիս էր անբան անասուններին:

Ահա տեսնո՞ւմ եք, թե ինչ է նշանակում կիրքը վերածել սովորության: Տեսնո՞ւմ եք, թե դա ինչպիսի՞ խղճահարուստության և կարեկցանքի է արժանի, ինչպիսի՞ տառապանք է դա: Նա գիտեր, որ դա չար է, նա գիտեր, որ վատ է անում և վշտանում էր, լալիս, բայց և այնպես տարվում էր խեղճ հիմար սովորությամբ, որը ձևավորվել էր նրա մեջ իր նախկին անփութությունից: Եվ լավ է ասել աբբա Նիստերոն. «Եթե մեկը տարվում է կրքով, ապա նա կդառնա կրքի գերին»: Բարերար Աստված թող ազատի մեզ չար սովորությունից, որպեսզի մեզ էլ չասվի. «Ի՞նչ օգուտ ունես իմ արյունից, եթե ապականություն գրի մեջ թաղվես» (Սղմ. 29; 10): Իսկ թե ինչ կերպով է որևէ մեկը ընկնում (չար) սովորության մեջ, այս մասին ես արդեն բազմիցս ասել եմ ձեզ: Քանզի մեկ անգամ բարկացողը չէ, որ կոչվում է բարկացկոտ, և ոչ էլ



(մերձավորին) մեկ անգամ շնորթյան մեջ ընկնողն է, որ կոչվում է շնացող, և ոչ մերձավորին ողորմություն տվողն է, որ կոչվում է ողորմած, այլ, ինչպես որ առաքինություններում, այնպես էլ արատներում, հաճախակի նրանցում վարժվելիս՝ հոգին ձեռք է բերում որոշակի սովորություն, հետո այդ սովորությունը կամ տանջում է, կամ հանգստացնում է նրան: Իսկ այն մասին, թե ինչպես է առաքինությունը հանգստացնում հոգին, և թե ինչպես է նրան տանջում արատը, մենք բազմիցս ասել ենք, այսինքն, որ առաքինությունը բնական է, այն մեր մեջ, է քանզի առաքինությունների սերմերը չեն ոչնչանում: Եվ այսպես, ես ասացի, թե որքան շատ ենք մենք բարիք գործում, այնքան ավելի շատ ենք սովորություն ձեռք բերում առաքինության մեջ, այսինքն՝ վերականգնում ենք մեր բնական հատկությունը և վերադառնում ենք մեր նախկին առողջությանը, ինչպես որ կուրությունից՝ նախկին տեսողությունը, կամ մեկ ուրիշ հիվանդությունից՝ նախկին բնական առողջությունը: Իսկ արատի պարագային այդպես չի լինում, այլ նրանում վարժվելու միջոցով մենք ստանում ենք որոշակի օտար և բնությանը հակառակ սովորություն, այսինքն՝ սովորություն ենք ձեռք բերում կործանարար խիտի հանդեպ, այնպես որ եթե նույնիսկ կամենանք էլ, չենք կարող բժշկվել առանց բազում օգնություն, առանց բազում աղոթքների և բազում արտասուքների, որոնք կկարողանային Քրիստոսի գլխարտությունը իջեցնել առ մեզ: Նույն բանը մենք տեսնում ենք նաև մարմնի պարագային, քանզի կան որոշ կերակրատեսակներ, որոնք սև մաղձ (լեղի) արտադրելու հատկություն ունեն, ինչպես օրինակ՝ կաղամբը, ոսպը և ուրիշ սրանց նմանները. սակայն մեկ կամ երկու անգամ կաղամբ, կամ ոսպ, կամ նման մի այլ բան ճաշակելուց չէ, որ մարդը դառնում է սևամաղձոտ, այլ՝ դրանց հաճախակի օգտագործումից, և եթե

սև մաղձը հետո սաստկանում է նրանում, ապա առաջանում է տենդ, որը տանջում է դրանով բռնվածին և իր ետևից է քաշում անհամար այլ հիվանդություններ: Նույնը պատահում է և հոգու հետ. եթե մեկը կարծրանում է մեղքի մեջ, ապա հոգու մեջ ձևավորվում է չար սովորություն, որը և տանջում է նրան: Սակայն դուք պետք է իմանաք նաև այն, որ հոգին երբեմն հակում է ունենում մի որևէ կրքի հանդեպ, և եթե գեթ մեկ անգամ ընկնի այդ կրքի ազդեցություն տակ, իսկույնեթ կենթարկվի սովորության մեջ ընկնելու վտանգին: Նույնը պատահում է նաև մարմնի հետ. եթե մի մարդ հակում ունի սև մաղձի հանդեպ իր ինչ-որ նախկին անփութություն պատճառով, ապա վերոհիշյալ կերակրատեսակներից մեկն էլ կարող է նրանում իսկույն սև մաղձ առաջացնել և պատճառել տենդ: Եվ այսպես, հարկավոր է և՛ ուշադրություն, և՛ ջանք, և՛ երկյուղ, որպեսզի որևիցէ մեկը չընկնի չար սովորության մեջ:

Հավատացե՛ք, եղբայրներ՛ր, որ եթե որևէ մեկի մոտ թեկուզ մի կիրք վերածվել է սովորության, ապա նա ենթակա է տանջանքի: Եվ պատահում է, որ մեկը գործում է տասը բարի գործ և ունենում է մի չար սովորություն, և այդ մեկը, որ չար սովորությունից է առաջացել, հաղթում է այն տասը բարի գործին: Արծիվը, եթե ամբողջովին ցանցից դուրս լինի, սակայն խճճվի նրա մեջ միայն մի մագիլով, ապա այդ մի փոքր բանի պատճառով կտապալվի նրա ողջ գորությունը, քանզի մի՞թե նա արդեն ցանցի մեջ չէ, թեև ամբողջովին գտնվում է նրանից դուրս, սակայն բռնված է նրանից ընդամենը մի մագիլով: Մի՞թե չի կարող որսորդը հափշտակել նրան, հենց որ կամենա: Այդպես և հոգին. եթե թեկուզ միայն մի կիրքն էլ սովորություն դարձնի իր համար, անպայման թշնամին, երբ էլ ցանկանա, կտապալի նրան, քանզի նա գտնվում է իր ձեռքում՝ տվ-

յալ կրքի պատճառով: Դրա համար էլ ես ձեզ միշտ ասում եմ. թույլ մի՛ տվեք, որպեսզի որևէ մի կիրք ձեզ մոտ վերածվի սովորություն, այլ ճգնեցե՛ք և աղոթեցե՛ք Աստծուն օր ու գիշեր, որպեսզի փորձություն մեջ չընկնեք: Իսկ եթե մենք որպես մարդիկ պարտվենք էլ և ընկնենք մեղքի մեջ, ապա ջանանք իսկույն ոտքի կանգնել, գղջա՛նք, լա՛ց լինենք Աստծո բարերարությունն առջև, արթո՛ւն լինենք և ճգնե՛նք: Եվ Աստված, տեսնելով մեր խոնարհամտությունը և սրտի կոտորվածությունը, մեզ օգնության ձեռք կմեկնի և Իր ողորմությունը կարժանացնի, քանզի Նրան է վայելում անմենայն փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս: Ամեն:

## ԳԱԼԻՔ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻ ԵՐԿՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ, ՆԱԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՓՐԿՎԵԼ ՑԱՆԿԱՑՈՂԸ ՉՊԵՏՔ Է ԵՐԲԵՔ ԱՆՀՈԳ ԼԻՆԻ ԻՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

12-րդ ուսուցում

Երբ ես ոտքերից հիվանդ էի և տառապում էի դրանցից, եղբայրներից ոմանք, գալով ինձ այցելության, խնդրեցին, որպեսզի ես նրանց հայտնեմ հիվանդությունն պատճառը, ունենալով, ըստ իս, երկակի նպատակ, որպեսզի գեթ մի փոքր մխիթարեին ինձ և մտքերս շեղեին իմ հիվանդությունից, և որպեսզի առիթ ընձեռեին ինձ զրուցելու իրենց հետ ինչ-որ օգտակար բանի մասին: Բայց քանի որ հիվանդությունը թույլ չտվեց ինձ այնժամ ասել նրանց այն, ինչ որ նրանք ցանկանում էին, ապա այժմ ձե՛զ է հարկավոր լսել այդ մասին, քանզի վշտի մասին պատմելը հաճելի է, երբ այն արդեն անցել է: Այդպես և ծովի վրա, երբ փոթորիկ է բարձրանում, ապա ամենքը, որ գտնվում են նավի մեջ, տրտմում են. երբ փոթորիկը անցնում է, ապա բոլորը ցնծությունամբ և խնդազին պատմում են միմյանց պատահածի մասին: Լավ է, եղբայրներ՛, ինչպես ես ձեզ միշտ ասում եմ, ամեն մի գործ վերագրել Աստծուն և ասել՝ ոչինչ չի լինում առանց Աստծո կամքի, իհարկե, Աստված գիտեր, որ դա լավ է և օգտակար, և դրա համար էլ այդպես արեց, թեկուզև այդ բանը ունենա ինչ-որ արտաքին պատճառ: Օրինակ՝ ես կարող էի ասել՝ քանի որ ես կերակուր ճաշակեցի ուխտավորների հետ և մի քիչ ստիպեցի ինձ, այն բանի համար, որպեսզի հյուրասիրեմ նրանց, այդ պատճառով ստամոքսս ծանրաբեռնվեց, և ոտքիս վրա այտուց գոյացավ, և դրանից էլ ես հիվանդացա: Ես կարող էի բերել ուրիշ, տարբեր պատճառներ, քանզի դրանք փնտրողները պակասություն չեն ունենա, սակայն ամենաստույգը և օգտակարը այն է, որպեսզի ասենք՝ «արդարև Աստված գիտեր, որ դա օգտակար կլինի իմ հոգու համար, և դրա համար այն այդպես

եղավ: Քանզի այն ամենից, որ անում է Աստված, չկա ոչ մի այնպիսի բան, որ բարի չլինի, այլ «ամեն բան բարի է» (Ծննդ. 1; 31): Եվ այսպես, ոչ ոք չպետք է վշտանա կատարվածի համար, այլ ամեն բան, ինչպես ես ասացի, պետք է վերագրի Աստծո նախախնամովթյանը և հանգստանա: Կան որոշ մարդիկ, որոնք այնքա՛ն են հյուսիսում իրենց պատահած վշտերից, որ հրաժարվում են մինչև իսկ կյանքից և քաղցր են համարում մահը, միայն թե ազատվեն վշտերից, սակայն դա առաջանում է փոքրորդությունից և մեծագույն անմտությունից, քանզի այդպիսիները անտեղյակ են այն սարսափելի նեղությունը, որը մեզ պատահում է հոգին մարմնից դուրս գալու ժամանակ:

Սա Աստծո մեծագույն մարդասիրությունն է, եղբայրներ՛ր, որ մենք պատժվում ենք՝ գտնվելով այս աշխարհում, բայց մենք, չիմանալով, թե ինչ է կատարվում այնտեղ, այստեղից ենք ծանր համարում: Սակայն դա արդարացի է: Գիտե՞ք, թե ինչ է պատմում «Հարանց վարքը»: Մի բավականին նախանձախնդիր եղբայր հարցրեց մի ծերի. «Ինչի՞ց է, որ իմ հոգին մահ է փափագում»: Ծերը պատասխանեց նրան. «Նրանից է, որ դու խուսափում ես վշտերից և չգիտես, որ գալիք վշտերը առավել ծանր են այստեղից»: Եվ մեկ ուրիշն էլ նմանապես հարցրեց ծերին. «Ինչի՞ց է, որ ես ընկնում եմ անհոգություն մեջ, երբ գտնվում եմ իմ խցում»: Ծերը ասաց նրան. «Նրանից է, որ դու դեռևս չես ճանաչել ո՛չ սպասվող հանգիստը և ո՛չ ապագա տանջանքները: Քանզի, եթե դու ստուգապես իմանայիր այդ, ապա թեկուզ որդերով էլ լցված լինեիր խուցդ, այնպես որ դու ընկղմվեիր նրանց մեջ մինչև կոկորդդ, դու կհամբերեիր դրան առանց թուլանալու»: Բայց մենք, քնելով, ուզում ենք փրկվել, այդ պատճառով էլ ուժասպառ ենք լինում վշտերի մեջ, մինչդեռ մեզ պետք էր գոհանալ Աստծուց և համարել մեզ երանելի, որ արժանացանք այստեղ փոքր-ինչ տառապելու, որպեսզի այնտեղ

փոքր-ինչ հանգիստ վայելենք: Եվ եվագրոսն է ասել. «Ով տակավին չի մաքրվել կրքերից և աղոթում է Աստծուն, որպեսզի շուտ մեռնի, այդպիսին նման է այն մարդուն, որը ատաղձագործին խնդրում է շուտափուլյա կոտրատել հիվանդի մահի՞ճը»: Քանզի հոգին, գտնվելով այս մարմնի մեջ, թեև պայքար է մղում կրքերի դեմ, սակայն որոշ չափով մխիթարվում է նրանով, որ ուտում է, խմում է, քնում է, զրուցում է, քայլում է իր սիրելի ընկերների հետ: Իսկ երբ դուրս է գալիս մարմնից, նա մնում է միայնակ իր կրքերի հետ, և դրա համար միշտ տանջվում է նրանցից. զբաղված նրանցով՝ նա այրվում է նրանց պատճառած խռովքից և խոշտանգվում է նրանց կողմից, այնպես որ նա նույնիսկ չի կարող իսկ հիշել Աստծուն, քանզի հենց միայն Աստծուն հիշելը մխիթարում է հոգին, ինչպես որ սաղմոսում է ասված. «Հիշեցի Աստծուն և ուրախացա» (Սղմ. 76; 4), սակայն կրքերը սա էլ անգամ թույլ չեն տալիս նրան:

Ուզո՞ւմ եք, ինչ որ ձեզ ասում եմ, բացատրեմ օրինակով: Թող ձեզանից որե՛կ մեկը գա, և ես կարգելափակեմ նրան մուրթ խցում, և թող նա, գոնե երեք օր, ո՛չ ուտի, ո՛չ խմի, ո՛չ քնի, ոչ մեկի հետ չզրուցի, սաղմոս չերգի, չաղոթի և ոչ մի անգամ չհիշի Աստծուն, և այնժամ նա կիմանա, թե ինչ կանեն նրանում կրքերը: Սակայն նա դեռ այստեղ է գտնվում, իսկ հոգին մարմնից դուրս գալու ժամանակ, երբ նա տրվի կրքերին և մնա նրանց հետ միայնակ, այնժամ ինչե՞ր պիտի կրի թշվառը: Այստեղի (վշտերով) դուք կարող եք որոշ պատկերացում կազմել, թե ինչպիսին են այնտեղի վշտերը: Քանզի երբ ինչ-որ մեկի մոտ տենդ է առաջանում, ապա ի՞նչն է նրան այրում: Այդ ի՞նչ կրակ կամ նյութ է, որ առաջացնում է այդ այրումը: Իսկ եթե մեկն ունի մաղձոտ և հյուսիսում մարմին, ապա հենց այդ հյուսիսում թյունը չէ՞, որ բորբոքում է նրան, մշտապես անհանգստացնում է և նրա կյանքը դարձնում է վշտալից: Այդպես և կրքոտ հոգին

է մշտապես տառապում իր չար սովորություններով՝ մշտապես ունենալով դառը հիշողություններ և տառապալից տպավորություններ կրքերից, որոնք անընդմեջ այրում և դաղում են նրան: Եվ սրանից առավել, ո՞վ կարող է, եղբայրներ՝, պատկերացնել այն սարսափազգու վայրերը, այնտեղ տանջվող մարմինները, որոնք ծառայում են միմիայն հոգիների տանջանքները սաստկացնելու համար, իսկ իրենք չեն քայքայվում. այն ահասարսուռ կրակը և խավարը, այն անխիղճ տանջող ծառաները և այն անհամար տառապանքները, որոնց մասին հաճախ խոսվում է Սուրբ Գրքում, և որոնք համապատասխանում են հոգու չար գործերին և նրանց չար հիշողություններին: Քանզի ինչպես որ արդարները, ըստ սրբերի խոսքերի, ժառանգում են լուսավոր տեղեր և հրեշտակային ուրախություն՝ իրենց կատարած գործերի համեմատ, այդպես և մեղավորները ժառանգում են մութ ու խավար տեղեր՝ լի ահ ու սարսափով: Քանզի ի՞նչն է առավել ահարկու և չարաբաստիկ, քան այն վայրը, որտեղ բնակվում են դեերը: Եվ ի՞նչն է առավել զարհուրելի, քան այն տանջանքները, որին նրանք պիտի դատապարվեն: Սակայն մեղավորները նույնպես պիտի տանջվեն հենց այս դեերի հետ, ինչպես ասում է Քրիստոս. «Գնացե՛ք Ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթ. 25; 41): Եվ առավել սարսափելի է այն, ինչի մասին ասում է Հովհաննես Ոսկեբերանը. «Եթե չհոսեր էլ կրակե գետը և չներկայանային ահավոր հրեշտակները, այլ միայն բոլոր մարդկանց կանչեին դատաստանի, և ոմանք, գովասանքի արժանանալով, փառավորվեին, իսկ մյուսները հեռացվեին անպատվությամբ, որպեսզի չտեսնեն Աստծո փառքը, ապա այդպիսի ամոթով և անարգանքով պատժվելը և այդչա՛փ բարիքներից զրկվելու վիշտը արդյոք առավել սարսափելի չէ՞ր լինի ամեն տեսակ գեհեններից»: Այնժամ հենց միայն խղճի հանդիմանությունը, և հենց

միայն կատարածի մասին հիշողությունը, ինչպես մենք վերը ասացինք, (կլինեն) առավել անտանելի, քան անթիվ և աննկարագրելի տանջանքները: Քանզի հոգիները, ինչպես ասում են հայրերը, հիշում են ամեն ինչ, ինչ որ եղել է այստեղ՝ և՛ խոսքերը, և՛ գործերը, և՛ մտքերը, և սրանցից ոչ մեկը չեն կարող մոռանալ այնժամ: Իսկ սաղմոսում ասվածը, թե՛ «Երբ դուրս գա նրանց հոգին, նրանք կրկին հող կդառնան, և նույն օրը նրանց բոլոր մտածումները կանհետանան» (Սղմ. 145; 4), ասվում է այս ժամանակի մտածումների մասին, այսինքն՝ շինությունների, ունեցվածքի, ծնողների, երեխաների և ամեն տեսակ տուրևառությունների մասին: Այս բոլորը, հիրավի, այն պահից իսկ, երբ հոգին դուրս է գալիս մարմնից, անհետանում են, և սրանցից ոչ մեկի մասին նա այդ ժամանակ չի հիշում և չի հոգում: Իսկ ինչ-որ նա գործել է՝ առաքինությունների կամ կրքերի հետ կապված, ամեն բան հիշում է, և սրանցից ոչ մեկը իր համար չի անհետանում, այլ եթե մարդ ինչ-որ մեկին օգուտ է տվել, կամ ինքն է ստացել այն որևէ մեկից, ապա նա մշտապես հիշում է նրանից ստացած օգուտը և իր կողմից նրա հանդեպ ցուցաբերածը: Նմանապես, եթե որևէ մեկից վնաս է կրել, կամ եթե ինքն է որևէ մեկին վնաս պատճառել, ապա մշտապես հիշում է թե՛ իրեն վնասողին և թե՛ իրենից տուժածին: Եվ ոչինչ, ինչպես ես ասացի, չի մոռանում հոգին այն ամենից, ինչ որ նա գործել է այս աշխարհում, այլ ամեն բան հիշում է մարմնից դուրս գալու ժամանակ, և ընդ որում ավելի լավ և ավելի հստակ, իբրև այս հողեղեն մարմնից ազատագրված:

Մի անգամ մենք խոսում էինք այս մասին մի ծերի հետ, և ծերն ասաց, որ հոգին մարմնից դուրս գալու ժամանակ հիշում է կրքերը և մեղքերը, որոնք նա գործել է, և դեմքերը, որոնց հետ գործել է դրանք: Իսկ ես ասացի նրան՝ միգուցե, դա այնքան էլ այդպես չէ. իհարկե, որևէ մեղքի հանդեպ սովորություն

ունենալով՝ անշուշտ կմտաբերի այն: Մենք երկար վիճեցինք այդ հարցի շուրջ՝ ցանկանալով պարզաբանել այն, սակայն ծերը չհամաձայնվեց ինձ հետ, ասելով, որ հոգին հիշում է մեղքի և՛ կերպը, և՛ տեղը, և՛ հենց այն դեմքը, որի հետ նա մեղանչել է: Եվ, իսկապես, եթե դա այդպես է, ապա մեզ սպառնում է էլ ավելի ծանր և դաժան վախճան, եթե ուշադիր չլինենք մեր հանդեպ: Դրա համար էլ ես ձեզ ասում եմ. ջանացե՛ք ձեր մեջ մշակել բարի խորհուրդներ, որպեսզի դրանք գտնեք այնտեղ, քանզի ինչ որ մարդ ունի այստեղ, այն դուրս է գալիս իր հետ (այստեղից), և այդ նույնը նա կունենա նաև այնտեղ: Հո՞գ տանենք, եղբայրներ՛ր, որպեսզի ազատվենք այդպիսի պատուհասից, ջանք թափենք սրա համար, և Աստված կողորմի մեզ, քանզի Նա է «հույսը երկրի բոլոր ծագերի և հեռավոր ծովաբնակների» (Սղմ. 64; 6): Երկրի ծագերի բնակիչները նրանք են, ովքեր գտնվում են վերջնական չարության մեջ, իսկ հեռավոր ծովաբնակները նրանք են, ովքեր գտնվում են ծայր աստիճան անմտության մեջ. սակայն Քրիստոս ապավենն է նաև այդպիսիների: Հարկավոր է մի փոքր ջանք. ջանա՛նք, որպեսզի ողորմություն գտնենք:

Եթե մեկը արտ ունենա և այն մատնի անհոգություն, ապա այնտեղ կբուսնեն փուշ ու տատասկ. և որքան նա առավել անհոգ լինի նրա հանդեպ, մի՞թե այնքան առավել այն չի լցվի փուշ ու տատասկով: Իսկ երբ նա գա մաքրելու արտը, մի՞թե դրանք գերաճած լինելով՝ առավել չեն արյունոտի նրա ձեռքերը, երբ նա կամենա արմատախիլ անել այն մոլախոտերը, որոնց նա թույլ էր տվել աճել իր անհոգության ժամանակ: Քանզի անհնար է մարդուն չհնձել այն, ինչ որ նա ցանել է: Իսկ ով ցանկանում է մաքրել իր արտը, նա պետք է նախ և առաջ կատարելապես արմատախիլ անի ողջ մոլախոտերը, քանզի եթե նա կատարելապես արմատախիլ չանի դրանց բոլոր արմատները,

ըր, այլ միայն վերևից պոկի, ապա դրանք վերստին կաճեն: Եվ այսպես, ինչպես ես ասացի, հարկավոր է դուրս քաշել դրանց բուն արմատը, և երբ նա կատարելապես մաքրի արտը մոլախոտերից, փուշ ու տատասկից և նմանօրինակ բաներից, ապա պետք է այն հերկել, ցանել և այդ կերպով մշակել. և երբ այն արդեն լավ մշակված լինի, այնժամ պետք է ցանել բարի սերմը: Քանզի եթե նա, այդպես մաքրելուց հետո, արտը պարապ թողնի, ապա նորից մոլախոտ կաճի, և, գտնելով փափուկ և պարարտ հող (մաքրման հետևանքով), իր արմատները ավելի խորը կգցի և առավել կամրապնդվի և կբազմանա արտի մեջ: Այդպես է լինում նաև հոգու հետ. սկզբից պետք է հատել հին մարդու բոլոր կրքերը և չար սովորությունները, որոնք նա ունի: Եվ սուրբ Բարսեղն է ասել. «Փոքր սխրանք չէ՝ հաղթահարել սովորությունը, քանզի սովորությունը, երկար ժամանակ ամրապնդվելով, հաճախ ստանում է բնավորութան ուժ»:

Եվ այսպես, պետք է ճգնել, ինչպես ես ասացի, չար սովորությունների և կրքերի դեմ, և ոչ միայն կրքերի դեմ, այլև նրանց պատճառների դեմ, որոնք բուն արմատներն են, քանզի եթե դուրս չքաշվեն արմատները, ապա փշերը անխուսափելիորեն վերստին կաճեն, մանավանդ, որ որոշ կրքեր ոչինչ չեն կարող անել, եթե մարդը չհատի դրանց պատճառները: Այսպես, նախանձը ինքնին ոչինչ է, սակայն ունի որոշ պատճառներ, որոնց թվում է նաև փառասիրությունը, քանզի ով ցանկանում է փառավորվել, նա նախանձում է փառավորվածին կամ գերապատվելիին: Նմանապես և բարկությունը առաջանում է զանազան պատճառներից, հատկապես հեշտասիրությունից: Այս մասին հիշատակում է նաև Եվագրոսը, պատմելով, որ մի ոմն սուրբ ասել է. «Հենց այն բանի համար եմ մերժում հաճույքները, որպեսզի հատեմ դուրաբորբոքություն պատճառները»: Եվ բոլոր հայրերն են ասում, որ յուրաքանչյուր կիրք

ծնունդ է առնում այս երեքից՝ փառասիրությունից, արծաթասիրությունից և հեշտասիրությունից, ինչպես հաճախ եմ ձեզ ասել: Եվ արդ, պարտ է ոչ միայն հատել կրքերը, այլև դրանց պատճառները, հետո լավ պարարտացնել սեփական վարքը ապաշխարությունից և լացով, և այնժամ նոր սկսել ցանել բարի սերմը, որը հենց բարի գործերն են. ինչպես մենք ասացինք արտի վերաբերյալ, որ եթե այն մաքրելուց և մշակելուց հետո նրանում չցանեն բարի սերմը, ապա կաճի մոլախոտ և, գտնելով փափուկ և փխրուն հող (մաքրման հետևանքով), ավելի խորը կարմատավորվի նրա մեջ. այդպես է լինում նաև մարդու հետ: Եթե նա, ուղղելով իր վարքը և ապաշխարելով իր նախկին գործերի համար, չսկսի հոգալ բարիք գործելու և առաքինություններ ձեռք բերելու մասին, ապա նրա վրա կկատարվի Ավետարանում ասվածը. «Սակայն պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջրդի վայրերում, հանգիստ է որոնում և չի գտնում: Այն ժամանակ ասում է՝ դառնամ իմ տունը, որտեղից դուրս եկա, և գալիս է ու այն գտնում դատարկ՝ մաքրված ու կարգի բերված: Այն ժամանակ գնում և վերցնում է իր հետ իրենից ավելի չար յոթը այլ ոգիներ և մտնում բնակվում է այնտեղ. և այդ մարդու վերջը լինում է ավելի վատ, քան առաջ էր. այսպես պիտի լինի և այս չար սերնդին» (Մատթ. 12; 43): Քանզի հնարավոր չէ, որ հոգին լինի միևնույն վիճակում, այլ նա մշտապես առաջադիմում է կամ լավի, կամ վատի մեջ: Ուստի ամեն ոք, որ ցանկանում է փրկվել, պետք է ոչ միայն չարիք չգործի, այլև պարտավոր է բարիք գործել, ինչպես ասված է սաղմոսում. «Խուսափի՛ր չարից և գործի՛ր բարին», չի ասված միայն՝ խուսափի՛ր չարից, այլև՝ գործի՛ր բարին: Օրինակ՝ եթե ինչ-որ մեկը սովոր է վիրավորել, ապա նա պետք է ոչ միայն չվիրավորի, այլև ճիշտ վարվի. եթե նա շնացող է եղել, ապա նա պետք է ոչ միայն չտրվի շնություն, այլև լինի ժուժկալ, եթե

բարկացկոտ է եղել, պետք է ոչ միայն չբարկանա, այլև ձեռք բերի հեզություն. եթե մեկը հպարտացել է, ապա նա պետք է ոչ միայն չհպարտանա, այլև խոնարհվի: Եվ հենց սա էլ նշանակում է. «Խուսափի՛ր չարից և գործի՛ր բարին»: Քանզի ամեն մի կիրք ունի իրեն հակադիր առաքինությունը. հպարտությունը՝ խոնարհամտությունը, արծաթասիրությունը՝ ողորմությունը, շնությունը՝ ժուժկալությունը, փոքրոգությունը՝ համբերությունը, գայրութը՝ հեզությունը, ատելությունը՝ սերը, և մի խոսքով, յուրաքանչյուր կիրք, ինչպես ասացի, ունի իրեն հակադիր առաքինությունը:

Այս մասին ես ձեզ բազմիցս ասել եմ: Եվ ինչպես որ մենք դուրս վռնդեցինք առաքինությունները և նրանց փոխարեն ներս ընդունեցինք կրքերը, այսպես էլ մենք պետք է ջանանք ոչ միայն դուրս վռնդել կրքերը, այլև ներս ընդունել առաքինությունները և վերահաստատել դրանք իրենց տեղերում, որովհետև մենք ունենք բնական կերպով Աստծո կողմից մեզ տրված առաքինություններ: Քանզի երբ Աստված ստեղծեց մարդուն, Նա սերմանեց նրա մեջ առաքինություններ, ինչպես որ ասաց. «Մարդ ստեղծեցք Մեր պատկերով և նմանությունից», (Ծննդ. 2; 26) Ասված է՝ մեր պատկերով, քանի որ Աստված հոգին ստեղծեց անմահ և ինքնիշխան, իսկ՝ նմանությունից՝ վերաբերվում է առաքինություններին: Քանզի Տերը ասում է. «Գթասիրտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկ. 6; 36), և մի ուրիշ տեղ ասում է. «Սուրբ եղեք, քանի որ Ես սուրբ եմ» (Ա Պետ. 1; 16): Նմանապես և առաքյալն է ասում. «Միմյանց հետ եղե՛ք քաղցր, գթած» (Եփես. 4; 32): Եվ սաղմոսում է ասված. «Տերը քաղցր է բոլորի հանդեպ» (Սղմ. 144; 9) և այլն. ահա թե ինչ է նշանակում նմանությունից: Հետևաբար, Աստված իրապես մեզ տվել է առաքինություններ: Իսկ կրքերը ըստ էության մեզ չեն պատկանում, քանզի նրանք նույնիսկ չունեն ո՛չ էություն

և ո՛չ կազմութիւն, այլ ինչպես որ խավարը ըստ էութեան չունի կազմութիւն, այլ օղի վիճակն է, ինչպես ասում է սուրբ Բարսեղը, այդպես էլ կրթերը (մեզ համար բնական չեն), այլ հոգին, հեշտասիրութեան պատճառով շեղվելով և խոտորվելով առաքինութիւններից, գետեղում է իր մեջ կրթերը և նրանց զորացնում է իր դեմ: Դրա համար էլ մեզ հարկավոր է, ինչպես ասված է արտի վերաբերյալ, կատարելապես վերջացնելով քաղհանը՝ իսկույն ցանել բարի սերմը, որպեսզի այն բարի պտուղ բերի:

Նմանապես և իր արտում սերմանողը, դցելով սերմը, պետք է ծածկի և խորացնի այն հողի մեջ, այլապես կգան թռչունները, կհափշտակեն, և այն կոչնչանա, իսկ ծածկելով այն, սերմնացանը պետք է սպասի Աստծո ողորմութեանը, մինչև որ Աստված անձրև ուղարկի, և սերմը ծլարձակի: Թեկուզև հողագործը անչափ տքնի մաքրելու, մշակելու և ցանելու վրա, սակայն եթե Աստված անձրև չուղարկի նրա սերմանածի վրա, ապա նրա ամբողջ չարչարանքը իզուր կլինի: Այդպես էլ մենք, եթե մի բարի բան էլ անում ենք, ապա պետք է այն ծածկենք խոնարհամտութեամբ և Աստծո առջև դնենք մեր տկարութիւնը՝ աղոթելով Նրան, որպեսզի Նա խնամածի մեր աշխատանքը, այլապես այն ընդունայն կլինի: Երբեմն անձրևից հետո էլ դառձյալ, երբ սերմն արդեն ծլել է, եթե անձրևը ժամանակ առ ժամանակ չոռոգի այն, ծիլերը կչորանան և կոչնչանան, քանզի և՛ սերմերին է հարկավոր անձրև, և՛ ժամանակ առ ժամանակ նաև ծիլերին, մինչև որ նրանք ամրապնդվեն, սակայն այդ ժամանակ էլ չի կարելի անհոգ լինել: Երբեմն այն բանից հետո էլ, երբ այն աճում և դառնում է հասկ, պատահում է, որ թրթուռները կամ կարկուտը ոչնչացնում են հասկը: Այդպես է պատահում նաև հոգու հետ. երբ մեկը ջանում է մաքրել այն բոլոր վերջ հիշատակված կրթերից և աշխատում է (ձեռք բերել) բոլոր առաքի-

նութիւնները, ապա նա պետք է մշտապես ապավինի Աստծո ողորմութեանը և Աստծո հովանավորութեանը, որպեսզի չլքվի (Նրա կողմից) և չկործանվի: Քանզի, ինչպես ասացինք սերմի մասին, այն բանից հետո էլ, երբ այն ծլում, աճում, պտուղ է տալիս, եթե ժամանակ առ ժամանակ անձրևը նրան չոռոգի, այն կչորանա և կոչնչանա: Այդպես է լինում նաև մարդու հետ. այդքա՛ն տքնելուց հետո էլ, եթե Աստված թեկուզ կարճ ժամանակով նրանից վերցնի իր հովանավորութիւնը և թողնի նրան, ապա նա կկործանվի: Իսկ Աստված մարդուն լքում է այն ժամանակ, երբ նա իր կարգավորութեանը հակառակ ինչ-որ բան է անում, օրինակ՝ եթե մեկը երկյուղած է եղել և շեղվում է դեպի անկարգ կյանք, կամ խոնարհ է եղել և դառնում է անպատկառ: Եվ Աստված ոչ այնքան արատավոր կյանք վարողին է լքում, երբ նա անկարգ է ապրում, կամ անպատկառին, երբ նա հպարտանում է, որքան Նա լքում է երկյուղածին, երբ սա անիրավութիւն է անում, կամ խոնարհին, երբ սա հպարտանում է. հենց սա է նշանակում մեղանչել Նրա կարգավորութեան դեմ, և հենց սա է լքման պատճառը: Այս իսկ պատճառով սուրբ Բարսեղը այլ կերպ է դատում երկյուղածի մեղքը, և այլ կերպ՝ մեղավորինը: Իսկ երբ մեկը իրեն պահում է նաև սրանից, ապա պետք է ուշադիր հետևի, որ իր գործած թեկուզ փոքրիկ բարիքը չլինի փառասիրութիւնից, կամ մարդահաճութիւնից, կամ ինչ-որ մի այլ մարդկային դրդապատճառից (մղված), որպեսզի այս փոքրը չկործանի այն ամենը, ինչ որ նա արել է, ինչպես մենք ասացինք թրթուռների, կարկուտի և նման այլ բաների մասին:

Դարձյալ, երբ հասկը արտում ոչ մի վնաս չի կրում, այլ պահպանվում է մինչև հունձքը, նույնիսկ և այդ ժամանակ հողագործը չի կարող անհոգ լինել: Քանզի պատահում է, որ այն բանից հետո էլ, երբ ինչ-որ մեկը հնձում է իր արտը և ավարտում է իր բոլոր աշխատանքները, գալիս է մի չար մարդ և,

ատելությունից մղված, կրակ է դնում այս (հավաքած) բերքի տակ և ոչնչացնում է ողջ բերքը և նրա չարչարանքը: Դրա համար մինչև հողագործը չհամոզվի, որ ինքը լավ հավաքել է իր բերքը և ածել այն ամբարների մեջ, նա չի կարող անհոգ լինել: Այդպես էլ մարդը, երբ նա հասցնում է ազատվել այն ամենից, ինչի մասին որ ասացինք, նույնիսկ և այդ ժամանակ չպետք է անհոգ լինի: Քանզի պատահում է, որ այս ամենից հետո էլ, սատանան առիթ է գտնում նրան գայթակղելու կա՛մ ինքնաարդարացմամբ, կա՛մ մեծամտությունամբ, կա՛մ անհավատությունամբ, կա՛մ չար ինքնակամությունամբ, և ոչ միայն կործանում է նրա ամբողջ տքնությունն ու չարչարանքը, այլև հեռացնում է նրան Աստծուց. և ինչին որ չկարողացավ հասնել գործի միջոցով, այն իրագործում է ընդամենը մի խորհրդի միջոցով, քանզի պատահում է, որ միայն մի խորհուրդն էլ կարողանում է մարդուն հեռացնել Աստծուց, երբ մարդը փութով ընդունում է այն և ենթարկվում նրան: Ուստի իսկապես փրկվել ցանկացողը չպետք է անհոգ լինի մինչև իր վերջին շունչը: Եվ այսպես, հարկավոր է բազում տքնություն և խնամք և մշտական աղոթք առ Աստված, որպեսզի Նա պահպանի և փրկի մեզ Իր շնորհով՝ ի փառս Իր սուրբ անվան: Ամեն:

## ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ԿՐԵԼ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՌԱՆՅ ԽՈՒՎՔԻ

13 -րդ ուսուցում

Լավ է ասել արքա Պիմենը, որ վանականի առաջադիմությունը ի հայտ է գալիս փորձությունների մեջ, քանզի վանականը, որն իսկապես նվիրվում է «Տիրոջը ծառայելու», պետք է, ինչպես ասում է Իմաստունը, «**իր անձը փորձությունների պատրաստի**» (Սիրաք 2; 1), որպեսզի երբեք չզարմանա և չխուռովի ոչնչից, որ պատահում է իր հետ, հավատալով, որ ոչինչ չի լինում առանց Աստծո նախախնամություն: Իսկ ինչում որ Աստծո նախախնամությունը կա, այն լիովին բարի է և ծառայում է հոգու օգտին, քանզի այն ամենը, ինչ որ անում է մեզ հետ Աստված, Նա անում է մեր օգտի համար՝ սիրելով և զթալով մեզ: Իսկ մենք պարտավոր ենք, ինչպես որ ասաց առաքյալը, «**ամեն ինչի համար գոհություն հայտնել**» (Եփես. 5; 20) Նրա բարերարությունը և երբեք չտրտմել և չվհաստվել մեզ հետ պատահածի համար, այլ ամեն բան, որ մեզ հետ լինում է, ընդունել առանց խռովքի՝ խոնարհամտությամբ և Աստծուն ապավինելով, հավատալով, ինչպես ասացի, որ այն ամենը, ինչ որ մեզ հետ անում է Աստված, Նա անում է ըստ Իր բարերարություն՝ սիրելով մեզ, ամեն բան լավ է անում, և որ այն չի կարող այլ կերպ լավ լինել, եթե ոչ՝ այս կերպով: Աստված թող ողորմի մեզ:

Եթե մեկը ունի բարեկամ և վստահ է, որ նա սիրում է իրեն, ապա եթե նրանից ինչ-որ բան էլ կրի, մինչև անգամ և ծանր, կմտածի, որ նա այդ արեց իր հանդեպ ունեցած սիրուց, և երբեք չի հավատա իր բարեկամի մասին, որ նա կամեցել է վնասել իրեն: Առավել ևս մենք պետք է այդպես մտածենք Աստծո մասին, Ով ստեղծել է մեզ և անգոյությունից կոչել է գոյություն, մարմնացել է հանուն մեզ և մեռել է մեզ համար, և որ Նա ամեն



բան անում է ըստ Իր բարերարության և սիրո: Բարեկամի մասին մեկը կարող է մտածել՝ նա այդ անում է՝ ինձ սիրելով և խղճալով, սակայն նա չունի այնքան խոհեմություն, որպեսզի կարողանա լավ կարգավորել ինձ վերաբերող այդ բանը, և այդ պատճառով էլ պատահում է, որ նա չուզենալով վնասում է ինձ: Աստծո մասին մենք այս բանը չենք կարող ասել, քանի որ Նա է իմաստություն աղբյուրը, գիտի այն ամեն, ինչ որ օգտակար է մեզ, և դրան համապատասխան կարգավորում է մեզ վերաբերող ամեն բան, մինչև իսկ ամենաչնչինը: Դարձյալ բարեկամի մասին կարելի է ասել, որ նա թեպետ սիրում և խղճում է մեզ և (բավականին) խելամիտ է մեզ վերաբերող բաները կարգավորելու հարցում, սակայն ի գորու չէ մեզ օգնել այն բանում, ինչում որ նա մտածում է մեզ օգտակար լինել: Սակայն Աստծո մասին ա՛յս էլ չի կարելի ասել, քանզի Նրան ամեն բան հնարավոր է, և Նրա համար չկա ոչինչ անհնար: Եվ այսպես, մենք Աստծո մասին գիտենք, որ Նա սիրում և խնայում է Իր արարածներին, որ Նա իմաստություն աղբյուր է և գիտի՝ ինչպես կարգավորել մեզ վերաբերող բաները, և որ Նրան չկա ոչինչ անհնար, այլ ամեն բան ծառայում է Նրա կամքին: Նմանապես մենք պետք է գիտենանք, որ այն ամենը, ինչ որ Նա անում է, անում է մեր օգտի համար, և պարտավոր ենք ընդունել այն, վերը ասվածի համաձայն, գոհունակությամբ, ինչպես Բարերարից և բարեգութ Տիրոջից, թեկուզև այն վշտալից լինի: Քանզի ամեն բան լինում է ըստ արդար դատաստանի, և Աստված, որ այդչա՛փ ողորմած է, չի արհամարհում մինչև իսկ մեր ամենափոքր վիշտը: Սակայն հաճախ պատահում է, որ մեկը տարակուսում է՝ ներքուստ ասելով. «Եթե մեկը փորձություն մեջ մեղանչի վշտից, ապա ինչպե՞ս կարող է նա մտածել, որ այն ծառայում է հօգուտ իրեն»: Մենք լուրջ այն պատճառով ենք մեղանչում փորձության մեջ, որ անհամբեր ենք և չենք ուզում մի փոքր վիշտ կրել, կամ մեր կամ-

քին հակառակ ինչ-որ բան տանել, մինչդեռ Աստված մեր (փորձություն) չի տալիս մեզ, ինչպես ասում է առաքյալը. «Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել» (Ա. Կորնթ. 10; 13): Բայց մենք համբերություն չունենք, չենք ուզում կրել անգամ իսկ ամենափոքրը, չենք ջանում խոնարհությամբ ինչ-որ բան ընդունել, դրա համար էլ նեղվում ենք, և որքան ջանում ենք խույս տալ փորձանքներից, այնքան առավել տանջվում ենք նրանցից, հյուժվում ենք և չենք կարողանում նրանցից ազատվել: Նրանք, ովքեր տիրապետում են լողալու արվեստին և անհրաժեշտության դեպքում լողում են ծովում, ապա երբ նրանց վրա ալիք է բարձրանում, նրանք խոնարհվում են ալիքի տակ, մինչև որ այն անցնի, և այդ կերպով անվնաս շարունակում են լողալ: Իսկ երբ կամենում են հակառակվել ալիքին, ապա այն նրանց նետում ու քշում է հեռավոր տեղեր: Եվ երբ նրանք կրկին շարունակում են լողալ, բարձրանում է նրանց վրա մի ուրիշ ալիք, և եթե նրանք սրան էլ են հակառակվում, ապա այն նույնպես նրանց հրում ու նետում է հեռու, և նրանք միայն հոգնամաշ են լինում առանց որևէ օգուտի: Իսկ եթե, ինչպես ես ասացի, նրանք խոնարհվում ու սուզվում են ալիքի տակ, ապա այն անցնում է նրանց կողքով՝ առանց նրանց վնասելու, և նրանք շարունակում են լողալ, որքան ուզում են, և կատարում են իրենց գործը: Այդպես է պատահում նաև փորձության ժամանակ, եթե մեկը փորձությունը կրում է համբերությամբ և խոնարհությամբ, այն անցնում է նրա համար առանց վնասի, իսկ եթե նա վհատվի, խռովվի, մեղադրի յուրաքանչյուրին, ապա նա միայն կծանրացնի իրեն՝ հարուցելով իր վրա փորձություններ, և բացարձակ ոչ մի օգուտ չի ստանա, այլ միայն կվնասի իրեն. մինչդեռ փորձությունները օգուտ են բերում նրան, ով կրում է դրանք առանց խռովքի: Եթե նույնիսկ կիրքն

էլ անհանգստացնի մեզ, ապա մենք չպետք է խռովվենք դրանից, քանզի խռովվելը (այն ժամանակ), երբ մեզ անհանգստացնում է կիրքը, անմտության և հպարտության գործ է, և առաջանում է այն բանից, որ մենք չենք ճանաչում մեր հոգու կարգավիճակը, և խուսափում ենք ջանքերից, ինչպես ասել են հայրերը: Դրա համար էլ մենք չենք առաջադիմում, որ չենք ճանաչում մեր չափը և չունենք համբերություն մեր կողմից ստանձնած գործերի մեջ, այլ առանց տքնելու ուզում ենք առաքինություն ձեռք բերել: Քանզի ինչո՞ւ է զայրանում կրքոտը, երբ իրեն անհանգստացնում է կիրքը: Ինչո՞ւ է խռովվում: Դո՞ւ ես այն գոյացրել, կրում ես այն քո մեջ և դեռ խռովվո՞ւմ ես: Ընդունել ես նրա գրավները և ասում ես՝ «ինչո՞ւ է այն անհանգստացնում ինձ»: Լավ է համբերե՞րես, ճգնես և աղոթես Աստծուն, քանզի հնարավոր չէ, որպեսզի նա, ով գործադրում է կրքերը, նրանցից վշտեր չունենա: Նրանց անոթները, ինչպես ասում է աբբա Սիսոն, գտնվում են մեր ներսում, տո՛ւր նրանց գրավները, և նրանք կհեռանան քեզանից: Անոթներ է նա անվանում կրքերի պատճառները, քանի որ մենք սիրեցինք և գործադրեցինք դրանք, ապա և անհնար է մեզ չգերվել կրքոտ խորհուրդներին, որոնք բռնադատում են մեզ, մեր կամքին հակառակ, ի գործ դնել կրքերը, որովհետև մենք կամավոր մեզ հանձնեցինք նրանց ձեռքը: Սա է նշանակում մարգարեի կողմից ասվածը Եփրեմի մասին (Օս. 5; 11), որը «գրկեց իր թշնամուն», այսինքն՝ իր խիղճը, և «տանակոխ արեց արդարությունը», դարձավ դեպի Եգիպտոս և բռնություն գերվեց ասորեստանցիների կողմից: Եգիպտոս հայրերը անվանում են մարմնավոր կամքը, որը մեզ մղում է դեպի մարմնավոր հանգիստ և ուսուցանում է միտքը դարձնել դեպի մարմնավոր կրքերը: Իսկ ասորեստանցիներ անվանում են կրքոտ խորհուրդները, որոնք խռովում և հուզում են միտքը և լցնում են նրան անմաքուր կուռքերով, և

բռնի ուժով, կամքին հակառակ, ներքաշում են նրան մեղք գործելու մեջ: Եվ այսպես, եթե մեկը կամավոր կերպով տրվում է մարմնավոր հեշտությունը, ապա նա իր կամքին հակառակ ստիպված է լինում գնալ Ասորեստան և ծառայել Նաբուգոդոնոսորին: Իմանալով այս՝ մարգարեն կարեկցանքով ասում է նրանց. «Մի՛ մտեք Եգիպտոս»: Ի՞նչ եք անում, թշվառնե՛ր, խոնարհվեցե՛ք (գոնե) մի փոքր, խոնարհեցրե՛ք «ձեր պարանոցները, ծառայեցե՛ք բաբելացիների արքային և բնակվեցե՛ք ձեր հայրերի երկրում» (Եր. 42; 19, 27; 12): Հետո մխիթարում է նրանց՝ ասելով. «Մի՛ վախեցեք բաբելացիների արքայից, քանզի Աստված մեզ հետ է, որպեսզի փրկի մեզ և ազատի նրա ձեռքից» (Եր. 42; 11): Հետո կանխավ ասում է այն վշտերի մասին, որոնք նրանց կհասնեն, եթե նրանք չհնազանդվեն Աստծուն. «Եթե դուք երեսներդ շուռ տաք ու մտնեք Եգիպտոս, -ասում եմ, -կլինեք անապատում, վտարանդի, նզովված ու նախատված» (Եր. 42; 15): Սակայն նրանք պատասխանում են նրան. «Չենք բնակվի այս երկրում և չենք անսա մեր Տեր Աստծո ձայնին, այլ կգնանք եգիպտացիների երկիրը» (Եր. 42; 13): Եվ իրոք նրանք գնացին և կամավոր ծառայեցին Փարավոնին, իսկ հետո բռնի տարվեցին Ասորեստան և ծառայեցին ասորեստանցիներին՝ արդեն ոչ իրենց կամքով:

Խորամո՛ւխ եղեք (նրանում), ինչ որ ձեզ ասում եմ. նախքան որևէ մեկը կսկսի ի գործ դնել իր կրքերը, թեկուզև ըմբոստանան էլ նրա դեմ խորհուրդները, նա տակավին գտնվում է իր քաղաքում, նա ազատ է և իրեն որպես օգնական ունի Աստծուն: Եվ իրոք, եթե նա խոնարհվի Աստծո առջև, կրի վշտերի և փորձությունների լուծը գոհունակություն է մի փոքր պայքարի, ապա Աստծո օգնությունը կազատի նրան: Իսկ եթե նա խուսա տա չարչարանքներից և տրվի մարմնավոր հանգստին կամ հեշտությունը, այնժամ բռնություն է ստիպողաբար կտարվի ասո-

րեստանցիները երկիր և ակամայից, կծառայի նրանց: Ապա մարգարեն ասում է նրանց. «Աղոթեցե՛ք Նաբուգոդոնոսորի կյանքի համար, քանզի նրա կյանքով է պայմանավորված ձեր փրկությունը» (Բարուք 1; 11-12): «Աղոթել Նաբուգոդոնոսորի կյանքի համար» նշանակում է, որ մարդ չպետք է վհատվի իրեն պատահած փորձությունից, և չչեղվի նրանից, այլ այն կրի խոնարհություն՝ համարելով, որ ինքը պարտավոր էր կրել այն: Թող նա իրեն անարժան համարի ազատվելու այդ ծանրությունից, սակայն առավել (արժանի) այն բանին, որ փորձությունը շարունակվի և գործնա իր դեմ: Եվ ճանաչում է իրեն մեղավոր, թե չի ճանաչում ներկայումս, նա պետք է հավատա, որ Աստծո մոտ ոչինչ չի լինում առանց դատաստանի կամ անարգարացի, ինչպես ասում էր մի եղբայր՝ վշտանալով և ողբալով այն բանի համար, որ Աստված իրենից վերցրել էր փորձությունը. «Տե՛ր, մի՞թե ես արժանի չեմ գոնե մի փոքր վշտանալու»:

Պատմվում է նաև, որ մի ծերի աշակերտի վրա ցանկասիրություն պատերազմ եկավ, և ծերը, տեսնելով նրա տքնությունն ու ջանքը, ասաց նրան. «Ուզո՞ւմ ես աղոթեմ Աստծուն, որպեսզի Նա թեթևացնի այդ պատերազմը»: Բայց աշակերտը պատասխանեց. «Թեև ես տքնում եմ, հա՛յր, սակայն իմ մեջ տեսնում եմ տքնության պտուղը. արդ, ավելի լավ է աղոթի՛ր Աստծուն, որպեսզի Նա ինձ համբերություն տա»: Այսպիսին են իսկապես փրկվել ցանկացողները. ահա թե ինչ է նշանակում խոնարհությունը կրել փորձության լուծը և աղոթել Նաբուգոդոնոսորի կյանքի համար: Դրա համար էլ մարգարեն ասում է «Նրա կյանքով է պայմանավորված ձեր փրկությունը»: Եղբոր ասածը՝ «Տեսնում եմ իմ մեջ տքնության պտուղը», համանման է ասվածին՝ «Նրա կյանքով է պայմանավորված ձեր փրկությունը», ինչը հաստատում է նաև ծերը՝ ասելով. «Այժմ ես ճանաչեցի, որ դու առաջադիմում ես և գերազանցում ես ինձ»: Քանզի երբ

մարդ ջանադրաբար ճգնում է մեղքի դեմ և սկսում է պայքարել նաև կրքոտ խորհուրդների դեմ, որոնք (ծնվում են) նրա հոգում, ապա նա խոնարհվում է, կոտորվում, ճգնում և, կամաց-կամաց մաքրվելով ճգնությունների վշտերով, գալիս է իր բնական վիճակին: Եվ այսպես, ինչպես մենք արդեն ասացինք, եթե կրքերից փորձվողը խռովվում է, (դա առաջանում է) անմտությունից և հպարտությունից, այլ նա պետք է խոնարհությունը ճանաչի իր չափը և համբերությունը հարատևի աղոթքի մեջ, մինչև որ Աստված ողորմի իրեն: Քանզի եթե մեկը փորձությունների չի ենթարկվում և կրքերից վշտեր չի կրում, այդպիսին չի էլ ջանում այն մասին, թե ինչպես մաքրվի նրանցից: Այս մասին ասում է նաև սաղմոսերգուն. «Մեղավորները՝ բուսնելով ինչպես խոտ, անօրենություն գործողները՝ ծաղկելով, կկործանվեն հավիտյանս հավիտենից» (Սղմ. 91; 8): Խոտի պես բուսնող մեղավորները դրանք կրքոտ խորհուրդներն են, քանզի խոտը թույլ է և ուժ չունի: Հետևաբար, երբ կրքոտ խորհուրդները բուսնում են հոգու մեջ, այնժամ նրանք «ծաղկում են», այսինքն՝ ճանաչվում են «բոլոր անօրենություն գործողները», այսինքն՝ կրքերը, որոնք «կկործանվեն հավիտյանս հավիտենից», քանզի երբ կրքերը ակներև են դառնում ճգնողների համար, (այսինքն՝ բացահայտվում են), ապա դրանք ոչնչացվում են նրանց կողմից: Խորամո՛ւլս եղեք խոսքի հաջորդականության մեջ. սկզբից բուսնում են կրքոտ խորհուրդները, հետո առաջանում են կրքերը և ապա նոր ոչնչացվում են: Այս բոլորը վերաբերում են ճգնողներին, իսկ մենք, որ գործով ենք մեղանչում և մշտապես գործի ենք դնում մեր կրքերը, նույնիսկ չգիտենք էլ, թե երբ են բուսնում կրքոտ խորհուրդները, երբ են առաջանում կրքերը, որպեսզի սկսենք ճգնել նրանց դեմ, այլ մենք, ցած գլորվածներս, դեռ գտնվում ենք Եգիպտոսում՝ զբաղված լինելով փարավոնյան ստորացուցիչ աղյուսաշինությամբ, սակայն

ո՞վ մեզ կօգնի, ծայրահեղ դեպքում, գոնե գիտակցել մեր դառն ստրկութիւնը, որպեսզի խոնարհվենք և սկսենք ողորմութիւն փնտրել:

Երբ իսրայելացիները գտնվում էին Եգիպտոսում և ստրկութիւն մեջ էին Փարավոնի մոտ, այնժամ նրանք աղյուսներ էին պատրաստում, իսկ աղյուս պատրաստողները աշխատելիս միշտ խոնարհվում են ցած և նայում են գետնին. այդպես և Հոգին, եթե նրան տիրում է սատանան, և նա մեղանչում է իրապես, ապա նա ոտնահարում է իր գիտակցութիւնը և չի խորհում հոգևոր բաների շուրջ, այլ մշտապես խորհում է երկրավոր բաների մասին և գործում է երկրայինը: Հետո իսրայելացիները իրենց պատրաստած աղյուսներով Փարավոնի համար կառուցեցին երեք անառիկ քաղաքներ՝ Փիդոն, Ռամես և Ուվն, որ Արեգ քաղաքն է: Դրանք են՝ հեշտասիրութիւնը, փառասիրութիւնը և արծաթասիրութիւնը, որոնցից առաջանում են ամեն տեսակ մեղքեր:

Իսկ երբ Աստված Մովսեսին ուղարկեց նրանց դուրս բերելու Եգիպտոսից և Փարավոնի գերութիւնից, ապա Փարավոնը էլ ավելի ծանրաբեռնեց նրանց աշխատանքով և ասաց նրանց. «Դուք ծուլ ու անբան մարդիկ եք, դրա համար էլ ասում եք. «Գնանք զոհ մատուցենք մեր Աստծուն» (Ելք 5; 17): Նմանապես և սատանան, երբ տեսնում է, որ Աստված գթասրտորեն է տրամադրված այդ հոգու հանդեպ և պատրաստ է նրան ողորմելու և թեթևացնելու նրան կրքերի բեռից Իր խոսքով, կամ էլ Իր ծառաներից որևէ մեկի միջոցով, այնժամ սատանան էլ ավելի է ծանրացնում նրան կրքերով և ավելի ուժգին է մարտնչում նրա դեմ: Սակայն հայրերը, այս իմանալով, ամրապնդում են մարդուն իրենց ուսուցումով և բնավ թուլ չեն տալիս նրան տրվել վախին: Մեկն ասում է. «Ընկա՞ր, վե՛ր կաց, և եթե դարձյալ ընկնես, դարձյալ վե՛ր կաց» և այլն: Մյուսն էլ նմանապես

ասում է. «Առաքինութիւններ ձեռք բերել ցանկացողների ամբողջութիւնը կայանում է նրանում, որպեսզի չվհատվեն ընկնելիս և չհուսահատվեն, այլ վերստին պայքարեն»: Մի խոսքով, նրանցից յուրաքանչյուրը տարբեր կերպերով՝ մեկն այսպես, մյուսն այնպես, ձեռք են մեկնում ճգնողներին և թշնամուց վիրավորվածներին: Գանգի նրանք այս բանը ընդունել են նաև Սուրբ Գրքից, որն ասում է. «Նա, որ գլորվում է, մի՞թե չի ելնում, կամ նա, որ շեղվում է, հետ չի՞ դառնում» (Երեմ. 8; 4), «Դարձե՛ք Ինձ մոտ, որդիներ՛, և ես կփարատեմ ձեր ցավը» (Երեմ. 3; 22), և նմանօրինակ այլ բաներ:

Երբ Աստծո ձեռքը ծանրացավ Փարավոնի և նրա ծառաների վրա, և նա որոշեց ազատ արձակել իսրայելացիներին, ապա ասաց Մովսեսին. «Գնացե՛ք, պաշտեցե՛ք ձեր Աստծուն, միայն թե ձեր արջառն ու ոչխարը թողե՛ք այստեղ» (Ես. 10; 24), որոնք խորհրդանշում են մտավոր խորհրդածութիւնները, որոնց Փարավոնը կամեցավ տիրանալ՝ հուսալով, որ դրանց միջոցով իսրայելի որդիներին դարձյալ կձգի դեպի իրեն: Մովսեսը պատասխանեց նրան. «Ողջակիզութիւնն ու զոհաբերութիւնն անասունները դու ի՛նքդ մեզ պիտի տաս, որ մատուցենք մեր Տեր Աստծուն: Մեր անասուններն էլ մեզ հետ պիտի գնան, մենք մի կճղակ անգամ չենք թողնելու» (Ելք 10; 25-26): Իսկ երբ Մովսեսը դուրս հանեց իսրայելի որդիներին Եգիպտոսի երկրից և անցկացրեց Կարմիր ծովով, ապա Աստված, կամենալով նրանց բերել այնտեղ, որտեղ կային յոթանասուն արմավենիներ և ջրի տասներկու աղբյուրներ, առաջուց նրանց բերեց Մեռա, որտեղ ժողովուրդը վշտացավ՝ չգտնելով խմելու որևէ բան, քանզի այնտեղի ջուրը դառնահամ էր, և հետո արդեն Մեռայի միջոցով նրանց բերեց յոթանասուն արմավենիների և տասներկու աղբյուրների վայրը: Այդպես էլ Հոգին, երբ իսկապես դադարում է մեղք գործելուց և անցնում է մտավոր ծովով,

ապա նախ պետք է տքնի ճգնությունների և բազում վշտերի մեջ, և այդպես վշտերի միջոցով մտնի սուրբ հանգիստ, քանզի «բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Արքայություն» (Գործք 14; 22): Վշտերը ձգում են Աստծո ողորմությունը դեպի հոգին, նման այն բանին, ինչպես որ քամիները քշում բերում են անձրևը: Եվ ինչպես որ երկարատև անձրևը, ազդելով նուրբ բույսերի վրա, նրանց մեջ նեխում է առաջ բերում և փչացնում է նրանց պտուղը, իսկ քամիները աստիճանաբար չորացնում և ամրացնում են նրանց, այդպես է պատահում նաև հոգու հետ. հեղգությունը, անհոգությունը և հանգիստը թուլացնում և ցրում են նրան, իսկ փորձությունները, ընդհակառակն, ամրացնում և միացնում են Աստծուն, ինչպես որ ասում է մարգարեն. «Տե՛ր, նեղության մեջ Քեզ հիշեցի» (Ես. 33; 2): Դրա համար, ինչպես մենք ասացինք, չպետք է ո՛չ խռովվենք և ո՛չ վհատվենք փորձությունների ժամանակ, այլ հարկավոր է համբերել և գոհանալ վշտերի մեջ և մշտապես աղոթել Աստծուն խոնարհությամբ, որպեսզի Նա ողորմի մեր տկարությունը և պահպանի մեզ ամենայն փորձությունից ի փառս իր սուրբ անվան: Քանզի Նրան է վայել փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս հավիտենից: Ամեն:

## ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՏԱՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

14-րդ ուսուցում

Սուրբ Գիրքը հիշատակում է մանկաբարձների մասին, որոնք կենդանի թողեցին Իսրայելի արական սեռի մանուկներին, քանի որ «մանկաբարձները աստվածավախ էին, նրանք տու՛նտեղ դրեցին» (Ելք 1; 21): Արդոք նյութակա՞ն տների մասին է խոսվում այստեղ: Եվ ի՞նչ իմաստ ունի Աստծո երկյուղով տներ կառուցելը: Ձէ որ մենք հակառակն ենք անում. մեզ սովորեցնում են հանուն Աստծո երկյուղի թողնել երբեմն նաև այն տները, որոնք ունենք: Սուրբ Գիրքը այստեղ նյութական կացարանների մասին է, որ ասում է, այլ հոգևոր տան մասին, որը մարդը կառուցում է իր համար պատվիրանապահությամբ: Սուրբ Գիրքը սրանով մեզ ուսուցանում է, որ Աստծո երկյուղը մղում է հոգուն պահպանելու պատվիրանները, և պատվիրանների միջոցով կառուցվում է հոգևոր տունը: Մենք ևս, եղբայրնե՛ր, ուշադիր լինենք ինքներս մեր հանդեպ, երկյո՛ւղ կրենք Աստուծոց և կառուցենք մեզ համար տներ, որպեսզի պաշտպանություն գտնենք ձմեռ ժամանակ, անձրևների, կայծակներ և որոտների ժամանակ, որովհետև մեծագույն աղետ է կրում ձմռանը տուն չունեցողը: Իսկ ինչպե՞ս է կառուցվում հոգևոր տունը: Նյութական տան կառուցումից մենք կարող ենք ճշգրտորեն սովորել այս գործը: Քանզի ով ուզում է այսպիսի տուն կառուցել, նա պետք է ամեն կողմից այն ամրացնի և չորս կողմից պատեր շարի, այլ ոչ թե միայն մի կողմի մասին հոգա, իսկ մյուսները թողնի անխնամ, այլապես նա ոչ մի օգուտ չի ստանա, այլ իզուր տեղը վատնած կլինի ամեն բան՝ և՛ մտադրությունը, և՛ ծախսերը, և՛ ջանքերը: Այդպես է լինում նաև հոգու պարագային, քանզի այն մարդը, որ ցանկանում է հոգևոր տուն կառուցել, չպետք է անհոգ և անփուլթ լինի այս կառույցի որևէ կողմի

Հանդեպ, այլ հավասարապես և ներդաշնակորեն կառուցի այն: Սա է նշանակում արբա Հովհաննեսի ասածը. «Ես ուզում եմ, որ մարդ ամեն օր ամեն մի առաքինությունից մի փոքր ձեռքբերում ունենա», այլ ոչ թե այնպես, ինչպես որ անում են ոմանք, որոնք, բռնվելով մի առաքինությունից և հարատեւելով նրանում, հենց այդ են միայն կատարում, իսկ մյուսների մասին հոգ չեն տանում: Հնարավոր է, որ այդ առաքինությունը նրանց մոտ կամ սովորություն է, կամ բնական հատկություն, այդ պատճառով էլ նրանց չի անհանգստացնում հակառակ կիրքը, իսկ սրանից զատ նրանք աննկատելիորեն տարվում են այլ կրքերով և նեղվում են նրանցից, սակայն չեն հոգում նրանց մասին, այլ, ընդհակառակն, մտածում են, որ ինչ-որ մեծ բանի տեր են: Այդպիսիք նման են այն մարդուն, որը կառուցում է միայն մեկ պատը և այն կանգնեցնում է որքան հնարավոր է բարձր և, նայելով այդ պատի բարձրությունը, մտածում է, որ ինքը ինչ-որ մեծ բան է կատարել, սակայն չգիտի այն, որ եթե թեկուզ մեկ անգամ փչի քամին, ապա կտապալի այն, քանզի այն կանգնած է միայնակ և կապված չէ մյուս պատերի հետ: Բացի այդ էլ, ոչ ոք չի կարող մի պատով իր համար պատսպարան կառուցել, որովհետև մյուս բոլոր կողմերից այն բաց է: Իհարկե, դա խելամիտ վարմունք չէ, այլ, ընդհակառակն, ով ուզում է իր համար տուն կառուցել և այն իր համար պատսպարան դարձնել, պետք է այն կառուցի բոլոր չորս կողմերից և հաստատի ամեն կողմից: Եվ բացատրեմ ձեզ, թե ինչ կերպով:

Առաջուց պետք է հիմքը գցել, այսինքն՝ հավատը, քանզի «առանց հավատի, ինչպես ասում է առաքյալը, անհնար է հաճելի լինել Աստծուն» (Եբր. 11; 6), և հետո այս հիմքի վրա մարդը պետք է հավասարաչափ կառուցի շենքը. հնագանդություն պատվեր է ստանում, նա պետք է հնագանդության մի քար դնի, եղբոր կողմից դառնություն է հանդիպում, պետք է երկայ-

նամտություն մի քար դնի, ժուժկալություն առիթ է ներկայանում, պետք է ժուժկալության մի քար դնի: Այդպես ամեն մի առաքինությունից, որի համար առիթ է ներկայանում, պետք է մի քար դնել կառուցի մեջ, և այդ կերպով այն կառուցել բոլոր կողմերից՝ (դնելով) մերթ կարեկցանքի քարը, մերթ սեփական կամքից հրաժարվելու քարը, մերթ հեղուկության քարը և այլն: Եվ այս բոլորի հետ մեկտեղ պետք է հոգ տանել համբերության և արիության մասին, քանզի սրանք անկյունաքարերն են, սրանցով է կապակցվում կառույցը, և պատը միանում է պատին, որի պատճառով էլ դրանք չեն թեքվում և չեն զատվում միմյանցից: Առանց համբերության և արիության ոչ ոք չի կարող կատարել և ոչ մի առաքինություն: Քանզի եթե մեկը արիություն չունի իր հոգում, այդպիսին չի կարող և համբերություն ունենալ, իսկ ով համբերություն չունի, նա բացարձակապես ոչինչ չի կարող կատարել: Դրա համար էլ ասված է. «Ձեր համբերությամբ պիտի շահե՛ք ձեր հոգիները» (Ղուկ. 21; 19):

Կառուցողը պետք է նաև ամեն մի քարի վրա շաղախ լցնի, քանզի եթե նա քարը քարի վրա դնի առանց շաղախի, ապա քարերը դուրս կթափվեն, և տունը կփլվի: Շաղախը խոնարհությունն է, որովհետև այն վերցվում է հողից և գտնվում է բոլորի ոտքերի տակ: Իսկ ամեն մի առաքինություն, որ կատարվում է առանց խոնարհության, առաքինություն չէ: Այս մասին ասված է նաև «Հարանց վարքում». «Ինչպես որ հնարավոր չէ նավը կառուցել առանց մեխերի, այնպես էլ հնարավոր չէ փրկվել առանց խոնարհամտության»: Եվ այսպես, յուրաքանչյուր ոք, ինչ բարի բան որ անում է, պետք է անի խոնարհամտությամբ, որպեսզի խոնարհություն պահպանի կատարածը: Տունը պետք է ունենա նաև, այսպես կոչված, ամրակապ, որը (հոգևոր) դատողությունն է. այն հաստատում է կառույցը, միացնում է քարը քարին և կապակցում է պատերը, միևնույն ժամանակ տանը

տալիս է մեծագույն գեղեցկուլթյուն: Իսկ տանիքը սերն է, որը հանդիսանում է առաքինուլթյունների գագաթը, ինչպես որ տանիքը՝ տան գագաթը: Այնուհետև, տանիքի շուրջը բազրիքն է: Ի՞նչ է նշանակում բազրիքը տանիքի շուրջ: Օրենքում գրված է այս մասին. «Նոր տուն կառուցելիս բազրիք կշինես տանիքի շուրջը, որպեսզի երեխաները չընկնեն տանիքից» (Բ Օրինաց 22; 8): Բազրիքը խոնարհուլթյունն է, քանի որ այն պարսպում և պահպանում է բոլոր առաքինուլթյունները: Եվ ինչպես որ ամեն մի առաքինուլթյուն պարտավոր է միացած լինել խոնարհուլթյան հետ, նման այն բանին, որ ամեն մի քարի վրա դրվում է շաղախ, այդպես էլ առաքինուլթյան կատարման համար հարկավոր է խոնարհուլթյուն, քանի որ սրբերը, առաջադիմելով, բնականաբար գալիս են խոնարհուլթյան, ինչպես ես մշտապես ասում եմ ձեզ, որ մարդ որքան ավելի է մերձենում Աստծուն, այնքան ավելի իրեն մեղավոր է տեսնում: Իսկ ովքե՞ր են այն երեխաները, որոնց մասին Օրենքն ասում է՝ որպեսզի նրանք չընկնեն տանիքից: Երեխաները հոգու մեջ եղած խորհուրդներն են, որոնց հարկավոր է պահպանել խոնարհուլթյամբ, որպեսզի նրանք չընկնեն շենքի տանիքից:

Ահա կառույցն ավարտված է. ունի ամրակապ, ունի տանիք, որի մասին մենք ասացինք, որ այն առաքինուլթյունների գագաթն է, ահա և նրան շրջապատող բազրիքը, և մի խոսքով, տունը պատրաստ է: Սակայն նրան հարկավո՞ր է արդյոք էլի մի ինչ-որ բան: Այո, մենք չհիշեցինք ևս մի բանի մասին: Ի՞նչ բան է դա: Այն, որ վարպետը հմուտ լինի, քանի որ եթե նա հմուտ չլինի, ապա մի փոքր կծուի պատը, և տունը վաղ թե ուշ կփլվի: Հմուտ է նա, ով խելամտորեն է կատարում առաքինուլթյունները, քանզի պատահում է, որ մեկը առաքինուլթյան համար ջանք է թափում, սակայն այն պատճառով, որ խելամտորեն չի կատարում, ինքն անձամբ ավերում է այն, կամ մշտապես

փչացնում է գործը և չի կարողանում ավարտի հասցնել այն, այլ կառուցում է և քանդում, մի քար դնում է և հետո հանում է այն, երբեմն էլ դնում է մեկը և հանում է երկուսը: Օրինակ՝ ահա եկավ մի եղբայր և մի վիրավորական կամ տրտմեցնող խոսք ասաց քեզ. եթե դու լուես և խոնարհվես նրա առջև, ապա դու մի քար դրեցիր: Հետո եթե գնաս և պատմես մեկ այլ եղբորը. «Այսինչը նեղացրեց ինձ և ասաց այսինչ և այնինչ բաները, իսկ ես ոչ միայն լուեցի, այլև խոնարհվեցի նրա առջև». ահա դու մի քար դրեցիր և երկու քար հանեցիր: Դարձյալ, մեկը խոնարհվում է՝ ցանկանալով դրանով գովասանք վաստակել, և պարզվում է, որ խոնարհուլթյունը նրանում խառնված է փառասիրուլթյան հետ. սա նշանակում է քարը դնել և այն վերստին հանել: Իսկ ով խելամտորեն է երկրպագուլթյուն անում, նա հաստատ համոզված է, որ ինքը մեղանչել է, և միանգամայն համոզված է, որ ինքն է մեղավոր. ահա թե ինչ է նշանակում խելամտորեն երկրպագուլթյուն անել: Մյուսը լուուլթյուն է պահպանում, սակայն ոչ՝ խոհեմաբար, քանզի նա մտածում է, որ առաքինուլթյուն է գործում, մինչդեռ բնավ չի գործում այն: Իսկ խելամիտ կերպով լուողը մտածում է, որ ինքը արժանի է խոսելու, ինչպես ասել են հայրերը, և հենց սա է խելամտորեն լուելը: Դարձյալ, մեկ ուրիշը չի համարում իրեն (մյուսներից լավը) և մտածում է, որ ինքը ինչ-որ մեծ բան է անում և որ ինքը խոնարհվում է, սակայն չգիտի, որ ինքը ոչինչ էլ չի անում, որովհետև անմտորեն է գործում, իսկ ով խելամտորեն իրեն ուրիշներից լավը չի համարում, այդպիսին մտածում է, որ ինքը ոչինչ է և որ ինքը արժանի է մարդկանց շարքերում լինելու, ինչպես որ իր մասին ասում է աբբա Մովսեսը. «Սևամո՛րթ, դո՛ւ, որ մարդ չես, ինչո՞ւ ես մտնում մարդկանց մեջ»:

Դարձյալ, մեկը ծառայում է հիվանդին, սակայն ծառայում է այն նկատառումով, որպեսզի վարձ ստանա. սա նույնպես խե-

լամիտ չէ: Դրա համար եթե նրա հետ ինչ-որ վշտալից բան պատահի, ապա այն հեշտուկթյամբ կհեռացնի նրան այդ բարի գործից, և նա չի հասնի դրա ավարտին, որովհետև անմտորեն է անում: Իսկ խելամտորեն ծառայողը ծառայում է այն բանի համար, որպեսզի ձեռք բերի ողորմած սիրտ, որպեսզի ձեռք բերի կարեկցանքի զգացում, քանզի ով այսպիսի նպատակ է հետապնդում, ինչ էլ որ նրան պատահի՝ թե՛ վիշտ դրսից, թե՛ հիվանդն ինքը փոքրոգություն ցուցաբերի նրա հանդեպ, նա առանց խռովվելու կկրի այս բոլորը՝ մտահայելով իր նպատակակետին և գիտենալով, որ հիվանդը առավել մեծ բարեգործություն է անում իրեն, քան ինքը՝ հիվանդին: Հավատացե՛ք, որ ով խելամտորեն է ծառայում հիվանդներին, նա ազատվում է և՛ կրքերից, և՛ պայքարներից: Ես գիտեմ մի եղբոր, որն աղտեղի խորհուրդների պատերազմ ուներ և ազատվեց դրանցից նրանով, որ խելամտորեն ծառայեց հիվանդին, որը տառապում էր ջրգողություն: Եվ եվագրն է ասում մի ոմն մեծ ծերի մասին, որ նա եղբայրներից մեկին, որը խռովվում էր գիշերային երազախաբուկթյունից, ազատեց դրանից՝ պատվիրելով նրան պահպանել և ծառայել հիվանդներին, և երբ հարցրին նրան այս մասին, նա ասաց, որ այս կրքերը ոչնչով այնպես չեն մարում, որքան կարեկցանքով:

Նմանապես, եթե մեկը պահպանի և պահում անափառությունը, կամ իր մեջ մտածում է, որ ինքը առաքինություն է գործում, այդպիսին անմտորեն է պահպանում, և այդ իսկ պատճառով հետո սկսում է նախատել իր եղբորը՝ իրեն ինչ-որ մեծ բան կարծելով, և պարզվում է, որ նա ոչ միայն մի քար դրել է և երկուսը հանել, այլև գտնվում է ողջ պատը քանդելու վտանգի մեջ՝ իր եղբորը դատելու պատճառով: Իսկ ով խելամտորեն է պահպանում, այդպիսին չի մտածում, որ ինքը առաքինություն է գործում և չի ուզում, իրեն գովեն որպես պահեցողի, այլ մտա-

ծում է, որ ժուժկալություն միջոցով ձեռք կբերի ողջախոհություն, իսկ սրա միջոցով կգա խոնարհություն, ինչպես հայրերն են ասում. «Խոնարհություն տանող ճանապարհը մարմնավոր ճգնություններն են, եթե խելամտորեն են կատարվում» և այլն: Եվ, մի խոսքով, յուրաքանչյուր առաքինություն մարդը պետք է կատարի այնպիսի խելամտությամբ, որպեսզի այն յուրացնի իրեն և վերածի սովորության, և այդպիսին համարվում է, ինչպես մենք ասացինք, հմուտ վարպետ, շինարար, որ կարող է իր տունը ամուր կառուցել:

Արդ, ով ցանկանում է, Աստծո օգնությամբ, հասնել նման բարի կառույցի, չպետք է ասի, թե առաքինությունները վիթխարի են, և ինքը չի կարող հասնել նրանց, քանզի ով այսպես է ասում, նա կա՛մ չի ապավինում Աստծո օգնությանը, կա՛մ ծուլանում է նվիրել իրեն որևէ բարի (բանի): Անվանեք, ինչպիսի առաքինություն ուզում եք. մենք կքննենք այն, և դուք կտեսնեք, որ մեզանից է կախված այն կատարելը, եթե կամենանք: Այսպես Սուրբ Գիրքն ասում է. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ»: Ուշադրություն մի՛ դարձրու նրա վրա, թե որքան հեռու ես կանգնած այս առաքինությունից, որպեսզի չսկսես սարսափել և ասել՝ ինչպե՞ս կարող եմ սիրել մերձավորին, ինչպես ինքս ինձ: Արդյոք կարո՞ղ եմ հոգ տանել նրա վշտերի մասին, ինչպես՝ իմ սեփականի և հատկապես նրա սրտում թաքցրածների մասին, որոնք չեմ տեսնում և ոչ էլ գիտեմ: Մի՛ տարվիր նման խորհրդածություններով և մի՛ մտածիր, որ առաքինությունը գերազանցում է քո ուժերին և անիրագործելի է, այլ դի՛ր սկիզբը հավատով առ Աստված, ցո՛ւյց տուր նրան քո հոժարակամությունը և ջանասիրությունը և կտեսնես օգնությունը, որ նա քեզ կտա առաքինության կատարման համար: Պատկերացրո՛ւ երկու սանդուղքներ. մեկը դեպի վեր՝ երկինք է բարձրացնում, մյուսը իջեցնում է դժոխք, իսկ դու կանգ-



նած ես գետնի վրա՝ այս երկու սանդուխքների միջև: Մի՛ մտածիր և մի՛ ասա՝ ինչպե՞ս կարող եմ թռչել գետնից և հանկարծ հայտնվել երկնքի բարձունքներում, այսինքն՝ սանդուղքի վերնամասում: Դա անհնարին է, Աստված էլ այդ բանը չի պահանջում քեզանից, այլ զգուշացի՛ր ծայրահեղ դեպքում, որպեսզի չիջնես ցած: Չարիք մի՛ գործիր մերձավորի հանդեպ, մի՛ տրամեցրու նրան, մի՛ չարախոսիր, մի՛ նսեմացրու, մի՛ հանդիմանիր, և այդ կերպով կսկսես կամաց-կամաց նաև բարիք անել եղբորդ՝ մխիթարելով նրան խոսքերով, կարեկցելով նրան, կամ տալով նրան այն, ինչի կարիքը նա ունի: Եվ այսպես, բարձրանալով մի աստիճանից մյուսը, Աստծո օգնությամբ կհասնես նաև սանդուղքի ծայրին: Քանզի, կամաց-կամաց, օգնելով մերձավորին, դու կհասնես այն բանին, որ կսկսես բաղձալ նաև նրա օգուտը, ինչպես որ քոնը, և նրա հաջողությունը, ինչպես որ քոնը: Հենց սա էլ նշանակում է սիրել մերձավորին, ինչպես ինքդ քեզ:

Եթե փնտրենք, կգտնենք, և եթե խնդրենք Աստծուն, ապա Նա կլուսավորի մեզ, քանզի Սուրբ Գրքում ասված է. «**Խնդրեցե՛ք Աստծուց, և Նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ**» (Մատթ. 7; 7): Ասված է՝ «**խնդրեցե՛ք**», այն բանի համար, որպեսզի մենք աղոթքով կանչենք Նրան, իսկ «**փնտրեցեք**» նշանակում է, որպեսզի մենք փորձենք, թե ինչ կերպով է գալիս բուն առաքինությունը, ինչն է նրան բերում, և ինչ պետք է անենք այն ձեռք բերելու համար, այսպես ամենօրյա փորձելը և նշանակում է՝ «**փնտրեցե՛ք և կգտնեք**»: Իսկ բախեցեք նշանակում է կատարել պատվիրանները, քանզի ամեն ոք, ով բախում է, բախում է ձեռքերով, իսկ ձեռքերը խորհրդանշում են գործունեություն: Ուրեմն, մենք պետք է ոչ միայն խնդրենք, այլև փնտրենք և գործենք՝ ջանալով, ինչպես առաքյալն է ասում, «**լինել պատրաստ բոլոր բարի գործերի համար**» (Բ Կորնթ. 9; 8, Բ Տիմ 3; 17): Ի՞նչ է նշանակում լի-

նել պատրաստ: Երբ մեկը ուզում է նավ շինել, ապա նախ և առաջ պատրաստում է նավի համար հարկավոր ամեն բան, մինչև անգամ ամենափոքր մեխերը, ձյուլթը և խծուծը: Նմանապես, երբ կինը ցանկանում է կտավ գործել, ապա նա սկզբից պատրաստում է ամեն բան, մինչև իսկ ամենափոքր թելը. հենց սա է կոչվում պատրաստ լինել, այսինքն՝ պատրաստ ունենալ գործի համար անհրաժեշտ ամեն բան: Մենք ևս նման ձևով պատրաստ լինենք ամեն բարի գործի համար՝ ունենալով Աստծո կամքը խոհեմաբար կատարելու կատարյալ պատրաստակամություն, ինչպես որ Նա է ցանկանում և ինչպես որ Նրան է հաճելի: Ի՞նչ է նշանակում առաքյալի կողմից ասվածը՝ «**Աստծո կամքը բարի է, հաճելի և կատարյալ**» (Հռմ. 12; 2): Ինչ որ լինում է, լինում է կա՛մ Աստծո կամեցողությամբ, կա՛մ թույլտվությամբ, ինչպես ասված է մարգարեի մոտ. «**Ես եմ, որ հաստատեցի լույսը ու ստեղծեցի խավարը**» (Ես. 45; 7): Եվ դարձյալ. «**Քաղաքում չարիք կպատահի՞, եթե Տերը չի արել այն**» (Ամոս 3; 6): Չարիք այստեղ կոչվում է այն ամենը, ինչ որ ճնշում է մեզ, այսինքն՝ բոլոր վշտալից բաները, որ լինում են մեզ պատժելու համար՝ մեր աղտեղության պատճառով, ինչպես սովը, համաճարակները, երկրաշարժները, երաշտը, հիվանդությունները, պատերազմները. այս ամենը լինում են ո՛չ թե Աստծո կամեցողությամբ, այլ՝ թույլտվությամբ, երբ Աստված թույլ է տալիս, որ դրանք հասնեն մեզ վրա մեր իսկ օգտի համար: Սակայն Աստված չի կամենում, որ մենք փափազենք այդ կամ աջակցենք դրան: Օրինակ, ինչպես ես ասացի, Աստծո թույլատու կամքը լինում է այն, որ քաղաքը ավերվի է, սակայն Աստված չի ուզում, որ մենք, -քանի որ Նա է թույլ տվել այդ, -ինքներս կրակ զցենք և այրենք այն, կամ, որ մենք վերցնենք կացիները և սկսենք ավերել այն: Նմանապես Աստված է թույլ տալիս, որ ինչ-որ մեկը գտնվի տրտմության կամ հիվանդության

մեջ, սակայն թեև Աստծո կամքն է այդպիսին, որ նա տրտմի, սակայն Աստված չի ուզում, որ մենք էլ տրտմեցնենք նրան, կամ որպեսզի ասենք. «Քանի որ Աստված էթույլ տվել, որ նրա հիվանդ լինելի, ապա չպետք է խղճանք նրան»: Աստված այդ բանը չի ուզում. չի ուզում, որպեսզի մենք նման ձևով ծառայենք իր կամքին: Նա ցանկանում է, ընդհակառակն, մեզ տեսնել այնքան բարի, որ մենք չկամենանք այն, ինչ որ նա անում է ըստ իր թույլատու կամքի: Իսկ ի՞նչ է նա ուզում: Ուզում է, որ մենք փափագենք իր բարի կամքը, որ լինում է, ինչպես ես ասացի, ըստ իր բարի կամեցողության, այսինքն՝ այն ամենը, ինչ որ կատարվում է ըստ իր պատվիրանների. որպեսզի սիրենք միմյանց, լինենք կարեկից, ողորմություն անենք և այլն. ահա Աստծո բարի կամքը: Իսկ ի՞նչ է նշանակում հաճելի: Մարդուս գործած ամեն բարի գործ է, որ հաճելի է լինում Աստծուն: Եվ ասեմ ձեզ, թե ինչպես է (այդ լինում): Պատահում է, որ ինչ-որ մեկը գտնում է մի խեղճ և գեղեցկատես որբուկի, վերջինս դուր է գալիս նրան իր գեղեցկությունից, և նա վերցնում է նրան ու դաստիարակում, որպես խեղճ որբուկի, բայց և միևնույն ժամանակ նաև՝ որպես գեղեցկատեսի: Ահա սա Աստծո բարի կամքն է, սակայն՝ ոչ հաճելի: Իսկ հաճելին այն է, երբ մեկը ողորմություն է տալիս՝ ոչ ինչ-որ մարդկային դրդապատճառներից մղված, այլ հենց հանուն բարու, հենց լուր կարեկցանքից. սա է հաճելի Աստծուն: Իսկ Աստծո կատարյալ կամքն այն է, երբ մեկը ողորմություն է տալիս՝ ո՛չ ժլատությունից, ո՛չ ծուլությունից, ո՛չ ստիպողաբար, այլ՝ ամբողջ գործությունից և ողջ կամեցողությունից՝ տալով այնպես, որպես թե ինքն է ընդունում այդ բարիքը. այդ ժամանակ կատարվում է Աստծո կատարյալ կամքը: Այդպես է մարդը կատարում Աստծո կամքը, ինչպես ասում է առաքյալը, «բարի, հաճելի և կատարյալ»: Սա նշանակում է խելամտորեն կատարել այն: Սակայն պետք է գիտենալ նաև ողորմության

բուն բարիքը, նրա բուն շնորհը, ~ այնքան մեծ է, այն, որ կարող է ներել և՛ մեղքերը, ինչպես ասում է մարգարեն. «Մարդս իր հարստությունից փրկագնում է իր անձը» (Առակ. 13; 8): Եվ դարձյալ մեկ ուրիշ տեղ ասում է. «Քո մեղքերը ողորմությունից քաղիր» (Դան. 4; 24): Եվ ինքը՝ Տերն ասաց. «Եղե՛ք գթասիրտ, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է գթասիրտ» (Ղուկ. 6; 36): Չասաց՝ եղե՛ք պահեցող, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է պահեցող: Չասաց՝ եղե՛ք անընչասեր, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է անընչասեր: Այլ ի՞նչ է ասում. «Եղե՛ք գթասիրտ, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է գթասիրտ», քանի որ այս առաքիլությունը հատկապես նմանակում է Աստծուն և մարդուն նմանեցնում է նրան: Եվ այսպես, մշտապես պետք է, ինչպես որ մենք ասացինք, նայել այս նպատակակետին և խելամտորեն գործել բարին, քանզի ողորմություն տալու նպատակների մեջ էլ կան շատ տարբերություններ: Մեկը ողորմություն է տալիս այն բանի համար, որպեսզի օրհնվի իր արտը և Աստված օրհնում է նրա արտը, և նա հասնում է իր նպատակին: Մյուսը ողորմություն է տալիս այն նպատակով, որպեսզի փրկվի իր նավը, և Աստված փրկում է նրա նավը: Մեկն այն տալիս է իր երեխաների համար, և Աստված փրկում և պահպանում է նրա երեխաներին: Մեկ ուրիշը այն տալիս է նրա համար, որպեսզի փառավորվի, և Աստված փառավորում է նրան: Քանզի Աստված չի մերժում ոչ մեկին, այլ յուրաքանչյուրին տալիս է այն, ինչ որ նա ցանկանում է, եթե միայն այն չի վնասում նրա հոգուն: Սակայն սրանք բոլորը արդեն ստացան իրենց պարգևները, և Աստված ոչինչ պարտք չէ նրանց, որովհետև նրանք ոչինչ չփնտրեցին նրանից իրենց համար, և նպատակը, որ նրանք իրենց առջև ունեին, ոչ մի կապ չունեն իրենց հոգևոր օգտի հետ: Դու այդ բանն արեցիր նրա համար, որպեսզի օրհնվի քո արտը, և Աստված օրհնեց քո արտը. դու այդ բանն արեցիր քո երեխաների

Համար, և Աստված պահպանեց քո երեխաներին: Դու այդ բանն արեցիր, որպեսզի փառավորվես, և Աստված փառավորեց քեզ: Եվ այսպես, ի՞նչ է Աստված քեզ պարտք: Նա վարձատրեց քեզ քո արածի դիմաց:

Մեկ ուրիշը ողորմություն է տալիս այն բանի համար, որպեսզի ազատվի գալիք տանջանքներից. սա այն տալիս է իր հոգու շահի համար. սա տալիս է հանուն Աստծո, սակայն սա էլ դեռ այն չէ, ինչ որ Աստված է ուզում, քանզի նա տակավին գտնվում է ծառայի կարգավիճակում, իսկ ծառան հոժարակամորեն չէ, որ կատարում է իր Տիրոջ կամքը, այլ վախենում է պատժից: Այդպես և սա, որ ողորմություն է տալիս տանջանքներից ազատվելու համար, Աստված ազատում է նրան դրանցից: Մյուսը ողորմություն է տալիս այն նկատառումով, որպեսզի պարգև ստանա. սա բարձր է առաջինից, սակայն սա էլ այն չէ, ինչ որ Աստված է ուզում քանզի նա դեռ չի գտնվում որդու կարգավիճակում, այլ, ինչպես վարձկան, կատարում է իր տիրոջ կամքը, որպեսզի նրանից վարձ և շահույթ ստանա: Այդպես էլ սա, ողորմություն է տալիս այն նպատակով, որպեսզի ձեռք բերի և պարգև ստանա Աստծուց: Քանզի երեք կերպով, ինչպես ասում է Բարսեղ Մեծը, մենք կարող ենք բարիք գործել, ինչպես որ առաջուց ասել եմ ձեզ. կամ գործում ենք բարին՝ վախենալով տանջանքներից, և այդ ժամանակ մենք գտնվում ենք ծառայի կարգավիճակում. կամ նրա համար, որպեսզի վարձ ստանանք, և այդ ժամանակ մենք գտնվում ենք վարձկանի կարգավիճակում, կամ էլ գործում ենք բարին հենց հանուն բարու, և այդ ժամանակ մենք գտնվում ենք որդու կարգավիճակում, քանզի որդին կատարում է հոր կամքը ո՛չ վախից և ոչ այն պատճառով, որ ուզում է նրանից պարգև ստանալ, այլ ցանկանալով նրան հաճելի լինել, պատվել և հանգստացնել նրան: Այդպես և մենք պետք է ողորմություն տանք հենց հանուն բա-

րու՝ կարեկցելով միմյանց, ինչպես սեփական անդամներին, և այդպես հաճեցնել մյուսներին, որպես թե մենք ինքներս ենք նրանցից ծառայություններ ընդունում. կամ այնպես, որպես թե մենք ինքներս ենք ստանում. ահա հենց սա է խելամիտ ողորմությունը, այդպես ենք մենք հասնում որդու աստիճանին, ինչպես որ վերը ասացինք: Ոչ ոք չի կարող ասել. «Ես աղքատ եմ և ողորմություն տալու ոչինչ չունեմ», քանզի եթե դու չես կարող տալ այնքան, որքան այն հարուստները, որ գանձանակն էին գցում իրենց ընծաները, ապա տո՛ւր երկու լուծմա՝ այն խեղճ այրի կնոջ նման, և Աստված կընդունի քեզանից այդ ավելի, քան այն հարուստների ընծաները (Մարկ. 12; 42, Ղուկ. 21; 2): Եթե այդ էլ չունես, ունես ուժ և ծառայությամբ կարող ես ողորմություն ցուցաբերել տկար եղբոր հանդեպ: Ա՞յդ էլ չես կարող: Կարող ես խոսքով մխիթարել եղբորդ. և այսպես, գլխարտություն ցուցաբերիր նրան հանդեպ խոսքով և լսի՛ր ասվածը. «Բարի խոսքը առավել է նվիրատվությունից» (Սիրաք 18; 17): Եթե խոսքով էլ չես կարող օգնել նրան, ապա կարող ես, երբ եղբայրդ բարկանա քեզ վրա, ողորմություն ցուցաբերել նրա հանդեպ և համբերել նրան իր խռովքի ժամանակ՝ տեսնելով նրան փորձվելիս ընդհանուր թշնամու կողմից, և փոխարեն նրան մի խոսք ասելու և դրանով ավելի վրդովելու նրան, դու կարող ես լուել. դրանով ողորմություն ցուցաբերած կլինես նրա հանդեպ՝ ազատելով նրա հոգին թշնամուց: Նմանապես կարող ես, երբ եղբայրդ մեղանչի քո դեմ, ողորմել նրան և ներել նրա մեղքը, քանզի ասված է. «Ներեցե՛ք և ներում պիտի գտնեք» (Ղուկ. 6; 37): Եվ այդպիսով, դու ողորմություն ցուցաբերած կլինես եղբորդ հոգուն՝ ներելով նրան, ինչում որ նա մեղանչել է քո դեմ, քանի որ Աստված մեզ իշխանություն է տվել, որ եթե կամենանք, ներենք միմյանց մեղքերը, որ մեր միջև են պատահում: Այսպիսով, եթե մարմնի հանդեպ գլխարտություն ցուցա-

բերելու համար ոչինչ չունես, ողորմիր նրա հոգուն: Իսկ հոգուն ողորմելուց առավել մեծ ողորմություն կա՞ արդյոք: Եվ ինչպես որ հոգին թանկարժեք է մարմնից, այնպես էլ հոգուն ցուցաբերած ողորմությունը առավել է մարմնին ցուցաբերածից: Եվ դրա համար էլ ոչ ոք չի կարող ասել. «Ես չեմ կարող ողորմություն ցուցաբերել», քանզի ամեն ոք, ըստ իր կարողության և ըստ իր հոգևոր կարգավիճակի, կարող է ողորմություն ցուցաբերել, միայն թե յուրաքանչյուր ոք թող ջանա այն բարին, որ ինքը գործում է, գործել խելամտորեն, ինչպես մենք վերը հիշեցինք, յուրաքանչյուր առաքինության վերաբերյալ: Քանզի մենք ասացինք, որ ով դրանք խելամտորեն է կատարում, նա հմուտ վարպետ է, իր տունն ամուր կառուցող: Այս մասին էլ Ավետարանն է ասում (Մատթ. 7; 24), որ իմաստունը իր տունը կառուցում է ժայռի վրա, և ոչ մի արհավիրք չի կարողանում սասանել նրան: Մարդասերն Աստված թող շնորհի մեզ լսել և կատարել այն, ինչ որ լսում ենք, որպեսզի այս խոսքերը չծառայեն մեզ որպես դատապարտություն դատաստանի օրը: Քանզի նրան է վայել փառք հավիտյանս: Ամեն:

Օրենքում գրված է, որ Աստված պատվիրեց Իսրայելի որդիներին ամեն տարի տասանորդ տալ այն ամենից, ինչ որ նրանք ձեռք էին բերել, և, այդպես վարվելով, նրանք օրհնություն էին ստանում իրենց բոլոր գործերում: Այս իմանալով՝ սուրբ առաքյալները սահմանեցին և մեզ օգնություն տվեցին և մեր հոգիներին՝ որպես բարեգործություն, էլ ավելի մեծ և բարձրագույն մի բան, -այն, որ հենց մեր կյանքի օրերից տասանորդ առաձնացենք և նվիրաբերենք Աստծուն, որպեսզի մենք էլ այսպիսով օրհնություն ստանանք մեր բոլոր գործերում և ամեն տարի քավենք մեր մեղքերը, որ գործել ենք ամբողջ տարվա ընթացքում: Այսպես դատելով՝ նրանք սրբագործեցին մեզ համար տարվա 365 օրերից սուրբ Քառասնօրյայի այս յոթ շաբաթները: Նման ձևով նրանք այս յոթ շաբաթները առանձնացրեցին, սակայն ժամանակի ընթացքում հայրերը հարմար գտան նրանց ավելացնել ևս մեկ շաբաթ. նախ այն բանի համար, որպեսզի պահպանվեցին սխրանքի մեջ մտնել ցանկացողները այդ շաբաթվա ընթացքում ընտելանան և կարծես նախապատրաստվեն դրան, երկրորդը այն բանի համար, որպեսզի պատվենք Քառասնօրյա պահքի օրերի քանակը, որը պահեց մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Քանզի ութ շաբաթներից հանելով շաբաթներն ու կիրակիները՝ ստանում ենք քառասուն օր, իսկ սուրբ (ավագ) շաբաթ օրվա պահքը առանձնահատուկ է մեծարվում, որովհետև այն հանդիսանում է սրբազնագույնը և միակ պահոց օրը տարվա բոլոր օրերից: Իսկ յոթ շաբաթը առանց շաբաթ և կիրակի օրերի կազմում է երեսուներեսից օր, հետո, ավելացնելով սուրբ (ավագ) շաբաթ օրվա պահքը և կեսը՝ Լուսավոր և լուսակիր գիշերի (ճրագալույցի), ստանում ենք երեսունվեց օր ու կես, որը և կազմում է ամենայն ճշգրտությամբ տարվա 365 օրերի տասներորդ մասը: Քանզի

երեք հարյուրի տասներորդ մասը երեսունն է, իսկ վաթսուներեք տասներորդ մասը վեցն է, իսկ հինգի տասներորդ մասը կազմում է Լուսավոր օրվա կեսը: Ահա, ինչպես մենք ասացինք, երեսունվեց օր ու կես. ահա, այսպես ասած, ամբողջ տարվա տասներորդ մասը սուրբ առաքյալները առանձնացրեցին՝ ապաշխարելու և ամբողջ տարվա մեղքերը քավելու համար:

Եվ այսպես, երանելի է նա, եղբայրներ՛ր, ով բարվոք և ինչպես հարկն է պահպանում է իրեն այս սուրբ օրերին: Իսկ եթե նա, որպես մարդ, մեղանչի էլ տկարությունից կամ ծուլությունից, ահա Աստված այս սուրբ օրերը, տվել է այն բանի համար, որպեսզի, եթե մեկը ջանա ուշիմությունամբ և խոնարհությամբ հոգալ իր մասին և ապաշխարել իր մեղքերի համար, նա մաքրվի իր մեղքերից, որոնք գործել է ամբողջ տարվա ընթացքում: Այնժամ նրա հոգին կազատվի ծանրությունից և, նման ձևով մաքրված, կհասնի Հարություն սուրբ օրվան և արժանապես կհաղորդվի սուրբ Խորհրդին՝ նոր մարդ դարձած ապաշխարության միջոցով (այս սուրբ պահոց շրջանում): Այդպիսին հոգևոր խնդրության և ցնծության մեջ, Աստծո օգնությամբ, կտոնի Զատիկին հաջորդող սուրբ Հիսնօրյան, քանզի Հիսնօրյան, ինչպես ասում են հայրերը, հոգու հանգիստը և հարությունն է. սա խորհրդանշվում է նրանով, որ մենք ամբողջ Հիսնօրյայի ընթացքում չենք ծնրադրում:

Եվ այսպես, յուրաքանչյուր ոք, որ ցանկանում է այս օրերին մաքրվել իր կողմից ամբողջ տարվա ընթացքում գործած մեղքերից, ամենից առաջ պետք է իրեն զսպի բազմաթիվ ուտեսներից, քանզի անչափավորությունը կերակրի մեջ, ինչպես ասում են հայրերը, մարդու համար ծնում է ամեն տեսակ չարիք: Հետո նա պետք է նաև զգուշանա, որպեսզի չխախտի պահքը առանց մեծագույն անհրաժեշտություն, որպեսզի չփնտրի համեղ կերակուր, և որպեսզի չծանրաբեռնի իրեն կերակուրներ

րի կամ ըմպելիքների բազմազանությունամբ: Քանզի երկու տեսակ որկրամոլություն կա: Առաջինը, երբ մարդ կերակրի մեջ հաճույք է փնտրում, և միշտ չէ, որ ցանկանում է շատ ուտել, այլ ցանկանում է համեղը. և պատահում է, որ այդպիսին, երբ կերակուր է ճաշակում, որն իրեն դուր է գալիս, այն աստիճան է գրավվում նրա հաճելի համով, որ կերակուրը պահում է բերանում, երկար ծամում է այն և հաճելի համի պատճառով չի ուզում կուլ տալ այն: Սա հունարեն կոչվում է լեմարգիա՝ կոկորդասայսահարություն: Մեկ ուրիշին դարձյալ հաղթում է շատակերությունը, և նա չի փափագում լավ ուտեստներ և չի հոգում նրանց համեղության մասին. այլ լավն են դրանք, թե ոչ, նա միայն ցանկանում է ուտել և հաշվի չի առնում, թե ինչպիսին են դրանք. նա միայն հոգում է այն մասին, որպեսզի լցնի իր որովայնը. սա կոչվում է գաստրոմարգիա, այսինքն՝ որկրասայսահարություն: Ասեմ ձեզ այս անվանումների նաև ծագման մասին: Մարգենին, այսինքն՝ այսահարվել ասվում է հելլեն գիտունների կողմից դիվահարների մասին, իսկ գաստրոս՝ որովայնին են ասում: Եվ այսպես, երբ ինչ-որ մեկին տիրում է այս ախտը, այսինքն՝ որովայնը լցնելու մոլուցքը, ապա այն կոչվում է գաստրիմարգիա, որը բաղկացած է այսահարվել և որովայն բառերից, այսինքն՝ որովայնի այսահարություն: Իսկ միայն կոկորդի հաճույք ստանալու այսահարությունը կոչվում է լեմարգիա, որը բաղկացած է կոկորդ և այսահարվել բառերից: Եվ այսպես, ով ցանկանում է մաքրվել իր մեղքերից, նա պետք է մեծ ուշադրությունամբ զգուշանա և խուսափի որկրամոլության այս տեսակներից, քանզի սրանց միջոցով բավարարվում է ոչ թե մարմնի պահանջը, այլ՝ կիրքը, և եթե մեկը տրվում է դրանց, ապա դա նրան մեղք է համարվում: Ինչպես որ օրինական ամուսնություն և շնություն մեջ գործողությունը միանման է լինում, սակայն նպատակը՝ տարբեր. քանզի մեկը զուգավորվում է երեխաներ

ծնելու համար, իսկ մյուսը՝ իր հեշտասիրությունը բավարարելու համար. նույնը կարելի է տեսնել և կերակրի պարագայում. ուտել՝ ըստ անհրաժեշտության, և ուտել՝ համից հաճույք ստանալու համար. գործողությունը միևնույնն է, իսկ մեղքը կայանում է դիտավորության մեջ: Ուտել ըստ կարիքի նշանակում է, որ ինչ-որ մեկը սահմանում է իր համար օրեկան կերակրի չափ, և եթե տեսնում է, որ այդ սահմանված կերակրի քանակը ծանրաբեռնում է իրեն և այն փոքր-ինչ նվազեցնելու կարիք կա, ապա նվազեցնում է այն: Կամ, եթե այն չի ծանրաբեռնում նրան, բայց և բավարար էլ չէ մարմնի համար, այնպես որ հարկավոր է մի փոքր ավելացնել, ավելացնում է փոքր-ինչ: Եվ այդիպիսով, լավ փորձելով սեփական պահանջմունքը, հարկավոր է ուտել սահմանված չափով՝ ոչ թե համից հաճույք ստանալու համար, այլ կամենալով պահպանել մարմնի ուժը: Սակայն այդ սակավ կերակուրը ևս պետք է ընդունել աղոթքով և մտքում իրեն դատել՝ որպես միանգամայն անարժան կերակրի և մխիթարության: Չի կարելի նմանապես ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ ոմանք, պատահած ինչ-որ կարիքի կամ անհրաժեշտության դեպքում, հանգստի մեջ են լինում, որպեսզի ինքզինքն չբաղձաս հանգստի, և ընդհանարապես չպետք է մտածել, որ (մարմնի) հանգիստը լավ է հոգու համար: Մի անգամ, երբ ես դեռ գտնվում էի հանրակացարանում, այցելելույն զնացի ծերերից մեկին, քանզի այնտեղ բազում մեծ ծերեր կային, և տեսա, որ նրան ծառայող եղբայրը նրա հետ միասին կերակուր էր ճաշակում: Այս տեսնելով՝ ես նրան առանձին ասացի. «Մի՞թե դու չգիտես, եղբայր, որ այս ծերերը, որոնք, ինչպես դու տեսնում ես, կերակուր են ճաշակում և անհրաժեշտության դեպքում իրենց որոշ զիջումներ են թույլ տալիս, նման են այն մարդկանց, որոնք գանձանակ են ձեռք բերել և, երկար աշխատելով, իրենց վաստակածը գցել են գանձանակի մեջ, մինչև որ լցնեն այն: Իսկ

երբ լցրել և կնքել են այն, ապա դարձյալ սկսել են աշխատել այս անգամ իրենց ծախսերի համար՝ հավաքելով էլի հազարավոր ոսկի (դրամներ), որպեսզի անհրաժեշտության դեպքում այնտեղից վերցնեն և պահպանեն այն, ինչ որ գետեղված է գանձանակի մեջ: Այդպես և այս ծերերը, երկա՛ր աշխատելով, գանձեր են դիզել իրենց համար երտասարդության շրջանում և, կնքելով դրանք, աշխատել են էլի փոքր-ինչ, որպեսզի այն ունենան ծերության կամ տկարության ժամանակ և դրանից ծախսեն, իսկ նախօրոք հավաքածը պահեն անձեռնմխելի: Իսկ մենք նույնիսկ գանձանակը դեռ ձեռք չենք բերել, էլ ինչի՞ց պիտի ծախսենք: Դրա համար էլ մենք պետք է, ինչպես ես ասացի, ընդունելով կերակուրը ըստ մարմնավոր կարիքի, դատենք ինքներս մեզ և անարժան համարենք ամենայն մխիթարության և նույնիսկ հենց վանական կյանքին, և առանց ժուժկալույն չընդունենք կերակուրը. նման դեպքում այն չի ծառայի մեզ որպես դատապարտություն: Մենք այս ասացինք որովայնի ժուժկալույն մասին: Սակայն մենք ոչ միայն կերակրի մեջ պետք է չափավորություն պահպանենք, այլև մեզ պետք է պահենք յուրաքանչյուր այլ մեղքից, որպեսզի, ինչպես որ պահում ենք որովայնը, այդպես էլ պահենք և լեզուն՝ հեռու մնալով զրպարտությունից, ստից, դատարկախոսությունից, նվաստացնելուց, բարկությունից և, մի խոսքով, ամեն տեսակ մեղքից, որ գործվում է լեզվով: Նմանապես (պետք է) պահել և աչքերը, այսինքն՝ չնայել ունայն (բաներին), աչքերին ազատություն չտալ, ոչ ոքի չնայել անամոթաբար և առանց երկյուղի: Նմանապես և՛ ձեռքերը, և՛ ոտքերը պետք է պահել ամեն տեսակ չար գործերից: Պահելով այդ կերպով, ինչպես ասում է Բարսեղ Մեծը, աստվածահաճո պահեցողությամբ, հեռանալով ամեն տեսակ մեղքերից, որ գործում ենք մեր բոլոր զգայարաններով, մենք կհասնենք Հարության սուրբ օրվան, դարձած, ինչպես ասացինք, նոր, անա-

րատ և Հաղորդության սուրբ Խորհրդին արժանի: Սակայն նախ ընդառաջ գնանք մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ չարչարվելու եկողին, և ձիթենու ու արմավենու ճյուղերով ընդունենք Նրան, որ նստած ավանակի վրա՝ մտնում է սուրբ քաղաք՝ Երուսաղեմ:

Ինչի համար (Տերը) նստեց ավանակի վրա: Նա նստեց ավանակի վրա այն բանի համար, որպեսզի մեր հոգին, որ նմանվել էր, ինչպես ասում է մարգարեն, անբան և անմիտ անասուններին, - որպես Աստծո Խոսք, - դարձնի և հնազանդեցնի իր Աստվածույթյանը: Ո՞րն է սրա իմաստը, որ Նրան դիմավորում են արմավենու և ձիթենու ճյուղերով: Երբ մեկը գնում է իր թշնամու հետ պատերազմելու և վերադառնում է հաղթանակած, ապա նրա բոլոր հպատակները նրան դիմավորում են արմավենու ճյուղերով, որպես հաղթողի, քանզի արմավենու ճյուղերը հաղթանակ են խորհրդանշում: Նմանապես, երբ մեկը վերավորանք է կրում ինչ-որ մեկից և կամենում է դիմել այն մարդուն, որը կարող է պաշտպանել իրեն, ապա նա Նրան բերում է ձիթենու ճյուղեր՝ աղերսելով և խնդրելով Նրանից ողորմություն և օգնություն, քանզի ձիթենու ճյուղերը ողորմություն են խորհրդանշում: Դրա համար էլ մենք դիմավորում ենք մեր Տիրոջը՝ Քրիստոսին, արմավենու ճյուղերով՝ որպես հաղթողի, քանզի Նա հաղթեց մեր թշնամուն, իսկ ձիթենու ճյուղերով Նրանից ողորմություն ենք խնդրում՝ աղերսելով, որպեսզի, ինչպես որ Նա հաղթեց մեզ համար, այդպես և մենք հաղթենք Նրա միջոցով: Թող լինենք հաղթություն (նշան) կրողներ ոչ միայն հանուն այն հաղթանակի, որ Նա տարավ մեզ համար, այլև հանուն այն հաղթանակի, որը մենք տարանք Նրա միջոցով, ամենայն սրբոց բարեխոսությունով: Քանզի Նրան վայել է փառք, պատիվ և երկրպագություն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

**ՈՐՈՇ ԽՅԱԲՆԱԿՆԵՐԻՆ, ՈՐՈՒՔ ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱ ԴՈՐՈԹԵՈՍԻՆ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ԱՅՅԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

16-րդ ուսուցում

Հայրերն ասում են, որ հոգևոր կյանքում խցում մնալը կեսն է, իսկ ծերերին այցելելը՝ նույնպես կեսն է: Այս խոսքը նշանակում է, որ և՛ խցում, և՛ խցից դուրս մեզ հավասարապես հարկավոր է ուշադրություն, և պետք է գիտենալ, թե ինչի համար մենք պետք է լռենք մեր խցում և ինչի համար մենք պետք է այցելենք հայրերին և եղբայրներին, քանզի ով չի կորցնում տեսադաշտից այս նպատակը, նա էլ և ջանում է վարվել այնպես, ինչպես ուսուցանում են հայրերը: Եվ հատկապես, երբ նա գտնվում է խցում, աղոթում է, ուսանում է (Սուրբ Գիրքը), զբաղվում է փոքր-ինչ ձեռագործով և իր ուժերի չափով հոգ է տանում իր խորհուրդների մասին: Իսկ երբ գնում է որևէ տեղ, նա հետևում է իրեն և քննում է իր հոգեվիճակը, թե արդյոք օգուտ ստանո՞ւմ է եղբայրների հետ հանդիպելիս, թե՞ ոչ, և կարո՞ղ է արդյոք առանց վնասի վերադառնալ իր խուցը: Եվ եթե տեսնում է, որ ինքը ինչ-որ բանում վնաս է կրել, ապա դրանից ճանաչում է իր տկարությունը. տեսնում է, որ ինքը լուսկեցությունից դեռ ոչինչ չի շահել, և, խոնարհվելով, վերադառնում է իր խուցը՝ լացելով և աղոթելով Աստծուն իր տկարության համար, և այդպիսով դարձյալ մնում է (խցում) և ուշադրությամբ հետևում իրեն:

Հետո կրկին գնում է մարդկանց մոտ և հետևում իրեն, թե ինքը արդյոք պարտվո՞ւմ է նրանից, ինչից պարտվում էր առաջ, կամ մի այլ բանից: Այսպիսով, կրկին վերադառնում է իր խուցը և վերստին անում է նույն բանը՝ լացում է, զղջում և աղոթում Աստծուն իր տկարության համար, քանզի խուցը բարձրացնում է, իսկ մարդիկ՝ փորձում: Դրա համար լավ են

ասել հայրերը, որ խցում մնալը կեսն է, իսկ ծերերին այցելելը՝ մյուս կեսը: Այդպես և դուք, եղբայրներ՝, երբ այցելում եք միմյանց, պետք է իմանաք, թե ինչի համար եք դուրս գալիս խցից, և չգնաք որևէ տեղ անմտորեն և աննպատակ, քանզի ով աննպատակ ճանապարհ է ձեռնարկում, նա, ըստ հայրերի խոսքի, ապարդյուն է չարչարվում:

Այսպիսով, յուրաքանչյուր ոք, ինչ որ անում է, պետք է անպայման նպատակ ունենա և գիտենա, թե ինչի համար է նա այդ անում: Իսկ ի՞նչ նպատակ մենք պետք է հետապնդենք, ունենանք, երբ այցելում ենք միմյանց: Նախ՝ մենք պետք է այցելենք միմյանց սիրո համար, քանզի ասված է. «Եղբորդ տեսնելով՝ քո Տեր Աստծուն տեսար»: Երկրորդ, այն բանի համար, որպեսզի Աստծո խոսքը լսենք, որովհետև եղբայրների բազմություն մեջ միշտ ավելի շատ է հայտնվում Աստծո խոսքը, քանզի հաճախ ինչ որ չի իմանում մեկը, իմանում է մյուսը, և առաջինը, հարցնելով նրան, նույնպես իմանում է այդ: Եվ վերջապես այն բանի համար, որպեսզի, ինչպես ես առաջուց ասացի, ճանաչի իր հոգևոր վիճակը: Օրինակ, եթե մեկը գնում է, ինչպես երբեմն պատահում է, մյուսների հետ ճաշելու, ապա նա պետք է հետևի իրեն և տեսնի. երբ լավ կերակուր են առաջարկում, որն իրեն դուր է գալիս, արդյոք նա կարողանո՞ւմ զսպել իրեն և չվերցնել դրանից: Կամ, ջանո՞ւմ է նմանապես չվիրավորել իր եղբորը և չվերցնել նրանից ավելի, կամ, երբ մասերի (բաժանված) ինչ-որ բան են առաջարկում, չի՞ ջանում նա արդյոք վերցնել մեծ կտորը, իսկ մյուսին թողնել փոքրը: Քանզի պատահում է, որ մեկը չի ամաչում նույնիսկ երկարել ձեռքը և փոքր կտորը դնել եղբորը, իսկ մեծը վերցնել իրեն: Ի՞նչ տարբերություն կարող է լինել մեծ կտորի և փոքրի միջև: Արդյոք մե՞ծ է այն: Եվ նման անկարևոր բանի համար այդպիսի մեկը վի-

րավորում է իր եղբորը և մեղանչում է:

Նա պետք է նմանապես նկատի՝ արդյոք կարո՞ղ է զսպել իրեն բազում ուտեստներից և դրանց հանդիպելիս չտրվել շատակերուկթյան, ինչպես դա երբեմն պատահում է: (Նմանապես նա պետք է նկատի)՝ պահո՞ւմ է իրեն հանդգնությունից և չի՞ տրտմում արդյոք, երբ տեսնում է, որ մյուս եղբորը գերադասում են իրենից և առավել նրա մասին են հոգում: Եվ, եթե տեսնում է, որ մեկը չափազանց ազատ է վարվում ուրիշների հետ, կամ շատ է խոսում, կամ ինչ-որ անպարկեշտ բան է անում, արդյոք չի՞ հետևում և չի՞ դատում նրան, թե՞ չի հոգում այդ մասին և ուշադրություն չի դարձնում դրա վրա, այլ առավել նայում է երկյուղածներին և ջանասերներին: Եվ ջանո՞ւմ է արդյոք նա վարվել այնպես, ինչպես որ ասում են աբբա Անտոնի մասին, որը, երբ այցելում էր որևէ մեկին, ապա նկատում էր միայն այն, ինչ լավ բան որ յուրաքանչյուրը ուներ, փոխառնում էր այն նրանից և յուրացնում էր իրեն: Մեկից ընդօրինակում էր հեզություն, մյուսից՝ խոնարհություն, մեկ ուրիշից՝ լուռություն, և այդպիսով իր մեջ էր համատեղում նրանցից յուրաքանչյուրի առաքինությունը: Այդպես պետք է վարվենք և մենք, և այդ բանի համար այցելենք միմյանց, իսկ երբ վերադառնում ենք մեր խցերը, պետք է քննենք մեզ, թե ինչից օգուտ ստացանք և ինչից՝ վնաս: Եվ ինչից որ պահպանվել ենք, դրա համար պետք է գոհություն հայտնենք Աստծուն, որ պահպանել է մեզ վնասից, իսկ ինչու՞մ որ մեղանչել ենք, պետք է զղջանք, լացենք և ողբանք մեր հոգեվիճակի համար: Քանզի ամեն ոք վնաս կամ օգուտ ստանում է իր իսկ հոգեվիճակից, և ոչ ոք չի կարող վնասել նրան, սակայն եթե մենք վնաս կրում ենք էլ, ապա այդ վնասը առաջ է գալիս մեր իսկ հոգեվիճակից, քանզի ամեն մի գործից, ինչպես ես ձեզ միշտ ասում եմ, եթե կամենանաք,



կարող ենք և՛ օգուտ ստանալ, և՛ վնաս: Եվ մի օրինակ ասեմ ձեզ, որպեսզի դուք համոզվեք, որ դա իրոք այդպես է: Ենթադրենք, ինչ-որ մեկին վիճակվել է գիշերը կանգնել ինչ-որ վայրում. չեմ ասում, որ նա վանական է, այլ քաղաքի բնակիչներին մեկը: Եվ (ահա) նրա կողքով անցնում են երեք մարդ: Մեկը մտածում է նրա մասին, որ նա սպասում է մեկին, որպեսզի գնա և շնություն գործի, մյուսը մտածում է, որ նա գող է, իսկ երրորդը մտածում է, որ նա մոտակա տնից կանչել է իր ընկերոջը և սպասում է, որպեսզի նրա հետ միասին գնան եկեղեցի աղոթելու: Ահա այս երեքը տեսան միևնույն մարդուն, միևնույն տեղում, սակայն այս երեքը միևնույն բանը չէին հասկանում նրա մասին, այլ մեկը մտածեց մի բան, մյուսը՝ մի ուրիշ բան, երրորդը՝ մի այլ բան, և ակնհայտ է, որ յուրաքանչյուրն իր հոգեվիճակի համեմատ: Ինչպես որ դառնամաղձ և հյուսիսային մարմինները ամեն մի կերակուր, որ ընդունում են, վերածում են վատ հյուսիսային, թեկուզև կերակուրը օգտակար լինի. սակայն պատճառը կայանում է ոչ թե կերակրի մեջ, այլ՝ մարմնի հյուսվածքային, որն անհրաժեշտությունից է այդպես գործում և փոխում է կերակուրը՝ իր անորակության համեմատ: Այդպես էլ այն հոգին, որ չար սովորություն ունի, վնաս է կրում ամեն մի բանից, թեկուզև այդ բանը օգտակար լինի, հոգին վնասվում է դրանից: Պատկերացրու մեղրով մի անոթ. եթե մեկը նրա մեջ մի փոքր օշինդր լցնի, ապա չի՞ փչացնի անոթի մեջ եղած այդ փոքրիկ մեղրը և այն ամբողջովին չի՞ դառնացնի: Մենք էլ ենք, այդպես վարվում. խառնում ենք մի փոքր մեր սեփական դառնությունից և ոչնչացնում ենք մերձավորի բարին՝ նայելով նրան՝ մեր հոգեվիճակի համեմատ, և խեղաթյուրելով այն՝ ըստ մեր սեփական չարաբարոյություն: Իսկ ով բարի բարք ունի, նման է նրան, ով ունի առողջ կամ բարեհյուսված մարմին.

եթե նա անգամ իսկ վնասակար բան ուտի, ապա այն, իր մարմնի վիճակի համեմատ, նրա համար կվերածվի լավ հյուսիսային, և այդ անպիտան կերակուրը նրան չի վնասի, որովհետև, ինչպես ես ասացի, նրա մարմինը բարեհյուսված է և, իր լավորակության համեմատ, մարսում է կերակուրը: Եվ ինչպես որ մենք ասացինք առաջինի մասին, որ այն իր վատ վիճակի համեմատ և լավ կերակուրն է վերածում վատ հյուսիսային, այդպես և սա, ըստ իր մարմնի լավորակության, և վատ կերակուրն է վերածում լավ հյուսիսային: Ձեզ մի օրինակ ասեմ, որ դուք սա հասկանաք: Վարազը ունի բավականին բարեհյուսված մարմին, իսկ նրա կերակուրը կազմում են կեղևը, խուրձի կորիզը, կաղինը և լոռատիղմը. բայց, քանի որ նրա մարմինը բարեհյուսված է, ապա նա և այսպիսի կերակուրն է փոխարկում լավ հյուսիսային: Այդպես և մենք, եթե ունենք բարի բարք և գտնվում ենք լավ հոգեվիճակում, ապա կարող ենք, ինչպես ես առաջին ասացի, ամեն ինչից օգուտ քաղել, թեկուզև այդ բաներն այնքան էլ օգտակար չլինեն: Եվ լավ է ասել Իմաստունը. «Խելացի մարդն ինքն է ուղղում իր ընթացքը» (Առակ. 15; 21), և մի ուրիշ տեղ էլ. «Անզգամը հակառակ է ամեն ինչի» (Առակ. 14; 7):

Լսեցի ես մի եղբոր մասին, որ երբ նա այցելում էր եղբայրներից որևէ մեկին և տեսնում էր նրա խուցը անմաքուր և թափթված, ապա ասում էր ինքնիրեն. «Երանելի է այս եղբայրը, որ մի կողմ է թողել երկրավոր ամեն մի հոգս և այդպես իր ամբողջ միտքը հառել է դեպի վեր, այնպես որ ժամանակ չի նույնիսկ իր խուցը կարգի բերել»: Նմանապես, երբ այցելում էր մեկ ուրիշին և տեսնում էր նրա խուցը կարգի բերված, ավլած և մաքուր, ապա դարձյալ ասում էր ինքնիրեն. «Ինչպես որ այս եղբոր հոգին է մաքուր, այդպես էլ նրա խուցն է մաքուր, և խցի վիճակը համապատասխան է

նրա հոգու վիճակին»։ Եվ նա երբեք ոչ մեկի մասին չէր ասում, թե՛ այս եղբայրը ծուլ է, կամ՝ սա փառասեր է, այլ, ըստ իր բարի հոգեվիճակի, օգուտ էր քաղում յուրաքանչյուրից։ Բարերարն Աստված թող շնորհի մեզ բարի հոգեվիճակ, որպեսզի մենք ևս կարողանանք օգուտ քաղել յուրաքանչյուրից և երբեք չնկատել մերձավորի թերությունները։ Իսկ եթե մենք, ըստ մեր սեփական մեղսավորության, նկատում էլ ենք կամ ենթադրում դրանք, ապա իսկույն վերածենք մեր խորհուրդը բարի մտքերի։ Քանզի, եթե մարդը չնկատի մերձավորի թերությունները, ապա, Աստծո օգնությամբ, նրա մեջ կծնվի բարեգթություն, որը հաճելի է Աստծուն։ Քանզի Նրան է վայել փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս հավիտենից։ Ամեն։

**ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ.  
ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ԵՎ  
ԻՆՉՊԵՍ ՀՆԱԶԱՆԻՎԵԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ**

17-րդ ուսուցում

Եթե դու եղբայրների առաջնորդ ես, հոգ տար նրանց մասին սրտի խոնարհությամբ և ներողամտությամբ՝ խրատվելով և ուսուցանելով առաքինությունները գործով և խոսքով, առավելապես գործով, որովհետև օրինակը խոսքից ավելի ներգործուն է և ազդեցիկ։ Եթե կարող ես, օրինակ եղիր նրանց համար նաև մարմնավոր ճգնությունների մեջ, իսկ եթե տկար ես, ապա՝ բարի հոգեվիճակով և առաքյալի կողմից թվարկված Հոգու պտուղներով՝ սիրով, ուրախությամբ, խաղաղությամբ, երկայնամտությամբ, ողորմածությամբ, գթասրտությամբ, հավատով, հեզությամբ և ժուժկալությամբ (Պաղ. 5; 22-23)։ Իսկ կատարված զանցանքների համար շատ մի՛ դժգոհիր, այլ, առանց խռովվելու, ցույց տուր զանցանքից առաջ եկող վնասը։ Եթե պետք է հանդիմանել, ապա ուշադրություն դարձրու նրա դեմքին և ընտրիր հարմար ժամանակ։ Խիստ մի՛ պատժիր փոքր զանցանքների համար, կարծես թե դու ինքդ կատարյալ արդար ես, և հաճախակի մի՛ հանդիմանիր, քանզի դա ճշող է, և հանդիմանության հանդեպ սովորությունից առաջ է գալիս անզգայություն և անտարբերություն։ Մի՛ հրամայիր իշխանաբար, այլ՝ խոնարհաբար կարծես խրատելով եղբորը, քանզի այդպիսի խոսքը դյուրընկալելի է լինում, առավել ուժգին է համոզում և հանգստացնում է մերձավորին։

Իսկ խռովության ժամանակ, երբ եղբայրը քեզ հակառակվում է, զսպի՛ր լեզուդ, որպեսզի բնավ ոչինչ չասես բարկությամբ, և թույլ մի՛ տուր, որ սիրտդ բարձրամտի նրա հանդեպ, այլ հիշի՛ր, որ նա քո եղբայրն է, Քրիստոսի անդամը և Աստծո պատկերը, որ փորձվում է մեր ընդհանուր թշնամու կողմից։

Կարեկցի՛ր նրան, որպեսզի սատանան, խոցելով նրան դյուրաբորբոքությամբ, չգերի նրան և չսպանի հիշաչարությամբ, և որպեսզի մեր անուշադրությունից չկործանվի հոգին, որի համար Քրիստոս մեռավ: Հիշի՛ր, որ դու էլ ես հաղթվում բարկության կրքից և, քո սեփական տկարությունից դատելով, կարեկցա՛նք ունեցիր եղբորդ հանդեպ, գոհացի՛ր, որ առիթ ես գտել ուրիշին ներելու, որպեսզի դու ևս ներում գտնես Աստուծոց քո մեծ և բազմաթիվ մեղանչումների համար, քանզի ասված է. **«Ներեցե՛ք և ներում պիտի գտնեք»** (Ղուկ. 6; 37): Մի՞թե կարծում ես, որ քո եղբայրը վնաս է կրում քո երկայնամտությունից: Բայց առաքյալը պատվիրում է բարիով հաղթել չարին, այլ ոչ թե չարով՝ բարուն (Հռմ. 12; 21): Եվ հայրերն են ասում. «Եթե դու ուրիշին նկատողություն անելիս տարվում ես բարկությամբ, ապա դու լուր քո սեփական կիրքն ես սնում, իսկ ոչ մի խելամիտ մարդ չի քանդում իր տունը նրա համար, որպեսզի կառուցի մերձավորինը: Իսկ եթե խռովքը շարունակվի, ապա ստիպի՛ր սրտիդ և աղոթիր՝ ասելով. «Ողորմած և մարդասեր Աստված, որ Քո անճառելի բարությամբ ստեղծեցիր մեզ ոչնչից, որպեսզի վայելենք Քո բարիքները, և Քո Միածին Որդու՝ մեր Փրկչի Արյամբ կանչեցիր մեզ՝ Քո պատվիրաններից խոտորվածներիս, արի՛ և այժմ, օգնի՛ր մեր տկարությանը. և ինչպես որ երբեմն սաստեցիր ալեկոծվող ծովը, այդպես և այժմ սաստի՛ր մեր սրտերի խռովքը, որպեսզի միաժամանակ չզրկվես մեր երկուսից՝ քո զավակներից, որ մեռած ենք մեղքով, և որպեսզի չասես մեզ. **«Ի՞նչ օգուտ ունես իմ արյունից, եթե ապականության գբի մեջ ես թաղված»** (Սղմ. 29; 10), և **«Ճշմարիտ եմ ասում, որ ձեզ չեմ ճանաչում»** (Մատթ. 25; 10), որովհետև մեր ճրագները հանգչել են յուզի պակասից»: Եվ այս աղոթքից հետո, երբ սիրտդ հանդարտվի, այնժամ արդեն կարող ես խելամտորեն և սրտի խոնարհությամբ, ըստ առաքելական պատվիրանի, հանդիմանել,

սպառնալ, հորդորել և կարեկցանքով բժշկել և ուղղել եղբորը, որպես **«տկար անդամի»** (Գաղ. 6; 12, Տիմ. 4; 2): Քանզի այնժամ և եղբայրը, գիտակցելով իր խստասրտությունը, կընդունի քո խրատը հավատով, և դու քո (սեփական) խաղաղությամբ կխաղաղեցնես նրա սիրտը: Այսպես ուրեմն, թող ոչինչ չբաժանի քեզ Քրիստոսի սուրբ պատվիրանից. **«Սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով՝ խոնարհ»** (Մատթ. 11; 29), քանզի ամենից առաջ մեզ պետք է հոգ տանել խաղաղ հոգեվիճակի մասին այնպես, որ նույնիսկ արդարացի պատրվակների տակ, կամ հանուն պատվիրանների բնավ չխռովվի մեր սիրտը, այն համոզմամբ, որ մենք բոլոր պատվիրանները ջանում ենք կատարել հենց հանուն սիրո և սրտի մաքրության: Նման ձևով խրատելով եղբորդ՝ դու նույնպես կլսես այս ձայնը. **«Եթե անարգի միջից դուրս հանես պատվականը, կլինես ինչպես իմ բերանը»** (Երեմ. 15; 19):

Եթե դու գտնվում ես հնազանդության մեջ, ապա երբեք մի՛ հավատա քո սրտին, քանզի այն կուրացած է հին մարդու կրքերով: Ոչ մի բանում մի՛ հետևիր քո դատողությանը և ինքդ քեզ ոչինչ մի՛ նշանակիր՝ առանց խորհուրդ հարցնելու: Մի՛ մտածիր և մի՛ կարծիր, որ դու քո ուսուցչից ավելի լավն ու արդար ես, և մի՛ քննիր նրա գործերը, այլպես դու հաճախ կարող ես խաբվել և ընկնել փորձության մեջ. քանզի դա սատանայի խաբկանք է, որը ցանկանում է արգելք հանդիսանալ հավատով կատարվող հնազանդությանը և զրկել մեզ սրանից եկող ամուր և հաստատուն փրկությունից: Այդպես վարվելով՝ դու կհնազանդվես հանգիստ և անվտանգ, և չես մոլորվի մեր հայրերի ճանապարհից:

Բռնադատի՛ր քեզ և մերժի՛ր կամքդ ամեն ինչում, և Քրիստոսի շնորհով, ուսուցման միջոցով, կամքդ հատելու սովորություն ձեռք կբերես, և հետո կսկսես այդ անել առանց բռնադատման և վշտերի. և դուրս կգա, որ ամեն բան կլինի այն-

պես, ինչպես դ՛ու ես ուզում. մի՛ փափագիր, որ ամեն բան լինի այնպես, ինչպես որ դու ես ուզում, այլ փափագիր, որ այն լինի այնպես, ինչպես որ պետք է լինի, և այդպիսով խաղաղություն կունենաս ամենքի հետ: Ի դեպ, սա (վերաբերում է) այն պարագային, որտեղ չկա զանցանք Աստծո և հայրերի պատվիրանների դեմ: Ջանա՛ ամեն ինչում մեղադրել ինքդ քեզ և խելամտորե՛ն կատարիր քեզ ոչինչ համարելու (պատվիրանը): Եվ հավատա, որ ինչ որ պատահում է մեզ հետ, մինչև իսկ ամենափոքրը, լինում է Աստծո նախախնամությամբ, և այդ ժամ դու առանց խռովքի կկրես քեզ վրա եկած ամեն բան:

Հավատա, որ անարգանքը և նախատիները հոգուդ հպարտությունը բուժող դեղամիջոցներ են, և աղոթի՛ր քեզ նախատողների համար, որպես հոգուդ ճշմարիտ բժիշկների, համոզված լինելով, որ նա, ով ատում է անարգանքը, ատում է խոնարհությունը, և ով խուսափում է իրեն տրամեցնողներից, նա փախչում է հեզոլթյունից: Մի՛ ցանկացիր իմանալ մերձավորիդ թերությունները և մի՛ ընդունիր նրա հանդեպ կասկածներ, որոնք թշնամին է քեզ ներչնչում. իսկ եթե դրանք առաջանում էլ են քո մեջ, ըստ մեր մեղանշականության, աշխատի՛ր դրանք վերածել բարի մտքերի: Գոհություն հայտնիր ամեն ինչի համար և ձեռք բեր բարեգլխություն և սուրբ սեր: Ամենից առաջ ամենքս ամեն ինչում պահպանենք մեր խիղճը՝ Աստծո, մերձավորի և իրերի նկատմամբ, և նախքան ինչ-որ բան ասելը կամ անելը, փորձենք՝ համապատասխա՞ն է արդյոք այն Աստծո կամքին. և ապա նոր, աղոթելով, ասենք կամ անենք այն, և Աստծո առջև դնենք մեր տկարությունը, և Նրա բարեգլխությունը մեզ կօգնի ամեն ինչում, քանզի Նրան է վայել փառք, պատիվ և երկրպագություն հավիտյանս հավիտենից: Ամեն:

Եթե չես ուզում ընկնել ջղայնության և հիշաչարության մեջ, ապա բնավ մի՛ կապվիր իրերին և չափազանց հոգածություն մի՛ ցուցաբերիր նրանց նկատմամբ, սակայն մի՛ էլ արհամարհիր դրանք, իբր անկարևոր են և չնչին: Իսկ երբ մեկը ուզում է քեզանից, տո՛ւր, եթե նա պատահաբար կամ անփութությունից կոտորի կամ կորցնի այն, մի՛ վշտացիր: (Ի դեպ) դու պետք է այդպես վարվես ո՛չ թե վանական գույքի հանդեպ անհոգությունից կամ անտարբերությունից, քանզի դու պարտավոր ես քո ամբողջ ուժով և ամենայն ջանադրությամբ հոգ տանել նրանց մասին, այլ՝ խռովքից և վեճերից քեզ հեռու պահելու ցանկությունից՝ Աստծո առջև մշտապես ներկայացնելով քո ուժգին ճիգն ու ջանքը: Սրան դու կարող ես հասնել միայն այն ժամանակ, երբ վանական գույքը կտնօրինես՝ ո՛չ որպես քո սեփականը, այլ՝ որպես Աստծուն ընծայաբերված և լուկ քո հոգացությունը վստահված: Քանզի առաջինը մեզ տրամադրում է լուկ այն բանին, որ կիրք չտածենք (իրերի հանդեպ) և չկապվենք նրանց, իսկ երկրորդը՝ այն բանին, որ չարհամարհենք նրանց: Իսկ եթե դու այս նպատակը չունես քո առջև, ապա վստահ եղիր, որ չես դարձնի ենթարկվել խռովքի՝ խռովելով և՛ քեզ, և՛ ուրիշներին:

**Հարց.** Իմ միտքը ցնծում է այս խոսքերից և ցանկանում է, որպեսզի դա այդպես լինի, սակայն ինչո՞ւ եմ ես անպատրաստ գտնվում հարկ եղած դեպքում:

**Պատ.** Որովհետև մշտապես չես վարժվում դրանում: Եթե ուզում ես ունենալ այդ խորհուրդները (անհրաժեշտ) պահին, ապա մշտապես՝ վարժվիր դրանցում, մշտապես՝ հետևիր դրանց, և հավատում եմ Աստծուն, որ դու կառաջադիմես: Աղոթքը միաձուլի՛ր Սուրբ Գրքի ուսուցմանը: Հիվանդներին սիրաշահիր՝

գլխավորը այն բանի համար, որպեսզի դրա միջոցով ձեռք բերես գլխասրտուկը, ինչպես որ հաճախ եմ ասել. ընդամին, երբ մի օր էլ դու հիվանդանաս, ապա Աստված մի մարդ կհանի, որը կծառայի քեզ, քանզի Նա՛ ասաց. «**Ինչ չափով, որ չափում եք, նույն չափով կչափվի և ձեզ համար**» (Մատթ. 7; 2): Իսկ եթե ջանում ես կատարել գործը՝ ըստ քո կարողության և խղճի, ապա պետք է իմանաս և հավաստիացնես քեզ, որ դու տակավին չես ըմբռնել ճշմարիտ ճանապարհը. այդ իսկ պատճառով պարտավոր ես առանց խռովքի և վշտերի, այլ ուրախությամբ ընդունել, երբ լսես, որ դու մեղանչել ես նրանում, ինչը, քո կարծիքով, կատարել ես խղճով. քանզի նրանց դատողությամբ, ովքեր խելամիտ են քեզանից, ամեն թերի բան ուղղվում է, իսկ լավ կատարվածը դառնում է ավելի ամուր: Ջանա՛ առաջադիմել, որպեսզի, երբ վիշտ պատահի՝ թե՛ մարմնավոր, թե՛ հոգևոր, դու կարողանաս այն կրել առանց տրտմության, առանց նեղության և համբերության: Երբ լսես, իբր թե արել ես մի բան, որ դու չես արել, ապա մի՛ վշտացիր, այլ նույն պահին հեղուկությամբ խոնարհվի՛ր քեզ այդ բանն ասողի առջև՝ ասելով նրան. «Ների՛ր ինձ և աղոթի՛ր ինձ համար», և հետո լռի՛ր, ինչպես պատվիրել են հայրերը: Իսկ երբ նա քեզ հարցնի՝ ճիշտ է դա, թե ոչ, այնժամ խոնարհվի՛ր նրա առջև խոնարհությամբ և ասա՛ ճշմարտացիորեն, թե ինչպես է դա եղել, իսկ երբ ասես, կրկին խոնարհվի՛ր խոնարհությամբ՝ ասելով. «Ների՛ր ինձ և աղոթի՛ր ինձ համար»:

**Հարց.** Ինչպե՞ս վարվեմ. ես միշտ չէ, որ լինում եմ միևնույն տրամադրության մեջ (հոգեվիճակում) եղբայրների հետ հանդիպելիս:

**Պատ.** Դու դեռ չես կարող լինել միևնույն տրամադրության մեջ եղբայրների հետ հանդիպելիս, սակայն աշխատիր չգայթակղվել ինչ-որ բանում, ոչ ոքի չդատել, չնախատել, չհետևել

եղբոր խոսքերին, գործերին կամ շարժումներին, որոնք քեզ օգուտ չեն բերում, այլ, ավելի լավ է, ջանա՛ ամեն բանից քեզ խրատ քաղել: Մի՛ ցանկացիր սնափառություն քեզ ցույց տալ՝ ո՛չ խոսքով, ո՛չ գործով: Չափավորություն ձեռք բեր կերակրի մեջ և քո խոսքերում, մինչև իսկ ամենափոքր բաներում: Իմացի՛ր, որ ով պայքար է մղում մի որևէ կրքոտ խորհրդի դեմ կամ վշտանում է նրանից և չի խոստովանում այն, այդպիսին ինքն է ամրապնդում նրան իր դեմ, այսինքն՝ խորհրդին ուժ է տալիս առավել ուժգին պայքարելու և տանջելու իրեն: Իսկ եթե նա սկսի պայքարել և դիմադրել իր խորհրդին և գործի նրան հակառակ, ապա, ինչպես մենք հաճախ ենք խոսել, կիրքը կթուլանա և ուժ չի ունենա հաղթահարելու նրան և տրտմություն պատճառելու նրան, և այդպիսով, կամաց-կամաց, ճգնելով և Աստծուց օգնություն ստանալով, նա կհաղթահարի հենց բուն կիրքը: Թող Աստված մեզ պահպանի բոլոր սրբերի աղոթքներով: Ամեն:

**Հարց.** Ինչո՞ւ է արբա Պիմենն ասել, որ Աստծուց երկյուղելը, Աստծուն աղոթելը և մերձավորին բարիք անելը երեք գլխավոր առաքինություններ են:

**Պատ.** Այն մասին, որ պետք է վախենալ Աստծուց, ծերն ասաց այն պատճառով, որ Աստծո երկյուղը յուրաքանչյուր առաքինության նախակարապետն է, քանզի «**Իմաստության սկիզբը Աստծո երկյուղն է**» (Սղմ. 110; 10), և առանց Աստծո երկյուղի ոչ ոք չի կարող ո՛չ առաքինություն գործել, ո՛չ էլ մի որևէ բարիք, քանզի «**Աստծո երկյուղով ամեն ոք խորշում է չարից**» (Առակ. 15; 27): Իսկ այն, որ պետք է աղոթել Աստծուն, նա ասաց այն պատճառով, որ մարդն ինքն իրենով չի կարող ո՛չ առաքինություն ձեռք բերել, ո՛չ էլ մի որևէ բարիք գործել, ինչպես ես արդեն նշեցի, թեկուզ նա Աստծո երկյուղով ջանա այդ բանի համար, քանզի առանց Աստծո օգնության ոչինչ չի կա-

տարվում: Այդպիսով, անպայման անհրաժեշտ են և՛ մեր ջանքերը, և՛ Աստծո օգնությունը: Դրա համար մարդ պետք է մշտապես աղոթի Աստծուն և խնդրի Նրան օգնել իրեն և աջակցել ամեն մի գործում: Իսկ մեծավորին բարիք անելը սիրո գործ է: Քանի որ Աստուծոց երկյուղ կրողը և Աստծուն աղոթողը օգուտ է բերում միայն ինքնիրեն, իսկ ամեն մի առաքինություն կատարելագործվում է մերձավորի հանդեպ սիրով, դրա համար էլ ծերն ասաց, որ պետք է բարիք անել մերձավորին: Եվ այսպես, ով վախենում է Աստուծոց և աղոթում է Նրան, նա պետք է օգուտ բերի նաև մերձավորին և բարիք անի նրան, քանզի սա, ինչպես ես ասացի, սեր է, որը հանդիսանում է առաքինությունների կատարելությունը, ինչպես որ ասում է սուրբ առաքյալը (Հռմ. 13; 10): Մեր Աստծուն փա՛ռք հավիտյանս: Ամեն:

### ՉԱՆԱՉԱՆ, ՀԱՄԱՌՈՏ ԱՍՈՒՅԹՆԵՐ

19 -րդ ուսուցում

Աբբա Դորոթեոսն ասում էր, որ ով ապավինում է իր մտքին կամ իր դատողությանը, նրա համար անհնար է հնազանդվել կամ հետևել մերձավորի բարի գործին:

Ասում էր նաև՝ լինելով կրքոտ՝ մենք բնավ չպետք է հավատանք մեր սրտին, քանզի ծուռ կանոնը և ուղիղն է ծուռում:

Ասում էր նաև՝ եթե մեկը չարհամարհի բոլոր իրերը, փառքը և մարմնավոր հանգիստը, դրա հետ մեկտեղ նաև ինքնարդարացումը, նա չի կարող մերժել իր ցանկությունները, ո՛չ ձերբազատվել զայրությունից և վշտից, ո՛չ էլ հանգստացնել մերձավորին:

Ասում էր նաև՝ մեծ գործ չէ չդատելը կամ կարեկցելը նրան, ով գտնվում է վշտի մեջ և ենթարկվում է քեզ, այլ մեծ է՝ չդատելը նրան, ով քեզ հակաճառում է, վրեժխնդիր չլինել՝ կր-

քից մղված, չհամաձայնվել նրան դատողների հետ և ուրախանալ քեզանից գերադասելիի հետ:

Դարձյալ ասաց. մերձավորից սեր մի՛ պահանջիր, քանզի (այն) պահանջողը խռովվում է, եթե այն չի ստանում. ավելի լավ է, դու ի՛նքդ սեր ցուցաբերիր մերձավորի հանդեպ և կխաղաղվես, և այդպիսով նաև մերձավորի մեջ սեր կարթնացնես քո հանդեպ:

Դարձյալ ասաց. ով Աստծուն հաճելի գործ է անում, նրան վրա անպայման փորձություն կհասնի, քանզի ամեն մի բարի գործին կամ նախորդում է, կամ հետևում է փորձությունը. ամեն մի գործ, որ արվում է հանուն Աստծո, չի կարող ամուր լինել, եթե փորձված չլինի փորձությունը:

Դարձյալ ասաց. ոչինչ այնպես սերտորեն չի միավորում մարդկանց իրար հետ, որքան այն, երբ նրանք ուրախանում են միևնույն բանում և ունեն միևնույն մտածելակերպը:

Դարձյալ ասաց. մերձավորի տվածը չարհամարհելը խոնարհություն է, և պետք է այն ընդունել գոհունակությամբ, թեկուզև այն լինի փոքր և աննշան:

Դարձյալ ասաց. եթե մի որևէ գործ ինձ պատահի, ապա ինձ ավելի հաճելի է վարվել ըստ մերձավորի խորհրդի, թեկուզև նրա խորհրդով փչացնեմ այն, քան թե լավ կատարեմ գործը՝ հետևելով իմ կամքին:

Դարձյալ ասաց. ամեն մի գործի մեջ լավ է, որ ինքդ հոգ տանես այն փոքրի մասին, ինչի կարիքը որ ունես, քանզի օգտակար չէ ըստ ամեն ինչում հանգիստ լինել:

Դարձյալ ասաց. ինչ գործ որ ինձ պատահել է, ես երբեք չեմ ցանկացել ինձ պաշտպանել մարդկային իմաստությունով. այլ ինչ էլ որ լինի, ես միշտ այն կատարում եմ ըստ իմ կարողության և ամեն բան ներկայացնում եմ Աստծուն:

Դարձյալ ասաց. ով չունի իր կամքը, նա մշտապես կատա-

րում է իր (ցանկուլթյունը): Քանի որ այդպիսին չունի իր ցանկուլթյունը, ապա ինչ էլ որ պատահում է նրան, նա ամեն ինչից գոհ է մնում, և այսպես պարզվում է, որ նա մշտապես կատարում է իր ցանկուլթյունը, քանզի նա չի փափագում, որ գործերը կատարվեն այնպես, ինչպես որ ինքն է ուզում, այլ ուզում է, որ դրանք լինեն այնպես, ինչպես որ պետք է լինեն:

Դարձյալ ասաց. պատշաճ չէ, երբ որևէ մեկը ուղղում է իր եղբորը հենց այն պահին, երբ նա մեղանչում է իր դեմ, ասենք ուրիշ ժամանակ ևս նա չպետք է վրեժխնդիր լինի իր համար:

Ասում էր նաև. Աստծո սերը զորեղ է բնական սիրուց:

Ասում էր նաև. չարիք մի՛ գործիր նույնիսկ կատակով, քանզի պատահում է, որ մեկը սկզբից չարիք է գործում կատակով, իսկ հետո, չուզենալով, տարվում է դրանով:

Ասում էր նաև. չպետք է բաղձալ ազատվել կրքից՝ լուկ նրանից առաջ եկող վշտերից խուսափելու համար, այլ՝ նրա հանդեպ կատարյալ ատելությունից, ինչպես որ ասված է. «Կատարյալ ատելությամբ ատեցի նրանց, և նրանք թշնամի եղան ինձ» (Սղմ. 138; 22):

Ասում էր նաև. անհնար է, որ որևէ մեկը զայրանա մերձավորի վրա, եթե նրա սիրտը նախ չբարձրամտի նրա հանդեպ, եթե նա չնսեմացնի նրան և իրեն չհամարի նրանից բարձր:

Ասում էր նաև. նշանը այն բանի, որ ինչ-որ մեկը հոժարակամորեն է գործադրում իր կիրքը, հանդիսանում է իր խռովքը այն պահին, երբ նրան հանդիմանում կամ ուղղում են այդ բանում: Իսկ առանց խռովքի ընդունել հանդիմանությունը, այսինքն՝ խրատը, նշան է այն բանի, որ նա պարտվել է կրքից կամ գործել է այն անգիտությունից: Մեր Աստծուն վայել է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ  
ՈՐՈՇ ԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ՈՐՈՒՄ ԵՐԳՎՈՒՄ ԵՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ  
Ս. ՋԱՏԿԻ ԺԱՄԱՆԱԿ**

20-րդ ուսուցում

Ախորժեղի է ինձ խոսել ձեզ հետ, թեկուզ մի փոքր, երգեցողության մասին, որ մենք երգում ենք, որպեսզի դուք սքանչանաք ոչ միայն երաժշտությամբ, այլև ձեր միտքը հավասարաչափ բոցավառվի խոսքերի ուժով: Այսպիսով, ի՞նչ էինք մենք նոր երգում. «Հարության օր է. (զոհ) մատուցենք ինքներս մեզ»: Հնում իսրայելացիների որդիները տոների կամ հանդիսությունների ժամանակ Աստծուն ընծաներ էին նվիրաբերում օրենքի համաձայն, այսինքն՝ ողջակեզի զոհեր, երախայրի և այլն: Այդ պատճառով էլ սբ. Գրիգորը մեզ ուսուցանում է նրանց նման կատարել Տիրոջ տոնը և ոգևորում է մեզ՝ ասելով. «Հարության տոն է, Աստվածային հաղիսություն օր է, Քրիստոսի Ջատիկի օր»: Ի՞նչ է նշանակում Քրիստոսի Ջատիկ: Ջատիկ կատարեցին իսրայելացիների որդիները, երբ դուրս եկան Եգիպտոսից. իսկ այժմ Ջատիկը, որի տոնակատարմանը մեզ մղում է սբ. Գրիգորը, կատարում է հոգին, որը դուրս է եկել մտավոր Եգիպտոսից, այսինքն՝ մեղքից: Քանզի երբ հոգին մեղքից անցնում է առաքինության, այնժամ նա կատարում է Տիրոջ Պասեքը, ինչպես ասել է Եվագրոսը. «Տիրոջ Ջատիկը անցում է չարից (դեպի բարին)»: Այսպես ուրեմն, այժմ Տիրոջ Ջատիկն է, լուսավոր տոնի օր է, Հարության օրը Քրիստոսի, Ով մեղքը խաչափայտին գամեց, մեզ համար մեռավ և Հարություն առավ: Մենք ևս Տիրոջը նվիրաբերենք ընծաներ, զոհեր, ողջակեզներ, սակայն ոչ անբան անասուններ, որոնց Քրիստոսը չի ցանկանում, քանզի անբանների «զոհերն ու ընծաները հաճելի չեղան Քեզ, և ողջակեզ և մեղալագին չպա-

**Հանջեցիր»** (Սղմ. 39; 7): Եվ Եսային է ասում. **«Իմ ինչի՞ն են պետք ձեր բազմաթիվ զոհերը,»** -ասում է Տերը (Ես. 1; 11): Բայց քանի որ Աստծո Գառը մորթվեց մեզ համար, առաքյալի խոսքի համաձայն, որ ասաց. **«Քրիստոս՝ մեր զատիկը մորթվեց»** (Ա. Կորնթ. 5; 7), որպեսզի վերցնի աշխարհի մեղքը՝ անեծք դառնալով մեզ համար (Գաղ. 3; 13), ինչպես գրված է՝ **«անիծյալ է այն մարդը, որ կախված է փայտից»** (Բ. Օրին. 21; 23), մեզ վերստին գնեց օրենքի անեծքից, որպեսզի մենք որդեգրուվեցինք ընդունենք (Գաղ. 3; 13, 4; 5), ապա մենք ևս պետք է նվիրաբերենք Նրան աստվածահաճո ընծա:

Իսկ ինչպիսի՞ ընծա կամ զոհ պետք է նվիրաբերենք Քրիստոսին Հարույթյան օրը, որպեսզի այն հաճելի լինի Նրան, քանի որ Նա չի ուզում անբան անասունների զոհաբերումը: Նույն սուրբը նաև այդ է մեզ ուսուցանում, քանզի ասելով՝ **«Հարույթյան օր է»**, նա ավելացնում է. **«Զոհ մատուցենք ինքներս մեզ»:** Այդպես և առաքյալն է ասում. **«Պատրաստեցեք ձեր մարմինները որպես զոհ կենդանի, սուրբ, աստվածահաճո. այդ է ձեր բանական պաշտամունքը»** (Հռոմ. 12; 1): Իսկ ինչպե՞ս մենք պետք է մեր մարմինները Աստծուն կենդանի և սուրբ զոհ մատուցենք. այլևս չկատարելով մեր մարմնի կամքը և մեր խորհուրդները (Եփս. 2; 2), այլ ընթանալով հոգով և մարմնի ցանկությունները չկատարելով (Գաղ. 5; 16), քանզի սա նշանակում է՝ սպանել մեր երկրավոր ցանկությունները (Կող. 3; 5): Սա էլ և կոչվում է կենդանի զոհ, սուրբ և աստվածահաճո: Իսկ ինչո՞ւ է սա կոչվում կենդանի զոհ: Որովհետև զոհ մատուցվող անբան (անասունը), երբ մորթվում է, մեռնում է, իսկ սրբերը, իրենք իրենց զոհ մատուցելով Աստծուն, ամեն օր կենդանի մորթվում են, ինչպես ասում է Դավիթը. **«Քեզ համար ենք մեռնում ամեն օր. համարվեցինք որպես ոչխար սպանդի համար»** (Սղմ. 43; 29): Ահա թե ինչ են նշանակում սուրբ Գրիգորի այս

խոսքերը՝ **ընծայաբերենք ինքներս մեզ, այսինքն՝ զոհ մատուցենք ինքներս մեզ. ամբողջ օրը մահացնենք ինքներս մեզ, ինչպես որ սրբերն էին (սպանում իրենց) հանուն Քրիստոսի՝ մեր Աստծո, որ մեռավ մեզ համար: Իսկ ինչպես են մահացնում իրենց՝ «չսիրելով աշխարհը, ոչ էլ՝ ինչ որ աշխարհի մեջ կա»** (Հովհ. 2; 15), ինչպես ասված է ընդհանրական թղթերում, մերժելով մարմնի ցանկությունները, աչքերի ցանկությունը և ա՛յս կյանքի ամբարտավանությունը (Հովհ. 2; 16), այսինքն՝ հեշտասիրությունը, արծաթասիրությունը և փառասիրությունը և, վերցնելով խաչը, հետևեցին Քրիստոսին և խաչեցին աշխարհը իրենց համար և իրենց՝ աշխարհի համար (Գաղ. 6; 14): Այս մասին ասում է առաքյալը. **«Իսկ նրանք, որ քրիստոսեաններ են, խաչն են հանում իրենց մարմինները՝ կրքերով և ցանկություններով հանդերձ»** (Գաղ. 5; 24): Ահա, թե ինչպես էին սրբերը մահացնում իրենց: Իսկ ինչպե՞ս էին նրանք զոհ մատուցում իրենց. ապրելով ո՛չ իրենց համար, այլ իրենց ծառայեցնելով Աստծո պատվիրաններին, թողնելով իրենց ցանկությունները՝ հանուն պատվիրանների և Աստծո և մերձավորի հանդեպ սիրո, ինչպես որ ասաց սուրբ Պետրոսը. **«Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո ետևից»** (Մատթ. 19; 27): Ի՞նչ թողեց նա: Մի՞թե նա փող ուներ կամ ունեցվածք, ոսկի կամ արծաթ: Նա ուներ միայն մի ցանց, այն էլ հին, ինչպես ասում է սուրբ Հովհաննես Ոսկեբերանը, սակայն նա թողեց, ինչպես հիշատակված է, **ամեն ինչ, այսինքն՝ իր բոլոր ցանկությունները, ամեն մի կապվածություն այս աշխարհի հետ, այնպես որ եթե նա ունենար կալվածքներ կամ հարստություն, ապա նա միանգամայն կարհամարհեր և դրանք և վերցնելով խաչը՝ կհետևեր Քրիստոսին՝ ըստ ասվածի. «Կենդանի եմ այսուհետև, բայց ոչ թե ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս»** (Գաղ. 2; 20): Ահա, թե ինչպես էին սրբերը զոհ մատուցում իրենց: Նրանք



մահացնում էին իրենց մեջ, ինչպես ասացինք, ամեն մի ցանկություն և իրենց սեփական կամքը և ապրում էին միայն Քրիստոսի համար: Այդպես և մենք զոհ մատուցենք ինքներս մեզ, ինչպես որ ուսուցանում է սուրբ Գրիգորը, քանզի մեզ է ցանկանում (Աստված), մենք «ամենաթանկարժեք ձեռքբերումն ենք Աստծո առջև»: Իրապես մարդը բոլոր տեսանելի արարածներից ամենաթանկարժեքն է, քանզի Արարիչը նրանց գոյացրեց իր խոսքով՝ ասելով. «Թող լինի» այս, և «եղավ», և դարձյալ. «Թող երկիրը աճեցնի» այս և այս, և «եղավ», «Թող ջրերն արտադրեն», և այլն (Մննդ. 1; 3,11,20): Իսկ մարդուն Աստված ստեղծեց իր ձեռքով և պերճացրեց նրան, իսկ մնացած ամեն ինչ դասավորեց և կարգավորեց նրան ծառայելու և հանգստացնելու համար, թագավոր կարգեց նրան այս ամենի վրա և շնորհեց նրան դրախտի քաղցրություն վայելքը, իսկ որ ամենազարմանալին է, երբ մարդը զրկվեց այս ամենից իր մեղքի պատճառով, Աստված կրկին կանչեց նրան իր Միածին Որդու Արյամբ: Մարդն ամենաթանկարժեք ձեռքբերումն է, ինչպես ասել է սուրբը, և ոչ միայն ամենաթանկարժեքը, այլև ամենաաստվածակերպը, քանզի նա ասաց. «Մարդ ստեղծենք Մեր կերպարանքով ու նմանությունով»: Եվ դարձյալ. «Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, նրա դեմքին կենդանության շունչ փչեց» (Մննդ. 1; 26-27, 2; 7): Եվ ինքը՝ մեր Տերը, գալով մեզ մոտ, ընդունեց մարդկային կերպարանք, մարդկային մարմին և հոգի, և մի խոսքով, ամեն բան՝ բացի մեղքից, դարձավ մարդ, այսպես ասած, դրանով մարդուն իրեն սեփականելով և իրենը դարձնելով: Այսպիսով, լավ և պատշաճ է ասել սուրբը, որ «մարդը ամենաթանկագին ձեռքբերումն է»: Հետո, առավել հստակեցնելով, ավելացնում է. «Հատուցենք պատկերին, որ արարված է ըստ Պատկերի»: Իսկ ինչպե՞ս: Սովորե՛նք այդ առաքյալից, որն ասում է. «Մաքրե՛նք

մենք մեզ մարմնի և հոգու ամեն պղծությունից» (Բ Կորնթ. 7; 1): Դարձնենք մեր պատկերը մաքուր, ինչպիսին որ մենք այն ընդունել ենք, լվանանք նրան մեղքի ախտից, որպեսզի ի հայտ գա նրա գեղեցկությունը, որ առաքինությունից է ծագում: Այս գեղեցկության մասին նաև Դավիթն է աղոթում՝ ասելով. «Տե՛ր, Քո կամքով ուժ տվիր իմ վայելչությունը» (Սղմ. 28; 8): Եվ այսպես, մաքրե՛նք Աստծո պատկերը մեր մեջ, քանզի Աստված պահանջում է այն մեզանից այնպիսին, ինչպիսին որ մեզ պարգևել է՝ առանց արատի կամ նման բաների (Եփես. 5; 27): Հատուցե՛նք պատկերին, որ արարված է ըստ Պատկերի, ճանաչե՛նք մեր արժանապատվությունը, ճանաչե՛նք՝ ինչպիսի՛ մեծագույն բարիքների մենք արժանացանք, հիշե՛նք, թե Ում պատկերով ենք ստեղծված, չմոռանա՛նք մեծագույն բարիքները, որոնք շնորհվեցին մեզ Աստծուց՝ միմիայն ըստ Նրա բարերարության, այլ ոչ թե ըստ մեր արժանիքների, գիտակցե՛նք, որ մենք ստեղծված ենք մեզ արարող Աստծո պատկերով: Պատվե՛նք Սկզբնապետները: Չանարգե՛նք Աստծո պատկերը, ըստ որի մենք ստեղծված ենք: Ո՞վ է այն մարդը, որ թագավորի պատկերը նկարել ցանկանալով՝ կհամարձակվի վատ ներկեր օգտագործել նրանում: Արդյոք նա դրանով անպատված չի՞ լինի թագավորին և չի՞ ենթարկվի պատժի: Ընդհակառակն, նա դրա համար օգտագործում է թանկարժեք և փայլուն ներկեր, որոնք արժանի են արքայական պատկերին, իսկ երբեմն նույնիսկ ոսկի է ավելացնում թագավորի պատկերին և ջանում է բոլոր արքայական զգեստները, եթե հնարավոր է, այնպես ներկայացնել պատկերում, որ, թագավորին բնորոշ բոլոր առանձնահատկությունները տեսնելով, մտածեն, որ նայում են հենց իրեն՝ թագավորին, հենց բնօրինակին, քանզի պատկերը վեհաշուք է և վայելչագեղ: Այդպես և մենք՝ Աստծո պատկերով ստեղծվածներս, չանպատվենք մեր Սկզբնապետները այլ

դարձնենք պատկերը անարատ և փառավոր՝ Սկզբնապատկերին արժանի: Քանզի եթե տեսանելի և մեզ նման կրքոտ թագավորի պատկերը անարգողը ենթարկվում է պատժի, ապա ի՞նչ պետք է կրենք մենք՝ Աստծո պատկերը մեր մեջ արհամարհողներս և, ինչպես սուրբն է ասում, պատկերն անմաքուր վերադարձնողներս:

«Այդպիսով, պատվե՛նք Սկզբնապատկերը, ըմբռնե՛նք խորհրդի զորությունը և այն, ում համար Քրիստոս մեռավ»: Քրիստոսի մահվան խորհրդի զորությունը այսպիսին է. քանի որ մենք մեղքով կորցրինք մեր մեջ Աստծո պատկերը, և որովհետև անկման և մեղքի պատճառով դարձանք մեռյալներ, ինչպես ասում է առաքյալը (Եփես. 2; 1), ապա Աստված էլ, որ մարդուն իր պատկերով էր ստեղծել, գթասրտություն ցուցաբերելով իր արարածների և իր պատկերի հանդեպ, հանուն մեզ մարդ դարձավ և մահ ճաշակեց բոլորի համար, որպեսզի մեզ՝ մեռյալներին, բարձրացնի դեպի կյանք, որը մենք կորցրինք մեր անհնազանդության պատճառով: Քանզի Նա բարձրացավ սուրբ Խաչի վրա և խաչեց մեղքը, որի պատճառով մենք վտարվել էինք դրախտից, և «գերեվարեց գերիներին», ինչպես ասված է Սուրբ Գրքում (Սղմ. 67; 19, Եփես. 4; 8): Ի՞նչ է նշանակում «գերեվարեց գերիներին»: այն, որ Ադամի գործած հանցանքի պատճառով թշնամին մեզ գերեց և պահեց իր իշխանության տակ, այնպես որ մարդկային հոգիները, դուրս գալով այնժամ մարմնից, իջնում էին դժոխք, քանի որ դրախտը փակ էր: Իսկ երբ Քրիստոս բարձրացավ սուրբ և կենարար խաչի բարձրունքը, ապա նա իր Արյամբ ազատեց մեզ գերությունից, որով թշնամին մեզ գերել էր հանցանքի պատճառով, այն է՝ վերստին խլեց մեզ թշնամու ձեռքից և, այսպես ասած, մեզ հետ գերեց՝ հաղթելով և տապալելով մեզ գերողին, այդ իսկ պատճառով (Սուրբ Գրքում) ասվում է, որ Նա «գերեվարեց գերիներին»:

Այսպիսին է խորհրդի զորությունը. այն բանի համար մեռավ մեզ համար Քրիստոս, որպեսզի, ինչպես որ ասաց սուրբը, մեզ՝ մեռյալներին, բարձրացնի դեպի կյանք: Այդպիսով մենք ազատվեցինք դժոխքից Քրիստոսի մարդասիրությամբ, և մեզանից է կախված դրախտ գնալը, քանզի թշնամին այլևս չի բռնադատում մեզ, ինչպես առաջ, և չի պահում մեզ ստրկության մեջ. միայն թե հոգանք մեր մասին, եղբայրներ՛ր, և պահենք մեզ մեղք գործելուց: Քանզի ես նախկինում էլ եմ ձեզ բազմիցս ասել, որ ամեն մեղք, որ գործով է կատարվում վերստին մեզ գերի է դարձնում թշնամուն, քանի որ մենք ինքներս ենք մեր հոժար կամքով մեզ տապալում և ստրկացնում (նրան): Խայտառակությունն չէ սա, և մեծ աղետ չէ՞, եթե մենք այն բանից հետո, երբ Քրիստոս մեզ ազատեց դժոխքից իր Արյամբ, և այն բանից հետո, որ մենք այս ամենը լսում ենք, նորից գնանք և մեզ զցենք դժոխք: Արժանի չե՞նք նման դեպքում էլ ավելի զորեղ և դաժանագույն տանջանքների: Մարդասերն Աստված թող ողորմի մեզ և ուշիմություն չնորհի մեզ, որպեսզի մենք կարողանանք ըմբռնել այս ամենը և օգնել ինքներս մեզ, որպեսզի ձեռք բերենք գոնե մի փոքր ողորմություն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՍՈՒՐԲ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԻ ՄԱԽՆ

21 -րդ ուսուցում

Լավ է, եղբայրներ՝ երգել սուրբ Աստվածակիրների խոսքերը, որովհետև նրանք միշտ և ամենուր ջանում են լուսավորել մեր հոգիները: Հենց այս խոսքերից, որ երգվում են տոնակատարության ժամանակ, մենք պետք է մշտապես ճանաչենք նաև կատարվող հիշատակության բուն նշանակությանը, ինչպիսի սուրբ կամ հիշարժան տոն էլ որ լինի՝ տերունական, թե՛ սուրբ մարտիրոսների, թե՛ սուրբ հայրերի: Այսպես ուրեմն, մենք պետք է երգենք ուշադրությամբ և խորամուկ լինենք սուրբ հայրերի խոսքերի նշանակության մեջ, որպեսզի երգեն ոչ միայն մեր շուրթերը, ինչպես ասված է «Հարանց վարքում», այլ որպեսզի մեր սրտերն էլ երգեն նրանց հետ միասին: Առաջին երգեցողությանից մենք, ըստ մեր կարողության, որոշ բան իմացանք Սուրբ Զատիկի մասին. տեսնենք դարձյալ, թե ինչ է ուզում մեզ ուսուցանել սուրբ Գրիգորը սուրբ մարտիրոսների վերաբերյալ: Նրանց մասին երգեցողության մեջ, որը վերցված է իր խոսքերից, և որը մենք երգում ենք այսօր, ասված է՝ «կենդանի զոհեր, բանավոր ողջակեզներ» և այլն: Ի՞նչ է նշանակում՝ «կենդանի զոհեր»: Այն ամենը, որ սրբազործվում է Աստծուն զոհ մատուցելու համար, կոչվում է զոհ, ինչպես օրինակ՝ ոչխարը, արջառը և այլն: Իսկ ինչո՞ւ են սուրբ մարտիրոսները կոչվում կենդանի զոհեր: Որովհետև զոհ բերված ոչխարը նախ մորթվում և մեռնում է, հետո նոր մասնատվում և ընծայվում է Աստծուն, իսկ սուրբ նահատակները, տակավին կենդանի լինելով, մասնատվեցին, քերթվեցին, տառապեցին, անդամահատվեցին: Երբեմն տանջարարները հատում էին նրանց և՛ ձեռքերը, և՛ ոտքերը, և՛ լեզուն, և հանում էին նրանց աչքերը. և այն աստիճան էին քերթում նրանց կողոսկրերը, որ երևում էր նույնիսկ նրանց

փորոտիքը: Եվ այս ամենը, ինչ որ ես ասացի, սրբերը կրում էին տակավին լինելով կենդանի, տակավին ունենալով հոգին իրենց մեջ. այդ պատճառով էլ նրանք կոչվում են կենդանի զոհեր: Իսկ ինչո՞ւ են (կոչվում) նաև «բանավոր զոհեր»: Որովհետև այլ է զոհը, և այլ՝ ողջակեզը: Երբեմն զոհաբերում էին ոչ թե ամբողջ ոչխարը, այլ՝ միայն նրա առանձին մասերը, ինչպես ասված է Օրենքում, աջ ուսը, փայծաղը, զույգ երիկամները և այլն: Դրանք բերողները այդ առանձին մասերը անվանում էին զոհ. դրանից նման ընծայաբերումն էլ է կոչվում ընդհանրապես զոհ, պատարագ: Ողջակեզ կոչվում է այն, երբ ամբողջ ոչխարը, կամ ամբողջ արջառը, կամ որևէ մի այլ ընծա այրում են անմնացորդ, ինչպես ասված է նույն Օրենքում, գլուխը ոտքերի հետ և ներքին օրգաններով, երբեմն նաև ստամոքսը, մի խոսքով, ամբողջը մինչև վերջ այրում են, և սա կոչվում է ողջակեզ: Այդպես իսրայելացիների որդիները Օրենքի համաձայն ընծայաբերում էին զոհեր և ողջակեզներ: Իսկ այս զոհերն ու ողջակեզները նախապատկերն էին այն հոգիների, որոնք կամենում են փրկվել և իրենց (զոհ) մատուցել Աստծուն:

Ասեմ ձեզ այս մասին մի փոքր նաև նրանից, ինչ որ ասել են հայրերը, որպեսզի, երբ կարդաք այս, դուք ձեր մտքով բարձրանաք և սնեք ձեր հոգիները: Մկանների (կամ ուսերի) տակ նրանք հասկանում են գործունեություն, որի փոխարեն ընդունվում են նաև, ձեռքերը, ինչպես ձեզ ասել եմ բազմիցս, քանզի մկանները կազմում են ձեռքի ուժը: Եվ այսպես, (իսրայելացիները) ընծայաբերում էին աջ ձեռքի զորությունը, այսինքն՝ բարի գործերը, քանզի աջ ձեռքը բարեգործության (նշանակն) է համարվում: Կենդանու մյուս բոլոր մասերը, որոնց մասին մենք հիշատակեցինք, ինչպես օրինակ՝ լյարդը, երկու երիկամները և ճարպը նրանց հետ, ազդրերը և ազդրերի վրա եղած ճարպը, սիրտը, կուրծքը և մնացած բաները նմանապես

սիմվոլներ են, ինչպես ասում է առաքյալը. «Այս բոլորը իբրև օրինակ պատահեց նրանց հետ, բայց որպես խրատ գրվեց մեզ համար» (Ա. Կորնթ. 10; 11): Իսկ թե դա ինչպես է, ես ձեզ կբացատրեմ: Հոգին, ինչպես ասում է սուրբ Գրիգոր Նյուսացին, բաղկացած է երեք մասերից՝ դրանք են՝ ցանկական, ցասմնական և բանական: Այսպիսով, նրանք ընծայաբերում էին փայծաղը, իսկ որովայնը հայրերը ընդունում են որպես ցանկասիրություն և տուպանքի օջախ, իսկ փայծաղը հենց որովայնի եզրն է: Նշանակում է նրանք խորհրդաբար ընծայում էին ցանկական մասի եզրը, այսինքն՝ նրա ամենալավ և ամենակարևոր մասը: Իսկ սա նշանակում է, որ ոչինչ (չպետք է) սիրել Աստծուց առավել և ամբողջ ցանկականից ոչինչ չգերադասել Աստծո հանդեպ ձգտումից, քանզի մենք ասացինք, որ Նրան ընծայում էին ամենալավը: Իսկ երիկամները և նրանց ճարպը, ազդրերը և նրանց ծածկող ճարպը հավասարաչափ նույն բանն են խորհրդանշում, քանզի ասում են, որ այնտեղ է ցանկասիրություն օջախը. սրանք բոլորը խորհրդանշում են ցանկական մասը: Իսկ ցասմնական մասի խորհրդանիշը սիրտն է, քանզի ասում են, որ այնտեղ է ցասման օջախը, ինչը և վկայում է նաև սուրբ Բարսեղը՝ ասելով. «Ցասումը արյան եռքն է սրտի շուրջ», իսկ կուրծքը բանական մասի խորհրդանիշն է, քանզի բանականության (խորհրդանիշ) է ընդունված կուրծքը: Դրա համար էլ ասվում է, որ երբ Մովսեսը Ահարոնին հագցրեց առաջին քահանայական զգեստը, ապա, Աստծո պատվերով, նրա կրծքին կախեց լանջապանակը, որ կոչվում է լոգիոն (բանական) (Ղևտ. 8; 8): Այսպիսով, սրանք բոլորը, ինչպես ասացինք, խորհրդանիշներն են հոգու, որը Աստծո օգնությունը մաքրում է իրեն բարեգործության միջոցով և վերադառնում իր բնական վիճակին: Քանզի Եվագրն ասում է. «Բանական հոգին այն ժամանակ է գործում ըստ էության, երբ նրա ցանկական մասը տենչում է առաքինության, ցասմնական

մասը ջանում է դրա համար, իսկ բանական մասը տրվում է (առաքինության) հայեցողությանը»:

Երբ զոհ մատուցելու համար բերում էին ոչխար, կամ արջառ, կամ նման մի բան, խորայելացիների որդիները հանում էին դրանք (այսինքն՝ փայծաղը, երիկամները և այլն) բերվածից և դնում էին զոհասեղանին Տիրոջ առջև, և սա կոչվում է զոհ: Բայց երբ բերում էին զոհի կենդանուն ամբողջապես և այրում էին նրան այնպես, ինչպես որ նա կար՝ ողջ և կատարյալ, ապա դա կոչվում է, ինչպես մենք վերը ասացինք, ողջակեզ: Դա կատարյալների խորհրդանիշն է, նրանց, որոնք ասում են. «Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո ետևից» (Մատթ. 19; 27): Հոգևոր հասակի հենց այս չափին էր Տերը պատվիրում հասնել այն երիտասարին, որն ասաց Նրան. «Այդ բոլորը իմ մանկությունից ի վեր արել եմ»: Քանզի մե՛կ բան է պակասում»: Ո՞րն է այդ. «Վերցրո՛ւ խաչդ և արի՛ իմ ետևից» (Մարկ.10; 21, Մատթ. 19.20-21): Այդպես սուրբ նահատակները իրենց ամբողջովին (զոհ) մատուցեցին Աստծուն և ոչ միայն իրենք իրենց, այլև այն, ինչ որ իրենցն էր, և ինչ որ նրանց մոտ էր: Քանզի այլ բան է, ինչպես ասում է սուրբ Բարսեղը, մենք ինքներս, այլ բան է մերը, և մի այլ բան՝ որ մեզ մոտ է: Մենքը, -միտքն ու հոգին է, մերը, - մարմինն է, իսկ մեզ մոտ, ունեցվածքն է և մնացյալ իրերը: Այսպիսով, սրբերը իրենք իրենց զոհ մատուցեցին Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ զորությունով՝ կատարելով Սուրբ Գրքի խոսքը. «Միրի՛ր Քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով» (Մատթ. 22; 37), քանզի նրանք արհամարհեցին ոչ միայն երեխաներին, կանանց, փառքը, ունեցվածքը և այլ հարստությունները, այլև իրենց մարմինները. դրա համար էլ նրանք կոչվում են ողջակեզ: Բանավոր են կոչվում, որովհետև մարդը բանական կենդանի է:

«Աստծո համար մորթվածներ», և հետո՝ «Աստծուն ճանաչող

և Աստծուց ճանաչված ոչխարներ»։ Ինչպե՞ս են նրանք ճանաչում Աստծուն։ Ինչպես որ Ինքը՝ Տերը ցույց տվեց և սովորեցրեց՝ ասելով. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, և Շա ճանաչում եմ նրանց ու ճանաչվում եմ նրանցից» (Հովհ. 10; 27)։ Ինչո՞ւ Նա ասաց. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են», փոխանակ ասելու՝ Իմ խոսքերը լսում են և Իմ պատվիրանները պահում են, դրա համար էլ ճանաչում են Ինձ։ Քանզի պատվիրանապահությունը սրբերը մերձենում են Աստծուն, և որքան նրանք մերձենում են Նրան, այնքան էլ ճանաչում են Նրան և ճանաչվում են Նրանից։ Սակայն Աստված գիտի ամեն բան՝ և՛ ծածուկը, և՛ խորունկը, և՛ չեղածը։ Իսկ ինչո՞ւ է սուրբ Գրիգորը սրբերի մասին ասում՝ «Աստծուց ճանաչվածներ»։ Որովհետև նրանք, ինչպես ես ասացի, պատվիրանապահության միջոցով մերձենում են Նրան, ճանաչում են Նրան և ճանաչվում են Նրանից։ Քանզի որքանով որ մեկը վանվում և հեռանում է մյուսից, այնքանով ասվում է նրա մասին, որ նա չի ճանաչում նրան և ճանաչված չէ նրանից, նմանապես և մեկ ուրիշին մոտեցողի մասին ասում են, որ նա ճանաչում է, և իրեն ճանաչում են։ Դրա համար էլ Աստծո մասին ասվում է, որ Նա չի ճանաչում մեղավորներին, քանզի նրանք հեռանում են Նրանից։ Ինչպես որ Տերն Ինքն է այդպիսիներին ասում. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» (Մատթ. 25; 12)։ Այսպես ուրեմն, սրբերը, ինչպես ես հաճախ եմ ասել, որքան ավելի են առաքինություններ ձեռք բերում՝ պատվիրանապահության միջոցով, այնքան ավելի են տիրանում Աստծուն, և որքան ավելի են տիրանում Նրան, այնքան ավելի են ճանաչում է նրան, և Նա ճանաչում է նրանց։

«Նրանց ցանկապատը անանցանելի է գայլերի համար»։ Ցանկապատ է կոչվում չորս բոլորը ցանկապատված այն վայրը, որտեղ հովիվը հավաքում է ոչխարներին և պահպանում է, որպեսզի գայլերը նրան չհափշտակեն, կամ էլ չգողանան ավազակները։

Իսկ եթե ցանկապատը մի որևէ կողմից փտած է, ապա հեշտ է լինում մտնել նրա մեջ և հարմար է գայլերին ու ավազակներին հարձակվելու (ոչխարների վրա)։ Իսկ սրբերի ցանկապատը բոլոր կողմերից ամրացված է և պահպանվում է, ինչպես ասում է Տերը. «Ոչ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում»։ (Մատթ. 6; 20), և ոչ մի վնասակար բան չի կարող նրանց վնաս պատճառել։

Այսպիսով, աղոթե՛նք, եղբայրներ՝, որպեսզի մենք ևս արժանանք արոտակից լինելու նրանց, կամ, ծայրահեղ դեպքում, բնակվել նրանց վայելքի և հանգստի երանավետ վայրում, քանզի թեպետև մենք չենք հասել սրբերի վիճակին և անարժան ենք նրանց փառքին, սակայն կարող ենք չզրկվել դրախտից, եթե ուշիմ լինենք և մեզ մի փոքր ստիպենք։ Սուրբ Կղեմեսը ասում է. Եթե մեկը պսակին արժանի չի լինում, թող ջանա գոնե հեռու չգտնվել պսակվածներից»։ Քանզի ինչպես որ արքայական պալատներում գտնվում են մեծ և փառավոր պաշտոնյաներ, օրինակ՝ սենատորներ, պատրիկներ, սպարապետներ, քաղաքապետեր, գաղտնի խորհրդի անդամներ, և նրանք բոլորն էլ բավականին մեծարգո ազնվագարմ անձինք են. այդպես և այդ նույն պալատներում կան նաև որոշ այլ պաշտոնյաներ, որոնք փոքր աշխատավարձով ծառայողներ են։ Սակայն նրանք էլ են կոչվում թագավորի սպասավորներ և գտնվում են պալատի ներսում, թեպետ չեն օգտվում այն մեծ պաշտոնյաների փառքից, չնայած որ գտնվում են պալատի ներսում։ Պատահում է նաև, որ երբեմն նրանք էլ, առաջադիմելով, կամաց-կամաց ստանում են մեծ և փառավոր պաշտոններ և կոչումներ. նույնպես և մենք ևս ջանա՛նք խուսափել մեղք գործելուց, որպեսզի ծայրահեղ դեպքում գոնե ազատվենք դժոխքից, և (այդժամ) հնարավորություն կստանանք, Աստծո մարդասիրությունը, գտնել դրախտի մուտքը բոլոր սրբերի աղոթքներով։ Ամեն։

# ԱՔԲԱ ԴՈՐՈՑԵՆՍԻ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՐՉ ԵՂԲՈՐԸ,  
ՈՐԸ ՀԱՐՑՆՈՒՄ Է ՆՐԱՆ ԱՆՉԳԱՅՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՍԻՐՈ ՍԱՌԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոգու անզգայությունն ժամանակ, եղբայր, օգտակար է Սուրբ Գրքի և Աստվածակիր հայրերի խանդաղատական խոսքերի հաճախակի ընթերցումը, Աստծո ահավոր դատաստանի, մարմնից հոգու ելքի և նրան ընդառաջ եկող սարսափազդու գործությունների մասին հիշումը, որոնց գործակցությունը նա չարիք է գործել այս կարճատև և վշտալից կյանքում: Նմանապես օգտակար է հիշել այն մասին, որ մենք պետք է կանգնենք Քրիստոսի ահավոր և արդար ատյանի առջև, և ոչ միայն գործերի, այլև խոսքերի և մտածումների համար պատասխան տանք Աստծո առջև, Նրա բոլոր հրեշտակների առջև և ընդհանարապես նրա բոլոր արարածների առջև:

Հաճախակի հիշի՛ր նաև այն դատավճիռը, որ պիտի արտաբերի ահարկու և արդար Դատավորը իր ձախակողմում կանգնածներին. «Անիծյալներ, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթ. 25; 41): Լավ է նաև հիշել մարդկային մեծ վշտերը, որպեսզի թեկուզ ակամա այդպիսով փափկի դաժան և անզգա հոգին և գա իր մեղսավորության գիտակցությունը:

Իսկ եղբայրասիրության մեջ դու տկարանում ես այն պատճառով, որ կասկածամտության խորհուրդներ ես ընդունում մերձավորի հանդեպ և հավատում ես քո սրտին, այդ պատահում է քեզ հետ նաև այն պատճառով, որ դու ոչինչ չես ուզում կրել քո կամքին հակառակ: Արդ, ամենից առաջ դու

պետք է, Աստծո օգնությամբ, ամենևին չհավատաս քո կարծիքին և ամբողջ ուժով ջանաս խոնարհեցնել քեզ եղբայրներիդ առջև և ամբողջ հոգով մերժես քո կամքը նրանց առջև: Եթե նրանցից որևէ մեկը քեզ սրտմտություն պատճառի կամ ինչ-որ կերպ քեզ տրամեցնի, ապա դու, հայրերի խոսքերի համաձայն, աղոթի՛ր նրա համար, որպես քեզ մեծ օգուտ տվողի և քո հեշտասիրությունը բշկողի: Սրա միջոցով քո գրգռվածությունը կնվազի, քանզի, ըստ սուրբ հայրերի խոսքերի, սերը ջղայնություն սանձն է: Իսկ ամենից առաջ աղոթի՛ր Աստծուն, որպեսզի Նա քեզ տա ուշիմություն և խոհեմություն, որպեսզի դու կարողանաս իմանալ, թե ինչն՛ է կայանում Նրա կամքը՝ բարի, հաճելի և կատարյալ (Հուս. 12; 2), նմանապես և գործություն, որպեսզի միշտ պատրաստ լինես ամեն բարի գործի համար: Քանզի Նրան վայել է փառք, պատիվ և երկրպագություն, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից: Ամեն:

### ՈՒՂԵՐՁ ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ, ՈՐ ՃՆՇՎԱԾ Է ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՅՈՒՆ

Ամենից առաջ, եղբայրս, պետք է ասել, որ մենք չգիտենք Աստծո նախախնամության ճանապարհները, և դրա համար պետք է Նրա՛ն վերապահենք մեզ վերաբերող ամեն հարցի կարգավորումը, և առավել ևս հարկ է այդպես վարվել հիմա: Քանզի եթե դու ուզեցես մարդկային մտածումներով դատել կատարվածի մասին, փոխանակ նրա, որ ամբողջ տրամուկությունը հանձնես Աստծուն, ապա նման խորհուրդները միայն կնեղեն քեզ: Արդ, երբ հառնում են քո դեմ հակառակ խորհուրդներ և սկսում են նեղել քեզ, դու պետք է կանչես Աստծուն. «Տե՛ր, ինչպես որ Դու կամենում ես և ինչպես որ Դու գիտես, այդպես կարգավորիր այդ գործը», Քանզի Աստծո նախախնամությունը մեր նկատառումներից և հույսերից շատ ավելին է անում: Եվ երբեմն մեր ենթադրությունները փորձնականում այլ են լինում, և մի խոսքով, փորձության ժամանակ պետք է համբերատարություն ունենալ և աղոթել, չցանկանալ, ինչպես ես ասացի, և չկարծել, որ մարդկային մտածումներով կարելի է հաղթահարել դիվային խորհուրդները: Այս իմանալով՝ արբա Պիմենը ասաց, որ այն խոսքը, որ մեզ պատվիրում է չհոգալ վաղվա օրվա մասին (Մատթ. 6; 34), վերաբերում է այն մարդուն, որ գտնվում է փորձության մեջ:

Ուրեմն, որդյա՛կ իմ, հավատալով, որ դա ճշմարիտ է, թո՛ղ ամեն սեփական միտք, թեկուզև այն խելամիտ լինի, և հույսդ դիր Աստծո վրա, Ով կարող է անել անհամեմատ ավելին, քան մենք խնդրում ենք կամ խորհում (Եփես. 3; 20): Ես կարող էի պատասխանել այն բոլորին, ինչ որ դու ասացիր, սակայն չեմ ուզում հակաճառել ո՛չ քեզ, ո՛չ էլ նույնիսկ ինքս ինձ, միայն ցանկանում եմ քեզ ցույց տալ Աստծուն հուսալու ճանապարհը, քանզի այս ճանապարհը ամենաանվտանգն ու ամենաամուրն է: Տերը քեզ հետ:

### ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ

Հիշի՛ր, որդյա՛կ իմ, նրան ով ասաց. «Բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Աստծո արքայությունը» (Գործք. 14; 22), և չկանխորոշեց՝ որքան և հատկապես ինչպիսի, այլ անորոշ ասաց՝ բազում նեղություններով: Ուրեմն, գոհությամբ և խելամտորեն կրիր քեզ վրա եկածը. եթե մեղքեր ունես, ապա ընդունիր այն որպես քաղցրություն, իսկ եթե չունես, ապա՝ որպես կրքերից (քեզ) մաքրող կամ երկնային արքայությանը միջնորդող: Մարդասեր և գթասիրտ Աստված, որ սաստեց քամին և ծովը և մեծ խաղաղություն արեց (Մատթ. 8; 26), թող սաստի նաև քո փորձությունը, որդյա՛կ իմ, և թող լայնախոհություն տա քեզ, որպեսզի դու կարողանաս հասկանալ թշնամու նենգությունները:

### ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ, ՈՐՆ ԸՆԿԵԼ Է ԾԱՆՐ ՀԻՎԱՆԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԱՆԱԶԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ՄԵՁ

Աղաչում եմ քեզ, որդյա՛կ իմ, համբերի՛ր և գոհացի՛ր այն արգելքների համար, որ պատահում են քեզ հիվանդության ժամանակ՝ ըստ ասված խոսքի. «Ինչ էլ որ դա քո գլխին, ընդունի՛ր հոժարությամբ» (Սիր. 2.4), որպեսզի նախախնամության նկատառումները կատարվեն քեզ վրա, որդյա՛կ իմ, այնպես, ինչպես որ Նրան է հաճելի: Այսպիսով, քա՛ջ եղիր, գորացի՛ր Տիրոջով և ապավինի՛ր քո հանդեպ Նրա հոգացությանը: Աստված քեզ հետ:

## ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ, ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՓՈՐՃՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խաղաղությունն քեզ Քրիստոսով, եղբայր: Ստիպի՛ր քո սրտին հավատալ, որ անպատճառ դու ինքդ ես առիթ տվել փորձությունը, թեկուզ հիմա, այս պարագայում, դու այդպես չես գտնում: Նվաստացրո՛ւ քեզ, համբերի՛ր, աղոթի՛ր, և ես ապավինում եմ բարերար Տեր Քրիստոսի գլխարտությունը, որ, նա կհեռացնի փորձությունը: Առաքյալը ասում է. «Եվ Քրիստոսի խաղաղությունը, որ վեր է, քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը» (Փիլ. 4; 7):

### ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ

Մի՛ զարմացիր, որդյա՛կ իմ, եթե, գտնվելով լեռը տանող ճանապարհին, դու ընկնես փշերի և տատասկների մեջ. կրկին կհանդիպեն և հարթ վայրեր, քանզի սխրանքի մեջ գտնվողները երբեմն ընկնում են, իսկ երբեմն էլ իրենք են տապալում հակառակորդներին: Մեծ Հոբը ասել է. «Փորձությունն չէ՞ միթե երկրի վրա կյանքը մարդու» (Հոբ 7; 1): Եվ սրբերից մեկը ասել է. «Հմուտ չէ այն այրը, որ փորձված չէ փորձությունների բովում»: Քանզի մենք փորձվում ենք հավատի մեջ նրա համար, որպեսզի փորձված լինենք և սովորենք պայքարել: Տերն ասաց. «Ձեր համբերությունը պիտի շահեք ձեր հոգիները» (Ղուկ. 21; 19): Արդ, բարի վախճանի հույսը թող մեզ օգնի ամեն պատահած բանում: Եվ սուրբ առաքյալը, մեզ համբերություն ուսուցանելով, ասում է. «Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել» (Ա Կորն. 10; 13): Եվ մեր Տերը՝ Ինքը ճշմարտությունը, թող մխիթարի քեզ՝ ասելով. «Այստեղ, այս աշխարհում նեղություն պի-

տի ունենանք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. 16; 33): Սովորի՛ր այս, հարատևի՛ր սրանում, հիշի՛ր Տիրոջը և Նրա բարերարությունը, որդյա՛կ իմ: Նա կօգնի քեզ ամեն ինչում, քանզի Նա ողորմած է և գիտի մեր տկարությունը: Թող Նա կրկին սաստի ալիքներին և խաղաղություն հաստատի քո հոգում՝ իր սրբերի աղոթքներով: Ամեն:

### ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ

Ինչպես որ մարմիններին հետևում են սովերները, այդպես էլ պատվիրանապահությունը՝ փորձությունը, քանզի ոչ ոք, ասել է Անտոն Մեծը, երկնքի արքայությունն չի մտնի առանց փորձությունների: Ուրեմն, մի՛ զարմացիր, որդյա՛կ իմ, որ հոգալով փրկությանդ մասին՝ հանդիպում ես փորձությունների և վշտերի: Սակայն համբերի՛ր առանց խռովքի և աղոթի՛ր, գոհանալով, որ պատվիրանապահության համար արժանանում ես լինել փորձության մեջ՝ քո իսկ ուսուցման և փորձառություն համար: Բարերարն Աստված թող փորձությունների ժամանակ քեզ ուշիմություն և համբերություն տա:

### ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ

Մենք արարածներն ենք բարերար և մարդասեր Աստծո, ով ասաց. «Կենդանի եմ ես, - ասում է ամենակալ Տերը, - և ամբարշտի մահը չեմ ուզում, այլ՝ նրա հետ կանգնելը իր չար ճանապարհից ու ապրելը» (Եզ. 33; 11): Նմանապես. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին» (Մատթ. 9; 13): Արդ, եթե դա ճշմարիտ է, և եթե մենք այդպես ենք հավատում, ապա մեր հոգսը դենք Տիրոջ վրա, և Նա կկերակրի մեզ (Սղմ. 54; 23), այսինքն՝ կփրկի, քանզի Նա հոգում է մեր մասին: Թող Նա մխիթարի քո սիրտը, որդյա՛կ իմ, սրբերի աղոթքներով: Ամեն:



**ՆՈՒՅՆ ԵՂՔՈՐԸ**

Լավ է ըմբռնել աբբա Պիմենը, որ այն խոսքը, որ մեզ պատվիրում է չհոգալ վաղվա օրվա մասին (Մատթ. 6.34), ասված է այն մարդուն, որ գտնվում է փորձովյալ մեջ: Եվ ասույթը. «Քո հոգսը Տիրոջ վրա դի՛ր» (Սղմ. 54; 23) վերաբերում է և սրան: Ուրեմն, թո՛ղ, որդյա՛կ իմ, մարդկային մտածումներդ և հո՛ւյսդ դիր Աստծո վրա, Ով անում է անհամեմատ ավելին, քան մենք ենթադրում ենք, և առ Աստված հույսը կհանգստացնի քեզ: Տերը թող օգնի քեզ, որդյա՛կ իմ, սրբերի աղոթքներով: Մենք պետք է ընդիմանանք նման խորհուրդներին, քանզի չենք համարձակվում ասել, որ կապրենք վաղվա օրը:

**ՈՄՆ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԻ ԵՂՔՈՐԸ, ՈՐՆ ՈՒՆԻ ԶԱՆԱԶԱՆ,  
ՎԱՏԹԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՆԴՈՒՄ ՆՐԱ, ՈՎ  
ՀՈՒԱՅԵԼ Է ԻՐ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանուն Հիսուս Քրիստոսի, եղբա՛յր իմ, ոչինչ չունենանք ընդդեմ մերձավորի, քանզի մենք պետք է հաղթահարենք և ծածկենք այն սիրով: Ոչ ոք չի ասում իր մերձավորին. «Ինչո՞ւ դու ինձ չես սիրում»: Այլ ինքը, կատարելով սիրո արժանի գործեր, մերձավորին էլ է նեղրավում սիրո մեջ: Իսկ մարմնավոր կարիքների վերաբերյալ ասեմ, որ եթե որևէ մեկը արժանի է հանգստի, ապա նաև Մարածիյան սիրտը Աստված կհամոզի ողորմություն անելու նրան՝ ըստ նրա կարիքի, իսկ եթե նա արժանի չէ, կամ նրան օգտակար չէ իր ուսուցման ընթացքում մխիթարված լինել, ապա թեկուզ նա նոր երկինք և նոր երկիր ստեղծի, հանգիստ չի չգտնի: Իսկ քո կողմից ասվածը, թե դու ծանրաբեռնում ես եղբայրներին, ակնհայտ ինքնարդարացում է, քանզի ոչ ոք, օգնելով մերձավորին, որն ուզում է Աստծո պատ-

վիրանը կատարելով փրկվել, չի ասի նրան. «Ես ծանրաբեռնում եմ քեզ»: Ով ասում է իրեն տրամեցնողին, նա ասում է հեզոթյունը, և ով փախչում է իրեն վիրավորողներից, նա փախչում է Քրիստոսի հանգստից: Մարդասերն Աստված թող պահպանի մեզ, որդյա՛կ իմ, Իր շնորհով, բոլոր սրբերի աղոթքներով: Ամեն:



**ԱՐԲԱ ԴՈՐՈՑԵՈՍԻ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԾԵՐԵՐԻ՝  
ԲԱՐՍԻԼԻԿՈՍ ՄԵԾԻ ԵՎ ՀՈՎՉԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐԵԻ  
ԿՈՂՄԻՑ ՆՐԱՆՑ ՏՐՎԱԾ ՊԱՏԱԽԱՆՆԵՐԸ**

**Հարց 1.** Սուրբ ծեր Հովհաննես Մարգարեին.

-Ես ունեցվածք ունեմ և ուզում եմ նրա մի մասը նվիրաբերել հանրակացարանին (վանքին), իսկ մյուս մասը բաժանել աղքատներին: Ասա՛ ինձ, հա՛յր իմ, ես արբայի՞ միջոցով պետք է այն բաժանեմ:

**Պատ.** -Եղբա՛յր, քո առաջին հարցերին ես պատասխանեցի իբրև մի մարդու, որ դեռ կաթի կարիք ունի: Իսկ այժմ, երբ դու խոսում եմ աշխարհից կատարելապես հրաժարվելու մասին, ապա ուշադիր լսիր Սուրբ Գրքի խոսքը. «Բա՛ց բերանդ, և Ես պիտի լցնեմ այն» (Սղմ. 80; 11): Եղբա՛յր, ինձ պես վատթարից չէ, որ պիտի սովորես, թե ինչ անես, այլ, ավելի լավ է, լսի՛ր, թե ինչ է գրված «Գործք առաքելոցում»՝ իրենց կալվածքները վաճառող և դրանց գումարը առաքյալների ոտքերի տակ դնողների մասին. «Վաճառում էին դրանք և վաճառվածի գումարը բերում դնում էին առաքյալների ոտքերի առջև, և նրանք բաշխում էին յուրաքանչյուրին՝ ում ինչքան պետք էր լինում»: Իրենք չէ, որ բաժանում էին, այլ՝ առաքյալների միջոցով. իսկ իրենք ազատ էին լինում հոգսից, ունեցվածքից և փառասիրությունից: Դու էլ այդպես վարվիր, եթե ուզում ես հասնել այդչափին, հանգստություն վայելել, հրաժարվել բոլոր հոգսերից և անխռով ապրել Աստծո համար: Եղբա՛յր, քո ունեցվածքը հույժ աննշան է համեմատած նրա հետ, որը ոմանք բերում հանձնում էին արբա Եսայուն: Նրան տասնյակ հազարներ էին բերում՝ ասելով. «Տնօրինի՛ր սրանք, ինչպես որ գիտես», այլ ոչ թե ասում էին՝ որտեղ և ինչպես հանձնի դրանք: Այդպիսով անելով այն, ինչ որ տանում է կատարելության, նրանք ապրում էին այլևս առանց հոգսի: Եթե Աստծո կամքը լինի, որ դու ևս հաս-

նես այդ ուրախալի վիճակին, ապա դու պետք է շնորհակալ լինես Նրան, ով կկրի քո լուծը, միայն թե չար սերմանողը չսերմանի քո մեջ այն միտքը, թե քո ունեցվածքը ընդունողը պետք է քեզ շնորհակալ լինի: Աստված թող ամեն բան կարգավորի հոգուտ քո փրկություն:

**Հարց 2.** Նույն եղբայրը հարցնում է Մեծ ծերին՝ արդյոք նա իր աբբայի միջոցով պետք է բաժանի ունեցվածքը, և ինչպես բաժանի այն և ում:

**Պատ.** —Տերը թող օրհնի քեզ, որդյա՛կ իմ: Դու ուզում ես ազատվել հոգսերից և միևնույն ժամանակ չես ուզում՝ բռնվելով սեփական կամքից: Դու միայն ասա, թե ինչքան ես ուզում նշանակել հանրակացարանին (վանքին) և ինչքան՝ աղքատներին, և այլևս մի՛ մտահոգվիր: Քանզի հնազանդությունը կայանում է նրանում, որ չունենաս քո սեփական կամքը: Ի՞նչ կա քո հոգուց ավելի թանկ, որի մասին Տերն ասաց, որ այն թանկ է ամբողջ աշխարհից (Մատթ. 16; 26): Եվ եթե դու այն ևս հանձնել ես Աստծուն և քո հոգևոր հայրերին, ապա ինչո՞ւ ես տարակուսում հանձնել նրանց նվազ կարևորը: Տե՛ս, թե ինչ գաղտնի կերպով է քեզ հետ պատերազմում փառասիրությունը և անհավատությունը: Եթե այդպես ես վարվում, ապա դու հոգիդ էլ իսկապես չես հանձնել նրանց, էլ ինչպե՞ս ես ուզում նրանց միջոցով ողորմություն գտնել: Փափագելով հանուն Աստծո ազատ լինել ամեն ինչից՝ թո՛ղ բոլոր հոգսերդ, և ես ինձ վրա կվերցնեմ քո բոլոր հոգսերը նրա հետ միասին, ում դու կնշանակես. միայն թե դու ազատ եղիր հոգսերից, հանուն Աստծո, և ների՛ր ինձ սիրով:

**Հարց 3.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին:

—Ասա՛ ինձ, հա՛յր իմ, ինչպես հասնել սեփական կամքի հատմանը, և այն բանին, որպեսզի ասել. «Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո ետևից» (Մատթ. 19:27): Ես

կերակրվելու համար թողել եմ մի փոքր կալվածք, քանզի տկար եմ:

**Բարսիլիկոս Մեծի պատասխանը.** —Սեփական կամքի հատումն արյունահեղություն է, և դրան հասնելու համար մարդը պետք է ջանա մինչ ի մահ և մերժի իր կամքը: Իսկ խոսքերը. «Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո ետևից» վերաբերում են կատարելությանը. (այստեղ պետք է հասկանալ) ոչ միայն կալվածքները և փոքր ունեցվածքը, այլև՝ խորհուրդները և ցանկությունները: Դու դեռ չես հասել նման կատարելության. իսկ երբ մոտենաս նրան, կլսես, թե ի՛նչ պետք է անես: Իսկ այժմ մի բան եմ ասում քեզ. թո՛ղ իրերի մասին ողջ մտահոգություններդ: Առայժմ տիրիր քո այդ կալվածքին՝ կերակրվելու համար: Տեր Հիսուս Քրիստոս թող քեզ հասցնի անձառելի խնդրության, քանզի Նա է հավիտենական Լույսը: Ամեն:

**Հարց 4.** Նույն եղբայրը հարցնում է նույն Մեծ ծերին:

—Ինձ հետ ուժգին պատերազմում է շնություն կիրքը. վախենում եմ, որ չլինի թե հուսահատվեմ, քանզի մարմնիս տկարություն պատճառով չեմ կարողանում ժողովել: Աղոթի՛ր ինձ համար, ի սեր Տիրոջ, և ասա՛ ինձ, հա՛յր իմ, ի՞նչ անեմ:

**Պատ.** Եղբա՛յր, սատանան նախանձի՛ց է այդ պատերազմը հարուցել քո դեմ: Պահի՛ր աչքերդ և կուշտ մի՛ կեր: Մի քիչ գինի օգտագործիր՝ մարմնիդ տկարության պատճառով, որի մասին ասում ես: Չե՛րք բեր խոնարհություն, որ քանդում է թշնամու ցանցերը: Եվ ես՝ ողորմելիս, իմ կարողության չափով կանեմ ամեն բան՝ աղաչելով Աստծուն, որպեսզի Նա ազատի քեզ ամեն տեսակ փորձություններից և պահպանի քեզ ամենայն չարիքից: Տեղի մի՛ տուր թշնամուն, եղբա՛յր, և մի՛ տրվիր հուսահատությանը, քանզի դա մեծագույն ուրախություն է թշնամու համար: Անաղաղա՛ր աղոթիր՝ ասելով. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, ազատի՛ր ինձ ամոթալի կրքերից», և Աստված կողորմի

քեզ, և ուժ կատանաս սրբերի աղոթքներով: Ամեն:

**Հարց 5.** Նույն եղբայրը, տակավին պայքարի մեջ լինելով շնության կրքի դեմ, խնդրում է նույն Մեծ ծերին աղոթել իր համար և ասել, թե ինչպես տարբերի՝ իր ցանկասիրուկությունից է մարդը փորձվում, թե թշնամուց:

**Պատ.** -Եղբայր, առանց ջանքերի և սրտի փշրվածության ոչ ոք չի կարող ազատվել կրքերից և հաճոյանալ Աստծուն: Երբ մարդը փորձվում է իր ցանկասիրուկությունից, այդ կարելի է իմանալ այն բանից, որ նա հոգ չի տանում իր մասին և թույլ է տալիս իր սրտին մտորել նախկինում իր կողմից կատարվածների մասին, և այնժամ մարդն ինքն է հրավիրում այդ կիրքն իր մոտ իր վավաշոտության պատճառով: Նրա միտքը, կամաց-կամաց կուրանալով կրքից, սկսում է, իր համար աննկատ, ուշադրություն դարձնել նրա վրա, ում հանդեպ հակում է զգում, կամ խոսում է նրա հետ և պատճառներ է գտնում, որպեսզի զրուցի նրա հետ կամ նստի, և ամեն կերպ ջանում է իրագործել իր ցանկությունը: Եթե թույլ տա, որ մտքերը տարվեն դրանով, ապա պատերազմը կբազմապատկվի մինչև անկում, թեկուզ ոչ մարմնով, այլ՝ հոգով՝ խորհուրդների համաձայն. և պարզվում է, որ այդպիսի մարդն ինքն է կրակ վառում իր մարմնի մեջ: Իսկ զգաստ և ողջամիտ մարդը, որ ցանկանում է փրկվել, երբ տեսնում է՝ ինչից է վնաս կրում, ջանասիրաբար պահում է իրեն չար հիշողություններից, չի տարվում կրքոտ խորհուրդներով, խուսափում է հանդիպումներից և զրույցներից նրանց հետ, որոնց հանդեպ հակում է զգում, և մեղքի ամեն տեսակ առիթներից, վախենալով, որ չլինի թե ինքը կրակ վառի իր մեջ: Ահա սա է այն պատերազմը, որ ծագում է սեփական ցանկասիրուկությունից կամ մարդու ազատականությունից: Իսկ այն, որ սատանայից է, լինում է այսպես. փրկվել ցանկացողի սիրտը վախենում է, որպեսզի չլինի հանկարծ իր մեջ թշնամական սերմեր ընդունի:

Եվ այս դեպքում մարդը զգաստորեն պահպանում է իրեն չար հիշողություններից, որպեսզի չտարվի կրքոտ խորհուրդներով, հանդիպումներով, զրույցներով և հանդիպման ամեն տեսակ առիթներով: Իսկ եթե նրան (գրավիչ անձնավորությունը) գործով հանդիպելու անհրաժեշտություն կա, ապա ավելի լավ է թողնել այդ գործը, որպեսզի չկործանվի հոգին: Արթո՛ւն եղիւր, եղբայր, դու մահկանացու ես ու հավերժական չես. մի՛ ցանկացիր կարճաժամկետ հաճույքների համար կորցնել հավիտենական կյանքը: Ի՞նչ օգուտ է բերում մեղքի ժանտահոտությունն ու աղտեղությունը: Լոկ ամոթ, անարգանք և գայթակղություն, իսկ ժուժկալուկությունը ընձեռում է հաղթանակ, պսակ և գովասանք: Սանձահարի՛ր քո ձիուն տեսողության սանձով, որպեսզի նա, այս ու այն կողմ նայելով, չբռնկվի վավաշոտությամբ կանանց ու տղամարդկանց հանդեպ և գետին չտապալի քեզ՝ իր հեծյալին: Աղոթիր Աստծուն, որպեսզի Նա «չըջի աչքերդ, որ ապականություն չտեսնես» (Սղմ. 118; 37): Եվ երբ ձեռք բերես քաջարի սիրտ, պատերազմները կթողնեն քեզ: Մաքրի՛ր քեզ, ինչպես որ գինին մաքրում է վերքերը, և թույլ մի՛ տուր, որ կուտակվի քո մեջ ժանտահոտություն և անմաքրություն: Լա՛ց ձեռք բեր, որպեսզի այն հեռացնի քեզանից ազատ վարվելակերպը, որ կործանում է այն յուրացնողների հոգիները: Դեն մի՛ գցիր զենքը, առանց որի անհնար է մշակել պտղաբեր հողը: Այդ զենքը, որ պատրաստված է Մեծ Աստծո կողմից, խոնարհությունն է. այն արմատախիլ է անում բոլոր մոլախոտերը Տիրոջ արտից և շնորհ է տալիս նրանում բնակվողներին: Խոնարհությունը չի ընկնում, այլ անկումից վեր է բարձրացնում նրանց, ովքեր այն ունեն: Ամբողջ սրտով սիրի՛ր լացը, քանզի նա նույնպես մասնակից է այս բարի գործընթացին: Ջանա՛ ամեն ինչում մերժել քո կամքը, քանզի դա մարդուն զոհաբերություն է համարվում. սա էլ հենց նշանակում է. «Քեզ համար ենք մենք

մեռնում ամեն օր. Համարվեցինք որպես ոչխար սպանդի Համար» (Սղմ. 43; 23): Մի՛ թուլացրու քեզ զրույցներով, քանզի դրանք թույլ չեն տալիս քեզ առաջադիմել Աստծով: Խիստ սանձահարի՛ր զգայարաններդ՝ տեսողության, լսողության, հոտառության, համի և շոշափելիքի, և կառաջադիմես Քրիստոսի շնորհով: Առանց չարչարանքների ոչ ոք նահատակ չի դառնում, ինչպես և Տերն ասաց. «Ձեր Համբերությունը պիտի շահեք ձեր հոգիները» (Ղուկ. 21; 19), և առաքյալն է ասում. «Ցույց տալով մեծ Համբերություն նեղությունների մեջ» (Բ Կորնթ. 6; 4) և այլն: Տե՛ս, ցույց չտաս քաղդեացիներին քո տան գանձերը (Դ Թագ. 20.12-18), այլապես նրանք քեզ գերի կվերցնեն և կտանեն Նաբուզոդոնոսորի՝ Բաբելոնի թագավորի մոտ (Դ Թագ. 24; 13): Մշտապես խրատվելով իմ պատասխաններից՝ ոտնատա՛կ տուր կրքերը, որպեսզի նրանք քեզ չոտնահարեն և բռնի կերպով քեզ չարիք չպատճառեն: Փախի՛ր նրանցից, ինչպես այժյամը՝ թակարդից (Առակ. 6; 5), որպեսզի նրանք չմորթեն քեզ գառնուկի պես: Մի՛ վախեցիր նրանցից, նրանք զորություն չունեն. մեր Տեր Հիսուս Քրիստոսը տկարացրել է նրանց և դարձրել անզոր: Մի՛ տրվիր քնին. թեև նրանք կիսեամեռ են, սակայն չեն քնում. մի՛ հեղգացիր, քանզի նրանք չեն հեղգանում: Գոնե մի փոքր դու էլ ձեռք երկարիր քո հայրերին, որոնք ցանկանում են քեզ հանել ժանտահոտ տիղմից: Հիշի՛ր, որ «արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակ. 5; 16): Մի՛ դատիր, մի՛ անարգիր և ոչ ոքի մի՛ գայթակղիր: Ոչ ոքի մի՛ վերագրիր այն, ինչ որ ստույգ չգիտես նրա մասին, քանզի դա հոգևոր կործանում է: Ուշադի՛ր եղիր քո հանդեպ և սպասիր մոտալուտ մահվան: Ասա ինքդ քեզ երանելի Արսենի խոսքը. «Արսե՛ն, ինչի՞ համար դու դուրս եկար աշխարհից»: Սովորի՛ր այն, ինչը եկար այստեղ փնտրելու: Վազի՛ր դեպի Հիսուսը, որպեսզի հասնես Նրան: Եթե ուզում ես փրկվել, ընթացի՛ր փութով, որպեսզի դու ևս մտ-

նես սուրբ ծերի բարի զորագնդի մեջ: Եթե ուզում ես առաջադիմել, տքնի՛ր: Ցանկացիր փառավորված լինել սրբերի հետ անճառելի փառքի մեջ, այլ ոչ թե ամոթալի դեերի հետ լինել անպատմելի տանջանքների մեջ: Փափագիր լինել երկնային արքայությունից մեջ, այլ ոչ թե՛ հրավառ գեհենի: Բաղձա լսել. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25; 34), «Ապրե՛ս, բարի՛ և հավատարի՛մ ծառա» (Մատթ. 25; 21), այլ ոչ թե լսել. «Անիծյալներ, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը» (Մատթ. 25; 41), «Չա՛ր և ծո՛ւյլ ծառա» (Մատթ. 25; 26): Տիրույր փառք հավիտյանս: Ամեն:

**Հարց 6.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին:

-Բազում մեղքերի տեր լինելով՝ ես ուզում եմ ապաշխարել, սակայն մարմնիս տկարության պատճառով չեմ կարողանում ճգնել հայրերի նման. աղաչում եմ քեզ, ասա՛ ինձ, ինչպե՞ս սկիզբ դնեմ: Մի բան նշանակիր ինձ և բացատրի՛ր, թե ինչ է նշանակում քո կողմից ասվածը նախորդ պատասխանի մեջ. «Ցույց մի՛ տուր բաբելացիներին քո տան գանձերը, այլապես նրանք գերի կվերցնեն քեզ և կտանեն Բաբելոն»:

**Բարսիլիկոսի պատասխանը.** -Եղբա՛յր, կան աղքատներ, որոնց սիրաշահում է Տերը, որովհետև նրանք հրաժարվեցին իրենց ողջ ունեցվածքից, այն է՝ իրենց բոլոր կրքերից, և մերկացան դրանցից հանուն Նրա անվան. այդպիսիք իսկապես աղքատ են, և նրանց է պատկանում երանությունը: Կան նաև ուրիշ աղքատներ, որոնք ոչ մի բարի ձեռք բերում չունեն, որոնց Տերը սպառնում է՝ ասելով. «Անիծյալներ, գնացե՛ք ինձանից» (Մատթ. 25; 41): Ով ունի այսպիսի ձեռքբերումներ և ծանրաբեռնված է դրանցով, թող հրաժարվի դրանցից, որպեսզի լինի առանց հոգսերի: Արդ, եթե ուզում ես ապաշխարություն սկիզբ դնել, տե՛ս, թե ինչ արեց պոռնիկ կինը. իր արցունքներով լվաց

Տիրոջ ոտքերը (Ղուկ. 7; 38): Լացը յուրաքանչյուրին լվանում է իր մեղքերից, սակայն մարդը այն ձեռք է բերում զժվարությամբ, Սուրբ Գրքի բազում ուսուցումների միջոցով, համբերության, ահափոր դատաստանի և հավիտենական ամոթի խոկման և անձնուրացության միջոցով, ինչպես որ Տերն ասաց. «Եթե մեկը կամենում է հետևել Ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի խաչը և գա իմ ետևից» (Մատթ. 16; 24): Իսկ ուրանալ անձը և վերցնել խաչը նշանակում է՝ ամեն ինչում մերժել սեփական կամքը և ոչինչ համարել իրեն: Քանի որ դու ասացիր, թե տկար ես մարմնով և չես կարող ոչինչ անել, ապա քո կարողության չափով արա՝ ճաշակելով հացն ու ջուրը պատշաճից փոքր-ինչ սակավ, քանզի Աստված ընդունեց այրի կնոջ երկու լուման և դրանով առավել ուրախացավ, քան մյուս բոլորով: Սովորեցրո՛ւ քեզ ազատ չվարվել ուրիշների հետ, և դու կփրկվես: Աչքի լույսի պես պահիր իմ նախկին պատասխանները և այս վերջինը: Իսկ ինչ վերաբերում է իմ այն խոսքերին, թե՛ ցույց մի՛ տուր քո գանձերը բարեխոսներին, ես այդ ասում էի դեռի մասին, որոնց դու ցույց տված կլինես դրանք, եթե մարդկանց ասես, որ քեզ տրվել է այս պատասխանը: Դեռ, այս տեսնելով, կզայրանան քեզ վրա և կպատերազմեն քեզ հետ փառասիրությամբ, իսկ հասարակ լսողներին կգայթակղեն, և դու դատապարտություն կկրես թե՛ մեկի և թե՛ մյուսի համար: Իսկ նրանք, ովքեր կարող են լսել և պահել իմ խոսքերը, նրանք ուրախություն և օգուտ կբերեն: Ինչ բարի բան որ անում ես, աշխատի՛ր ծածկել, քանզի դա՛ է քեզ օգտակար: Տերը թող խրատի քեզ սրբերի աղոթքներով: Ամեն:

**Հարց 7.** Նույն եղբայրը դիմում է նույն Մեծ ծերին:

-Աղոթի՛ր ինձ համար, հա՛յր իմ, ինձ հույժ խռովում են պոռնկություն, վհատություն և վախի խորհուրդները. և երբ ես տեսնում եմ այն եղբորը, որի հանդեպ հակվածություն եմ

զգում, խորհուրդն ինձ ասում է, որ ես զրուցեմ նրա հետ, որպեսզի իմ լուռությամբ նրան կասկածելու առիթ չտամ: Նաև զգում եմ, որ դեռեր կարծես թե ճնշում են ինձ, և ես ընկնում եմ վախի մեջ:

**Պատ.** -Եղբա՛յր, դու դեռ սովոր չես պատերազմել թշնամու դեմ, դրա համար էլ քեզ այցելում են վախի, վհատության և պոռնկության խորհուրդներ: Դիմադրի՛ր նրանց ամուր սրտով, քանզի ըմբիշները, եթե չեն տքնում, չեն պսակվում, և գինվորները, եթե մարտերում ցույց չեն տալիս թագավորին իրենց վարպետությունը, չեն արժանանում պատվի: Հիշի՛ր, թե ինչպիսին էր Դավիթը: Չէ՞ որ երգում ես. «Փորձի՛ր ինձ, Տե՛ր, և քննի՛ր ինձ, փորձի՛ր երիկամներս ու սիրտս» (Սղմ. 25; 2): Եվ դարձյալ. «Եթե իմ դեմ պատերազմ պատրաստվի, սիրտս չի սոսկա, եթե իմ դեմ ճակատամարտ ելնեն, միևնույն է, Տե՛ր, հույս քեզ վրա եմ դնելու» (Սղմ. 26; 3): Այդպես և վախի վերաբերյալ. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի Դու, Տե՛ր, ինձ հետ ես» (Սղմ. 29; 4):

Իսկ վհատության մասին. «Եթե իշխանի զայրութը բռնկվի քո դեմ, դու մի՛ լքիր քո տեղը» (Ժող. 10; 4): Մի՞թե դու չես ուզում հմուտ լինել: Սակայն այրը, որ փորձված չէ փորձությունների մեջ, հմուտ չէ: Պատերազմները հմտացնում են մարդուն: Վանականի գործը կայանում է նրանում, որպեսզի համբերի պատերազմներին և դիմադրի նրանց սրտի արիությունը: Բայց քանի որ դու չես ճանաչում թշնամու խորամանկությունները, այդ պատճառով նա քեզ բերում է վախի խորհուրդներ և թուլացնում է քո սիրտը: Դու պետք է գիտենաս, որ Աստված քո ուժերից վեր պատերազմների և փորձությունների մեջ չի գցելու քեզ, այդ է ուսուցանում նաև առաքյալը՝ ասելով. «Հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցե-

լու, քան կարող եք տանել» (Բ Կորն. 10; 13): Եղբայր, ես ինքս էլ երիտասարդուլթյան շրջանում բազմիցս և ուժգին փորձուլթյուններ էի կրում պոռնկուլթյան դեկց և ջանում էի՝ ճգնելով նման խորհուրդների դեմ, հակաճառում էի նրանց և չէի համաձայնվում նրանց հետ, այլ աչքերիս առջև պատկերացնում էի հավիտենական տանջանքները: Այդպես ես վարվեցի հինգ տարի ամեն օր, և Աստված թեթևացրեց ինձ այդ խորհուրդներից: Այս պայքարը դադարեցնում է անդադար արտասովալից աղոթքը: Իսկ այն, որ դեերը ճնշում են քեզ, լինում է նրանց նախանձից: Եթե կարողանային, նրանք քեզ դուրս կվռնդեին քո խցից, սակայն Աստված թույլ չի տալիս, որ նրանք քեզ տիրեն, ասենք այդ անելու իշխանուլթյուն էլ չունեն: Աստված կարող էր շուտով թեթևացնել քեզ, սակայն այդ դեպքում դու չէիր կարող այլևս ընդդիմանալ մեկ ուրիշ կրքի: Թող չթուլացնեն քեզ դեերը, որպեսզի ուշադրուլթյուն դարձնես եղբոր վրա (որով հրապուրվում ես) կամ զրուցես նրա հետ, սակայն, եթե, հակառակ քո ցանկուլթյանը, հանդիպես նրան պատահաբար, պահիր հայացքդ երկյուղով և պարկեշտուլթյամբ, և ուշադրուլթյամբ մի՛ ունկնդրիր նրա ձայնը: Եթե այդ եղբայրը, անտեղյակ լինելով, ինքը սկսի խոսել քեզ հետ կամ նստի քո կողքին, ապա դու վարպետորեն խույս տուր նրանից, սակայն ոչ հանկարծակի և միանգամից, այլ՝ բարեվայելուչ կերպով: Ասա քո խորհուրդներին՝ հիշիր Աստծո ահեղ դատաստանը և այն ամոթը, որ կպատի այնժամ այդ ամոթալի կրքով տարվողներին: Բռնադատիր քո միտքը և օգնուլթյուն կստանաս սրբերի աղոթքներով, և Աստված կողորմի քեզ: Մտքով երեխա մի՛ եղիր, այլ «եղիր երեխա չարուլթյուն գործելու մեջ» (Բ Կորնթ. 14; 20). կատարյալ եղիր մտքով, եղբայր: Ուշադիր եղիր քո հանդեպ, թե ինչպես պետք է դիմավորես Աստծուն: Ամեն:

**Հարց 8.** Նույն եղբայրը խնդրում է նույն Մեծ ձերին՝ ասե-

լով. «Աղոթիր ինձ համար, հայր իմ, քանզի ես հույժ թշվառ եմ և մեծ մարդասիրուլթյան կարիք ունեմ: Իմ մեջ ծագող խորհուրդներն ինձ ասում են՝ գնա՛ ուրիշ տեղ և այնտեղ կփրկվես: Ձեր աղոթքներով Աստված թույլ չի տա, որ այդ մտքերն ինձ տիրեն:

**Պատ.** -Եղբայր, թող անիծյալ լինի քո սրտում նման խորհուրդներ սերմանողը, որն ուզում է հանել քեզ այստեղից հանուն պատվիրազանցուլթյան: Դա սատանան է: Նա այդ առաջարկում է քեզ ճշմարտուլթյան քողի տակ, որպեսզի քեզ ծաղրի ենթարկելով՝ գայթակղուլթյան առարկա դարձնի շատերի համար, որպեսզի դու նաև նրանց համար դատապարտուլթյուն կրես: Ի դեպ, դու սրան ենթարկվում ես քո ծուլուլթյան ու փառասիրուլթյան պատճառով: Դու ասում ես. «Եթե ուրիշ տեղ գնամ, այնտեղ կկարողանա՛մ անարգանքները կրել»: Իսկ ինչո՞ւ այժմ, հենց միայն լսում ես, որ եղբայրդ ինչ-որ բան է ասել քո մասին, սիրտդ խռովվում է, և դու չես ուզում, որ որևէ մեկը իմանա քո մեղանչման մասին: Ծուլուլթյանդ ու փառասիրուլթյանդ դեերն էլ իրենց դավերն են կցում, որպեսզի կործանեն հոգիդ: Վստա՛հ եղիր Տիրոջ վրա, որ եթե չլինեին Աստծո օգնուլթյունն ու այստեղ գտնվող Աստծո ճշմարիտ ծառաների աղոթքները, դու մեկ տարի էլ չէիր կարողանա մնալ վանքում: Սակայն ինչպես կույրը ոչինչ չի տեսնում, այդպես էլ դո՛ւ չես տեսնում այն բարերարուլթյունները, որ Աստված ցուցաբերել է քո հանդեպ և շարունակում է ցուցաբերել սրբերի և երանելի Աբրահամի աղոթքներով, որն ասաց քեզ և քո եղբորը. «Եթե դուք մնաք այստեղ, ապա ինձ որպես միջնորդ կունենաք»: Եղբայր, ուշադիր եղիր քո հանդեպ, ճգնիր ընդդեմ խորհուրդների, որպեսզի չընկնես ծուլուլթյան ու փառասիրուլթյան մեջ, ոչինչ չանես քո կամքով և չընդունես քո մեջ ծագող խորհուրդներն ու ինքնարդարացումը. հակառակ դեպքում դու կենթարկ-

վես սաստիկ անկման: Հաստա՛տ իմացիր, ուր էլ որ գնաս, թեկուզև անցնես ամբողջ երկիրը ծայրից ծայր, ոչ մի տեղ չես ստանա այնպիսի օգուտ, ինչպես որ այստեղ: Ինչ որ նավի համար խարխուսին է, այն քեզ համար այստեղի հայրերի աղոթքն է: Վճռականությունն ձեռք բեր, և այն կհեռացնի քեզանից ազատ վարվելակերպը մերձավորների հետ, որը պատճառն է մարդու մեջ եղող բոլոր չարիքների: Թո՛ղ բոլոր արտաքին հոգսերդ և այնժամ ազատորեն կձառայես Աստծուն: Մեռա՛ծ եղիր ամեն մարդու համար, հենց սրանում է կայանում պանդխտությունը: Քեզ ոչինչ համարիր, և քո միտքը չի խռովվի: Մի՛ մտածիր, որ դու ինչ որ բարի բան ես արել, և քո վարձը անվնաս կպահպանվի: Ամեն ինչից զատ հիշի՛ր, որ դու երկար չես մնալու մարմնի մեջ, և ջանա՛, որպեսզի համարձակությունը կարողանաս ասել այն ժամին. «Պատրաստվեցի և չխռովվեցի» (Սղմ. 118; 60): Եղբա՛յր, անհնար է ապրել առանց ջանքերի, և ոչ ոք չի պսակվում առանց սխրանքի: Ստիպի՛ր քեզ ձգնել քո փրկության համար, և Աստված կօգնի քեզ, քանզի «Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությունը» (Ա Տիմ. 2; 4): Նա թող ողորմի քեզ, որդյա՛կ իմ, որպեսզի դու կարողանաս ջանադրությամբ ձեռնամուխ լինել Նրան հաճոյանալու գործին: Քանզի Նրանն է ողորմությունը և զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից: Ամեն:

**Հարց 9.** Նույն եղբայրը դիմում է նույն Մեծ ծերին:

-Հա՛յր իմ, ի՞նչ է նշանակում քո կողմից ասվածը, թե ես մեկ տարի էլ չէի կարողանա մնալ վանքում: Եվ աղոթի՛ր ինձ համար ի սեր Տիրոջ, որովհետև քնած ժամանակ հարձակվում է ինձ վրա դևը և ճնշում է ինձ, և ես քո մեծ մարդասիրության կարիքն ունեմ:

**Պատ.** -Ես ասացի քեզ, որ եթե չլինեին հայրերի աղոթքները, ապա դու մեկ տարի էլ չէիր կարողանա մնալ վանքում, նկատի

ունեմ՝ վանականություն մեջ: Որովհետև ոչ բոլորը, որ ապրում են վանքում, վանականներ են, այլ նա է վանականը, ով վանական գործ է կատարում: Տերն ասաց. «Ոչ ամեն մարդ, որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայությունը կմտնի, այլ նա, ով կատարում է կամքը Իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ. 7; 21): Եղբա՛յր, փորձանքի մեջ գտնվելիս ինչո՞ւ ես թույլ տալիս, որ թշնամին ծաղրի քեզ: Դու հարցնում ես և ջանք չես թափում կատարել քեզ ասվածը, կրկին հարցնում ես և սնափառորեն այն փոխանցում ես ուրիշներին մարդահաճությունից, և ինքդ քեզ խանգարում ես փուլթով առաջադիմել. դրա համար էլ փորձությունների ես ենթարկվում քնի մեջ, և դևը հարձակվում է վրադ և ճնշում է քեզ: Աստված էլ այդ թույլ է տալիս այն բանի համար, որպեսզի դու խելքի գաս և հանդիմանես քեզ, ինչպես որ վայել է վանականին, իսկ դու այդ չես հասկանում, եղբա՛յր: Ժամանակը մեզ տրված է այն բանի համար, որպեսզի քնենք մեր կրքերը, լանք և ողբանք: Իսկ եթե դու, խցում գտնվելիս, ցրվում ես մտքով, կշտամբիր քեզ ամեն ինչում և դիր քո տկարությունը Աստծո առջև: Նա կօգնի քեզ և զորացնի քեզ՝ առաջադիմելու Իրենով:

**Հարց 10.** Նույն եղբայրը դիմում է մյուս ծերին (Հովհաննես Մարգարեին) և խնդրում է աղոթել:

-Ի սեր Տիրոջ, աղոթի՛ր ինձ համար, որպեսզի ես ազատվեմ ամոթալի կրքերից և փառասիրությունից, քանզի նրանք պղծում են ինձ ամեն մի գործում, որի մասին մտածում եմ, թե բարին եմ անում: Նաև խնդրում եմ քեզ, որ ասես՝ ինչ մտադրությամբ պետք է կատարել սրբերի հիշատակը և ինչպես դուրս նետել ներքին չարությունը:

**Հովհաննեսի պատասխանը** -Եթե ուզում ես ազատվել ամոթալի կրքերից, ազատ մի՛ վարվիր ոչ մեկի հետ, հատկապես նրանց հետ, որոնց հանդեպ սիրտդ հակվում է ցանկասիրու-



թյան կրքով. դրա միջոցով կազատվես նաև փառասիրությունից, քանզի փառասիրությունը խառնվում է մաղահասճությունը, մաղահասճությունը՝ ազատ վարվելակերպը, իսկ ազատ վարվելակերպը մայրն է բոլոր կրքերի:

Ով կատարում է սրբերի հիշատակը առանց սնափառության՝ համարելով, որ այդ անում է ըստ Աստծո պատվերի, այլ ոչ՝ ըստ իր մտահղացման, այդպիսին դառնում է սրբերին մասնակից և վարձ է ստանում նրանց Տիրոջից: Հոգու փրկության մասին հոգալը և Աստծո հանդեպ սերը օգնում են յուրաքանչյուրին դուրս նետել իր միջից ներքին չարությունը և մաքուր ապաշխարել: Լսի՛ր ինձ, որդյա՛կ իմ, և տեսանելի միջոցով պատկերացում կազմիր անտեսանելի մասին: Երբ դու փոքր-ինչ անառողջ ես լինում մարմնով, ապա ժուժկալում ես քեզ վնասող բաներից, իսկ ինչո՞ւ չես ջանում ժուժկալել, երբ հիվանդ ես հոգով: Մեզ բազում ջանք ու քրտինք է հարկավոր, ինչպես առաքյալն է ասում. «Ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը և հնազանդեցնում այն» (Ա Կոր. 9; 27): Զանա՛ քո ուժերի համեմատ, և Աստված կօգնի քեզ քո հայրերի աղոթքներով, քանզի պապակում է տեսնել մեր փրկությունը Նա, Ով երգվեց Ինքնիրենով, թե չի ուզում մեղավորի մահը, այլ նրա դառնալն ու ապրելը (Եզ. 33; 11): Մեծ գորություն է ելնում այնտեղից, որտեղ Աստծո ճշմարիտ ծառաներն իրենց աղոթքներն են վեր առաքում առ Աստված մեր բոլորի համար. հավատում եմ, որ Տերը դրանք չի անարգի: Միացրու նրանց նաև քո երկու լուծման և դու կուրախացնես Տիրոջը, ինչպես ուրախացրեց ավետարանական այրին: Կապի՛ր քո ծանրաբեռնված մակույկը քո հայրերի նավին, և նրանք կուղղեն քեզ դեպի Հիսուսը, Ով կարող է քեզ շնորհել խոնարհություն և գորություն, խելամտություն, պսակ և խնդություն: Ամեն:

**Հարց 11.** Նույն եղբայրը դիմում է Մեծ ծերին:

-Ես երիտասարդ եմ և ոչ խելամիտ, իսկ իմ ծառայությունը գերազանցում է ուժերս, դրա համար աղաչում եմ քեզ, հա՛յր իմ, Աստծուց խոհեմություն՝ խնդրի ինձ համար, որպեսզի կարողանամ բաժանել իրերը՝ պահանջներին համապատասխան, խոսքն ասեմ ժամանակին և լուեմ ժամանակին, որպեսզի տարակուսանքների միջից դիմեմ Աստծուն և քո աղոթքներին և օգնություն ստանամ, և որպեսզի չընկնեմ մոլորություն մեջ:

**Բարսիլիկոսի պատասխանը** –Մե՛ծ ուրախություն եմ ապրում, երբ մեկը ինչ-որ բան խնդրելիս առաջնորդվում է Աստծո երկյուղով. այդպիսին համարձակորեն թող հուսա, որ իր խնդրանքը կկատարվի: Բայց լսի՛ր, եղբա՛յր, եթե դու սերմեր ես խնդրում քո արտի համար, ապա նախ պարարտացրու քո արտը սերմերն ընդունելու համար: Քանզի լավ մշակված հողի մասին ասված է, որ այն «հարյուրապատիկ պտուղ տվեց» (Ղուկ. 8; 8): Ես իմ ուժերի չափով կանեմ, ինչ որ կարող եմ, հանուն Աստծո պատվիրանների, սակայն գիտակցում եմ իմ տկարությունը, որ չեմ կարող տալ քեզ քո խնդրածը՝ իմ անարժանության պատճառով: Սակայն, եթե դու հավատում ես, ապա ըստ քո հավատի կատանաս ոչ միայն այդ, այլև այն ամենը, ինչ որ քեզ անհրաժեշտ է. «Զեր Հայրը գիտե, թե ինչ է ձեզ պետք, նախքան որ դուք Նրանից մի բան ուզեք» (Մատթ. 6; 8):

Ուրեմն, մի՛ կասկածիր, և ես հավատում եմ, որ Աստված կկատարի քո խնդրանքը, ոչ թե հանուն ինձ, այլ՝ հանուն քո հավատի: Ամենից առաջ խոնարհվի՛ր Աստծո առջև, քանզի Նա խոնարհներին շնորհ է տալիս» (Ա Պետ. 5; 5), մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փա՛ռք հավիտյանս հավիտենից: Ամեն:

**Հարց 12.** Նույն եղբայրը հարցնում է մյուս ծերին՝ ինչպես վարվեմ ըստ ծերունական այս պատասխանի գորություն:

Պատ. -Եթե դու ուզում ես սովորել՝ ինչպես վարվեն ըստ ծերունական այս պատասխանի գորություն, ապա այսպես պետք է

վարվել. երբ ուզում ես խոսել մեկի հետ կամ ինչ-որ բան անել, կանչի՛ր ձերի անունը, և Աստված կզնի քո սրտի մեջ, թե ինչ պետք է անես կամ ինչ պետք է ասես: Սակայն (այդ արա) խոնարհու՛թյամբ, որպեսզի չգրկվես այդ շնորհից:

**Հարց 13.** Նույն եղբայրը դիմում է Մեծ ձերին:

-Հա՛յր իմ, դու ողորմություն ցուցաբերիր տկարիս հանդեպ և խորհուրդ տվեցիր ինձ, որ երբ ինչ-որ բան եմ անում կամ խոսում, կանչեմ Աստծո անունը և քո աղոթքները, և ասացիր, որ այդպիսով հաջողություն կունենամ: Ես ստիպում եմ ինձ գործել և խոսել Աստծո կամքի համեմատ, սակայն պատահում է, որ երբեմն մոռանում եմ (կանչել Աստծո անունը և քո աղոթքները) իմ ծուլության պատճառով, և դրա համար աղաչում եմ քեզ, Աստծուց զգաստությո՛ւն խնդրիր ինձ համար և մի՛ թող ինձ դեպերել ըստ իմ կամքի: Դարձյալ խնդրում եմ ասես, ինչպես վարվեմ այն դեպքում, երբ, կանչելով Աստծո անունը և քո աղոթքները որևէ գործի պարագային, ես դեռ տարակուսում եմ՝ անել այդ գործը, թե ոչ: Նմանապես, երբ ինձ ինչ-որ բան են հարցնում, նախքան ես կհասցնեմ կանչել Աստծուն կամ գլխի ընկնել, թե ինչ ասեմ, հարցադրողն անմիջապես պատասխան է պահանջում. ինչպե՞ս վարվեմ նման անակնկալ հարցադրման դեպքում: Խնդրում եմ քեզ, աղոթի՛ր նաև այն բանի համար, որպեսզի ես կարողանամ տիրապետել իմ աչքերին, քանզի նրանք շատ են տարուբերվում այս ու այն կողմ:

**Պատ.** -Եթե մեկը հայրերից ստանում է պատվիրան, խորհուրդ կամ պատասխան ինչ-որ բանի վերաբերյալ, և մոռացկոտությունից կամ ծուլությունից մոռանում է, ապա հասկանալով, որ մեղանչել է, թող ապաշխարի, և Աստված կների նրան: Եղբա՛յր, ինչո՞ւ էիր գրել հենց միայն զգաստության մասին: Ես աղոթում եմ Աստծուն, որպեսզի Նա քեզ շնորհի ամե՛ն տեսակ բարի պարգև, և թող այն քեզ հետ լինի հավիտյան: Եթե քեզ մի

գործ պատահի, և կանչես Աստծուն և սրբերի աղոթքները (բարեխոսությունը), սակայն շարունակես դեռևս տարակուսել, կատարի՛ր այդ գործը. այն Աստծո կամքի համաձայն է, քանզի այն սկսելուց առաջ դու Աստծուն ես դիմել:

Ինչ վերաբերում է նրան, ինչպես պատասխանել անակնկալ հարցին, ապա մտքից սրընթաց ոչինչ չկա. բարձրացրո՛ւ այն առ Աստված, և Նա կտա քեզ, թե ինչ պատասխանես առանց խռովքի: Խոնարհությունը պահպանում է աչքերը ցրվելուց և մարդուն՝ ամեն տեսակ չարիքից: Ես կխնդրեմ քեզ համար էլ ավելի մեծ պարգևներ (որոնց մասին ասացի քեզ), սակայն մի պայմանով, եթե ներզնես քո ամբողջ ուժերը: Ուշադի՛ր եղիր քո հանդեպ, և ոչ միայն սրբերը, այլև Ինքը՝ Աստված քեզ օգնության ձեռք կմեկնի և կողորմի քեզ:

**Հարց 14.** Նույն եղբոր խնդրանքը՝ ուղղված նույն Մեծ ձերին:

-Գթասիրտ հայր իմ, դու տեսնում ես իմ հոգու կուրուցյունը, և դրա համար կրկին աղաչում եմ քեզ, խնդրի՛ր ինձ համար սրտի պայծառության, որպեսզի ես կարողանամ տարբերել ճշմարիտ խորհուրդը՝ գաղտնի վնասակարից, քանզի ես վախենում եմ, որ երբեմն կարող եմ հավատալ վերջինին: Շատ անգամ է պատահել, որ երբ մեկին մի բան եմ տվել, թվացել է, որ ես այդ անում եմ ոչ կրքի մղումով, սակայն, փորձելով միտքս, թե արդյոք հաճելի կլինի նրան (մտքիս), եթե ես ուրիշի միջոցով եղբորը տամ այդ իրը, այնպես, որ եղբայրը չիմանա, որ ե՛ս եմ նրան տվել այդ, գտել եմ, որ դա հաճելի չի եղել իմ մտքին: Պատահում է նաև, որ ես, թվում է, ոչ կրքից մղված եմ սկսում ինչ-որ բան անել կամ ասել, սակայն այն պահին երբ տալիս եմ իրը կամ խոսում եմ, միտքս հաճույք է ստանում դրանից. արդ, ի՞նչ անեմ ես՝ թշվառս: Այլ կերպով էլ է վիրավորում ինձ նույն արարքը կամ, ավելի լավ է ասել, իմ սրտի փառասիրությունը.

պատահում է, որ երբ ոմանք ինձ պատմում են ինչ-որ գործի մասին, նախքան նրանք կվերջացնեն իրենց խոսքը, միտքս համաձայնվում է նրանց հետ և հաճույք է ստանում, իբր թե հասկանում է այն: Խնդրում եմ քեզ, հայր իմ, լռելու կարողություն խնդրի՛ր ինձ համար, քանզի զարմանում եմ, ինչպես եմ հաճույք ստանում նրանից, ինչը, ինքս գիտեմ, որ անօգուտ է և զրկում է մարդուն ամենայն բարիքից:

**Բարսիլիկոսի պատասխանը.** -Առանց սրտի ցավի (զղջման) ոչ ոք չի կարող խորհուրդները զանազանելու շնորհ ստանալ: Ես աղոթում եմ Աստծուն, որպեսզի շնորհի քեզ այդ, սակայն թող քո սիրտն էլ մի փոքր (զղջման) ցավ կրի, և Աստված կպարզեի քեզ այդ շնորհը: Սրա նման հասկացիր և մյուսների մասին: Երբ Աստված, սրբերի աղոթքներով և քո սրտի փշրվածության համար, պարզեի քեզ այդ շնորհը, ապա մշտապես ի վիճակի կլինես զանազանելու խորհուրդները Նրա Հոգով: Երբ տեսնում ես, որ առիթ է ներկայացել ցուցաբերելու քո գիտելիքները, լռի՛ր, ինչպես որ արդեն լսել ես Աստծով իմ ճշմարիտ զավակից (Հովհաննես Մարգարեից), որին դու պետք է անսաս քո ամեն մի խորհրդի վերաբերմամբ, քանզի նա ոչ թե ինքնիրենից է ասում քեզ, այլ արտաբերում է այն, ինչ որ Աստված է տալիս նրան ամեն մեկի օգտի համար: Աստված թող պահպանի քեզ և թող քեզ ուժ տա ամեն պարագայում խելամտորեն լռելու, և շնորհ, որպեսզի ճանաչես քեզ, թե երբ պետք է խոսես առանց կրքերի: Քանզի քո սիրտը դեռ չգիտի կատարելապես, որ շատախոսությունը պղծում է մարդուն, այլապես թույլ չէր տա, որ դու հաճույք ստանայիր դրանից:

**Հարց 15.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին:

-Իմ՝ մեղավորիս հանդեպ քո մեծ գթասրտությունը ինձ համարձակություն է տալիս կրկին անգամ անհանգստացնելու քեզ: Հասկացրո՛ւ ինձ, հայր իմ, թե ինչպես պետք է տքնի իմ

սիրտը, որպեսզի ձեռք բերի կշռադատության շնորհը: Գրի՛ր ինձ, տեր իմ, Աստծո մասին և Աստծուն անընդմեջ հիշելու մասին (այսինքն՝ ներքին աղոթքի): Եթե ինձ արժանացնես այդ ուսուցմանը, ապա ամրապնդի՛ր ինձ նրանում, քանզի միտքս վախենում է, որ ես անկարող կլինեմ պահպանելու այն, դրա համար էլ խնդրում եմ քեզ, տեր իմ, ասա՛, իսկապես օգտակա՞ր է ինձ այդ գործը: Ես հավատում եմ, որ երբ խոսքը ելնում է քո բերանից, այն ուժ է տալիս իմ սրտին:

**Բարսիլիկոսի պատասխանը.** -Քո սրտի ջանքը պետք է կայանա նրանում, որպեսզի անընդմեջ աղոթես Աստծուն, որպեսզի Նա թույլ չտա քեզ մոլորվել կամ հետևել քո սեփական ցանկություններին. սրա միջոցով դու կհասնես կշռադատության: Աստծուն անընդմեջ հիշելուն, այսինքն՝ ուսուցմանը, սկիզբ դիր և մի՛ վախեցիր. Աստված կամրապնդի և կհաստատի քեզ: Սակայն այն հույսով պետք է վարուցանք անես (Ա Կորն. 9; 10), որպեսզի և հնձես, եթե չթուլանաս (Գաղ. 5; 6): Օրհնյալ է Աստված, որ օրհնում է քեզ դնելու (այդ սխրանքի) սկիզբը: Նա քեզ ուժ կտա և կպահպանի քո չափի համեմատ:

**Հարց 16.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին:

-Նախկինում բազմաթիվ անգամ պատահել է, որ մի քանի օր ջերմություն եմ զգացել (Աստծո հանդեպ), սակայն հետո այն անցել է. և հիմա մեկ ժամվա ընթացքում մեծ ջեռմեռանդություն եմ պահում Աստծո մասին հիշողությունը, իսկ մնացած ժամերին՝ ինքս ինձ բռնադատելով: Եվ ինձ սարսափեցնում է այն միտքը, որ այս փոքրիկ ջերմությունը նախորդի նման կշարունակվի ընդամենը մի քանի օր, հետո կթողնի ինձ, և իմ հոգին իսպառ կկործանվի: Դրա համար էլ խնդրում եմ քեզ, բարեգո՛ւթ հայր իմ, մի՛ լքիր ինձ, այլ բացատրի՛ր, թե ինչն է հեռացնում ինձանից այս հիշողությունը և ջերմությունը: Խնդրի՛ր ինձ համար նաև զգայարանների պահպանություն,

քանզի ես շատ եմ գերվում նրանց միջոցով և հատկապես այն ժամանակ, երբ իմ սիրտը մեղքի առիթ է փնտրում, սակայն ինքստինքյան էլ, առանց իմ ցանկության, զեղում է նա կրքոտ կամ անմիտ հիշողություններ, կամ էլ անժամանակ խորհուրդներ: Դրա համար խնդրում եմ քեզ, հա՛յր իմ, գորեղդ Տիրոջով, տո՛ւր ինձ՝ քո ծառային, զգաստություն, որպեսզի ես ճանաչեմ այն, ինչ որ մտնում է իմ սիրտը, և ասա՛ ինձ՝ ինչպես վարվեմ, որպեսզի այն չհեռացնի ինձ քո օրհնությունից: Բացատրի՛ր ինձ նաև սա. եթե ինչ-որ բան անելիս կամ ասելիս Աստծո օգնությամբ գերծ մնամ մեղքից. ապա դրանից գերծ մնալու համար արդյոք պետք է գոհությո՞ւն մատուցեմ Աստծուն: Եվ բերո՞ւմ է արդյոք դա Աստծո սիրուն: Թե՞ բնավ չընդունեմ այն մտքերը, թե խույս եմ տվել մեղքից, այլ քննեմ իմ մեղանշումները կատարված գործում կամ խոսքերում. և ներում խնդրեմ դրանց համար:

**Բարսիլիկոսի պատասխանը.** -Ջանա՛ սրտի փշրվածությամբ ձեռք բերել ջերմություն և աղոթք, և Աստված դրանք մշտապես կշնորհի քեզ. մոռացկոտությունը վռնդում է դրանք, իսկ ինքը ծնվում է ծուլությունից: Ձգայարանները պահպանելու մասին. ամեն մի շնորհ ձեռք է բերվում սրտի փշրվածության միջոցով: Իսկ զգաստության շնորհը խորհուրդներին թույլ չի տալիս ներթափանցել, և եթե նրանք ներթափանցում էլ են, ապա թույլ չի տալիս, որ նրանք վնաս պատճառեն: Աստված թող քեզ զգաստություն և արթնություն պարգևի: Պատվիրված է՝ «ամեն ինչում գոհություն մատուցել» (Թեա. 5; 18), առավել ևս նրա համար, ինչի մասին դու ինձ բացատրեցիր. իսկ մեղքերը քննելը և ներում հայցելը հույժ օգտակար է:

**Հարց 17.** Նույն եղբոր խնդրանքը՝ ուղղված նույն Մեծ ծերին:

-Աղաչում եմ քեզ, սրբազա՛ն հայր իմ, Աստծուց զորու-

թյո՛ւն խնդրիր ինձ համար, քանզի այն, ինչ որ ես ինձ խրատում եմ մենակ եղած ժամանակ, չեմ կատարում, երբ գտնվում եմ եղբայրների հետ, և վախենում եմ, որպեսզի սովորություն չդարձնեմ, մեղանչելով, լուկ գղջալ և չուղղվել, հարատեել մեղքերի մեջ և այդպես մեռնել: Գիտեմ, որ կրքերի պատճառած վշտերը օգտակար են ինձ, նրանք, միգուցե, կոտրում են հոգուս դաժանությունը, և չեմ համարձակվում, անմիտս, բաղձալ ազատվել նրանցից. այլ նրա համար եմ խնդրում ձեր միջնորդությունը, հա՛յր իմ, որպեսզի հաճախակի չպարտվեմ, եթե, իհարկե, դա ինձ օգտակար է, և սրտով չվշտանամ դրա համար:

**Պատ.** -Ոչ ոք էլ ոչ մեկին չի կարող ասել՝ ես կհոգամ քո մասին, իսկ դու հանգիստ եղիր, քանզի մեղավոր կհամարվի: Այլ նա, ում աջակցում են, պետք է որոշ չափով կատարի իր պարտականությունները՝ ուշի-ուշով պահպանելով իր հայրերի պատգամները: Եվ եթե ընկնի մի անգամ, ապա թող կրկին ջանա ուղղել իրեն: Ես հավատում եմ Աստծուն, որ նման մարդու մոտ (պատահական անկումների կրկնությունը) սովորություն չի դառնա, և չի տիրի նրան հեղգությունը, այլ Աստված շուտով նրան կբերի ջանասերների վիճակին և չի վերցնի նրա հոգին այնքան ժամանակ, մինչև չհասցնի նրան «կատարյալ մարդու բարձր աստիճանին» (Եփես 4; 13): Եվ այսպես, մի՛ թուլացիր, այլ քանի դեռ ժամանակ ունես, գործի՛ր, խոնարհվի՛ր, հնազա՛նդ եղիր, ենթարկվի՛ր, և Աստված կօգնի քեզ, որ խոնարհներին «շնորհ է տալիս, իսկ ամբարտավաններին հակառակ է» (Ա Պետ. 5; 5): Անդադա՛ր ասա. «Հիսո՛ւս, օգնի՛ր ինձ», և Նա կօգնի: Աստված թող ազատի քո հոգին ամոթալի կրքերից, որդյա՛կ իմ:

**Հարց 18.** Նույն եղբայրը դիմում է նույն Մեծ ծերին:

-Խոնարհվում եմ քո առջև, ո՛վ գթասիրտ հայր իմ և տկար հոգուս բժիշկ: Վա՛յ ինձ, որ ցուլց տվեցի ինձ, թե ուր ես կանչել

ինձ, և որտեղ եմ գտնվում ես՝ կապկապած իմ չար սովորությամբ: Եթե ազատվում էլ եմ փոքր-ինչ, կրկին վերադառնում եմ նույնին, որովհետև տալիս և առնում եմ (զանազան իրեր): Եթե ես չամաչեի Աստծո բարերարությունից (քանզի գիտեմ, թե ինչպիսի՞ դժվար վիճակից է Նա ինձ բերել քո ոտքերի մոտ), ապա կարող էի և հուսահատվել: Երբ ձեր աղոթքները պահպանում են ինձ, ես հարատևում եմ խաղաղություն մեջ, իսկ երբ փոքր-ինչ լքված եմ լինում, որպեսզի ի հայտ գա իմ սեփական հոժարությունը, իսկույն պարտվում եմ: Առավոտից առանձնանում եմ խցում, սակայն, երբ անհրաժեշտություն է լինում, ստիպված եմ լինում դուրս գալ այնտեղից, և գործն ավարտելուց հետո այլևս ուժ չեմ ունենում կրկին վերադառնալու այնտեղ: Սակայն թշնամին, կամենալով խոցել ինձ, պատրվակը պատրվակի ետևից է ներկայացնում ինձ գործերի վերաբերյալ, որոնք առանց ինձ էլ կարող են գլուխ գալ: Այսպիսով վերադառնում եմ խուցս արդեն շատ ուշ՝ մեծ տհաճություն, մթազնած և վհատված, չիմանալով, թե ինչ անեմ: Եվ դրա համար, սո՛ւրբ հայր իմ, ահա ես քո ամենատես սրտի առջև եմ. վարվիր ինձ հետ ըստ քո գթասրտության, ինչպես կամենում ես և ինչպես որ գիտես. (ասենք) ես չգիտեմ էլ, թե ինչ ասեմ քեզ. բայց ներիր ինձ հանուն Աստծո:

**Պատ.** -Եղբա՛յր, դու չպետք է հուսահատվես այն բանի հետևանքով, ինչ-որ գրել էիր ինձ: Նավարարը, երբ նա նավին հարվածում են ալիքները, չի հուսահատվում իր փրկության համար, այլ դեկավարում է նավը, մինչև որ այն հասցնի նավահանգիստ: Այդպես էլ դու, տեսնելով, որ տարվել ու ցրվել ես գործի մեջ, վերակոչի՛ր քեզ դեպի ճանապարհի սկիզբը՝ ասելով մարգարեի հետ. «Այժմ հասկացա. սա է նորացած ազգը Բարձրյալի» (Սղմ. 76; 11) և այլն: Քննի՛ր պատահած գործերը՝ եղբայրների՞ միջոցով կարող են դրանք գլուխ գալ, թե՞ քո, և չես

չեղվի ճանապարհից: Հոգսը հանուն Աստծո հոգևոր գործ է, որ կատարվում և իրագործվում է՝ ի սպաս հոգիների փրկության: Միայն թե աշխատի՛ր, հնարավորին չափ, չնչին գործերի համար դուրս չգալ խցից, քանզի դա դիվային խորամանկություն է: Խելամտորեն ուշադի՛ր եղիր քո հանդեպ, և Աստված կօգնի քեզ սրբերի աղոթքներով: Ամեն:

**Հարց 19.** Նույն եղբայրը խնդրում է նույն Մեծ ծերին, որպեսզի նա կրի իր մեղքերը:

**Պատ.** -Եղբա՛յր, թեև դու խնդրում ես մի բան, որ վեր է իմ ուժերից, սակայն ես քեզ ցույց կտամ սիրո այն չափը, որը ստիպում է ինձ նաև այն, ինչ որ վեր է իմ ուժերից: Ըստ քո հանդեպ իմ նվիրվածության՝ ես կվերցնեմ ինձ վրա և կկրեմ քո լուծը այն պայմանով, որպեսզի դու էլ քո հերթին ստանձնես իմ խոսքերի և պատգամների պահպանումը, քանզի դրանք փրկարար են, և դու կապրես առանց ամոթի:

**Հարց 20.** Նույն եղբայրը հարցնում է նույն Մեծ ծերին այն պատվիրանների վերաբերյալ, որոնք նա տվել է իրեն, և խնդրանք այն մասին, որպեսզի ի վիճակի լինի պահելու դրանք:

**Պատ.** -Նա, Ով հաստատեց քո հայրերին, թող հաստատի նաև քո սերը, եղբա՛յր, և թող քեզ տա հոգևոր միտք, որպեսզի դու խելամտորեն վարվես քո բոլոր գործերում: Պահի՛ր լեզուդ դատարկախոսությունից, որովայնդ՝ հեշտասիրությունից, և մի՛ ջղայնացրու մերձավորիդ: Հանդուգն մի՛ եղիր, քեզ ոչինչ համարիր, պահպանի՛ր սերդ բոլորի հանդեպ և Աստծուն մշտապես քո մտքում ունեցի՛ր՝ հիշելով. «Երբ պիտի գամ ու երևամ Աստծո առջև» (Սղմ. 41; 3): Պահի՛ր սրանք, և քո հողը հարյուրապատիկ պտուղ կտա Աստծուն, Որին Փա՛ռք հավիտյանս հավիտենից: Ամեն:

**Հարց 21.** Նույն եղբայրը հարցնում է նույն Մեծ ծերին. -Հա՛յր իմ, ի՞նչ է նշանակում ոչինչ համարել իրեն:

**Պատ.** -Եղբա՛յր, ոչինչ համարել իրեն նշանակում է ոչ ոքի հետ չհամեմատվել և չասել քո բարի գործի մասին՝ սա էլ եմ ես արել:

**Հարց 22.** Նույն եղբոր խնդրանքը նույն Մեծ ծերին՝ իրեն տրված պատգամների խախտման և ապաշխարության հարցում իրեն օգնելու վերաբերյալ, և թե ինչպես ինքը պետք է ապաշխարի. և եթե պատահի, որ խախտի պատվիրանը, արդյոք դրանով խզվո՞ւմ է ուխտը:

**Պատ.** -Հանուն Աստծու թող կատարվի քո այն խնդրանքը, ինչի մասին որ դու խնդրել էիր: Զգուշացի՛ր մեծամտությունից, որպեսզի չկորցնես ամենը: Երբ խախտես պատվիրանը, շտապի՛ր ապաշխարել. թեպետ վերքիդ համար վիրակապ ունես, մի՛ տրվիր հեղգությանը, որպեսզի չպատահի քեզ նախկինից ավելի վատը: Քանի դեռ դու բռնված ես ինձանից, իմ ուխտը քեզ հետ մնում է անքակտելի. հակառակ դեպքում, ինչպե՞ս կողորմի քեզ Աստված, որպեսզի լսես և գործես Քրիստոսով:

**Հարց 23.** Նույն եղբայրը դիմում է նույն Մեծ ծերին՝ աղոթքի խնդրանքով, որպեսզի հետագայում ևս չզրկվի նրա հովանավորությունից:

**Պատ.** - Որդյա՛կ, եթե դու ըմբռնեիր իմ ասածը, ապա կարող էիր ճանաչել, որ ես արդեն տվել եմ քեզ քո հոգու փրկության գրավականը: Ես չեմ ուզում քեզ խաբել կամ զատել փրկվողներից՝ իմ ճշմարիտ որդիներից և Աստծո հովանավորությունից, բայց դու ինքդ էլ ջանա՛ չտարագրվել այդպիսի կյանքից: Առաքյալը ոչ ոքի չհեռացրեց, այլ ասաց. «Եթե անհավատը ուզում է բաժանվել իր կողակցից, թող բաժանվի» (Ա Կորնթ.7; 15): Սակայն դրանք թող չկատարվեն քեզ վրա. ես լուկ քո հաստատվելու համար հիշեցի քեզ այդ մասին, որպեսզի դու ուշադիր լինես քո հանդեպ՝ ջանալով չհեռանալ այդ բոլոր սպասումներից և հույսերից: Զորացի՛ր Տիրոջով, Ով

ասաց իր աշակերտներին, թե նրանք երկնքից զորություն պիտի ընդունեն (Ղուկ. 24; 49):

**Հարց 24.** Նույն եղբայրը հարցնում է մյուս ծերին.

-Եթե մեկն իրեն բոլոր արարածներից ցածր է համարում, իսկ իր գործերը չեն համապատասխանում դրան. ի՞նչ պետք է կարծել դա:

**Պատ.** -Եթե գործը չի համապատասխանում գիտակցությանը, ապա այն ճշմարիտ չէ, այլ դիվային խաբկանք է:

**Հարց 25.** Հա՛յր իմ, ես տակավին չեմ հասել այն վիճակին, որ բոլոր արարածներից ցածր համարեմ ինձ, սակայն երբ քննում եմ խիղճս, գտնում եմ ինձ արժանի այն բանին, որ բոլոր արարածներից ցածր համարվեմ ինձ. մի՞թե դա էլ է դիվային խաբկանք:

**Պատ.** -Եղբա՛յր, նոր (միայն) դու ոտք դրեցիր ճշմարիտ ուղու վրա: Ահա բուն ճշմարտությունը: Աստված թող քեզ հասցնի այն չափին, որ բոլոր արարածներից ցածր համարես քեզ: Ողջ եղիր Տիրոջով:

**Հարց 26.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Ասա՛ ինձ, տե՛ր իմ, ո՞ր ճանապարհով կարելի է ավելի արագ հասնել փրկության՝ ջանքերո՞վ, թե՞ խոնարհությամբ, և ինչպե՞ս ազատվեմ մոռացկոտությունից:

**Պատ.** -Եղբա՛յր, ճշմարիտ ջանքերը չեն կարող առանց խոնարհության լինել, քանզի ջանքը ինքնին ունայն է և ոչինչ էլ չի համարվում: Սուրբ Գիրքն ասում է. «Տե՛ս իմ խոնարհությունն ու վաստակը և թողություն տուր իմ բոլոր մեղքերին» (Սղմ. 24; 18): Արդ, ով խոնարհությունը միավորում է ջանքերի հետ, նա շուտով կհասնի է (նպատակին): Խոնարհության հետ նվաստացում կրողը նույնպես հասնում է, քանզի նվաստացումը փոխարինում է ջանքին: Իսկ ով միմիայն խոնարհություն ունի, այդպիսին թեև առաջադիմում է, սակայն՝ ոչ այնքան արագ:

Ով ցանկանում է ճշմարիտ խոնարհություն ձեռք բերել, նա բնավ ոչ մի դեպքում չպետք է իրեն ինչ-որ բան համարի: Սրանում է կայանում ճշմարիտ խոնարհությունը: Ով ընդունում է այն կրակը, որ «Տերը երկրի վրա գեցելու եկավ» (Ղուկ. 12; 49), չգիտի, թե ինչ բան են մոռացկոտությունն ու գերվածությունը, քանզի մշտապես զգում է այդ կրակը: Օրինակ՝ վերցրու զգալի կրակից: Եթե մահամերձ մարդուն կրակ մոտեցնես, նա իսկույն ցավ կզգա. և ինչով էլ զբաղված լինի մարդը, եթե նրա վրա շիկացած ածուխ ընկնի, նա դուրսն անգամ չի կարող այլևս մնալ իր հափշտակության մեջ: Եղբայր, կրակը երբեք չի մարում, այլապես կրակ չէր լինի այն: Եթե դու ցանկանում եմ ազատվել մոռացկոտությունից և գերվածությունից, ապա այլ կերպ չես կարող հասնել դրան, մինչև ձեռք չբերես հոգևոր կրակը, քանզի հենց միայն Նրա ջերմությունից անհետանում են մոռացկոտությունն ու գերվածությունը: Իսկ այս կրակը ձեռք է բերվում առ Աստված ձգտումով: Եղբայր, եթե քո սիրտը օր ու գիշեր ցավով չփնտրի Տիրոջը, դու չես կարող առաջադիմել: Իսկ եթե, թողնելով մնացած բոլորը, զբաղվես սրանով, ապա կհասնես դրան, քանզի Սուրբ Գիրքն ասում է. «Շտապեցե՛ք և իմացե՛ք» (Սղմ. 45; 11) և այլն: Տերը թող շնորհ տա քեզ հասկանալու սա և տքնելու սրանում:

**Հարց 27.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

—Հայր իմ, ի՞նչ բան է խոնարհությունը, ի՞նչ նվաստացումը, և ի՞նչ սրտի փշրվածությունը: Ձեռք բերո՞ւմ է արդյոք խոնարհությունն նա, ով ինքն է իրեն նսեմացնում իր սրտում, թե՞ դրա համար պետք է կրել նաև արտաքին անարգանքներ, սրտնեղություններ մարդկանցից, և վարժվել ամենաստորացուցիչ գործերում: Պե՞տք է արդյոք նմանապես, որ խոնարհամիտը ցույց տա իր խոնարհությունը խոսքերով, թե՞ աշխատի խոնարհ լինել իր վարմունքով:

**Պատ.** —Խոնարհությունը կայանում է նրանում, որ ոչ մի դեպքում քեզ մի բան չկարծես, ամեն ինչում մերժես քո կամքը, ենթարկվես բոլորին և առանց խռովվելու կրես այն, ինչ որ հասնում է մեզ դրսից: Այդպիսին է ճշմարիտ խոնարհությունը, որում տեղ չի գտնում սնափառությունը: Խոնարհամիտը չպետք է ջանա ցուցաբերել իր խոնարհությունը խոսքերով, այլ նրա համար բավական է ասել «ների՛ր ինձ» կամ «ազոթի՛ր ինձ համար»: Չպետք է նաև ինքդ քեզանով հանձն առնես կատարել ստորացուցիչ գործեր, քանզի թե՛ մեկը և թե՛ մյուսը սնափառության են մղում, խոչընդոտում են առաջադիմությանը և առավել վնաս են տալիս, քան օգուտ: Այլ երբ ինչ-որ բան են հանձնարարում, չպետք է հակաճառել, այլ կատարել հնազանդությամբ. ահա թե ինչն է բերում առաջադիմության: Իսկ նվաստացումը երկու տեսակ է լինում. մեկը՝ սրտի, իսկ մյուսը առաջանում է դրսից հասցվող անարգանքներից: Դրսից կրած նվաստացումը առավել է սրտինից, քանզի ինքնիրեն նսեմացնելը ավելի հեշտ է, քան ուրիշներից նսեմացում կրելը, քանի որ վերջինս շատ ավելի մեծ ցավ է պատճառում սրտին: Իսկ սրտի փշրվածությունը կայանում է նրանում, որ պահպանես այն և թույլ չտաս քեզ տարվել անօգուտ մտածումներով:

**Հարց 28.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

—Եթե մեկին գովում են, պետք չէ՞ արդյոք, որ նա խոնարհությամբ պատասխան տա:

**Պատ.** —Լուրը անհամեմատ օգտակար է: Քանզի եթե մեկը պատասխանում է, ապա դա նշանակում է, որ նա ընդունում է գովեստը, իսկ դա արդեն սնափառություն է: Նույնիսկ և այն, երբ մտածում է, որ ինքը խոնարհությամբ է պատասխանում, արդեն իսկ սնափառություն է, քանզի եթե նա այդ նույն խոսքերը, որ ինքն է ասում իր մասին, լսի ուրիշից, չի կարող կրել դրանք:

**Հարց 29.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

–Բայց պատահում է, որ գովաբանողը, նրա լուսվորումից եզրակացնելով, թե ընդունել է գովեստը, գայթակղվում է դրանից. հապա ինչպե՞ս պետք է վարվել:

**Պատ.** –Այն, ինչ որ անհայտ է, ճգնափորը պետք է թողնի Աստծուն, որպեսզի Նա Ինքը հայտնի լսողին: Ի՞նչ իմանաս, մի-գուցե, գովաբանողը օգուտ է ստացել Նրա լուսվորումից՝ համարելով, որ նա չի ընդունել գովեստը, իսկ սա մտածում է, որ նա գայթակղվել է: Եթե գայթակղվողն ինքը ի հայտ բերի այդ (իր գայթակղությունը), այնժամ պետք է խոնարհամտություն բացատրել նրան՝ ասելով. «Ների՛ր ինձ, եղբայր, ես ոչ մի բարի բան չեմ տեսնում իմ մեջ, դրա համար էլ չգտա, թե ինչ պատասխանեմ, այլ աղոթի՛ր ինձ համար հանուն Տիրոջ»:

**Հարց 30.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

–Պատահում է, որ մեկը իրո՛ք մեղավոր է լինում, և խոնարհամտությամբ, այլ ոչ թե սնափառությամբ է ասում ճշմարտությունը. մի՞թե այդ դեպքում էլ նա չպետք է պատասխանի:

**Պատ.** (Հովհաննեսի) –Չպե՛տք է, թեկուզև այդպես լինի, քանզի եթե նա խոնարհամտում էլ է առժամանակ, լսողը նրան խոնարհամիտ է համարում, և դա վնասակար է նրան, որովհետև Տերն ասաց. «Վա՛յ ձեզ, երբ մարդիկ լավ խոսեն ձեր մասին» (Ղուկ. 6; 26)՝ վերագրելով դա այն մեղավորներին, ովքեր գործեր չունեն, սակայն գովեստներ են ստանում:

**Հարց 31.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

–Իսկ ինչպե՞ս է, որ սրբերից ոմանք, երբ նրանց գովում էին, պատասխանում էին խոնարհությամբ:

**Պատ.** –Հայրերը, հասնելով այն չափին, որի մասին Տերն ասաց. «Երբ կատարեք այն բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացե՛ք, թե՛ անպիտան ծառաներ ենք» (Ղուկ. 17; 10), և իսկպես համարելով իրենց այդպիսին, այդպես էլ պատասխանում են,

ինչպես որ մտածում են իրենց մասին. իսկ եթե այդ նույնը նաև ուրիշից լսեն, չեն զայրանա, այլ կօրհնեն նրան, որպես ճշմարտությունն ասողի:

**Հարց 32.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

–Եթե մեկը բարիք է անում մյուսին, և սա չնորհակալություն է հայտնում նրան, որպես իր բարերարի, մի՞թե այդ դեպքում ևս չպետք է պատասխանել:

**Պատ.** –Լուսվորումը միշտ լավ է: Բայց որպեսզի չթվա, թե բարեգործը մերժում է իրեն ուղղված չնորհակալությունը, նա պետք է խոնարհությամբ ասի՝ ների՛ր ինձ, հա՛յր, և աղոթի՛ր ինձ համար հանուն Տիրոջ, սրտում ունենալով այն, որ ինքը ոչինչ չի արել, քանզի Տերն է բարիք անում ամենքին: Նաև պետք է աղոթի Աստծուն, որպեսզի դատապարտություն չկրի իր խոսքերի համար:

**Հարց 33.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

–Աղոթի՛ր ինձ համար, հա՛յր իմ, որպեսզի ես ազատվեմ իմ լեզվից, ազատ վարվելակերպից և որկրամոլությունից:

**Պատ.** –Լեզվի, ազատ վարվելակերպի և որկրամոլության վերաբերյալ, ինչպես որ ի՛նձ խնդրեցիր աղոթել, այդպես և ի՛նքդ ջանա, քո կարողության չափով, ժուժկալել, քանզի հնարավոր չէ դրանք սանձահարել առանց սրտի փշրվածության, առանց զգաստության և լացի, հիշելով, որ «արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակ. 5; 16): Բոլոր կրքերին հաղթում է խոնարհությունը, որը յուրաքանչյուր ոք ձեռք է բերում ջանքով: Աստված թող քեզ ուժ տա՝ կշռադատության և Աստծո երկյուղի հետ միացյալ:

**Հարց 34.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

–Եթե դա ձեռք է բերվում լացով, ինչպես որ դու ասացիր, ապա ես ինչպե՞ս պետք է պահպանեմ լացը, երբ ես գտնվում եմ մարդկանց մեջ և հոգ եմ տանում այն մասին, թե հիվանդներից



ուժ ինչ տամ. և կա՞ արդյոք ներքին լաց առանց արցունքների:

**Պատ.** – Ոչ թե լացն է առաջանում արցունքներից, այլ արցունքները՝ լացից: Եթե մարդը, գտնվելով ուրիշների մեջ, մերժում է իր կամքը և ուշադրություն չի դարձնում ուրիշների մեղքերի վրա, ապա ձեռք է բերում լաց: Քանզի սրա միջոցով հավաքվում են խորհուրդները և, այդպիսով ժողովվելով, սրտում ծնում են «սրտմուկություն, ըստ Աստծո ուզածի» (Բ Կոր. 7; 10), իսկ սրտմուկությունն այդ՝ արցունքներ են:

**Հարց 35.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

– Ես բացատրում եմ իմ խորհուրդները արբային և զգում եմ, որ ոմանք վշտանում են դրանից: Ինչպե՞ս վարվեմ: Արդյոք ինձ վնասակա՞ր է խցում մնալը, ինչպես որ ծաղրելով ներշնչում է ինձ խորհուրդը, իբրև թե ես հետևում եմ իմ մտադրությունը: Հետո, եթե իմ մտադրությունը, ձեր հովանավորության ներքո, չլինի էլ կրքից մղված, այնուհանդերձ, ինչպե՞ս կարող եմ այդ ամբողջ գործը կատարել առանց վնասի՝ լինելով տկար և տակավին չունենալով ատելություն կրքերիս հանդեպ: Եվ դրա համար եմ խնդրում քեզ, եթե դու էլ ես այդպես կարծում, որ այն է ինձ օգտակար, որ այլևս միջնորդ չլինեմ եղբայրների և արբայի միջև հիվանդանոցից դուրս, որպեսզի դրա միջոցով նախանձ չբորբոքեմ և ինքս էլ չսասանվեմ: Հոգիս քո ձեռքերում է, հա՛յր իմ, ասա՛ ինձ, ինչպե՞ս կհրամայես ինձ վարվել:

**Պատ.** – Եթե մաքուր սրտով ես ասում՝ ո՛չ կրքից մղված և ո՛չ փառասիրությունից, այլ միայն օգտի համար, ուշադրություն մի՛ դարձրու մարդկանց խոսքերի վրա: Ծգնի՛ր՝ սրբերի աղոթքների օգնությամբ, մինչև չհասցնես ավարտել ամբողջ գործն առանց վնասի: Ոչ կրքից մղված միջնորդ լինելը, ինչպես ես ասացի, բարի գործ է, որովհետև ոչ բոլորին է հնարավոր և ոչ բոլորին է օգտակար խոսել անմիջականորեն արբայի հետ: Երբ դու Աստծով ես խոսում, ապա քեզանից չէ, որ խոսում և գոր-

ծում ես բարին, այլ Աստված է գործում ամեն ինչում: Իսկ Աստծո բարին նախանձ չի ծնում: Իսկ եթե այն ի հայտ էլ գա մի առ ժամանակ, ապա շուտով կմարի: Մեր բոլորի հոգիները Աստծո ձեռքում են: Նա պահպանում է մեզ և ամրապնդում օգտակարի մեջ:

**Հարց 36.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

– Եթե ես ինչ-որ բան օգտակար եմ գտնում ոմանց համար, արդյոք պե՞տք է դա ասեմ՝ առանց այդ մասին ինձ հարցնելու: Եվ եթե եղբայրը, որին վերաբերում է դա, լինի ինձանից մեծ, կամ հոգևորական, ասե՞մ նրա մասին արբային, թե՞ լուեմ: Եթե ինձ հարցնեն, ապա ինչպե՞ս պատասխանեմ: Իսկ եթե օգտակար է նաև ինքնիրենով խոսելը, ապա ինչպե՞ս խոսեմ, որ կեղծավոր չլիվամ, այսինքն՝ խուսափեմ խոնարհախոսությունից և չխոսեմ՝ կարծես իշխանությամբ ուսուցանելով:

**Պատ.** – Հայրերն ասել են, որ լավ է խոսել հանուն Աստծո և լուել հանուն Աստծո: Նրանց խոսքերը նշանակում են հետևյալը. խոսելը, ինչպես ես ասացի, ոչ կրքից դրդված՝ լավ է, քանզի նման կերպով խոսողը հանուն Աստծո է խոսում, իսկ երբ մեկը տեսնում է, որ ուզում է ինչ-որ բան ասել կրքից մղված, ապա եթե լուի, լավ կանի, քանզի նա լուած կլինի հանուն Աստծո: Իսկ եթե ուզում ես Աստծով խոսել, մի՛ մտահոգվիր այն մասին, թե ինչ պիտի ասես, այլպես դու չես կատարի պատվիրանները. այլ թո՛ղ այդ գործը Աստծուն, և Նա կդնի քո շուրթերին, թե ի՛նչ ասես օգտի համար: Աստված գորեղ է՝ «գորություն տալու» մեզ՝ տկարներին (Ա Թագ. 2; 4): Նա թող զորացնի քեզ, եղբա՛յր:

**Հարց 37.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

– Ինչո՞ւմ է պետք մերժել սեփական կամքը արբայի առջև՝ բարո՞ւ մեջ, մի՞ջին բաների մեջ, թե՞ այն բանում, որ հակառակ է թվում Աստծո պատվիրաններին: Եվ եթե նրա կարգադրու-

Թյունը վեր լինի իմ ուժերից, արդյոք պետք է հրաժարվե՞մ, որպեսզի չընկնեմ վշտի և խռովության մեջ: Եվ դարձյալ, եթե որևէ մեկին հարկավոր լինի ինչ-որ բան խնդրել արքայից, և նա ինձ դիմի, որպեսզի ե՛ս օգնեմ նրան այդ գործում, և ես համաձայնվեմ. արդյոք դա կերակուր չի՞ տա իմ փառասիրությանը, իբրև թե ես ինչ-որ բան եմ նշանակում:

**Պատ.** -Եղբա՛յր, ով ուզում է վանական լինել, նա բնավ ոչ մի բանում չպետք է ունենա իր կամքը: Քրիստոս, մեզ ուսուցանելով այդ, ասաց. «Ես երկնքից իջա ոչ թե իմ կամքը կատարելու համար, այլ՝ Նրա, Ով ինձ ուղարկեց» (Հով. 6; 38) և այլն: Քանզի ով ուզում է մեկը կատարել, իսկ մյուսից հրաժարվում է, այդպիսին ցույց է տալիս, որ ինքը կա՛մ ավելի խելամիտ է իրեն կարգադրողից, կա՛մ խաբված է դեերից: Հետևաբար, պետք է որ ամեն ինչում հնազանդ լինես, թեկուզ քեզ թվա, որ այդ գործը անբասիր չէ: Աբբան, որ քեզ նշանակում է այդ, կկրի և քո մեղքը, քանզի նա է հաշիվ տալու քո փոխարեն: Եթե նշանակված գործը քեզ ծանր թվա, հարցրո՛ւ այդ մասին արքային և թո՛ղ նրա դատողությանը: Իսկ եթե եղբայրները նշանակեն քեզ նման գործ, իսկ դու տեսնես կամ գտնես, որ դա վնասակար է կամ ուժերիցդ վեր է, նորից հարցրո՛ւ արքային, և ինչ որ նա ասի, այն էլ արա: Իսկ եթե սկսես քննել ոչ միայն գործերը, այլև մարդկանց, ապա վշտեր կբերես քեզ վրա: Այլ որտեղ բարի գործ ես տեսնում, այնտեղ հնազանդ եղիր տուր եղբայրներիդ, իսկ ինչում որ երկմտում ես, կամ ինչը որ վեր է ուժերիցդ կամ զուգակցված է մեղքով, այդ ամենը ասա՛ քո արքային, և ինչպես նա հարար գտնի, այդպես էլ վարվիր, և դու խաղաղ կլինես, քանզի արքան գիտի՝ ի՛նչ է անում և ինչպե՛ս հոգ տանի քո հոգու մասին: Հավատա՛, որ ինչ որ նա ասում է քեզ, ասում է Աստծո՛վ, իսկ Աստծով եղած ամեն բան օգտակար է և չի բերում ո՛չ վշտեր, ո՛չ խռովություններ (բարիքից չարիք

չի ծնվում). «Ամեն բարի ծառ բարի պտուղ է տալիս» (Մատթ. 7; 17): Եթե որևէ մեկը կարիքի դեպքում խնդրի քեզ օգնել իրեն արքայից (որևէ բան իմանալու), կատարի՛ր այն որպես պատվիրան, որ տվել է քեզ արքան: Քանզի, եթե նա քեզ նստեցնի դռների մոտ և ասի՝ տեղեկացրու ինձ ամեն մեկի մասին, ով էլ որ դա. դու ոչ թե քեզանից ես այդ անելու, այլ քեզ կարգադրողի հրամանն ես կատարելու: Եթե արքան քեզ կարգադրի ասել իրեն կամ չասել, դա արդեն քո գործը չէ:

**Հարց 38.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Եթե եղբայրն ինձ հարցնի ինչ-որ խոսքի կամ գործի մասին, որը ես չգիտեմ, պատասխանե՞մ նրան, թե ոչ: Նմանապես, երբ ինձ չեն հարցնում, սակայն ես ինքս տեսնում եմ, որ ինչ-որ բան լավ չեն անում, հարկ կա՞ արդյոք գոնե մեկ անգամ այդ մասին ասելու նրան, ով վատ է անում, թե ոչ:

**Պատ.** -Այս բոլոր հարցերի պատասխանը մեկն է. զգուշացի՛ր, որ չասես սնափառություն, այլ ասա՛ խոնարհություն և Աստծո երկյուղով: Բոլոր դեպքերում (որոնց մասին դու հարցնում ես) ասա՛ և հիշեցրո՛ւ, եթե հարկավոր է, սակայն միայն քո վանքում և ոչ ուրիշ տեղ, որովհետև միևնույն վանքում բնակվողները կարծես մի մարմին լինեն: Իսկ երբ ուրիշ տեղ ես գտնվում, ինքդ քեզանից ոչինչ մի՛ ասա, որպեսզի ուսուցիչ չերևաս, այլ երբ քեզ հարցնեն, պատասխանի՛ր խոնարհությամբ, և Աստված կիմաստացնի քեզ, եղբա՛յր:

**Հարց 39.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Դու ինձ ասացիր, որ երբ ինձ հարցնում են, կամ ինքս եմ տեսնում ինչ-որ բան, ապա ես պետք է ասեմ խոնարհությամբ. բայց եթե տեսնում եմ, որ երբ ասում եմ, սիրտս հաճույք է զգում սնափառությունից, կամ եթե այդ պահին հաճույք չեմ զգում, գիտեմ, որ հետո եմ հաճույք զգալու դրանից. ուրեմն՝ լռե՞մ, թե ոչ:

**Պատ.** -Ասել ինչ-որ բան խոնարհությամբ չի նշանակում՝ ասել ուսուցողաբար, այլ այնպես, ինչպես ինքդ ես լսել արբայից և հայրերից: Իսկ եթե ինչ-որ օգտակար բան ունես ասելու եղբորը, իսկ փառասիրությունը քեզ ներշնչում է հաճույք ստանալ դրանից, ապա իմացի՛ր, որ թշնամին է ուզում խանգարել քեզ, որպեսզի օգուտ չտաս եղբորդ: Եթե անսաս փառասիրությանը, ապա եղբայրը քո միջոցով երբեք օգուտ չի ստանա, այլ մերժի՛ր փառասիրությունը և արհամարհի՛ր այն, իսկ երբ եղբորն ասես այն, ինչ պատշաճ է, զղջա՛ Աստծո առջև՝ ասելով. «Ների՛ր ինձ, Տե՛ր, որ ես սնափառորեն ասացի»: և հետագայում էլ այդպես վարվիր:

**Հարց 40.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Հա՛յր իմ, ինչպե՞ս համաձայնեցնեմ այդ. դու ինձ պատվիրեցիր, որ երբ ինչ-որ անօգտակար բան եմ տեսնում, ասեմ նախքան ինձ հարցնելը, իսկ հայրերն ասում են, որ չպետք է խոսակցությունը սկսել հարցից առաջ, և արբա Նիստերիոսի՝ այլոց մեջ զարմանք հարուցելու պատճառը արդյոք այն չէ՞ր, որ նա, լինելով հանրակացարանում, ասաց՝ ես և ավանակը նույնն ենք: Ասա՛ ինձ նաև, հա՛յր իմ, թե ինչ է նշանակում ուշադիր հետևել խորհուրդներին: Արդյոք պե՞տք է դրանով զբաղվել որոշ ժամանակ, և ինչպե՞ս դա անել:

**Հովհաննեսի պատասխանը.** -Եղբա՛յր, ծերերը պատասխանում են մարդու հոգևոր հասակի համեմատ: Կա ժամանակ, երբ մարդը կարող է ծառայել, և այդ ժամանակ նա պետք է սպասարկի ուրիշներին, սակայն կգա նաև այնպիսի ժամանակ, երբ նրան կսպասարկեն ուրիշները. այնժամ նրա հոգևոր հասակը այլևս չի լինի այն, ինչ որ առաջ էր: Կատարյալներին կատարյալն էլ ասվում է, իսկ օրենքի տակ գտնվողներին այլ բան է ավանդվում, քանզի նրանք դեռ փորձվում են «գաստիարակի ձեռքի տակ»: Երբ դու էլ մեռած կլինես աշխարհի համար, ինչ-

պես որ արբա Նիստերիոսը, այնժամ կարող ես ասել՝ ես ավանակ եմ: Մի՛ մեծամտիր, որովհետև կվնասես քեզ դրանով: Հայրերը որոշակի ժամանակ էին սահմանում՝ խորհուրդներին ուշադրությամբ հետևելու համար՝ ասելով. առավոտյան քննի՛ր քեզ, թե ինչպես անցկացրեցիր գիշերը, և նմանապես երեկոյան, թե ինչպես անցկացրեցիր օրը: Եվ կեսօրին, երբ ծանրանաս խորհուրդներով, քննի՛ր քեզ:

**ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ**

Սրա միջոցով աստվածակիր հայրը ցույց է տալիս, որ ոչ ամեն մեկը, այլ միայն խոնարհամիտը և իրեն նվաստացնողը կարող է ասել՝ ես ավանակ եմ, քանզի նման բան ասելը անպատվութուն է, այլ, ընդհակառակն, մեծագույն պատիվ: Դրա համար էլ ասում է՝ մի՛ մեծամտիր: Քանզի երբ մեկը հասնում է «ավանակի» չափին, ապա նրա նման հարվածներ է ստանում, անարգանքներ է կրում, ծանրաբեռնվում է և կրում է այն ամենը, ինչ որ հատուկ է կրել ավանակին, և կրում այդ ամենը՝ առանց հակաճառելու, առանց հիշաչարության և բնավ չվրդովվելով սրտում՝ ավանակի նման, այլ հարատևելով այս ամենի մեջ, ինչպես անզգա, որն էլ և նշանակում է արդեն ցանկալի երկակի կամ եռակի մահացում: Այնժամ թերևս մարդ համարձակվի ասել՝ ես ավանակ եմ, այն էլ՝ մեծ ամոթխածությամբ, խորհելով նման առաջադիմության բարձրության մասին: Սակայն կարծում եմ, որ այդ ժամանակ էլ նա չի ասի այդ, այլ տեսնելով, որ իրեն շատ բան է պակասում նման վիճակի հասնելու համար, առավել ևս քիչ համարձակություն կունենա ասելու՝ ես ավանակ եմ, և մինչև անգամ չի համարձակվի մտածել այդ մասին՝ գիտենալով, որ դա մեծամտություն է, որի մեջ կայանում է հոգու անկումը և իրապես կատարյալ կործանումը:

**Հարց 41.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Եթե ծերերից մեկը՝ տարիքով ինձանից մեծ, հարց տա ինձ ինչ-որ բանի վերաբերյալ. պետք է արդյոք ասեմ այն, ինչ որ օգտակար եմ գտնում:

**Հովհաննեսի պատ.** -Քո բանը չէ ասել այդ, որովհետև դու չգիտես Աստծո կամքը՝ իրո՞ք դա օգտակար է, սակայն եթե նրանցից մեկը հարցնի քեզ, ասա՛ նրան խոնարհությամբ՝ «նե՛րի՛ր ինձ» և՛ «չգիտեմ»:

**Հարց 42.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Երբ եղբայրը ինչ-որ միջին բան է անում, սակայն ոչ իմ կամքի համաձայն, և ես տրտմում եմ դրա համար, ինչպե՞ս վարվեմ՝ լռեմ և ըստ այդմ՝ չհանդարտեցնե՞մ սիրտս, թե՞ քնքրորեն ասեմ և դրանով ազատվեմ վրդովմունքից: Իսկ եթե այդ գործը այլոց է վիշտ պատճառում, այլ ոչ թե ինձ. ասե՞մ հանուն ուրիշների, թե դա իզուր միջամտություն կլինի ուրիշի գործին:

**Հովհաննեսի պատ.** -Եթե գործը մեղսալից չէ, միջին է, և դու ուզում ես ասել լոկ նրա համար, որպեսզի հանդարտեցնես սիրտդ, ապա սրանում ի հայտ է գալիս քո պարտությունը, որ դու քո տկարության պատճառով չես կարողանում համբերել: Հանդիմանի՛ր ինքդ քեզ և լռի՛ր: Իսկ եթե եղբայրը ուրիշներին է վիշտ պատճառում, ապա ասա քո արբային, և նա կա՛մ ինքը կասի այդ եղբորը, կա՛մ քեզ կհասկացնի, թե ի՛նչ ասես նրան, և դու հանգիստ կլինես:

**Հարց 43.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Եթե ես ասում եմ արբային հանուն մյուսների և կռահում եմ, որ եղբայրը խռովմունքի մեջ է ընկնում դրանից, ինչպե՞ս վարվեմ: Նմանապես, եթե նա վիրավորում է և՛ մյուսներին, և՛ ինձ. ասեմ հանուն մյուսների, թե լռեմ, որովհետև դա ինձ էլ է անհանգստացնում: Իսկ եթե գիտեմ, որ եղբայրը չի տրտմում դրա համար, ասե՞մ նաև հանուն ինձ, թե՞ ստիպեմ ինձ լռել:

**Հովհաննեսի պատ.** -Եթե դու ասես արբային, իսկ եղբայրը բարկան դրանից, ապա դու գործ չունես դրա հետ: Երբ հարկ լինի ասել հանուն ուրիշների, և դա քեզ մտահոգում է, ասա հանուն մյուսների, իսկ հանուն քեզ՝ ստիպի՛ր չասել:

**Հարց 44.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Բայց խորհուրդն ինձ ասում է, որ, եթե եղբայրը բարկանա ինձ վրա, նա կդառնա իմ թշնամին, համարելով, որ ես նրան զրպարտել եմ արբայի առջև:

**Պատ.** - Դա չար խորհուրդ է, որ պատերազմում է եղբոր ուղղվելու դեմ: Մի՛ գոսպիր քեզ, այլ ասա՛ արքային, միայն թե Աստծով, այլ ոչ թե՛ կրքի մղումով. քանզի բժիշկների վրա էլ են փնթփնթում հիվանդները, որոնց նրանք բուժում են, սակայն բժիշկները անտեսում են այդ, իմանալով, որ նրանք հետո շնորհակալ պիտի լինեն իրենցից:

**Հարց 45.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Երբ տեսնում եմ, որ խորհուրդն ինձ մղում է ասել ոչ թե եղբոր օգտի համար, այլ՝ նրան զրպարտելու համար, (այստեղ խոսքը ոչ թե եղբորը կոպտորեն զրպարտելու մասին է, այլ նրա մասին եղած ճշմարտությունը՝ կրքոտությունը հայտնելու). ասե՞մ, թե լռեմ:

**Հովհաննեսի պատասխանը.** - Խրատի՛ր միտքդ՝ ասելու Աստծով և ոչ թե կրքի մղումով: Իսկ եթե հաղթվում ես եղբորը զրպարտելու ցանկությունից, ասա՛ արքային՝ խոստովանելով նրան քո զրպարտությունը, որպեսզի դուք երկուսդ էլ բժշկություն գտնեք. եղբայրը՝ մեղքից, իսկ դու՝ զրպարտությունից:

**Հարց 46.** Իսկ եթե խորհուրդն ինձ թույլ չի տալիս խոստովանել արքային, որ ես այդ ասում եմ եղբորը զրպարտելու միտումով. ինչպե՞ս վարվեմ՝ ասե՞մ, թե ոչ:

**Պատ.** - Ոչինչ մի՛ ասա, և Տերը կհոգա դրա մասին: Պետք չէ ասել՝ հոգիդ վնասելու գնով: Տերը կուղղի եղբորը, ինչպես որ կամենա:

**Հարց 47.** Պատահում է, որ ես, թվում է, անում եմ ինչ-որ բան այնպես, ինչպես որ հարկն է, սակայն մի ուրիշը ուղղում է իմ գործը, իսկ ես նրան պատասխանում եմ սնափառությամբ. ինչպե՞ս վարվեմ նման դեպքերում:

**Հովհաննեսի պատասխանը.** - Եթե քեզ հարկավոր չէ պատասխանել, լռի՛ր: Իսկ եթե եղբոր գործը կասկածանք է հարուցում քո մեջ, կշտամբի՛ր քեզ սնապարծության մեջ և բժշկի՛ր եղբորը:

**Հարց 48.** Եթե ինչ-որ միջին գործ եմ անում և տեսնում եմ, որ, եթե եղբայրն իմանա, որ ես եմ դա անում, նա կգայթակղվի դրանից, և սնափառությունը ստիպում է ինձ ծածկել այդ գործը (քանզի ամաչում եմ, եթե եղբայրը դա տեսնի). պե՞տք է արդյոք ես այն ծածկեմ՝ թե չծածկեմ՝ փառասիրությունից խուսափելու համար: Նմանապես, երբ չգիտեմ հաստատ՝ գայթակղվում է արդյոք եղբայրը, այլ միայն ենթադրում եմ այդ. ինչպե՞ս վարվեմ:

**Հովհաննեսի պատասխանը.** - Եթե սիրտդ դատապարտում է քեզ, որ դու գայթակղություն ես պատճառում եղբորդ, ապա ծածկի՛ր այդ գործը և նման մտածումների առիթ մի՛ տուր նրան: Իսկ եթե հաստատ չգիտես, այլ ենթադրում ես, մի՛ մտահոգվիր դրա մասին:

**Հարց 49.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Եթե ես մեկին կծու խոսք ասեմ, իսկ նա այդ չհասկանա. արդյոք ես պետք է խոստովանե՞մ նրա առաջ, թե լռեմ և գլխի չզցեմ նրան:

**Հովհաննեսի պատասխանը** - Եթե եղբայրը չհասկանա, որ դու նրան կծու խոսք ես ասել, լռի՛ր և մի՛ խռովիր նրան, այլ ջանա՛ գղջալ դրա համար:

**Հարց 50.** Եթե որևէ մեկը տեսնի իր եղբորը մեղանչելիս և հայտնի այդ մասին արքային. նա, որի մասին ասվել է, ինչպե՞ս պետք է տրամադրվի իր մասին խոսողի նկատմամբ:

**Հովհաննեսի պատասխանը** - Եթե մեղանչողը հավատարիմ քրիստոնյա է և ապրում է Աստծով, ապա, թեկուզև ինչ-որ մեկը թշնամություն էլ ասած լինի իր մասին արքային, նա պետք է մտածի՝ եղբայրն այդ ասաց՝ կամենալով ինձ օգուտ տալ. և այսպես կկատարվի նրա վրա Սուրբ Գրքի խոսքը. «Բարի մարդը իր սրտի գանձերից հանում է բարի բաներ» (Մատթ. 12; 35): Այսպես խորհելով՝ նա ավելի շուտ պետք է սիրի՛ այդ եղբորը,

քան ատի: Ով մշտապես նման կերպով է վարվում, նա առաջադիմում է Աստծով:

**Հարց 51.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Քանի որ ես զգում եմ, որ իմ փառասիրությունից փոքրինչ կարմրում եմ, երբ ծնրադրություն եմ անում ոմանց ներկայությունումբ. այդ դեպքում պետք է, ջանամ մտադրված խոնարհվել ուրիշների մոտ, թե ոնց պատահի:

**Հովհաննեսի պատասխանը** -Դու չպետք է խորամանկես՝ մտադրված խոնարհվելով ուրիշների մոտ, հատկապես (առանձնություն մեջ), այլ արա այն, ինչպես պատահի:

**Հարց 52.** Արդյոք կրտսերների առջև է՞լ պիտի խոնարհում անեմ, թե խոսքով բժշկեմ նրանց, որպեսզի մյուս կողմից չսողոսկի (իմ մեջ) սնափառությունը:

**Պատ.** -Պատահում է, որ մեծ և հարգաժան մարդիկ պարտական են լինում չնչիններին և ամենահետիններին և պարտավոր են տալ իրենց պարտքը՝ առանց սնափառելու, որովհետև պարտական են. այդպես և դու, եթե պարտական ես քեզանից կրտսեր մեկին, խոնարհվի՛ր նրա առջև առանց սնափառության՝ գիտենալով, որ դու նրա պարտապանն ես:

**Հարց 53.** Նույն եղբայրը հարցնում է նույն ծերին.

-Եթե կրքոտ խորհուրդ մտնի իմ սիրտը, ինչո՞վ ես պետք է դիմագրվեմ նրան. նրանո՞վ արդյոք, որ հակաճառեմ նրան, թե՞ արգելեմ նրան խոսքով և կարծես թե բարկանամ նրա վրա, թե՞ նրանով, որ դիմեմ Աստծուն և դնեմ Նրա առջև իմ տկարությունը:

**Հովհաննեսի պատ.** -Եղբայր, կրքերը նույն ինքը վշտերն են, և Տերը չառանձնացրեց դրանք, այլ ասաց. «Կանչի՛ր ինձ քո նեղություն օրը, և Ես կփրկեմ քեզ, ու դու կփառավորես ինձ» (Սղմ. 50; 15): Ուստի, ցանկացած կրքի պարագայում ոչինչ այնքան օգտակար չէ, որքան Աստծո անունը կանչելը: Իսկ հակա-

ճառելը՝ ոչ բոլորին է պատշաճ, այլ միայն Աստծով գորեղներին, որոնց հնազանդվում են դեերը, իսկ եթե տկարներից մեկը սկսի հակաճառել, դեերը կծաղրեն նրան, որ, գտնվելով նրանց իշխանություն ներքո, նա հակաճառում է նրանց: Նմանապես և նրանց արգելելը՝ մեծագույն այրերի գործ է, որոնք իշխանություն ունեն նրանց վրա: Մի՞թե սրբերից շատերը արգելեցին սատանային, ինչպես Միքայել հրեշտակապետը, որն այդ արեց այն պատճառով, որ իշխանություն ունեեր: Իսկ մեզ՝ տկարներիս, մնում է միայն դիմել Հիսուսի անվանը, քանզի կրքերը, ինչպես ասված է, հենց դեերն են և չքվում են (այս անունը կանչելուց): Էլ ի՞նչ ես ուզում սրանից առավել: Աստված թող ամրացնի քեզ իր երկյուղի մեջ և թող հաղթանակ շնորհի քեզ:

**Հարց 54.** Նույն եղբոր խնդրանքը.

-Աղաչում եմ քեզ, հա՛յր իմ, խո՛սք տուր ինձ, որ դու աղոթում ես ինձ համար, ինչպես որ սուրբ ծերն է խոսք տվել ինձ: Եվ երբ ես պարտություն եմ կրում ինչ-որ բանում, խորհուրդն ինձ ասում է. «Աստված այն պատճառով ուժ չի տալիս քեզ հաղթելու կրքին, որ քո մեջ հպարտություն կա, կամ այն պատճառով, որ, նրան տիրելով, չընկնես փառասիրության մեջ. կամ, եթե հեշտությամբ ստանաս այդ իշխանությունը, հեշտությամբ էլ այն կկորցնես, կամ էլ այն բանի համար, որ դու, ցանկանալով ստանալ այն, հաճախ դիմես Աստծուն, կամ՝ ինչ-որ մի այլ պատճառով: Կամ միգուցե, իմ տկարությունի՞ց է լինում այդ. ինչպե՞ս վարվեմ:

**Հովհաննեսի պատ.** -Եթե մենք բոլորս մի ենք, ապա համարձակվում եմ ասել, որ ծերը Աստծո մեջ է, և ես՝ նրա հետ: Եթե նա քեզ խոսք է տվել, ապա ես էլ՝ նրա միջոցով: Գիտեմ, որ ես տկար եմ և ամենահետինը, սակայն չեմ կարող ինձ մեկուսացնել ծերից, քանզի նրա ողորմություն մենք երկուսս մի ենք: Եվ այսպես, ուշադիր եղիր քո հանդեպ, եղբայր: Զանա՛ տքնել, որ-

պեսզի պահպանես այս պատվիրանները: Իսկ եթե հաղթվես էլ ինչ-որ բանում, մի՛ թուլացիր, մի՛ հուսահատվիր, այլ կանգնի՛ր, վերստին և Աստված կօգնի քեզ: Այն, որ դու պարտվում ես և չես հաղթահարում կրքերը, գալիս է և այն պատճառներից, որոնք հիշատակեցիր, սակայն պատահում է, որ նաև տկարությունից ես ենթարկվում դրան: Ազատվելու համար թե՛ մեկից և թե՛ մյուսից՝ հարկավոր է ողբ ու լացով ընկնել Տիրոջ բարեգթությունից առջև, և Նա կազատի քեզ այս և այլ կրքերից սրբերի աղոթքներով: Ամեն:

**Հարց 55.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին՝ խնդրելով օգնել իրեն նրանում, ինչը Մեծ ծերն է պատվիրել:

**Պատ.** -Եղբայր, ծերը ոչ մի բան առանց լուծման չի թողել քեզ տրված իր պատասխանների մեջ և դրանով փակել է բոլորի բերանները: Էլ ի՞նչ ես ուզում, երբ քեզ ասված է՝ պահի՛ր իմ խոսքերը, և իմ ուխտը քեզ հետ անխախտելի կլինի: Քո ամբողջ ուժով ջանա՛ պահպանել նրա ուխտը, քանզի նրանում է կայանում արքայության ժառանգությունը, դրախտի քաղցրությունը, և՛ «ինչ որ անքաղ չտեսավ, և անանջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար» (Բ Կորն. 2; 9): Դու պետք է ներդնես քո ամբողջ ճիգն ու ջանքը, իսկ հովանավորությունը, ողորմությունը և գործության շնորհումը կախված է Աստծուց: Նրան փա՛ռք հավիտյանս հավիտենից: Ամեն:

**Հարց 56.** Ի՞նչ անեմ, ես վախենում եմ անպատվության ամոթից: Եվ երբ խոսակցության եմ բռնվում ոմանց հետ, շա՛տ եմ գրավվում և գերվում դրանով, այնպես որ բացարձակ մոռանում եմ ինձ, իսկ երբ սթափվում եմ, անհարմար եմ զգում թողնել զրուցակիցներին և հեռանալ:

**Հովհաննեսի պատ.** -Որպեսզի տկարը չընկնի այս ամենի, ինչպես նաև սնափառության մեջ, նրան պետք է ամեն կերպ

խույս տալ շատախոսությունից և ընդհատել խոսակցությունը՝ թողություն խնդրելով աբբայով, որպես թե նա ինչ-որ հանձնարարություն է տվել իրեն, և այդ պատճառով նա շտապում է: Իսկ անարգանք չկրելը՝ անհավատության գործ է: Եղբայր, Հիսուսը մարդ դարձավ և անարգանք կրեց, մի՞թե դու առավել ես Հիսուսից: Դա անհավատություն է և դիվային խաբկանք: Ով խոնարհություն է տենչում, ինչպես ինքն է ասում, և անարգանք չի կրում, նա չի կարող հասնել խոնարհության: Ահա, դու լսեցիր (ասվածը), մի՛ արհամարհիր այն, թե չէ գործն էլ քեզ կարհամարհի: Եթե զրույցը օգուտ է բերում և արգելք չի հանդիսանում առավել անհրաժեշտ գործին, ապա կանգնի՛ր, քանի դեռ խոսում են: Իսկ եթե այդ խոսակցությունը օգտակար չէ, ասա՛ ների՛ր, ես տկար եմ: Իսկ ամոթի մասին (ասեմ). խորհելով համաժողովրդական ամոթի մասին, որ հասնելու է մեղավորներին Տիրոջ առջև, ժամանակավորը ոչինչ կհամարես դու:

**Հարց 57.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Երբ վանք են գալիս ոմանք՝ կա՛մ աշխարհականներ, կա՛մ հայրեր, խորհուրդն ինձ ներշնչում է հարցնել նրանցից հոգևոր օգուտի կամ գործերի մասին: Ինչպե՞ս ես վերաբերվում սրան:

**Հովհաննեսի պատ.** -Եղբայր, ով իսկապե՛ս ցանկանում է Քրիստոսի աշակերտ լինել, նա ոչ մի բանում այլևս իշխանություն չունի իր վրա, որ ինքնուրույնաբար որևէ բան անի: Թեև նա մտածում է օգուտ քաղել եկվորների զրույցից, սակայն դրանով խախտում է պատվիրանը, որ ասում է. «Առանց խորհրդածության ոչինչ մի՛ արա» (Սիր. 32; 2): Էլ ի՞նչ ես ուզում լսել առավել նրանից, ինչ որ ասել են հայրերը: Եթե եկվորներից ոմանք զրույց բացեն Աստծո խոսքի մասին, հարցրո՛ւ քո աբբային խոնարհությամբ. «Աբբա՛, կամենո՞ւմ ես, որ ես սպասեմ և լսեմ, թե՞ գնամ»: Եվ ինչ որ նա ասի, այդ էլ արա հանդարտորեն: Իսկ եթե անհրաժեշտությունից ելնելով ես ու-

զուրկ խորհուրդ հարցնել որևէ մեկից՝ վանականից կամ աշխարհականից, ապա ասա աբբային, եթե նա անհրաժեշտ գտնի, ինքը կհարցնի այն, ինչ որ դու ես ուզում իմանալ, իսկ երբ ասի՝ ի՛նքդ հարցրու, այնժամ հարցրո՛ւ:

**Հարց 58.** Իսկ երբ չեմ ցանկանում հարցնել, սակայն պատահում է, որ հանդիպում եմ նրանցից որևէ մեկին, կամ էլ որևէ մեկն ինքն է ինձանից մի բան հարցնում. այդ դեպքում ինչպե՞ս կպատվիրես ինձ վարվել:

**Հովհաննեսի պատ.** –Որևէ մեկին հանդիպելիս՝ բավարարվի՛ր միայն ողջունով և հետո ասա՝ աղոթի՛ր ինձ համար, ես գնում եմ գործով, և գնա՛: Իսկ երբ մի բան են հարցնում քեզանից, և դու գիտես դա, ապա ասա՛ և անցի՛ր առաջ. չիմանալու դեպքում՝ ասա՛ չգիտե՛մ, և անցի՛ր առաջ:

**Հարց 59.** Իսկ եթե (որևէ մեկը) գտնի ինձ այն ժամանակ, երբ ես նստած եմ կամ ինչ-որ բան եմ անում, և նստելով իմ կողքին՝ ցանկանա խոսել ինձ հետ, այդ դեպքում ես ինչպե՞ս վարվեմ:

**Հովհաննեսի պատ.** –Եթե (որևէ մեկը) քեզ մի տեղ նստած գտնի և մոտենա քեզ, օրհնություն ընդունիր նրանից և արա նույն բանը, ինչ որ առաջ, և ասա՛ նրան՝ աղոթի՛ր ինձ համար, և թեկուզ ձեռքերով էլ քեզ զոռով պահի, ասա՛ նրան. «Ների՛ր ինձ, ինձ պատվիրան է տրված՝ չխոսել ոչ մեկի հետ՝ առանց արբայի կամքի, սակայն կհարցնեմ նրան, և ինչ որ նա կարգադրի, այն էլ կանեմ»: Իսկ եթե որևէ մեկը մոտենա քեզ և նստի քո կողքին այն ժամանակ, երբ դու ինչ-որ բան ես անում, ապա, քեզ տրված պատվիրանի համաձայն, մի պատճառ գտիր վե՛ր կաց:

**Հարց 60.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

–Ի՞նչ է նշանակում արբա Եսայու կողմից ասվածը՝ ողջունելով օտարականին՝ հարցրո՛ւ նրան՝ ինչպես է նա ապրում, և հետո լուռ նստիր նրա հետ:

**Պատ.** –Դու ինձ գրել էիր, որ արբա Եսային պատվիրել է ըն-

դունել օտարականին և ողջունելուց հետո հարցնել նրան, թե ինչպես է նա ապրում, իսկ հետո լուռ նստել նրա հետ, սակայն այդ ամենը ասված է եղել ծերին, որն արդեն պատկառելի հասակ ուներ և հասել էր (հոգևոր բարձր) աստիճանի: Իսկ իսկական աշակերտը և վանական դառնալ ցանկացողը պահում է իրեն նման զրույցներից, քանզի դրանցից ծնվում են՝ ծուլություն, թուլություն, անհնազանդություն և մոլի հանդգնություն: Հայրերի ասույթներից մեկում գրված է. «Հովհաննեսը դրանով չի զբաղվում»: Եվ սա նշանակում է հեռացնել իրենից մարդկանց հետ կապված հոգսերը:

**Հարց 61.** Խորհուրդն ինձ ասում է՝ մի հարվածով կտրի՛ր հանդիպումները և դու կձերբազատվես (նրանցով զրավվելուց): Եվ կրկին ասում է՝ կամաց-կամաց հատիր, որպեսզի քեզ տեսնողները չզարմանան: Ասա՛ ինձ, սրանցից ո՞րն է ավելի լավ:

**Հովհաննեսի պատ.** –Այն մասին, թե դադարեցնել հանդիպումները մեկընդմիջտ, կամ էլ կամաց-կամաց, որպեսզի քեզ տեսնողները չզարմանան, (ասեմ). եթե միանգամից կտրես հանդիպումները, ապա հանգիստ կլինես, այլապես առիթ կտաս (նոր խոսակցությունների և զանազան խորհուրդների): Խոսակցությունների, որովհետև կասեն՝ նա զրուցում էր ինձ հետ առաջ, (հիմա) էլ ես կզրուցեմ նրա հետ. խորհուրդների, որովհետև մեկն էլ կմտածի՝ հաստատ այս եղբայրն իմ դեմ ինչ-որ բան ունի, քանի որ առաջ խոսում էր ինձ հետ, իսկ հիմա չի խոսում: Փափազիր հասնել սրան, և Աստված կօգնի քեզ:

**Հարց 62.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

–Երբեմն որոշ հիվանդներ գալիս են վանք՝ հիվանդանոցից որևէ բան խնդրելու, և ինձ արբայի կողմից նշանակված է տալ նրանց այն, ինչ հարկավոր է, որի պատճառով ես ստիպված եմ լինում խոսել նրանց հետ և մտածում եմ՝ իմ ցանկություններ չե՞մ արդյոք անում սա. բացատրի՛ր ինձ, հա՛յր իմ, և աղոթի՛ր ինձ



Համար, որպեսզի այդ առումով հանգիստ լինեմ:

**Հովհաննեսի պատ.** -Այցելող հիվանդների և հիվանդանոցից որևէ բան ստանալու կարիք ունեցողների վերաբերյալ (ասեմ). եթե դու բոլորին միանման բաշխես, ապա անհանգստանալու առիթ չես ունենա, որովհետև քեզ այդպես է կարգադրված անել: Սակայն շատ ուշադիր եղիր այն բանի հանդեպ, որ խոսակցություն չբռնվես որևէ մեկի հետ և չչարունակես հանդիպումները՝ ըստ պատահած անհրաժեշտություն՝ բացառելով միայն այն, երբ հարկ է լինում հարցնել մի որևէ գործի կամ գնման մասին: Սակայն այս դեպքում ևս սահմանափակվիր միայն անհրաժեշտ հարցերով, որպեսզի չար կամքը իրեն կերակուր չգտնի: Պահպանիր այս և հանգիստ կգտնես:

**Հարց 63.** Խորհուրդն ինձ ասում է, որ մենակեցությունը ամենից կարևոր է, և որ այն ինձ օգտակար է. իրավացիորեն է արդյոք նա ինձ այդպես ներշնչում:

**Հովհաննեսի պատ.** -Ինչում է կայանում մենակեցությունը, եթե ոչ նրանում, որ սիրտդ պահես (ուրիշներին իրեր) տալուց և առնելուց, մարդահաճությունից և նման այլ արարքներից: Երբ Տերը հանդիմանեց օրենսգետներին՝ ավազակների ձեռքը ընկածի մասին առակի միջոցով, և ըստ որում հարցրեց նրան, թե ով էր նրա մերձավորը, օրենսգետը պատասխանեց. «Նա, ով Նրան բարիք արեց» (Ղուկ. 10; 37), և դարձյալ ասաց Տերը. «Ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ» (Մատթ. 12; 27): Եթե դու ևս հավատում ես, որ ողորմությունը առավել է զոհից, ապա սիրտդ խոնարհեցրու դեպի ողորմությունը: Մենակեցությունը մարդուն մեծամտանալու առիթ է տալիս, նախքան նրա ինքնիրեն վերագտնելը, այն է՝ անարատ լինելը: (Ճշմարիտ) մենակեցությունը (միայն) այն ժամանակ է տեղին, երբ մարդն արդեն խաչ է կրել: Ուստի, եթե կարեկցես մերձավորին, օգնություն կգտնես, իսկ եթե քեզ ետ պահես կարեկցանքից՝ կամենա-

լով մտնել այնտեղ, որը վեր է քո չափից, ապա իմացի՛ր, որ կկորցնես նաև այն, ինչ որ ունես: Եվ այսպես, մի՛ մնա ոչ՝ ներսում, ո՛չ դրսում, այլ մնա մեջտեղում՝ «**Իմանալով, թե ինչն է Տիրոջ կամքը, քանզի օրերը չար են**» (Եփես. 5; 16):

**Հարց 64.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Բացատրի՛ր ինձ, հա՛յր իմ, թե ինչ է նշանակում մի՛ մնա ոչ՝ ներսում, ո՛չ դրսում, այլ մնա մեջտեղում: Հարկ կա՞ արդյոք որոշ օրեր նշանակել մենակեցության և որոշն էլ՝ արտաքին հոգսերի համար:

**Հովհաննեսի պատասխանը** –Չհանդգնել մենակեցության և անհոգ չլինել անձիդ հանդեպ, երբ գտնվում ես հոգսերի մեջ. ահա միջին ուղին, որ ապահով է անկումներից: Մենակեցության մեջ պետք է խոնարհություն ունենալ և հոգսերի ժամանակ՝ զգաստություն ինքդ քո հանդեպ, և պահի՛ր միտքդ. այս ամենը չի սահմանափակվում որոշակի ինչ-որ ժամերով, առավել ևս՝ օրերով: Յուրաքանչյուր ոք պետք է գոհությունը կրի այն, ինչ որ ըստ անհրաժեշտության գալիս է նրա վրա, և կարեկցի բոլոր նրանց, ովքեր գտնվում են հանրակացարանում, քանզի սրա միջոցով նա կատարում է առաքյալի պատվիրանը, այսինքն, եթե մեկը վշտանում է, վշտացի՛ր նրա հետ, հորդորի՛ր նրան, մխիթարի՛ր նրան (Հռմ. 12; 15): Հենց սրանում է կայանում կարեկցանքը: Կարեկցել հիվանդներին և օգնել նրանց բժշկումներով՝ բարի գործ է: Եթե բժիշկը, որ հոգ է տանում հիվանդի մասին, վարձ է ստանում, առավել ևս չի՞ ստանա նա, ով ըստ կարելիության ամեն ինչում կարեկցում է իր մերձավորին: Քանզի նա, ով չի կարեկցում նրան ամեն ինչում, եթե մի բանում կարեկցում էլ է, լոկ իր կամքն է կատարում:

**Հարց 65.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Դու ինձ պատվիրեցիր մնալ մեջտեղում, սակայն պատահում է, որ երբ ազատվում եմ զբաղմունքներից և ընտրում եմ

Հարմար ժամանակ, որպեսզի փոքր-ինչ նստեմ իմ խցում, ինձ շատ են անհանգստացնում ըստ սովորություն ինձ մոտ եկող իմ սիրած վանականները և աշխարհականները: Եվ եթե ելնում եմ նրանց մոտ, վշտանում եմ, իսկ եթե չեմ ուզում ելնել, ապա ինձ հարկավոր է նստել իմ խցում, իսկ դրա հետևանքով արգելք է առաջանում հիվանդանոցի պահանջները կատարելու գործում: Չէի՞ր կարգադրի արդյոք հիվանդանոցում ինձ հետ եղող եղբայրներից մեկին ասել, որ, երբ ես դուրս չեմ գալիս, նա գնա և հոգ տանի այն մասին, ինչ որ հարկն է. թե՞ բոլորովին հեռանամ: Սա ես մտածում եմ որպես մարդ, սակայն եթե իմ մտքում ինքնարդարացում է թաքնված, ապա թող Աստծո կամքով լինի և ոչ թե իմ, որովհետև իմ կամքը չի կարող տոկալ, այլ վերջանում է կործանումով:

**Հովհաննեսի պատ.** –Որքան ավելի է մարդը խոնարհվում, այնքան ավելի է առաջադիմում: Խցում մնալը քեզ փորձառու չի դարձնի, որովհետև դու նրանում մնում ես առանց վշտերի: Իսկ այն, որ ուզում ես ժամանակից շուտ թողնել բոլոր հոգածությունները, թշնամին կպատրաստի քեզ համար ոչ թե հանգիստ, այլ՝ առավել խռովություն, այնպես որ կստիպի քեզ վերջապես ասել՝ երանի թե ես ծնված չլինեի: Իսկ մարդկանցից անհանգստություն կրելու մասին հայրերը ասել են. «Պատահում է, որ մարդն արդեն մերձ է լինում մահվան, բայց դեռ էլի ձգտում է այս աշխարհի ընկերակցությունը»: Մի տուր նրանց և մի՛ ընդունիր նրանցից ոչինչ. այդպիսով նրանք կթողնեն քեզ: Իսկ եղբոր, քո փոխարեն, հիվանդանոցում ծառայելու մասին (ասեմ). եթե դո՛ւ ես որևէ բան անում, դրանով դու քե՛զ ես օգնում, իսկ եթե՝ ուրիշի միջոցով, ապա նա ավելի շատ կստանա, քան դու քո ջանքերի և աղոթքների համար: Իմ նախկին պատասխանի մեջ ես քեզ գրել էի կարեկցանքի մասին. տքնի՛ր նրանում, եթե հավատում ես առաքյալի խոսքին, որ ասաց.

«Կա՞ տկար մեկը, որի հետ ես էլ տկարացած չլինեմ, կա՞ գայթակղված մեկը, որի համար իմ սիրտը այրված չլինի» (Բ. Կորն. 2; 28), **հիշեցե՛ք** բանտարկյալներին, որպես թե դուք բանտարկված լինեք նրանց հետ (Եբր. 13; 3):

**Հարց 66.** Հա՛յր իմ, եթե մեկը մի բան է խնդրում, ինչպե՞ս տամ սիրալիրություն, երբ ես կասկածում եմ սկզբից: Քանզի երբ ստիպողաբար եմ տալիս, ապա հոգիս լինում է դաժան և դժգոհ:

**Հովհաննեսի պատ.** –Եթե գիտես, որ խնդրողը կարիքից ելնելով է խնդրում, տո՛ւր նրան ուրախություն, որպես թե տալիս ես Աստծո պարգևներից: Հենց սրանում է կայանում սիրալիրությունը: Իսկ եթե գիտես, որ նա խնդրում է առանց կարիքի, մի՛ տուր նրան, այլ ասա՛ ինձ պատվիրան է տրված աբբայի կողմից՝ ոչինչ չտալ նրանց, ովքեր կարիք չունեն, և դա չի՛ լինի դաժանություն: Տերը թող իմաստացնի քեզ:

**Հարց 67.** Կարգալով Բարսեղ Մեծի ճգնավորություն մասին գիրքը՝ ես գտա, որ որևէ բան ունեցողը և այն ուրիշին տվողը՝ ըստ Տիրոջ պատվիրանի, ոչ թե ուրիշին է բարիք անում, այլ՝ առավել իրեն: Իսկ ես ինչպե՞ս կատարեմ այս պատվիրանը:

**Պատ.** –Այդ գլուխը վերաբերում է նրան, ով ապրում է առանձին և կարող է իրեն ղեկավարել կռադատություն, իսկ հանրակացարանում ապրողը գտնվում է հոր ենթակայություն տակ, և նրա վրա չի տարածվում այս պատվիրանը, քանզի նա ոչ մի բանում իշխանություն չունի վարվելու իր կամքի համեմատ:

**Հարց 68.** Սուրբ Բարսեղի՝ ճգնավորություն մասին գրքում գտա նաև այն, որ անհնար է Տիրոջ աշակերտը լինել այն մարդուն, ով կիրք է տածում ներկայիս որևէ բանի հանդեպ, կամ հարաբերվում է որևէ մեկի հետ նրանցից, ով, թեկուզ կարճ ժամանակով, կչեղի նրան Աստծո պատվիրաններից: Բայց իմ ազգականները ինձ մի փոքր պարտք են, և ես ցանկանում եմ այդ գու-

մարը բաժանել աղքատներին, իսկ ազգականներս, գուցե, չցանկանան վերադարձնել ինձ այն. ինչպե՞ս վարվեմ նման դեպքում:

**Հովհաննեսի պատ.** -Եթե դու չմերժես մարմնավոր իմաստությունը և չբառնաս փոքր-ինչ համառ հանուն Աստծո, դու կընկնես նաև մարդահաճուկության մեջ: Աստված թող քեզ ուժ տա ամեն ինչում կատարելու իր կամքը: Ամեն:

**Հարց 69.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Ի՞նչ է նշանակում «չլուել»՝ ըստ հայրերի խոսքի, և ինչպե՞ս է այն կատարվում գործով:

**Պատ.** -Կարծում եմ այն է՝ չլուել սեփական խորհուրդների մասին, քանզի իր խորհուրդները ծածկողը մնում է չբժշկված և շտկվում է՝ դրանց մասին հոգևոր հայրերին հաճախակի հարցումներ ուղղելով միայն: Ինչպես ինքս եմ հասկանում, այդպես էլ ասացի քեզ՝ իմ եղբորը: Իսկ եթե դու այս բանը ավելի լավ ես հասկանում, Աստված թող քեզ իմաստություն տա (Բ Տիմ. 2; 7), որ Նրանից է առաքվում (Ժող. 2; 26, Հոր 12,13,16, Ա Հովհ. 5; 20): Նմանապես և ինձ՝ իր վատթարագույն ծառային:

**Հարց 70.** Ի՞նչ է նշանակում քո կողմից ասվածը, հայր իմ, թե ուշիմին դուլզն անգամ չի վնասի քունը:

**Հովհաննեսի պատ.** -Ով պահպանում է իր հոտը Հակոբի պես (Ծննդ. 1.40), դրանից ընկրկում է քունը. և եթե նա ննջում էլ է փոքր-ինչ, նրա քունը լինում է այնպես, ինչպես ուրիշի մոտ՝ հսկումը, քանզի սիրտը բոցավառող կրակը թույլ չի տալիս նրան ծանրանալու քնով, և նա երգում է Դավթի հետ. «Լո՛ւյս տուր, Տե՛ր, իմ աչքերին, որ երբեք մահվան քուն չմտնեմ» (Սղմ. 12; 4): Ով հասել է այս չափին և արդեն ճաշակել է սրա քաղցրությունը, նա կհասկանա ասվածը: Այդպիսի մարդը չի տարվում զգայական քնով, այլ միայն օգտվում է բնականից:

**Հարց 71.** Եթե որևէ մեկը ինձ խնդրի մտնել իր խուցը և աղոթք անել, կամ ես խնդրեմ որևէ մեկին մտնել ինձ մոտ, կամ

էլ ուզենամ օգնել որևէ մեկին գործի մեջ, ապա քանի՞ անգամ պետք է հրաժարվեմ և չհամաձայնվեմ, եթե, իհարկե, դրանում չկա պատվիրանախախտություն:

**Պատ.** -Եթե դու մտնես եղբոր խուցը, կամ էլ նա՝ քոնը, և ասի քեզ՝ «աղոթի՛ր, եղբայր», երեք անգամ պատասխանիր՝ «ների՛ր»: Եթե նա երրորդից հետո էլ սկսի խնդրել, ապա խոնարհությունը կատարիր նրա ցանկությունը: Նմանապես և դու երեք անգամ ասա ուրիշին, և եթե չցանկանա, թո՛ղ նրան, քանզի վիճելը վատ գործ է: Եվ ամեն դեպքում, առաջարկո՞ւմ են քեզ օգնություն ընդունել, կամ դո՞ւ ես ցանկանում որևէ մեկին օգնության ձեռք մեկնել, խնդրիր մինչև երեք անգամ, և եթե նա չհամաձայնվի, դադարեցրո՛ւ խաղաղությունը և մի՛ վիրավորիր նրան: Այսպիսին է Աստծո ճշմարիտ ճանապարհը. ուշադի՛ր եղիր քո հանդեպ, որպեսզի ճշնես նրանում անկեղծորեն, մաքուր սրտով, Աստծո աջակցությամբ, Ով ձեռք է մեկնում քեզ և օգնում է իր շնորհով: Ամեն:

**Հարց 72.** -Եթե սիրո ընթրիք լինի, և ինձ տան իմ բաժինը, սակայն ես չունենամ դրա կարիքը. թույլ կտա՞ս ինձ վերցնել այն, որպեսզի չթվա, թե ես ժուժկալուծությունից չեմ ուտում, և բաժանեմ այն, ում որ հիվանդանոցում անհրաժեշտ է, թե ոչ:

**Հովհաննեսի պատ.** -Եղբայր, եթե ունես այդ բաժնի կարիքը, ապա վերցրո՛ւ այն, իսկ եթե՝ ոչ, ապա մի՛ վերցրու, այլապես քո մեջդ սնափառությունը կծնվի:

**Հարց 73.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Պատահում է, որ ես սիրո ճաշ եմ տալիս եղբայրներին, և դրա համար ինձ փառաբանում են, արդյոք ինձ վնասակար չէ՞ դա, և ավելի լավ չէ՞ գաղտնի անել այն՝ աբբայի միջոցով, թե՞ ես ինքս անեմ, որպեսզի սովորեմ: Եվ ինչպե՞ս, հայր իմ, ազատվեմ այդ փառքից, քանի որ այն հետևում է մարդու թե՛ արդար և թե՛ անարդար գործերին:

**Հովհաննեսի պատ.** -Դու պետք է ուշադիր լինես այս երկու դիտավորությունների նկատմամբ, քանզի դրանք սնափառելու առիթ են տալիս: Աբբայի միջոցով ավելի հեշտ է ճաշ տալ, քանզի այդ դեպքում քեզ հարկ կլինի պայքարել միայն սեփական սրտիդ հետ: Իսկ եթե ինքդ քեզնով անես դա, ապա քեզ սպասում է երկակի պայքար, ոչ միայն սեփական սրտի հետ, այլև մյուս մարդկանց կարծիքների հետ: Փառասիրությունից և սնափառությունից ազատ լինել կարող են միայն նրանք, ովքեր իրենց միջից հանել են հին մարդուն: Տերը թող շնորհի քեզ այդ ազատությունը Հիսուս Քրիստոսով՝ մեր Տիրոջով, Որին փա՛ռք հավիտյանս: Ամեն:

**Հարց 74.**

-Երբ ես արարողություն ժամանակ աչքերս փակում եմ, մտքերս ժողովվում են: Բայց արդյոք դա լա՞վ է: Միգուցե, կողքիս կազնած իմ եղբայրներին տարօրինակ թվա, և նրանք գայթակղվեն:

**Հովհաննեսի պատ.** -Եթե մտքերդ իսկապես ժողովվում են, երբ արարողության ժամանակ հանուն Աստծո փակում ես աչքերդ, ապա ոչ մեկի վրա ուշադրություն մի՛ դարձրու, թեկուզ դա, ինչպես դու ես ասում, տարօրինակ թվա քո կողքին կազնած եղբայրներին:

**Հարց 75.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Ես ունեմ իմ սեփական գրքերը, և խորհուրդն ինձ ներշնչում է հանձնել դրանք հանրակացարանին և այլևս չհոգալ նրանց մասին, քանզի երբ նրանք դառնան ընդհանուր վանքիներ, ապա յուրաքանչյուր ոք կարող է ընթերցել դրանք: Սրա նման մտածում եմ նաև հազուստների մասին: Ասա՛ ինձ, հա՛յր իմ, ինչպե՞ս վարվեմ և ինչպիսի՞ հազուստներ թողնեմ ինձ՝ ըստ իմ մարմնավոր տկարություն:

**Հովհաննեսի պատ.** -Եթե ուզում ես ազատվել գրքերի հոգ-

սից, ապա լավ է այդպես անել, ինչպես դու ասացիր, այսինքն՝ հանձնել դրանք հանրակացարանին, քանզի ամեն բան, որ պատկանում է հանրակացարանին, Աստծուն է: Ինչ վերաբերվում է հազուստներին, թե որոնք են քեզ անհրաժեշտ, ձմեռվա համար թող երկու կողմիա և մի լեվիտոնար, և ամառվա համար՝ երկու կողմիա\* և մի լեվիտոնար\*\*։ Եվ դարձյալ, ձմեռվա համար, խիստ սառնամանիքի դեպքում, ոչ մեծ լանջանապանակ: Իսկ եթե խիստ սառնամանիք չլինի, ապա բավարար է ունենալ կնգուղ և երկու պարեգոտ. մեկը՝ ձմեռային, իսկ մյուսը՝ ամառային, նաև երկու ծածկոց. մեկը՝ տաք, իսկ մյուսը՝ թեթև: Ունեցիր նաև քուրձ և բարձ, դրանք քեզ անհրաժեշտ են: Եթե քեզ հարկավոր է ներքնակ, դա էլ ունեցիր: Եվ երբ քեզ հազուստ են տալիս, և դու ունես դրա կարիքը, ընդունի՛ր այն, իսկ հինը նրա փոխարեն տուր արքային. իսկ եթե քեզ պետք չէ այն, որը տալիս են, այն նույնպես հանձնի՛ր արքային: Աստված թող զորացնի քեզ, որ լսես և կատարես, քանզի հենց սրանում է կայանում առաջադիմությունն ու շտկումը՝ ըստ Աստծո հաճություն:

**Հարց 76.** Նույն եղբայրը դիմում է Մեծ ծերին.

-Քանի որ ձեր կողմից ինձ նշանակված է գտնվել այս ծառայության մեջ՝ հիվանդանոցին առընթեր, ապա ասա՛, հա՛յր իմ, պե՞տք է ինձ արդյոք կարգալ որոշ բժշկական գրքեր և սովորել ինքնուրույն դեղեր պատրաստել, թե ավելի լավ է, որպես մտացրիվ գործ, չգբաղվել դրանով և թողնել այն (որպեսզի այն իմ մեջ, իբրև անուշադիր, չարթնացնի սնափառություն), և բավարարվել նրանով, ինչ որ ես արդեն գիտեմ, անելով, ինչ հնարավոր է՝ յուզի, ալյուրի, քսուկների և, ընդհանրապես, հասարակ միջոցների օգնությամբ, որոնց մեջ վարժվում են նաև (բժշկական գրքեր) կարդացողները: Ինչ-

\* կողմիա .....  
\*\* Լեվիտոնար .....

պե՞ս վարվեմ: Քանզի այս ծառայություն ընթացքում սիրտս տազնապում է, որ չլինի թե մեղանչեմ նրանում և կրքերիս նոր մեղքեր ավելացնեմ:

**Մեծ ծերի պատ.** -Քանի որ մենք տակավին չենք հասել կատարելության, որպեսզի բոլորովին ազատ լինենք կրքերի գերությունից, ապա ավելի լավ է բժշկական զբաղմունքը, քան՝ կրքերինը: Սակայն ոչ թե բժշկությունը մենք պետք է հուսանք, այլ՝ Աստծուն, Ով սպանում է և կենդանացնում. «Ես եմ սպանում և ես եմ փրկում, ես եմ հիվանդացնում և ես եմ բժշկում» (Բ Օր. 32; 39): Կարգալով բժշկական զրքեր, կամ էլ հարցնելով նրանց մասին որևէ մեկին, մի՛ մոռացիր, որ առանց Աստծո ոչ ոք բժշկություն չի ստանում: Արդ, ով իրեն նվիրում է բժշկության արվեստին, նա պետք է իրեն հանձնի Աստծո անվանը, և Աստված կօգնի նրան: Բժշկության արվեստը չի խանգարում մարդուն բարեպաշտ լինելու, այլ զբաղվիր դրանով, ինչպես ձեռագործով եղբայրների օգուտի համար: Ինչ որ անում ես, արա Աստծո երկյուղով և կպահպանվես սրբերի աղոթքներով: Ամեն:

**Հարց 77.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Դու ինձ նախկինում ասել էիր, որ սեփական կամքի հատումը կայանում է նաև նրանում, որ չվիճեմ՝ իմը պնդելու ցանկությունից: Ինչպե՞ս անեմ, հա՛յր իմ, երբեմն պատահում է, որ հիվանդին մի որևէ բան եմ բերում, ըստ երևույթին, օգտակար, սակայն այն շատ հաճախ վնասում է նրան, և ես վշտանում եմ, որ դրանում իմ կամքը կատարեցի: Տեսնում եմ նաև, որ ես ամբողջ օրը գտնվում եմ զբաղմունքների մեջ, և այն կարծես թե թույլ չի տալիս ինձ հիշելու Աստծուն, և որևէ մտայնությունը անհանգստացնում է ինձ: Ասա՛ ինձ, ինչպե՞ս վարեմ, քանզի հավատում եմ, որ դրանում է կայանում իմ փրկությունը:

**Բարսիլիկոսի պատ.** -Եթե դու, կարծելով, թե որևէ բան օգուտ կբերի հիվանդին, անում ես քո հայեցողությամբ, և

ստացվում է հակառակը, որ այն վնաս է պատճառում նրան, ապա Աստված, որ սրտիդ է նայում, չի դատապարտի քեզ, քանզի գիտի, որ վնաս պատճառեցիր՝ կամենալով օգուտ բերել: Իսկ եթե իմացող մեկը նախօրո՞ք ասի քեզ այս մասին, իսկ դու քամահրանքով չենթարկվես, չանսաս նրան, ապա դա կլինի հպարտություն և ինքնակամություն: Շատերը մշտապես լսում են ինչ-որ մի քաղաքի մասին և նրանց վիճակվում է մտնել նրանից ներս՝ չիմանալով, որ դա հենց այդ նույն քաղաքն է. այդպես էլ դու, եղբա՛յր, ամբողջ օրը Աստծուն մտաբերելով ես անցկացնում և չգիտես այդ: Ունենալ պատվիրան և ջանալ պահպանել այն՝ սրանում է կայանում և՛ հնազանդությունը, և՛ Աստծո հիշումը: Իրավացի է ասել քեզ եղբայր Հովհաննեսը՝ նախ զգեստավորվիր տերևներով, իսկ հետո, երբ Աստված կհրամայի, կբերես նաև պտուղներ: Եթե չգիտես օգտակարը, ապա հետևի՛ր իմացողին, քանզի դա խոնարհություն է, և կստանաս Աստծո շնորհը: Արդարացի ասացիր դու, որ սրանում է կայանում քո փրկությունը, քանզի դու ինքդ քեզանով չէ, որ եկել ես այստեղ, այլ Աստված է քեզ առաջնորդել այստեղ: «**Ձորացի՛ր Տիրոջով**» (Եփես. 6; 10). դու քիչ օգուտ չես ստանում այն զբաղմունքներից, որոնցից բողոքում ես: Որքան հնարավոր է, ճգնի՛ր որևէ մտայնության դեմ, և Տերը կօգնի քեզ ճանաչել և գործել բարին: Քաջալերվի՛ր և ամրապնդվի՛ր Տիրոջով:

**Հարց 78.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Քանի որ դու ինձ ասացիր, որ հնազանդությունը և Աստծո մտաբերումը կայանում է նրանում, որ պատվիրան ունենաս և ջանաս այն կատարել, ապա աղաչում եմ քեզ, սովորեցրո՛ւ ինձ նաև այն, թե հնարավոր է արդյոք, որ Աստծո համար նման ծառայությամբ մտահոգվածը և մարդկանց մեջ գտնվողը կարողանա անդադար հիշել Աստծուն: Եվ եթե հնարավոր է, խնդրի՛ր ինձ համար այն, հա՛յր իմ, եթե դա ինձ օգտակար է:

Քանզի քեզ և Աստծուն ամեն ինչ հնարավոր է (Մատթ. 19; 26):

**Պատ.** -Աստծուն անդադար հիշելու վերաբերյալ. ամեն ոք իր կարող է այն պահպանել կարողություն չափով: Դու միայն խոնարհվիր, և ես քեզանից ավելի լավ գիտեմ, թե քեզ ի՞նչն է օգտակար, և այդ էլ կխնդրեմ Աստծուց քեզ համար, քանզի Նրան «ամեն ինչ հնարավոր է» (Մատթ. 19; 26):

**Հարց 79.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Ես դարձյալ քեզ եմ դիմում, ո՛վ ողորմած հայր իմ, և վերջ չեմ տա քեզ անհանգստացնելուն, մինչև չամրապնդես ինձ, քանզի, եթե Աստված ձեր աղոթքներով տալիս էլ է ինձ մի փոքր տրտմություն մեղքերիս համար, ես կամաց-կամաց դարձյալ կորցնում եմ այն՝ արտաքին ցրման պատճառով: Արդ, խնդրում եմ քեզ, հա՛յր իմ, սրանո՛ւմ էլ ամրացրու ինձ, որպեսզի ամեն բան ինձ հետ լինի ըստ Աստծո և ձեր ողորմության, և ոչինչ չլինի իմ սեփականը, քանզի ես ոչինչ չեմ կարող, եթե չզորանամ ձեր աղոթքներով: Երկյուղ եմ կրում, հա՛յր իմ, նաև այն բանից, որ դեկավարում եմ հիվանդանոցը, քանզի դա մի իշխանություն է, և չլինի թե փառամոլության և ազատ վարվելակերպի առիթ հանդիսանա ինձ: Նմանապես և կերակուրների հաճախակի ճաշակումից կարող եմ ընկնել որկրամոլության մեջ: Այսպիսով, չե՞ք գտնում արդյոք, որ ինձ, նախնական ուսուցման համար, հարկավոր է լինել նախ և առաջ ավելի նվաստ ծառայության մեջ, և հետո, երբ ինձ ավելի հեշտ լինի, վերստին մտնել նույն ծառայության մեջ: Դու գիտես, հա՛յր իմ, որ ես այսպես եմ ասում ո՛չ այն պատճառով, որ ծանրաբեռնված եմ այդ գործով, քանզի ի՞նչ եմ անում որ, թշվա՛ռս: Այլ վախենում եմ, թե արդյոք չե՞մ գրգռում կրքերս՝ ապրելով այստեղ. ի՞նչքս եմ այդպես մտածում, թե՞ դեերն են ինձ ներշնչում այն՝ չգիտե՛մ: Իսկ դու, հա՛յր իմ, հայտնի՛ր ինձ Աստծո կամքը, ազատի՛ր ինձ խռովեցնող խորհուրդներից, գորացրո՛ւ ինձ քո աղոթքնե-

րով կատարելու այն, ինչ որ դու ասում ես, և ների՛ր ինձ:

**Բարսիլիկոսի պատ.** -Լսի՛ր ինձ, եղբա՛յր, և վստա՛հ եղիր Տիրոջով, որ, երբ մենք քեզ հանձնարարեցինք այդ գործը, մեր ձեռքն ու սիրտը քեզ հետ է, ավելի ճիշտ, Աստծո ձեռքը, որին աղերսեցինք մեր աղոթքներով քո հոգու փրկության համար, և այն բանի համար, որպեսզի Նա քեզ գորացնի այդ գործում, քեզ հաջողություն պարգևի և պահպանի քեզ դրանում: Դու չես կարող այլ կերպ փրկվել, եթե ոչ՝ միայն այս (ծառայության միջոցով): Եվ այսպես, մի՛ վհատվիր՝ ընկնելով և կանգնելով, սողալով և քեզ կշտամբելով, մինչև Տերը ցույց չտա քեզ իր ողորմությունը, որին դու տենչում ես. միայն թե անհոգ մի՛ եղիր: Մի՛ վախեցիր, քանզի Տերը, որ կարգել է քեզ այս գործին, նաև կհաջողեցնի այն, և մենք էլ քեզ հետ կկիսենք հոգսերը: Թող քեզ չխաբի սատանան բարու անվան տակ, ինչպես ասված է. «Քաղցրախոսությունը և կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը» (Հուս. 16; 18): Նա, Ով կարգեց քեզ այս գործին, ամեն ինչ է. Նա ասաց իր աշակերտներին. «Ահա ես ձեզ ուղարկում եմ» (Մատթ. 10; 16), և դարձյալ. «Եվ ահա ես ձեզ հետ եմ» (Մատթ. 28; 20): Մի՛ վախեցիր և դուլզն անգամ մի՛ խռովիր քեզ կասկածանքներով հիվանդանոցի վերաբերյալ՝ վհատվելով հոգսերից, որ զուգակից են իշխանությանը: Եթե ըմբռնես քեզ գրվածը, ապա հանգիստ կլինես: Միայն թե պետք է հետևես քեզ ուժերիդ ներածին չափով, և Աստված կօգնի քեզ: Ո՛ղջ եղիր Տիրոջով և գորացի՛ր Նրանով:

**Հարց 80.** Նույն եղբայրը դիմում է մյուս ծերին.

-Եթե ինձ հետ գտնվող եղբայրները ինչ-որ բանում մեղանչեն, ինչպե՞ս շտկեմ նրանց առանց խռովքի:

**Հովհաննեսի պատ.** -Եթե սրտիդ մեջ տպավորես Աստծո կամքը, ապա չես խռովվի, այլ ձեռք կբերես բարի սովորություն, ինչպես և հայրերը, իսկ եթե մոռանաս այն և ոգևորվես

իրևև մարդ, ապա ասա Աստծուն զղջումով. «Ների՛ր ինձ, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ», և ասա քեզ հետ գտնվող եղբայրներին. «Զգուշացե՛ք, եղբայրնե՛ր, քանզի դրա միջոցով մենք մեզ ենթարկում ենք դատապարտության և կործանում ենք մեր հոգիները», և մի՛ խոսի՛ր չափազանց բարձր, այլ այնպես միայն, որ լսելի լինի: Եթե քեզ կրթես այդ բանում, կհասնես նաև այնպիսի հոգեվիճակի, որը հաճելի է Աստծուն:

**Հարց 81.** Խնդրում եմ քեզ, հա՛յր իմ, ասա՛ ինձ, ի՞նչ կերպով պետք է ուղղել մերձավորին, և ո՞ր դեպքում է հարկավոր խենթ ձևանալ, այսինքն՝ ձևանալ որպես գործից չհասկացող և ուշադրություն չդարձնել նրա վրա: Իսկ եթե հաջողություն չունենամ գործի մեջ, արդյոք պետք է արգելք դնեմ վրաս այդ առումով:

**Նովհաննեսի պատ.** – Մարդկանց նկատմամբ այսպես վարվիր. երբ գիտես, որ մեղանչած մարդը խելամիտ է և ընդունում է քո խոսքերը, նրան խրատելով, ասա. «Եղբա՛յր, եթե մենք անփութորեն ենք կատարում Աստծո գործը, դա կործանում է հոգու համար: Դե ինչ, արդյոք դու լա՞վ արեցիր նոր: Զանա՛ այսուհետև ուղղվել»: Իսկ եթե նա խելամիտ չէ, ասա՛ նրան. «Հավատա՛ ինձ, եղբա՛յր, որ դու պատժի առջև ես կանգնած քո անփութությունից, և հենց որ ասեմ աբբային, նա խիստ կպատժի քեզ»: Իսկ թե ե՛րբ կարելի է անհասկացող ձևանալ, եզրակացրու այն՝ ըստ եղբոր գործած մեղքի, և եթե այն մեծ չէ, այնպիսի տեսք ընդունիր, որ իբր չես հասկացել այն, իսկ եթե մեծ է, ապա պետք չէ անհասկացող ձևանալ: Դու քեզ չպետք է արգելես (գործով զբաղվելու)՝ անհաջողության դեպքում, սակայն և չպետք է զանց անես այն: Քննելով այդ՝ ներո՛ւմ խնդրիր Աստծուց, քանզի այլապես կընկնես հեղգություն մեջ:

**Հարց 82.** Նույն եղբայրը դիմում է մյուս ծերին.

– Եթե եղբայրներից կամ հենց հիվանդներից մեկը մեղանչի, և ես, ցանկանալով ուղղել նրան, վրդովմունքով ինչ-որ բան

ասեմ. արդյոք պե՞տք է հետո խոնարհվեմ նրա առաջ (ներում խնդրելու): Եվ եթե պատահի, որ նա ինձ վրա զայրացած՝ հեռանա հիվանդանոցից. ես ի՞նչպես վարվեմ: Եվ, ընդհանրապես, ո՞ր մեղքերի դեպքում է հարկավոր խոնարհում անել, քանզի հպարտությունն ու ինքնարդարացումը մթազնում են միտքը: Իսկ երբ մեկը խոնարհվում էլ է, ապա սնափառությունը կրկին իրեն առիթ է գտնում:

**Նովհաննեսի պատ.** – Վրդովմունքով ոչինչ մի՛ ասա, որովհետև չարիքը բարիք չի ծնում: Այլ համբերի՛ր, մինչև որ միտքդ հանդարտվի, և այնժամ կասես խաղաղություն: Եվ եթե եղբայրը անսա քեզ՝ լա՛վ, իսկ եթե՝ ոչ, ասա՛ նրան. «Կուզե՞ս ես այն բացեմ աբբային, և ինչպես որ նա հարմար գտնի, այդպես էլ անենք, և դու հանգիստ կլինես»: Բայց եթե բարկացած հեռանա, ասա աբբային, և նա խելքի կբերի նրան, իսկ դու նրա առջև խոնարհում մի՛ արա (այսինքն՝ ներում մի՛ խնդրիր), քանզի դրանով դու նրան առիթ կտաս մտածելու, որ դու իսկապես մեղավոր ես նրա առջև, և նա էլ ավելի կգինվի քո դեմ: Իսկ մյուս մարդկանցից ջանադրաբար ներո՛ւմ խնդրիր՝ մեղանչումների համեմատ. երբ տեսնում ես, որ մեղքդ մեծ չէ՝ խոնարհվի՛ր, իսկ եթե այն մեծ է, ասա շուրթերո՛ւմ ի սրտե զղջման զգացումով՝ ների՛ր ինձ, եղբա՛յր: Զգուշացի՛ր հպարտությունից և ինքնարդարացումից, քանզի դրանք արգելք են հանդիսանում զղջմանը. թեև լինում է և այն, որ մարդը փառասիրությունից է խոնարհվում: Արհամարհելով այս երեք կրքերը (հպարտությունը, ինքնարդարացումը և փառասիրությունը), որտեղ որ պետք է, խոնարհո՛ւմ արա խոնարհությունը, Աստծո երկյուղով և խելամտությամբ: Քո ամբողջ ուժով ջանա՛ հարատևել այս առաքինությունների մեջ, և Աստված կօգնի քեզ սրբերի աղոթքներով:

**Հարց 83.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

– Եթե հիվանդներին սպասարկելու ժամանակ հասնի սաղմո-

սերգուծյան կամ սուրբ պատարագի ժամը, կամ մի այլ բանի կարիք լինի, և ինձ հետ գտնվող եղբայրները գիտեն, թե ում ի՛նչ է պետք տալ. թույլ կտա՞ս ինձ գնալ, թե դա ծանր մեղք ինձ կհամարվի: Նմանապես, եթե ցանկանամ մնալ իմ խցում, երբ հիվանդանոցում իմ լինելու հարկը չկա. թույլ կտա՞ս ինձ, հա՛յր իմ, թե ոչ:

**Հովհաննեսի պատ.** -Եթե եղբայրները գիտեն, մեղք չի համարվի գնալը կամ խցում մնալը, միայն թե այցելի՛ր հիվանդներին:

**Հարց 84.** Եթե ժլատությունն ինձ անհանգստացնում է այն պահին, երբ ես մեկին տալիս եմ իրեն անհրաժեշտը, այնպես որ դժվարանում եմ տալ. այդ դեպքում պակա՞ս տամ պատշաճից, թե՞ ջանամ պակաս չտալ հարկ եղածից: Նմանապես եթե մարդահաճությունից կամ սնափառությունից կարծես թե ամաչելով, խորհրդի ներշնչմամբ՝ ուզում եմ ավելին տալ, ապա տա՞մ հակառակ իմ կրքին, մի քիչ պակաս, թե՞ պատշաճը՝ ըստ պատվիրանի:

**Պատ.** -Եթե ժլատությունը արգելում է տալ մերձավորին այն, ինչ որ նրան հարկավոր է, ապա համակերպվի՛ր քո ունեցածով. եթե ունեցածդ շատ է, տո՛ւր հարկ եղածից մի փոքր ավելի, իսկ եթե քիչ է, տո՛ւր այնքան, որքան հարկավոր է: Աստված թող իմաստություն տա քո սրտին, եղբա՛յր:

**Հարց 85.**

-Երբ հիվանդանոցին պետքական անոթ եմ տեսնում և զգում եմ, որ նրա հանդեպ կիրք եմ տածում. ապա կերակուր տված չե՞մ լինի իմ կրքին, եթե վերցնեմ այն:

**Հովհաննեսի պատ.** -Եթե անոթի կարիք ունես, և նրա մասին խորհուրդը պայքար է մղում քեզ հետ, ապա ասա՛ քո խորհուրդին՝ այն ինձ հարկավոր է, սակայն ինչո՞ւ վերցնեմ քմահաճորեն: Հենց որ կիրքը դադարի պայքարել քեզ հետ, վերցրո՛ւ այն, իսկ եթե չդադարի, ապա, եթե հարմար է բավարարվել մեկ ուրիշ անոթով, մի՛ վերցրու և ճզմի՛ր քո ցանկությունը: Իսկ

անհրաժեշտություն դեպքում՝ վերցրո՛ւ այդ անոթը, նախատելով քեզ և ասելով՝ եթե կարիքն ինձ չստիպեր, չէի վերցնի այն, որովհետև ես հաղթվեցի իմ ցանկությունից:

**Հարց 86.** -Ժամանակին մի մարդ ինձ հագուստ նվիրեց, և ես այդ ժամանակ կարծես թե ուրախությունով վերցրի այն՝ առանց փոքր-ինչ հակաճառելու, բայց, քննելով ինձ, գտա, որ ես այն վերցրել եմ ոչ թե կարոտությունից, այլ ավելի շուտ՝ կաշառակերությունից, և խորհուրդն ինձ ասում է՝ վերադարձրո՛ւ այն: Ինչպե՞ս կպատվիրես ինձ վարվել:

**Հովհաննեսի պատ.** -Սրտանց գովենք նվիրողին և ի սրտե պարսավենք ընդունողին և կրենք այն խոնարհությամբ՝ կշտամբելով մեզ, իսկ հետ այսու՝ զգուշանա՛նք կաշառակերությունից:

**Հարց 87.** Նույն եղբայրը դիմում է նույն ծերին.

-Եթե պատահի, որ ինչ-որ մեկն ուզենա ինձ մի բան տալ, որի կարիքը ես ունեմ, բայց նկատեմ, որ սիրտս կրքի՛ց մղված է փափագում ընդունել այն. ինչպե՞ս վարվեմ. վերցնե՞մ՝ կարիքի դեպքում, թե՞ հրաժարվեմ՝ նրա հանդեպ կրքոտ մղում ունենալուս պատճառով:

**Հովհաննեսի պատ.** -Քո այդ հարցին կպատասխանեմ կերակրի օրինակով: Դու գիտես, որ մենք հանապազ կերակրի կարիք ունենք, սակայն չպետք է այն ուտենք հեշտությամբ: Երբ մենք ընդունում ենք այն՝ գոհանալով Աստծուց, Ով մեզ տվել է այն, և հանդիմանելով մեզ՝ իբրև անարժանների, ապա Աստված այնպես է անում, որ այն մեզ ծառայում է որպես լուսավորություն և օրհնություն: Արդ, եթե դու որևէ բանի կարիք ունես և քեզ հաջողվում է ստանալ այն՝ գոհացի՛ր Աստծուց, որպես քո Օգնականի, և կշտամբի՛ր քեզ՝ իբրև անարժանի, և Աստված կվանի քեզանից մոլուկությունը, քանզի Նրան ամեն բան հնարավոր է, և Նրա համար անհնարին բան չկա (Հոբ 10.13, 42.2, Մարկ. 10.27): Նրան փա՛ռք հավիտյանս: Ամեն: